Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

4772

1865

9(47.925)
9-47

9(47.925)
9-47

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏԱԾ

ՄԵՐ ԱԶԳԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ ԴԱՍԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՅՈՎՍԷՓ ՉԵՐՔԷԶԵԱՆՑ

ՏՊԱԳՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ

ԱՂԱ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ

ՅՈՎՆԱՆԵԱՆՑ

Ի ԹԷՈԴՈՍԻԱ,

Ի ՏՊԱՐԱՆԻ ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

—

1865.

9(47.925)
38452-Կ.2.

ՀՐԱՄԱՆԱՒ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ,
ի Թէոդոսիա, 15 Յունիսի 1861.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР

2004

ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳՐԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ.

Ազգային պատմութեան օգուտը եւ հարկաւորութիւնը համարեա ոչ մին մարդու համար չեն պահանջում մեկնութիւն կամ ապացոյց: Ազգի պատմութիւնը՝ նորա մտաւոր, բարոյական եւ քաղաքական կեանքի հաւատարմախօս նկարագրութիւնն է, ուր կարող է նա, որպէս մին պարզ հայելու մէջ, տեսանել իւր սեփական պատկերը, իւր կեանքի կերպարանափոխութիւնը անցեալ դարերում, իւր՝ երբեմն մեծութիւնը եւ բաղդաւորութիւնը, երբեմն տկարութիւնը եւ տարաբաղդութիւնը, այս տեղ՝ իւր փառքը եւ զօրութիւնը, այն տեղ՝ իւր նախատինքը եւ թուլութիւնը. քննել եւ իմանալ դոցա պատճառները եւ ստանալ փորձառես խրատներ իւր ապագայն բարւոքելու համար: Արդարեւ մեծ եւ ամենահարկաւոր գիտութիւն: Ցաւելին այն է, որ գիտենք ամենեքեան այդ ուսման չափազանց օգուտը, եւ սակայն

գրկուած ենք միջոցներից տալ այդ ուսումն մեր ե-
րեխաներին։ Եւրոպացի ազգերի մէջ տեսանումենք
ազգային պատմութեան յոգնահամար նախակրթա-
կան գրքեր եւ այն բազմատեսակ չափով՝ փոքր, մի-
ջական եւ ընդարձակ։ Մեր Հայոց ազգումը չկայ ո՛չ մին
գիրք ազգային պատմութիւն դաս տալու համար։
Թէպէտ պատմական անցքերը պէտք է վարժապետը
ինքը պատմէ բերանացի, սակայն աշակերտին հար-
կաւոր է միշտ ունենալ ձեռքումը գրքոյկ, որ կա-
րողանայ ընթերցմամբ կրկնել՝ ականջով լսածը, եւ
այդ կարիքը առաւել եւս սաստկանումէ նորա հա-
մար բոլոր պատմութիւնը աւարտելուց յետ։ Մեր
ունեցած բազմաշխատ Միքայէլ Չամչեանի ընդար-
ձակ պատմութիւնը, 1784 Թ. Վենետիկ տպագրած,
որպէս եւ Չագրճեանի համառօտութիւնը՝ Վիէննա
տպագրած 1851 Թ. չեն կարող լինել ձեռամբածու-
այժմեան երեխաների դասատուութեան ժամանակը, ա-
ռաջինը՝ իւր երեք մեծակազմ եւ մեծագին հատոր-
ների ստուարութեան եւ գրոց լեզուով բացատրու-
թեան, երկրորդը՝ թէ եւ աշխարհիկ լեզուով, բայց
մեր Ռուսիաբնակ Հայերին անընտել եւ շատ տեղ նա
եւս անհասկանալի տեղական բարբառով գրած լինե-
լու պատճառով։ Այդպիսի պակասութիւնը զգացի
ես իբրպէս վեց տարի առաջ, երբ հարկը ստիպեց
ինձ դասատուութեանս օրերում պատրաստել իւրա-
քանչիւր անգամ իմ սեփական թերթերս, քաղելով
պատմութեան նիւթը Չամչեանի լիակատար պատ-
մութիւնից, ընդարձակը համառօտելով, աւելորդը
յապաւելով եւ հարկաւորին միայն տալով պատմա-
կան կապ եւ կարգ։ Գործիս սկզբնաւորութեան առա-
ջին օրից դրեցի ինձ նպատակ ո՛չ թէ Եւրոպացւոց
օրինակով պատրաստել յառաջագոյն մին շատ կար-
ճառօտ նախակրթարան, որից յետ հարկաւոր է լի-
նում եւ կայ հնար միայն նոցանում՝ բազմատեսակ
գրքերի շատութեամբ, ուսուցանել աշակերտներին
աստիճան աստիճան ընդարձակած պատմութիւն, այլ

միանգամ յօրինել այնպիսի գրքոյկ, որ անընդհատ պահելով իւր մէջ պատմութեան թելը՝ ազգի սկըզբնաւորութիւնից մինչեւ մեր ժամանակներս, բովանդակէր ամենայն մեր ազգի գլուխը եկած նշանաւոր անցք, եւ այդպէս լինէր ազգային պատմութիւն՝ յատկապէս դասատուութեան համար, սակաւախօս եւ համանգամայն լիապատում, այժմեան աշակերտաների պահանջմունքին բաւականացուցիչ: Կաթուղիկոսների հետ զհետէ եւ շարունակ փոխանորդութիւնը եւ նոցա մասնաւոր գործերը, որպէս եւ կրօնական մանրամասն գրոյցները չեն վերաբերում ուղղակի քաղաքական պատմութեան. Նոքա ունեն իւրեանց տեղը Եկեղեցական Պատմութեան մէջ. այդ պատճառով նոցանից այն միայն յիշատակեցի, որ ունեցել է հասուն ազգային քաղաքական կեանքի վերայ:

Այդպէս շարունակելով իմ աշխատանքը, մին քանի տարուց յետ տեսայ, որ իմ ձեռագիր թերթերիս մէջ պարունակւումէր արդէն մեր բոլոր պատմութիւնը համառօտախօս եւ համանգամայն լիովին, դիւրիմաց աշխարհաբառի եւ պարզ ոճով գրած:

Շատ մարդիկ, որոց յայտնի էր իմ աշխարհաբառ լեզուով պատրաստած համառօտ հայկական պատմութիւնը, անդադար առաջարկումէին ինձ հրատարակել տպագրութեամբ այդ աշխատանքը՝ բոլոր ազգի երեխաների օգտի համար. եւ ահա յատկապէս նոցա յորդորանքով՝ փութահացայ ընծայաբերել մերազնեայ մանուկներին Հայոց Պատմութեան Դասագիրք, (Учебникъ Армянской Исторіи), խնդրելով ընթերցողներին ներողամիտ լինել սորա թերութիւններին, որ մարդկային ամենայն գործի մէջ անբաժան եւ անկոչ ընկերներն են:

Պատմութիւնը սկսանելուց առաջ պէտք է տալ աշակերտներին գոնեա համառօտ տեղեկութիւն Հայաստանի աշխարհագրութեան մասին եւ ցոյց տալ աշխարհացուցի վերայ այն տեղերը, ուր կատարւում են պատմական իրողութիւնները, որ իւրաքանչիւր

անցք կարողանայ իբր տեսանելի լինել ուսանողնե-րին եւ հեշտութեամբ տպաւորել նոցա յիշողութեան մէջ, եւ այդ պատճառաւ զանց չարեցի բերել հար-կաւոր աշխարհագրական ծանօթութիւններ, ուր մի-անգամ պահանջումէր տեղը :

Շատ եւ շատ վարձատրուած կհամարեմ իմ ան-ձը, եթէ այս առաջիկայ աշխատանքս կարողանայ բերել որքան եւ իցէ օգուտ իմ պատուական ազգիս, եւ սորա տպագրութեան պատճառ եղած մարդկանց բարեյօժար սրտի փափագը հատուցանել իւրեանց լուսաւոր նպատակին :

ՅՈՎՍԷՓ ՉԵՐԹԷՉԵԱՆՑ :

ՄՈՍԿՈՒԱ ,

ի 17 Յունուարի 1861.

ՆԱԽԱԿԱՐԳ ԲԱՆ.

Մեր Հայոց ազգը, որ այժմ տեսանումենք սփռուած եւ տարածուած աշխարհի ամենայն մասանց մէջ, առանց սեփական երկրաւոր իշխանութեան, օտարազգի տէրութիւնների հպատակ, զանազան տեղական բարբառներով եւ սովորութիւններով միմեանցից բաժանուած, ունեցել է երբեմն իւր սեփական աշխարհը, իւր տէրութիւնը, իւր թագաւորները; իւր օրէնքները եւ իւր կալուածները մին տեղում, մին ընդհանուր կառավարութեան ներքոյ միջակիտուած: Նայեցէք Հայաստանի աշխարհացուցի վերայ. այն ընդարձակ տարածութիւնը, որ տեսանումէք երեք ծովի միջոցումը՝ Սեւ, Միջերկրա-

կան եւ Կասպից, երկայնութեամբ՝ Կապադովկիայից (Գամիրք) մինչեւ Կասպիական ծովը, լայնութեամբ՝ Վրաստանից մինչեւ Ասորոց Միջագետքը, եւ որ այժըմ բաժանաբար պատկանում է Տաճկաց, Պարսից եւ Ռուսաց, եղել է մեր ազգի սեփական աշխարհը: Այդ ընդարձակ աշխարհը արգաւանդահող էր եւ պտղաբեր. իւր լեռնայոլով եւ բարձր դրութեամբ, գեղեցիկ եւ բարեխառն օդով, քաղցրահամ եւ վճիտ աղբիւրներով գերազանցում էր համարեա բոլոր աշխարհի երկիրները, մինչեւ կարելի է հաւանել ոմանց կարծիքը, թէ Դրախտն իսկ եղեմական, այն աստուածատունկ պարտէզը, ուր նախաստեղծ մարդը ճաշակում էր երկրի վերայ երկնաւոր երջանկութիւն իւր անմեղութեան օրերում, յայտնի նշաններով այդ տեղումը պէտք էր լինէր: Մովսէս մարգարէն յառկացնում է Դրախտի տեղը չորս գետի միջոցում, որ են, Եփրատ, Տիգրիս, Փիսովն եւ Գեհովն (¹). Նայեցէք աշխարհացուցի վերայ եւ դուք կտեսանէք, որ այդ չորս գետը, ոռոգանում են մեր Հայաստան աշխարհը:

Այդ մեր աշխարհը կոչուեցաւ Հայաստան՝ եւս եւ Հայք՝ Հայկի անունով, որ Նոյի թոռան թոռն էր

(¹) Եփրատ դուրս է գամ Կարնոյ լեռներից, Բարձր Հայաստանում. Տիգրիս՝ Կորդուաց լեռներից, Կորճէից երկրում. Փիսովն, ինչպէս կարծումեն աշխարհագիրները, Փասիսն է, որ եւ Ճորոխ, դուրս է գամ նոյնպէս Հայաստանի լեռներից հիւսիսակողմումը եւ մտանում է Սեւ ծով. Գեհովն համարում են Երասխ, որ ելանում է Կարնոյ լեռներից եւ ընկնում է Կասպից ծով:

եւ Հայոց ազգի նախնին կամ տոհմագլուխը: Կոչուել է եւս՝ Տուն Թորգոմայ, Թորգոմի անունով, որ էր Հայկի հայրը. նոյնպէս Արարատ կամ Այրարատ՝ Արայի անունով, որ էր Արամի որդին. իսկ Արամ եօթներորդն էր՝ սկսած Հայկից: Օտար ազգերը կոչումեն Հայաստան աշխարհը Արմենիա, նոյն Արամի անունով, որովհետեւ Արամ շատ երեւելի քաջութիւններ գործեց, ընդարձակեց Հայաստանի սահմանները եւ դորանով տարածուեցաւ նորա համբաւը այլազգիների մէջ:

Հայաստանը բաժանուումէր մեծ եւ փոքր, որ անջատուումէին միմեանցից Եփրատ գետով: Մեծ Հայաստանը պարունակումէր իւր մէջ տասնեւհինգ աշխարհ, Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտի, Գուգարք, Տայք եւ Արարատ: Փոքր Հայաստանը բաժանուումէր՝ Առաջին, Երկրորդ եւ Երրորդ:

Ջրհեղեղից յետ Նոյի տապանը նստաւ Արարատ լերին վերայ՝ սրբազան եւ արտաքին պատմութիւնների վկայութեամբ. իսկ Արարատ լեառը իւր համանուն Արարատ աշխարհումն էր. Նոյի թոռան թոռը Հայկ՝ եղաւ Հայոց ազգի տոհմագլուխը եւ առաջին միապետը: Այս տեղից յայտնի տեսանումենք Հայոց ազգի եւ նորա լեզուի ծագման եւ սկզբնաւորութեան ամենախորին պատմական հնութիւնը, մինչեւ մին

քանի պատմաբաններ՝ զանազան տեղագրական եւ լեզուաբանական ապացոյցների վերայ հիմնուած, ընծայումեն մեր լեզուին ժամանակի առաջնութիւն։

Միտ դնելով Հայաստանի քաղաքական կեանքի մէջ պատահած գլխաւոր անցքերի ընթացքին, որ զանազան ձեւով փոփոխումէին նորա վիճակը՝ երբեմն իւր սեփական եւ երբեմն օտարազգի իշխանութեան ներքոյ լինելու պատճառով, կարող ենք մեր պատմութիւնը բաժանել եօթն պարբերութիւն.

Առաջինն է Հայկազանց իշխանութիւնը, որ սկսանումէ Հայկից եւ շարունակուումէ մինչեւ Վահէ. կամ 2062 տարուց մինչեւ 328 տարին Քրիստոսի ծնունդից առաջ։

Երկրորդ պարբերութիւնն է Կուսակալների իշխանութիւնը, որ սկսանումէ Միհրան կուսակալից եւ տեւումէ մինչեւ Արտաւազդ կուսակալը. կամ 325-ից մինչեւ 149 Քրիստոսից առաջ։

Երրորդ պարբերութիւնն է Արշակունեաց իշխանութիւնը, Վաղարշակից մինչեւ Արտաշիր, Վռամշապուհ որդին. կամ 149 տարի Քրիստոսի Ծնունդից առաջ մինչեւ 431, Քրիստոսի ծնունդից յետ։

Չորրորդ պարբերութիւնը պարունակումէ Մարզպանների իշխանութիւնը, Վեհմիհրաշապուհից սկսած մինչեւ վերջին մարզպանը Շեխի, կամ մինչեւ Աշոտի թագաւորելը. 431-ից մինչեւ 885։

Հինգերորդն է Բագրատունեաց իշխանութիւնը. Աշոտի թագաւորութեան սկզբից մինչեւ վերջին Գագիկի մահը. կամ 885-ից մինչեւ 1080 թուականը:

Վեցերորդն է Ռուբինեանց իշխանութիւն. Ա. Ռուբենից մինչեւ Լեւոն Զ:

Եօթներորդ պարբերութիւն մեր պատմութեան մէջ համարելի է անիշխանութեան ժամանակը, որ սկսաւ Հայոց թագաւորութիւնը բարձուելուց յետ, երբ մեր ազգը այնուհետեւ մինչեւ այժմ օտար ազգերի իշխանութեան ներքոյ է:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

	Եր.
Պարբերութիւն առաջին. — Հայկազանց իշխանութիւն. Հայկից սկսած մինչեւ Վահէ կամ մինչեւ Միհրան կուսակալը	1— 20
Պարբերութիւն երկրորդ. — Կուսակալների իշխանութիւնը. Միհրան կուսակալից մինչեւ Արտաւազդ	21— 24
Պարբերութիւն երրորդ. — Արշակունեաց իշխանութիւն. Վաղարշակ թագաւորից մինչեւ Արտաշիր թագաւորը՝ Վռամշապհոյ որդին . .	24— 97
Պարբերութիւն չորրորդ. — Մարզպանների եւ Ոստիկանների իշխանութիւնը. Վեհմիհրշապուհից սկսած մինչեւ Աշոտի թագաւորելը .	98—130
Պարբերութիւն հինգերորդ. — Բագրատունեաց իշխանութիւն. Աշոտ Բագրատունու թագաւորութիւնից մինչեւ վերջին Գագիկի մահը . .	131—207
Պարբերութիւն վեցերորդ. — Իշխանութիւն Ռուբինեանց. Ա. Ռուբենից մինչեւ վերջին Լեւոն Զ.	208—258
Պարբերութիւն եօթներորդ. — Որ սկսանում է Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայումն բարձւելից, կամ Լեւոնի գերութիւնից, որ եղաւ 1375 թուականումն, եւ շարունակւում է մինչեւ մեր ժամանակը	259—272

ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. М

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ,

ՀԱՅԿԻՑ ՍԿՍԱԾ ՄԻՆՉԵՒ Վ.Ա.Հ., ԿԱՄ ՄԻՆՉԵՒ ՄԻՀՐԱՆ ԿՈՒՍԱԿԱԼԸ

ԳԼՈՒԽ Ա.

Հայոց ազգի տոհմագլուխը եւ Հայկազանց իշխանութեան հիմնադիրը Հայաստան աշխարհումը եղաւ Հայկ՝ Թորգոմի որդին. Թորգոմ՝ Գամերի որդին էր, Գամեր՝ Յաբեթի, Յաբէթ՝ Նոյի։ Հայկ կեցաւ 2100 տարու չափ Քրիստոսի ծնունդից առաջ, եւ ժամանակակից էր աշտարակաշինութեանը եւ լեզուների բաժանմանը։ Ջրհեղեղից յետ Նոյի տապանը, որպէս ասացինք, նստաւ Արարատ լերին վերայ, որ յետոյ կոչուեցաւ եւս Մ ա ս ի ս՝ Ամասիայի անունով, որ էր Հայկի թոռան Արմայիսի որդին։ Նոյ դուրս եկաւ տապանից եւ իջեւան արեց՝ այսինքն բնակուեցաւ Վասպուրական աշխարհի այն տեղումը, ուր նորա որդիքը շինեցին յետոյ աւան, որ այդ պատճառով կոչուեցաւ Ն ա խ ի Ջ ե ւ ա ն, այսինքն՝ Նախնի իջեւան կամ առաջին բնակութիւն։ Այդ տեղին մօտ Նոյ շինեց այգի եւ

տնկեց ուռ որթոյ, այսինքն՝ խաղողի ծառ, եւ այն տեղը Հայք կոչեցին Արկուռի (ռամկօրէն Ակոռի), եւ գաւառը կոչուեցաւ Առնոյոտն, իբր թէ՝ առ Նոյի ոտն։ Նոյ մեռաւ Հայաստանումը եւ թաղուեցաւ, որպէս վկայումեն պատմաբանները, Նախիջեւան։ Եւ երբ մեռաւ Նոյի կինը Նոյեմզար (կամ Նեմզար), նորա որդիքը թաղեցին նորան այն տեղ, որ յետոյ կոչուեցաւ Մարանդ, այսինքն՝ մայր անդ [1]։

Նոյի որդիքը եւ սերունդը բնակելով Արարատեան աշխարհումը եւ նորա մերձակայ գաւառներում, շատ բազմացան եւ տարածուեցան մեծ Հայաստանի զանազան երկիրները. բայց Յաբեթի որդիքը մնացին Մասիս լերին սահմաններում։ Յետ ժամանակաց երբ մարդիկ առաւել բազմացան, նոցանից շատը հեռացան, գնացին հարաւի կողմը՝ Միջագետք. նոցա հետ գնաց եւ Հայկ Թորգոմեան։ Այդ գաղթականները բնակուեցան յետոյ Սենաար երկրումը (Բաբիլոն). ուր յետոյ խորհուրդ արեցին շինել աշտարակ, եւ այդ աշտարակաշինութեան գործի մէջ առաջինը եւ գլխաւորը Նեբրովթն էր՝ Քուշի որդին եւ Քամի թոռը, որ կոչուում է եւս՝ Բէլ։ Այդ տեղ Աստուած խառնակեց նոցա լեզուն, մինչեւ մինը չէր կարողանում հասկանալ միւսին. վասն որոյ եւ տեղի անունը կոչուեցաւ Բաբիլոն, որ նշանակում է խառնակումն. Եւ այդ պատճառով մարդիկ թողեցին իւրեանց յառաջադրութիւնը, միմեանցից բաժանուեցան եւ բնակուեցան աշխարհի այլ եւ այլ կողմերում առանձին լեզուներով։ Նոցա ամենեցուն մէջ զօրաւորագոյն էր Նեբրովթ, որ շատ մարդիկ հնազանդեցրեց իւրեան, եւ այդ մտքով կոչուում է որսորդ, այսինքն՝ մարդիկ որսացող կամ նուաճող [2]։ Սա հիմնեց Բաբիլոն քաղաքը Եփրատ գետի մօտ։

---

(1) Վասպուրական աշխարհի գաւառներից մինը, հին Ջուղայի մօտ։
(2) „Եւ էր նա սկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ“. Ծննդոց Ժ. 9.

ԳԼՈՒԽ Բ.

Հայկ, մեր ազգի նախահայրը, եւ այն նահապետ- 2107—2026.
ներից մինը, որ մասնակից էին աշտարակաշինութեանը, չկամեցաւ հնազանդել Բելին. վեր առեց իւր որդոցը, դստերացը, եւ թոռներին, հանդերձ զօրաւոր մարդիկով, թուով իբրեւ երեք հարիւր, դուրս եկաւ Բաբիլոնից եւ գնաց հիւսիսի կողմը՝ Արարատի երկիրը. այն տեղ հնազանդեցրեց շատ մարդիկ, որ յառաջագոյն բնակուած էին այն կողմերում, շինեց դաստակերտներ եւ տուեց այդ տեղերը իւր թոռնին՝ Կադմոսին. ինքը գնաց հիւսիսի արեւմտեան կողմը, բնակուեցաւ բարձր դաշտավայրումը եւ այն տեղը կոչեց Հարք (1), կամելով ցուցանել՝ թէ այդ տեղում բնակուեցան այն ազգի հարքը, որ ունի ծագումն Թորգոմի տունից. յետոյ իւր անունով շինեց աւան՝ Հայկաշէն (2)։ Փոքր ժամանակից յետ այն դաշտի շրջակայ կողմերում բնակուած մարդիկ, մանաւանդ հարաւակողմումը, ինքնակամ հնազանդուեցան Հայկին։ Իսկ Բէլ (Նեբրովթ), որ արդէն շատ զօրացած էր եւ տարածել էր իւր տէրութիւնը, ինչպէս իմացաւ Հայկի ապստամբութիւնը, ուղարկեց նորա մօտ իւր որդուն այսպիսի պատգամով. «Բնակուեցար սառնամանիքի ցրտութեան մէջ (այսինքն՝ հիւսիսակողմումը). այլ ջեռուցած կակղեցուր սառած հպարտացած բնաւորութեանդ ցրտութիւնը. հնազանդիր ինձ եւ կեցիր հանդարտութեամբ իմ երկրումս, ուր միանգամ հաճոյ կլինի քեզ»։ (3)

(1) Հարք՝ Տուրուբերան աշխարհի գաւառներից մինն է։ „Այս գաւառ եղեւ առաջին վայր բնակութեան Հայկայ՝ յետ դարձի իւրոյ ի Բաբիլոնէ". տես Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Հ. Ինճիճեանի. եր. 115. Վենետիկ, 1822.

(2) „Առաջին գիւղ յաշխարհիս Հայոց, յետ ցրուելոյ անտի ազգաց, զոր շինեաց Հայկ եւ անուանեաց յիւր անուն". նոյն, եր. 116.

(3) Խորեն. Գիրք Ա, Գլ. 11.

*

Հայկ խստութեամբ պատասխանեց պատգամաւորին եւ յետ դարձրեց նորան Բաբիլոն։ Այն ժամանակ Բէլ հաւաքեց իւր հսկայազօր մարդկանց, ուղղեց իւր ճանապարհը Արարատի երկիր՝ Կադմոսի բնակութեան կողմը եւ այն տեղից գնաց Հայկի վերայ․ Հայկ ժողովեց նոյնպէս իւր որդոցը եւ թոռներին եւ զօրեղ աղեղնաւոր մարդիկ եւ գնաց հասաւ Վանայ ծովի եզրը. այդ տեղ, դաշտի մէջ, հանդիպեցան միմեանց երկու կողմը եւ սկսան պատերազմել, բայց երկուսը եւս մնացին անպարտելի։ Այսպիսի անակնունելի դիպուածը զարհուրեցրեց Բէլին. նա միտք արեց փոքր ինչ յետ դառնալ եւ սպասել բոլոր իւր զօրքին եւ ապա նոցա հետ միասնգամ պատերազմել։ Հայկ իմացաւ Բէլի խորհուրդը. վասն որոյ գնաց առաջ, ձգեց երեքթեւեան նետը Բէլի վերայ եւ սպանեց նորան. այդ հարուածը ինչպէս տեսաւ Բէլի հետ եղած ամբոխը՝ ցրուեցաւ եւ փախաւ։ Պատերազմի տեղը Հայկ կոչեց Հայք. իսկ այն տեղը, ուր սպանուեցաւ Բէլ՝ Գերեզմանք, եւ յետոյ բոլոր գաւառը կոչուեցաւ՝ Հայոց ձոր (1)։ Բէլի մարմինը հրամայեց տանել Հարք, ուր եւ ինքն դարձաւ եւ հաստատեց այն տեղ միապետական իշխանութիւն։

ԳԼՈՒԽ Գ.

Հայկ ունէր շատ որդիք եւ դստերք. բայց նոցա ամենեցուն անունները որոշակի յայտնի չեն մեզ. այն միայն գիտենք, թէ նորա որդոց եւ դստերաց անուններով կոչուեցան Հայոց ամիսները (2)։ Նորա
2026—1980. *որդոց մէջ յայտնի են մեզ միայն Արմենակ, Մանաւազ եւ Խոռ։ Արմենակ կամ Արամանեակ Հայկի մահից յետ միապետ եղաւ Հայաստանումը։ Սա թո-*

(1) Վասպուրական աշխարհի Երուանդունիք գաւառումը։

(2) Հայոց ամիսները սկսանումեն Օգոստոս ամսից եւ կոչւումեն այսպէս. Նաւասարդ, հոռի, սահմի, տրէ, քաղոց, արաց, մեհեկի, արեգ, ահեկան, մարերի, մարգաց, հրոտից։

ղեց Հայք երկրումը իւր երկու եղբարցը Մանաւազին
եւ Խոռին, եւ ինքը գնաց արեւելքի հիւսիսակողմը
եւ մին բարձր լերին մօտ շինեց բնակութեան տեղի.
այն լեառը կոչեց Արագած, իբր թէ Արմենակի
կացք, եւ իւր կալուածը՝ տուն Արագածու (¹)։ Սորա
եղբայրը Մանաւազ, որ մնաց Հայք երկրումը, շինեց
քաղաք՝ Մանաւազակերտ։ Մանաւազի որդին էր
Բազ, որ ժառանգեց գաւառը աղի ծովակի մօտ (Աղ-
թամարի կամ Վանայ). եւ այդ պատճառով այն գաւա-
ռը եւ ծովը կոչուեցան՝ Բզնունեաց։ Խոռ նոյնպէս
զանազան շինութիւններ շինեց։ Սոցա երեքից ծագուե-
ցան առանձին տոհմեր, Մանաւազեանք՝ Մանաւա-
զից, Խորխոռունիք՝ Խոռից, եւ Բզնունիք՝ Բա-
զից։ Արմենակի որդիքն էին Արմայիս եւ Կադմոս։
Արմենակից յետ միապետութիւն արեց Հայաստան
նորա որդին Արմայիս։ Սա շինեց Արարատեան աշ- 1980—1940.
խարհումը Գեհոլն գետի եզրի վերայ քաղաք կոփա-
ծոյ քարերով եւ կոչեց իւր անունով Արմաւիր, իսկ
գետը՝ իւր Երաստ կամ Արաստ թոռան անունով՝
Երասխ։ Այնուհետեւ այդ քաղաքը առաջինն էր եւ
գլխաւոր Հայաստանումը եւ յետոյ արքայանիստ՝ մին-
չեւ Հայկազանց իշխանութեան բարձուելը, կամ նա-
եւս մինչեւ Վաղարշակ թագաւորը, որ իւր արքայական
աթոռը հաստատեց Մծբին քաղաքումը։ Արմայիսի
որդոց մէջ նշանաւոր էր Շարայ շատակեր։ Այս
որդուն որոշեց Արմայիս միւս որդիքից եւ ուղարկեց
բնակելու համար արգաւանդահող մին դաշտ՝ Ախու-
րեան գետի մօտ, ուր եւ բնակուեցաւ Շարայ, եւ բո-
լոր գաւառը՝ նորա անունով կոչուեցաւ Շիրակ (²)։
Արմայիսի որդին Ամասիա բնակուեցաւ Արմաւիր։ 1940—1908.
Սա ունէր երեք որդի՝ Գեղամ, Փառոխ եւ Ցոլակ, որոց

(¹) Կամ Արագածոտն. Արարատեան աշխարհի գաւառներից մինն
է. այժմ կոչուումէ Ամբերդ։

(²) Շիրակ, ռամկօրէն՝ Շիրակվան եւ Կարսու երկիր, Արարա-
տեան աշխարհի գաւառներից մինն է։ Այդ տեղ էր Բագրատունեաց տու-
նը եւ նոցա արքայանիստ մայրաքաղաքը Անի եւ մեծ քաղաքը Կարս։

Հետ միասին գնաց Արարատ լերին մօտ եւ այն տեղ շինեց երկու աւան՝ միօրեայ ճանապարհով միմեանցից հեռի, եւ ընծայեց այդ տեղերը Փառոխին եւ Ցօլակին, որոց անուններով այն երկու աւանը կոչուեցան Փառախոտ եւ Ցօլակերտ: Արարատ լեառը կոչեց Ամասիա իւր անունով՝ Մասիս. յետոյ դարձաւ Գեղամի հետ Արմաւիր եւ թողեց նորան իւր տէրութիւնը:

1908—1858. *Գեղամ բնակւումէր նոյնպէս Արմաւիր քաղաքումը: Սա յանձնեց ազգի կառավարութիւնը իւր որդուն Հարմային եւ ինքը անց կեցաւ Երասխ գետի միւս կողմը, գնաց հասաւ մին ծովի մօտ, որ յետոյ կոչուեցաւ Սեւանայ ծով. այդ ծովի եզրի վերայ շինեց աւան եւ կոչեց այն շինութիւնը Գեղարքունիք, իսկ ծովակը՝ Ծով Գեղամայ: Այդ տեղերը տուեց իբրեւ ժառանգութիւն իւր որդուն Սիսակին, որ իւր գեղեցկութեան պատճառով կոչւումէր աղու, այսինքն անոյշ: Սիսակ բնակուեցաւ այդ կողմերումը եւ աւաւել եւս շինութիւններ շինեց, եւ այդ բոլոր երկիրը իւր անունով կոչեց՝ Սիսակ կամ Սիսական, յետոյ Սիւնիք, որ Հայաստանի հնգետասան աշխարհներից մինն է: Յետ ժամանակաց Սիսակ առաւել եւս ընդարձակեց իւր կալուածները, արեւելքի կողմը մինչեւ Կուր գետը, եւ որպէս ոմանք ասումեն՝ հնազանդեցրեց Կուր գետի միւս կողմումը բնակւողներին մինչեւ Կասպից ծովը. որովհետեւ այն աշխարհը, որ կայ Կուր գետի եւ Կասպից ծովի մէջ, սորա երկրորդ անունով կոչուեցաւ Աղուանք, որի բնակիչները՝ Սիսակի որդու անունով, որ կոչւումէր Սիրուան, կոչուեցան նաեւ Շիրուանք: Ինքը Գեղամ յետ դարձաւ դէպի Արմաւիր, եւ ճանապարհորդութեան ժամանակը շինեց քաղաք Գեղամէ, Երասխ գետի եւ Սեւանի ծովի միջոցումը, եւ մեռաւ իսկ այդ քաղաքումը (1):*

---

(1) Այդ քաղաքը նորոգեց յետոյ Գեղամի թոռնը Գառնիկ, եւ այդ պատճառով քաղաքը կոչուեցաւ՝ Գառնի:

Գեղամից յետ մեր ազգի վերայ տիրապետեց նորա 1858—1827.
որդին Հարմա: Սա Արմաւիր քաղաքի չորս կողմը պատեց քարի պարսպով, քաղաքի մէջումը եւ դուրսումը շինեց Հոյակապ ապարաններ եւ թողեց տէրութիւնը իւր որդուն Արամին:

Այդ ժամանակներում շատ բազմացել էին արդէն մարդիկ, թէ Հայաստանումը եւ թէ այլ ազգերի երկրներում, որպիսի էին՝ Յունաստան, Ասորեստան, Մարաց եւ Հնդկաց աշխարհը. զանազան արուեստներ եւ գիտութիւններ եւ վաճառականութիւն սկսել էին արդէն զարդարել այդ երկիրները. եւ նշանագրութիւնը հնարած էր արդէն. բայց ամենքին կռապաշտ էին եւ ճշմարիտ աստուածպաշտութիւնը գտանուումէր միայն Եբրայեցոց մէջ:

ԳԼՈՒԽ Դ.

Հայկազանց մէջ երեւելին եւ մեծանունն էր Արամ՝ 1827—1769.
Հարմայի որդին, որ շատ անուանի եղաւ բոլոր աշխարհումը զանազան քաջութիւններով եւ Հայրենիքի վերայ խնամք տանելով: Հայաստանի սահմանները ընդարձակեց Կովկասու լեռնից մինչեւ Տորոսի լերինքը՝ վանելով թշնամիներին, որ նոր սկսել էին մտանել Հայաստան եւ նեղել մեր ազգին: Մարաց (Մեդացոց) իշխանը Նիւքար, Հարմայի վերջին ժամանակները, եկել էր զօրքով Հայոց սահմանները, եւ երկու տարի էր արդէն որ հարկատու էր շինել Հայոց եւ պատրաստուումէր մտանել ներս. բայց Արամ հաւաքեց մինչեւ յիսուն հազար մարդ աղեղնաւոր եւ քաջ՝ գնաց Նիւքարի առաջը, կոտորեց նորա զօրքը եւ մնացելոց ցիր եւ ցան արեց, իւրեան Նիւքարին բռնեց եւ բերեց Արմաւիր, ուր հրամայեց երկաթի ցից վարել նորա ճակատը եւ այդպէս կախել քաղաքի պարսպի աշտարակի վերայ. Նիւքարի երկրի վերայ հարկ դրեց մինչեւ Զարասպ լեռը ([1]), եւ այդ ծա-

([1]) Զարասպ լեռը Մարաց երկրի սահմաններումն է:

ռայեցուցած երկրի կառավարութիւնը յանձնեց Սի-սակեանց, մինչեւ Նինոսի թագաւորելը:

Այդ ժամանակներում Ասորեստանի թագաւորը Արբէլ երկրորդ շինեց իւր աշխարհումը քաղաք, որ կոչուումէր նորա անունով Արբեղա (1). իսկ Բարշամ ոմն զօրագլուխ՝ Բաբելացոց սահմաններից դուրս ե-կած պատերազմեց նորա հետ, առեց նորա ձեռից այդ քաղաքը եւ յետոյ եկաւ մօտեցաւ Հայոց սահ-մաններին եւ մտադիր էր ապատակել մեր աշխար-հը: Արամ ժողովեց իւր աղեղնաւորներին եւ վաղա-կաւորներին եւ գնաց նորան յանդիման. յանկարծ յարձակուեցաւ նորա վերայ եւ հալածական արեց նո-րա զօրքը կորդուաց մէջ, բռնեց եւ սպանեց Բարշա-մին (2). յետոյ այդ տեղերը տուեց կառավարելու համար Կադմեանց ցեղին եւ ինքը գնաց արեւմտեան կողմը Կապադովկացոց երկիր քառասուն հազար հե-տեւակով եւ երկու հազար հեծելազօրով: Այդ տեղ Պայապիս անունով մին մարդ Բամի ցեղից՝ բռնացած էր Սեւ եւ Միջերկրական ծովերի միջոցումը, որ ինչ-պէս տեսաւ՝ թէ Արամ տիրապետումէ այն աշխար-հի սահմանները, դուրս եկաւ նորա առաջ պատե-րազմով. իսկ Արամ փախստական արեց նորան եւ կարգեց Կապադովկիայումը կառավարիչ Մշակ անու-նով մին հայ՝ տասն հազար զօրքով, եւ հրամայեց որ այն երկրի բնակիչները սովորեն խօսել հայերէն. յետոյ դարձաւ Հայաստան եւ այնքան անուանի եղաւ, մինչեւ օտար ազգերը նորա անունով մեր աշխարհը կոչեցին Արմենիա եւ մեր ազգը Արմէն կամ Էր-մենի, այսինքն Արամեան: Մշակ մարզպանը շինեց Կապադովկիայումը քաղաք եւ կոչեց այն քաղաքը իւր անունով Մշակ. բայց այն տեղի բնակիչները չկարո-

---

(1) Արբեղա՝ Ասորեստանի քաղաք էր, Հայաստանի սահմաննե-րին մօտ:

(2) Այս Բարշամին, նորա շատ քաջագործութիւնների համար, Աստուծոյ տեղ պաշտում էին Ասորիք:

ղանալով ուղիղ արտասանել մշակ բառը, կոչումէին այն քաղաքը Մաժակ, որ յետ ժամանակաց կոչուեցաւ Կեսարիա (1)։ Եւ որովհետեւ այն աշխարհը՝ որ Արամ նուաճեց իւր իշխանութեան ներքոյ, Հայաստանից դուրս էր, այդ պատճառով կոչուեցաւ առաջին Հայք, այսինքն թէ՝ արտաքոյ Հայաստանի, որ մեծ Հայք էր ասւում, Հայոց առաջին կալուածը կամ երկիրը այս եղաւ. եւ որովհետեւ Կեսարիայի կողմերից սկսած մինչեւ բուն Հայաստանը շատ անբնակ երկիրներ հետզհետէ լցրեց Արամ բնակիչներով, վասն որոյ այն մեր արեւմտեան կողմերը կոչուեցան մինը միւսից յետ երկրորդ Հայք եւ երրորդ Հայք եւ բոլոր երեքը միասին փոքր Հայք։ Այս երեք մասանց փոքր Հայաստանի որովհետեւ մօտ է մեծ Հայաստանի աշխարհներից մինը՝ Եփրատ գետի ձախակողմումը, վասն որոյ յարաբերութեամբ սոցա՝ այն աշխարհը կոչուեցաւ չորրորդ Հայք, որպէս երեւումէ աշխարհացուցի վերայ։

Արամի ժամանակ թագաւորեց Ասորեստանումը Նինոս (2), որ երբ իմացաւ պատմական ասացուածներից՝ թէ Բէլին, իւր նախահաւին, Հայկն է սպանել, շատ ցանկանումէր վրէժ առնուլ նորա որդիքից. վասն որոյ պատրաստուեցաւ գնալ Հայոց աշխարհ եւ բոլոր Հայոց ազգը ջնջել. բայց նորա նախարարները զգուշացրեցին նորան՝ Արամի զօրութիւնը եւ քաջութիւնը պատմելով, եւ Նինոս երկնչելով՝ թէ մի գուցէ կորուսանէ իւր սեփական տէրութիւնը, թողեց իւր խորհուրդը եւ Արամի հետ հաստատեց խաղաղութիւն եւ բարեկամութիւն։

---

(1) Փոքր Միհրդատը, երկրորդ Տիգրանի քեռորդին, նորոգեց եւ ընդարձակեց այդ քաղաքը եւ Յուլիոս Կեսարի պատուի համար անուանեց նորան Կեսարիա։

(2) Խորենացին հին պատմագիրներից հանելով ցոյց է տամ, թէ Նինոս եօթներորդն էր Նեբրովթից կամ Բէլից եւ այսպիսի կարգով. ,,Նինոս, Արբել Բ, Քայաղ, Արբել Ա, Անեբիս, Բաբ եւ Բէլ‘‘. Գիրք Ա, Գլ. 5.

Այսպէս մեր ազգաշէն եւ աշխարհաշէն Արամը, իւր օրինակելի աշխատասիրութեամբ եւ Հայրենասիրութեամբ, իւր մեծամեծ քաջութիւններով, պաշտպանելով եւ ընդարձակելով իւր տէրութիւնը եւ Հայրենի երկիրը, ժառանգեց՝ Թագաւորների Համար նախանձելի անմահութիւն — կապեց իւր անունը ազգի անունի Հետ։ Արամի անունը, որպէս եւ Հայկինը, կմնայ կենդանի աշխարհի երեսումը՝ քանի որ կենդանի է ազգը։

ԳԼՈՒԽ Ե.

1769—1743. *Արամի մահից յետ տիրապետեց Հայաստանումը նորա որդին Արայ Գեղեցիկ։ Սա իւր Հօր նման շատ պատիւ ստացաւ Նինոսից. Հայաստանը զարդարեց. եւ սորա անունով այն աշխարհը, ուր գլխաւոր քաղաքն էր Արմաւիր, կոչուեցաւ Արարատ կամ Այրարատ, եւ բոլոր Հայոց իշխանութիւնը եւ աշխարհը Արարատեան։ Սորա կնոջ անունն էր Նուարդ, իսկ որդու՝ Կարդոս։*

Սորա ժամանակը թագաւորութիւն արեց Ասորեստանումը Նինոսից յետ նորա կինը Շամիրամ, որ Համարեա Ասորեստանի ամենայն թագաւորներից աւելի զօրեղ էր եւ մեծագործ, եւ եղաւ առաջինը կանանց մէջ, որ թագաւորութիւն արեց աշխարհումը։ Լսելով Արայի գեղեցկութիւնը, Շամիրամ Հրաւիրումէր նորան Նինուէ, որ գայ Ասորեստանի վերայ տիրապետէ եւ կամ կատարէ իւր կամքը. եւ երբ տեսաւ՝ թէ Արայ չէ Համաձայնում այդ առաջարկութեանը, գնաց նորա վերայ պատերազմով. բայց Հրամայեց իւր զօրքին որ զգոյշ լինեն Արայի մասին եւ Հետեւեն բռնել նորան կենդանի։ Բայց երբ Շամիրամ եկաւ Արարատ աշխարհ եւ սկսեց պատերազմը, Հայոց զօրքը յաղթուեցաւ եւ մեր Արայ Հայկազն սպանուեցաւ ([1]). նորա տեղ կարգեց Շամիրամ նորա

([1]) Պատմել աշակերտներին Շամիրամի սուտ տարածած համբաւը, թէ աստուածները լիզելով յարուցրեցին Արային։

որդուն Կարդոսին, որ այն ժամանակ տասներկու տարեկան էր, եւ կոչեց նորան Արայ. այդ պատճառով Կարդոս ասուումէ Արայեան Արայ: Շամիրամ կեցաւ Հայաստանումը փոքր ինչ ժամանակ. եւ երբ տեսաւ Հայոց երկրի գեղեցկութիւնը, օդի մաքրութիւնը եւ յստակ աղբիւրների բազմութիւնը, շինեց Աղթամարի ծովի եզրումը արեւելեան կողմից մեծ քաղաք, որ կոչուեցաւ Շամիրամակերտ, եւ յետ ժամանակաց՝ Վան, յետոյ դարձաւ Նինուէ, բայց ամարային ժամանակ գամ էր միշտ Հայաստան, եւ Նինուէ քաղաքումը թողնումէր կառավարիչ Զրադաշտ անունով՝ Մարաց ազգից:

Կարդոս, որ եւ Արայեան Արայ, ունէր որդի 1743—1725.
Անուշաւան. այս որդուն նուիրել էր Կարդոս սօսեաց անտառը՝ Արմաւիր քաղաքի մօտ, ուր Հայերը հմայումէին, որովհետեւ կարծումէին՝ թէ այն անտառումը կան դիք կամ չաստուածներ, որոց բերումէին զանազան նուիրագործութիւն եւ երբեմն նաեւ զոհ էին մատուցանում մարդ, եւ այն նուիրուած մարդը համարուումէր սուրբ եւ դիւցազն. այս սօսեաց անտառը նուիրուեցաւ եւ Անուշաւան եւ կոչուեցաւ սօսանուէր: Այդ ժամանակներումը խռովութիւն ծագուեցաւ Շամիրամի եւ նորա որդոց մէջ. Շամիրամ իմանալով նոցա խորհուրդը, սպանեց բոլորին եւ միայն կրտսեր որդին Նինուաս մնաց կենդանի: Նինուաս միաբանուեցաւ Զրադաշտի հետ եւ գնաց պատերազմով իւր մօր ընդդէմ. Շամիրամ չկարողացաւ յաղթել նորան, փախաւ Հայաստան, միաբանուեցաւ Կարդոսի հետ եւ կրկին անգամ գնաց պատերազմով Նինուասին ընդդէմ, բայց այդ պատերազմումը սպանուեցաւ ինքը ու նորա հետ Կարդոս:

Կարդոսի մահից յետ՝ նորա որդին Անուշաւան, 1725—1662.
տասնչորս տարեկան մանուկ, Շամիրամի որդու Նինուասի ձեռքումը գերի էր եւ ապրումէր իբրեւ յափշտակած որդի իշխանի եւ ոչ իբրեւ Հայոց իշխան. բայց յետոյ երբ չափահաս եղաւ, բարեկամ-

ների միջնորդութեամբ ազատուեցաւ գերութիւնից եւ ստացաւ իւր սեփական աշխարհի մին մասը, խոստանալով հարկ տալ Նինուասին. իսկ փոքր միջոցից յետ տիրապետեց բոլոր իւր աշխարհը եւ եղաւ շատ հանճարեղ եւ զօրաւոր մարդ:

Անուշաւանից յետ՝ նորա զարմից ոչ ոք չգտանուեցաւ տիրող Հայոց աշխարհին. այլ զանազան անձինք Հայկի ցեղից ժամանակ ժամանակ զօրացան եւ տիրեցին Հայաստանին մինչեւ Պարոյրի թագաւորելը. Նոցա մասին պատմութիւնը ոչինչ առոյգ ծանօթու-
1662—1612. թիւն չէ աւանդում մեզ, այնպէս որ մեք գիտենք
1568—1531. նոցա անունները միայն, իսկ գործածը՝ շատ սակաւ
1478—1433. եւ կամ ոչինչ: Այսպիսի հայկազունք էին՝ Պարէտ,
1403—1381. Արբակ, Զաւան, Փառնակ, Սուր, Հաւանակ,
1363—1349. կամ Հոնակ, Վաշտակ, Հայկակ առաջին, Ամբակ
1332—1326. առաջին, Առնակ, Շաւարշ առաջին. սա շինեց
1302—1289. Շաւարշան քաղաքը, որ կոչուումէ եւս Արտազ,
1285—1267. Վասպուրական աշխարհումը. Նորայր, Վստամ,
1242—1227. Կար, Գոռակ, Հրանտ առաջին, Ընձակ, յետոյ
1197—1194. Գղակ, Հօրոյ եւ ապա Զարմայր:

1194—1182. Զարմայրի տիրապետութեան ժամանակումը եղաւ մեծ պատերազմը Եղիոնական կամ Եղիական (Տրոյացոց) 1200 տարու չափ Քրիստոսի ծնունդից առաջ (1): Երբոր Յոյնք գնացին պատերազմով Տրոյացոց վերայ, սոցա թագաւորը Պրիամոս խնդրեց օգնութիւն Ասորեստանի թագաւորից Տեւտամոսից եւ մեր Հայոց Զարմայր նահապետից: Տեւտամոս չկամեցաւ ինքը անձամբ գնալ պատերազմ, վասն որոյ յանձնեց իւր զօրքը Զարմայրին, եւ սա Տեւտամոսի, եւ իւր զօրքի հետ միասին գնաց Տրոյիա: Սկսուաւ պատերազմը եւ նորա հետ մեծ կոտորած, որովհետեւ Աքիլլէս Յունաց կողմից, իսկ Հեկտոր եւ Զարմայր Տրոյացոց

(1) Պատմել համառօտիւ Տրոյացոց պատերազմի պատճառը եւ գըլխաւոր հանգամանքները, որովհետեւ նորա հետ ունի կապակցութիւն Զարմայրի մահը:

կողմից մեծամեծ հարուածներ էին գործում մի-
մեանց. վերջապէս Յոյնք առաւել զօրաւոր գտնուե-
ցան, եւ Հեկտորը թէպէտ քաջութեամբ դիմեց Ա-
քիլլեսի վերայ եւ վիրաւորեց նորան, սակայն Աքիլլէս
սպանեց Հեկտորին եւ նորա քաջ նիզակակցին՝ մեր
Զարմայր նահապետին: 1182—1180.

Զարմայրից յետ, որ ընկաւ Տրոյացոց պատերազ-
մումը, հետզհետէ տիրապետեցին Հայաստանը ան-
նշան իշխաններ, որոց միայն անունները յայտնի են 1180—1137.
մեզ. այսպիսի էին՝ Շաւարշ երկրորդ, Պերճ ա- 1102.
ռաջին, Արբուն. սորա ժամանակը Սաւուղ օծուե- 1075—1035.
ցաւ թագաւոր Իսրայելացոց ազգի վերայ. Պերճ եր- 985—941.
կրորդ, սորան ժամանակակից էր Դաւիթ մարգարէն. 910—883.
Բազուկ Երկայնակեաց, սորա ժամանակը հիմ- 838—805—
նարկուեցաւ Սողոմոնի տաճարը. որին յաջորդեցին 765.
Հոյ, Յուսակ, Ամբակ երկրորդ, Կայպակ, Փառ-
նաւազ առաջին, եւ Փառնակ երկրորդ, որի
ժամանակը Ասորեստանի վերայ թագաւոր էր Փուղայ
կամ Փուա, եւ Յովնան մարգարէն քարոզեց Նինուէ
քաղաքումը: Փառնակ երկրորդ շատ անհոգ անձն էր,
եւ այդ պատճառով օտար ազգեր ոտնակոխ էին առ-
նում մեր աշխարհը. շատ գաւառներ ընկան Ասորես-
տանի իշխանութեան ներքոյ, մինչեւ որ տիրապե-
տեց Հայաստանումը Սկայորդի, Պարոյր թագաւո- 765—748.
րի հայրը՝ Հայկի զարմից: Սա բաւական զօրացաւ եւ
օտար ազգերի առած քաղաքները կրկին գրաւեց եւ
տիրեց բոլոր Հայաստանին:

ԳԼՈՒԽ Զ.

Սկայորդուց յետ տիրապետեց Հայաստանումը նո- 748—700.
րա որդին Պարոյր, Հռոմ քաղաքի շինութեան չոր-
րորդ տարին: Սորա ժամանակ Ասորեստան թագա-
ւորումէր Սարդանաբաղ, շատ անհոգ մարդ, աւելի
պարապած շռայլ եւ փափկասէր կեանքով՝ քան թէ
տէրութեան գործերով: Մինչեւ այդ ժամանակ Մարք
Ասորեստանի իշխանութեան ներքոյ էին եւ Մարաց

կառավարիչն էր Վարբակէս, ազգով Մեդացի եւ Մա-
րաց իշխան: Սա տեսանելով Սարդանաբաղի անհոգ
եւ թոյլ բնաւորութիւնը, մտածեց ապստամբուել
նորանից. այդ պատճառով դաշնակից եղաւ մեր Պա-
րոյր Նահապետի եւ Բաբելոնի Բեղեսիս իշխանի հետ,
խոստանալով նոցա երկուսին տալ թագաւորի պատիւ
եւ անուն, եթէ համաձայն լինեն իւր հետ գնալ պա-
տերազմով Սարդանաբաղի վերայ: Նոքա համաձայնե-
ցին, եւ երեքը միասին գնացին, զօրքով պաշարեցին
Նինուէ քաղաքը: Սարդանաբաղ զարհուրեցաւ, եւ չը-
կարողանալով այն բազմութեան հետ կռուել, յուսա-
հատուեցաւ, այրեց փայտակոյտի վերայ իւր անձը,
իւր բոլոր գերդաստանը եւ գանձը: Թշնամիները
743. մտան Նինուէ, կարգեցին թագաւոր Վարբակէսին, որ
յետոյ մեր Պարոյր Նահապետին տուեց թագաւորի
անուն եւ պատիւ: Թէպէտ Հայք Ասորեստանի իշխա-
նութեան ներքոյ չէին, բայց ով որ տիրապետումէր
մեր ազգի վերայ այդ ժամանակից առաջ, չէր ունե-
նում թագաւորի պատիւ կամ կոչումն. այդպիսի
արքայական անուն եւ նշանակութիւն առաջին ան-
գամ ստացաւ Պարոյր՝ Ասորեստանի տէրութեան բա-
ժանուելու օրերում եւ եղաւ Հայաստանի առաջին
պսակակիր թագաւորը, որ յետոյ շատ բարեկար-
գութիւններ անելուց յետ՝ թողեց ազգի կառավա-
րութիւնը իւր որդուն Հրաչեային:
700—678. Հրաչեայ ժամանակակից էր Յուդայ ազգի թա-
678—665. գաւորին Եզեկիային եւ Եսայի մարգարէին: Նորանից
665—630. յետ թագաւորեց նորա որդին Փառնաւազ եր-
622—605— կրորդ, Մանասէի ժամանակը՝ Եզեկիայի որդու.
630—622. յետոյ Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս, Հայկակ եր-
569. կրորդ: Սա միաբանուեցաւ Բաբիլացոց թագաւորի
Նաբուգոդոնոսորի հետ, եւ գնաց նորա հետ Երուսա-
ղեմի վերայ: Երբ Նաբուգոդոնոսոր գերի վարեց Յու-
դայ ազգը եւ տարաւ Բաբիլոն, Հայկակ թագաւորը
խնդրեց եւ ստացաւ նորանից այն գերի ժողովրդի
մէջ նշանաւորին՝ Շամբատ անունով, նորա բնտանի-

*քով Հանդերձ, բերեց նորան Հայաստան եւ տուեց
բնակութեան տեղ: Այս Շամբատից ծագեցաւ արին
Բագարատ, որ կեցաւ Վաղարշակի ժամանակ, եւ նո-
րա անունով բոլոր նորա ազգը կոչուեցաւ Բագրա-
տունի: Բագրատունեաց ցեղի մէջ շատ անձինք կո-
չուեցան Սմբատ՝ Շամբատի անունով, եւ նորա որ-
դու Ասուդի անունով՝ Աշոտ:*

Երկրորդ Հայկակից յետ թագաւորեց Հայոց վերայ 569—565.
*նորա որդին Երուանդ առաջին: Այս Երուանդի
քրոջը առեց կնութեան Հայոց երեւելի իշխանը Վարդ-
գէս, որ շինեց Քասաղ գետի վերայ ձեռակերտ՝ Վարդ-
գեսի աւան ասած՝ այն տեղումը, ուր առաջ Արտի-
մէդ քաղաքն էր, որ շինած էր Արտեմիս* (1) *չաստուա-
ծուհու անունով: Այս այն քաղաքն է, որ յետ ժա-
մանակաց նորոգեց Վաղարշ թագաւորը՝ Տրդատ թա-
գաւորի պապը, եւ կոչեց Վաղարշապատ: Երուանդ
շատ փոքր ժամանակ թագաւորութիւն արեց, վասն
որոյ եւ կոչուեցաւ Սակաւակեաց:*

Տիգրան Առաջին, Երուանդի որդին, շատ երեւելի 565—520.
*եւ հզօր թագաւոր էր եւ շատ բարերարութիւններ
արեց Հայաստանին. նախ՝ ընդարձակեց իւր տէրու-
թեան սահմանները. երկրորդ՝ զանազան յաղթու-
թիւններ արեց օտար ազգերի վերայ, նաեւս Յունաց.
երրորդ՝ հարստացրեց Հայաստանի բնակիչներին եւ
կարգ դրեց նոցա զգեստների եւ ուտեստի մասին,*

---

(1) Արտեմիս չաստուածուհին կոչուումէ եւս Անահիտ (Diana), որի համար Յոյնք իւրեանց առասպելաբանութեան մէջ ասումէին, թէ ծնել է ծովի փրփուրից. վասն որոյ Հայերը անուանումէին նորան Վարդամատն. նորան նուիրումէին վարդ եւ նորա տօնը կոչումէին Վարդավառ: Յետ ժամանակից երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ Հայաստանումը, մեր սուրբ հարքը կամելով խափանել Անահիտ չաստուածուհու պաշտօնը, որ կատարուումէր Օգոստոսի 6-ին, կարգեցին գիտութեամբ այն օրը Քրիստոսի այլակերպութեան տօնը. այդ ձեւով Անահիտի պաշտօնը վերացաւ, բայց տօնի անունը՝ Վարդավառ՝ այժմ եւս հասարակ գործածութեան մէջ է եւ ունի խորհրդաւոր նշանակութիւն, որովհետեւ Քրիստոսի այլակերպութիւնը զերապայծառ էր իբրեւ վարդ:

մանաւանդ կատարելագործեց ընտրական վիճակը կրթութեամբ եւ զգեստների հարստութեամբ։ Խորենացին զարմանալի ձեւով նկարագրումէ Տիգրանի գեղեցկութիւնը եւ իմաստութիւնը, մարմնաւոր ցանկութեան մէջ չափաւորութիւնը, արդարադատութիւնը եւ հասարակաց վերայ հաւասար խնամք տարածելը. իսկ քաջութեան մասին ասումէ՝ «Սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան. Հայկ, Արամ, Տիգրան» (1)։

Այս Տիգրանին ժամանակակից էր եւ բարեկամ Կիւրոս՝ Պարսից թագաւորութեան հիմնադիրը եւ Մարաց Աժդահակ թագաւորի թոռը (2)։ Լսելով Կիւրոսի զօրանալը, շատ ուրախանումէր նորա վերայ Տիգրան, որովհետեւ շատ սիրումէր նորան, եւ Կիւրոս շատ հաւանումէր Տիգրանի խոհեմութեանը եւ վեհանձնութեանը։ Իւր բարեկամական զգացմունքը Տիգրան յայտնեց Կիւրոսին առանձին դեսպանի միջնորդութեամբ, որով եւ հաստատեց նորա հետ միաբան դաշնակցութիւն, եւ խոստացաւ ամենայն բանում լինել նորան օգնական։ Այդ դաշնակցութեան համբաւը ինչպէս լսաւ Աժդահակ, սաստիկ խռովեցաւ եւ վախեցաւ առաւել Տիգրանից քան թէ Կիւրոսից, որովհետեւ Տիգրանին ճանաչումէր զօրեղ եւ անպարտելի, իսկ Կիւրոսին, որ նորա թոռն էր, յոյս ունէր դեռ եւս որ եւ իցէ կերպով նուաճել, կամ գոնեա հաշտուել նորա հետ։ Այդ պատճառով մտածեց զօրք հաւաքել Կիւրոսին ընդդէմ, իսկ Տիգրանին սուտ բարեկամութեամբ խաբել. վասն որոյ թուղթ գրեց Տիգրանին եւ խնդրեց նորա քրոջ Տիգրանուհուն իւրեան կնութեան, որ կարողանայ յետոյ Տիգրանուհու ձեռով կորուսանել Տիգրանին։ Սա չիմանալով Աժդահակի դաւաճանութիւնը, համաձայնեց տալ նորան իւր

(1) Խորեն. Գիրք Ա., Գլ. 31.

(2) Պատմել աշակերտներին Կիւրոսի ծննդեան եւ զօրանալու հանգամանքը. Աժդահակի ատելութեան պատճառը, եւ այլն։

քրոջը, վասն որոյ եւ թագաւորական փառքով ուղարկեց Տիգրանուհուն նորա մօտ: Յետոյ մին օր խօսակցութեան մէջ Աժդահակ ասեց իւր կնոջը՝ «Իմանում ես, որ քո եղբայրը միաբանուել է Կիւրոսի հետ եւ մտածումէ սպանել ինձ եւ քեզ, որ ինքը լինի Մարաց թագաւոր». եւ ապա յայտնապէս ասեց, «Դու պէտք է եղբօրդ սպանես, որ կարողանանք ազատուել ես եւ դու»: Թագուհին խորագէտ էր, հասկացաւ Աժդահակի դաւաճանութիւնը, ձեւացրեց իւրեան, իբր թէ համաձայն է նորա մտքին, բայց ինքը հաւատարիմ մարդիկով յայտնեց ծածկաբար իւր եղբօրը՝ Աժդահակի նենգութիւնը: Աժդահակ անտեղեակ գոլով այդ գաղտնի յայտարարութեանը, խնդրեց գրով Տիգրանին գալ իւր հետ տեսութիւն երկու թագաւորութեան սահմանում, որպէս թէ հարկաւոր եւ ծածուկ բան խօսելու համար, որը որ չէր կարելի թղթով կամ մարդու միջնորդութեամբ յայտնել: Բայց որովհետեւ Տիգրան տեղեկացել էր նորա խորամանկութեանը, վասնորոյ պատասխանեց, թէ՝ «ահա գամեմ ոչ թէ տեսութիւն, այլ պատերազմ»: Յետ այսորիկ ժողովեց որպէս իւր սեփական զօրքը, նոյնպէս եւ Կապադովկացոց, Վրաց եւ Աղուանից սահմաններից եւ յայտնեց Կիւրոսին, թէ պատրաստ է գնալ նորա հետ Աժդահակի վերայ: Այն ժամանակ Կիւրոս եւ Տիգրան գնացին պատերազմով Մարաց աշխարհը. յառաջագոյն հնարքով ազատեցին Տիգրանուհուն եւ ապա սկսեցին սաստիկ պատերազմել, Տիգրան ինքը սպանեց Աժդահակին նիզակով եւ յետոյ Կիւրոս տիրապետեց Մարաց աշխարհը, իբրեւ օրինաւոր ժառանգ այն թագաւորութեան, որովհետեւ Աժդահակի թոռն էր: Տիգրան վերադարձաւ Հայաստան, ուղարկեց իւր քրոջը Տիգրանուհուն իւր շինած քաղաքը Տիգրանակերտ ([1]) եւ այն բոլոր գա-

([1]) Տիգրանակերտ կամ Ամիդ, տաճկերէն՝ Տիարբէքիր, Աղձնեաց աշխարհումը, Տիգրիս գետի մօտ:

Гос Библиотека … Арм ССР

ւառը ընծայեց նորան իբրեւ ժառանգութիւն։ Այս Տիգրանուհու զարմից ծագեցաւ Ոստան կամ Ոստանիկ (1) ասած նախարարութիւնը, որ իբրեւ թագաւորական ցեղ էր Տիգրանակերտի կողմերումը՝ Խորենացու ասելով (2)։ Իսկ Աժդահակի առաջին կինը, որ էր Անոյշ եւ նորա որդոցը, տասն հազարի չափ գերիներով հանդերձ տուեց Տիգրան բնակութեան տեղ Արարատ լերին մօտ մինչեւ Գողթան գաւառի սահմանը, ուր Աժդահակի որդիքը յետ ժամանակաց բազմացան եւ նոցա սերունդը՝ Հայք կոչումէին վիշապազունք, այսինքն Աժդահակի ազն, որովհետեւ Աժդահակ նշանակումէ՝ վիշապ։

Յետ այսորիկ մեր Տիգրան Երուանդեանը ձեռնատու եղաւ Կիւրոսին նորա պատերազմելու ժամանակը նախ՝ Կրեսոս Լիդացոց թագաւորի հետ եւ ապա Բաբիլացոց։ Երեմիա մարգարէն գուշակելով Բաբիլոնի առումն եւ Իսրայէլացոց ազատութիւնը, յայտնի հրաւիրումէ Հայոց այդ պատերազմը՝ ասելով, «Փող հարէք ընդ ամենայն ազգս, հրաւիրեցէք ի վերայ դորա գունդս, պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեանցն եւ Ասքանազեան գնդին. ելէք 'ի վերայ (3)»։

ԳԼՈՒԽ Է.

Տիգրան առաջին կամ մեծ թողեց երեք որդի՝ Զարուհի թագուհուց ծնած, Բաբ, Տիրան եւ Վահագն,
520—493. որոց մէջ նշանաւոր էր քաջութեամբ Վահագն, որ

(1) Այս այն նախարարութիւնն է, որ Եղիշէի պատմութեան մէջ, գլ. Դ. երես 91, կոչուումէ Տուն Արքունի. ,,ազատ մարդիկ, զոր ոստանիկսն անուանէին՝ յարքունի տանէ":

(2) ,,Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն՝ իզարմից սորա ասէ լեալս իբր թագաւորական զարմն": Գիրք Ա, Գլ. 30:

(3) Երեմիայի, ԾԱ., 27:

թագաւորեց իւր հօր մահից յետ: Սա շատ զօրաւոր մարդ էր ու շատ քաջութիւններ գործեց եւ այդ պատճառով սորան նմանեցնում էին Հերակլէսին (Հերքուլէսին), յօրինում էին երգեր (1), նաեւս աստուածացուցանում էին: Այն երգերի մէջ ասում էր եւս, թէ սա պատերազմել է վիշապների հետ. գուցէ այս ասելով՝ Մարաց ազգին էին հասկանում, որ Աժդահակի ցեղից էր: Վրաց աշխարհումը արձան էին շինել սորա համար բոլոր հասակի չափ եւ սորան աստուածացուցած՝ պաշտում էին զոհագործութեամբ: Վահագնի զարմից սերեցան Վահունիք կամ Վահնունիք:

Սորա մահից հետ թագաւորութիւն արեց սորա որ- 493—475.
դին Արաւան. յետոյ որդոց որդի Ներսեհ, Զարեհ, 440—394.
Արմոգ, Բայգամ եւ Վան, որ նորոգեց Շամիրամա- 385—371.
կերտ քաղաքը, եւ այդ պատճառով քաղաքը կոչուե- 351.
ցաւ Վան: Վանից յետ թագաւորութիւն արեց Հայ- 351—328.
աստան նորա որդին Վահէ: Երբ Աղէքսանդր Մակեդո-
նացին պատերազմեց Դարեհ Կոդոման Պարսից թա-
գաւորի հետ, սա ուղարկեց զօրք Դարեհին օգնութիւն.
բայց բոլոր նորա զօրքը կոտորուեցաւ. եւ այդ իւր
զօրքի հարուածը ինչպէս լսաւ Վահէ, ժողովեց զօրք
թէ Հայաստանի երկիրներից եւ թէ Աղուանից եւ Վրաց
աշխարհից եւ գնաց ինքը անձամբ Աղէքսանդրի վերայ.
պատերազմումը յիրաւի մեծ քաջութիւններ գործեց
եւ մեծամեծ հարուածներ տուեց Աղէքսանդրի զօրքին,
բայց վերջումը պարտուեցաւ եւ ընկաւ: Իսկ Աղէք-
սանդր Մակեդոնացին, որ վերջապէս նուաճեց Պար- 328—325.
սից եւ Մարաց, Բաբիլացոց եւ Ասորեստանեայց եւ

---

(1) Խորենացին այդ երգերից մին քանի տող բերում է իւր պատմութեան մէջ, որը որ լսել է ինքը երգողներից. «Երկնէր երկին եւ երկիր. երկնէր եւ ծիրանի ծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն. ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր. ընդ եղեգան փող՝ բոց ելանէր. եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր. նա հուր հեր ունէր. ապա բոց ունէր զմօրուսն, եւ աչկունքն էին արեգակունք». Գիրք Ա. Գլ, 31:

*

այլ զանազան ազգեր, նշանակեց սոցա ամենեցուն
325—319. վերայ վերակացու, եւ Հայաստան ուղարկեց առանձին կուսակալ Միհրան անունով: Վահէից յետ մինչեւ Վաղարշակի թագաւորելը՝ Հայաստանի տիրապետների կարգը եւ գործերը լիովին գրուած չեն պատմութեան մէջ, որովհետեւ մեծն Աղեքսանդրի ժամանակից յետ աւարտուումէ այն հին մատենի պատմութիւնը, որից Մարիբաս Կատինացին քաղումէ իւր գրուածը եւ որ եղել է Խորենացու համար գլխաւոր աղբիւր. եւ այդ պատճառով Խորենացին Վահէի մահից յետ եղած անցքերի համար ասումէ՝ «Յայմհետէ մինչեւ ցթագաւորութիւնն Վաղարշակայ ի Հայս, ոչինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս [1]»: Խորենացու այդ խօսքից երեւումէ, թէ կային Հայաստան կուսակալներ եւ իշխաններ, որոց վերայ զանց է առնում նա խօսել: Վասն որոյ պատմութիւնը, որքան կարող է, քաղումէ իւր տեղեկութիւնները օտարազգի պատմագիրներից, որպիսի են Դիոդորոս Սիկիլիացի, Յուստինոս եւայլք:

---

[1] Գիրք Ա. Գլ, 31.

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ.

ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ,

ՄԻՀՐԱՆ ԿՈՒՍԱԿԱԼԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՐՏԱԽԱԶԴ։

ԳԼՈՒԽ Ա.

Ալեքսանդր Մակեդոնացու մահից յետ՝ նորա զօրագլուխների մէջ շատ խռովութիւններ ծագուեցան. նոցա մէջ երեւելի էին Պերդիկկաս եւ Կասանդր. եւ թէպէտ կարգեցին թագաւոր Ալեքսանդրի խորթ եղբօրը Արիդէոսին, որ կոչուումէր իւր հօր անունով Փիլիպպոս, եւ նորան յանձնեցին Ալեքսանդրի նորածին որդուն, որի անունն էր նոյնպէս Ալեքսանդր, այն պայմանով, որ Փիլիպպոս Արիդէոսի մահից յետ նա լինի թագաւոր, սակայն Մակեդոնացոց տէրութիւնը կառավարումէին Ալեքսանդրի զօրագլուխները, մանաւանդ Պերտիկկաս, որին ինքը մեծըն Ալեքսանդր մեռանելու ժամանակը ընծայել էր իւր արքունական մատանին։

Այս Պերդիկկաս մակեդոնական իշխանութեան ներքոյ եղած զանազան աշխարհների վերայ կուսակալներ կարգեց, եւ Հայաստան աշխարհ Միհրան կուսակալի տեղ ուղարկեց Նէոպտղոմէոս անունով մին 319—317.
իշխան, որ իւր չարաբարոյ բնութեամբ շատ նեղումէր Հայոց։ Ինքը Պերդիկկաս գնաց զօրքով Կապադոկիա եւ այդ երկրի թագաւորին, որի անունն էր Արիարաթ, մորթազերծ արեց եւ խաչեց. երկրի կառավարութիւնը յանձնեց Եւմենէսին, որ Ալեքսանդր թագաւորի ատենադպիրն էր եղել։ Արիարաթի որդին Արիոթէս փախաւ Հայաստան, եւ տեսանելով, թէ

Նէոպտղոմէոս շատ նեղումէ Հայոց, գրգռեց նոցա
սիրտը, որ արտաքսեն նորան իւրեանց աշխարհից։
Հայք հեշտութեամբ համոզուեցան Արիթէսի խօս-
317—284. քերով, եւ Հայոց նախարարը Արդուարդ հաւաքեց
զօրք եւ յանկարծակի դիմեց Նէոպտղոմէոս բռնա-
ւորի վերայ, որ միայն փախստեամբ կարողացաւ ա-
զատել իւր անձը այդ վերահաս վտանգից, եւ Ար-
դուարդ յանկուցանելով իւր կողմը Հայոց զօրքի սիր-
տը՝ տիրապետ եղաւ բոլոր ազգի վերայ։ Այս բանի
համբաւը ինչպէս լսաւ Պերդիկկաս, իսկոյն հրամա-
յեց Եւմենէսին՝ Կապադովկիայի կուսակալին՝ գնալ
նուաճել Հայոց. իսկ Եւմենէս՝ չկարողանալով բռնու-
թեամբ հնազանդեցնել նոցա, ուղարկեց պատգամ
Արդուարդին, որ կրկին ընդունի Նէոպտղոմէոսին եւ
նորա հետ միասին կառավարելով Հայաստանը, նորա
ձեռով հատուցանէ աշխարհի հարկը Մակեդոնացոց
իւրաքանչիւր տարի։ Առաջարկութիւնը ընդունեց
Արդուարդ եւ Նէոպտղոմէոս եկաւ միւսանգամ Հայ-
աստան։ Սորան միշտ յորդորումէր Եւմենէս քաղցրու-
թեամբ վարուել Հայոց հետ, եւ սա այնքան չարանու-
մէր այդ մասին նորա վերայ, որ մինչեւ վերջապէս
համոզելով Արդուարդ իշխանի սիրտը, առեց նորա-
նից զօրք եւ գնաց պատերազմով Եւմենէսի վերայ,
եւ սպանուեցաւ այդ պատերազմումը. Արդուարդ մը-
նաց միապետ։ Մի քանի տարուց յետ՝ երբ Պերդիկ-
կաս եւ Եւմենէս մեռան, Կապադովկիայի արքայորդին
Արիթէս՝ Արդուարդի զօրքի օգնականութեամբ գը-
նաց եւ տիրապետեց իւր հայրենի թագաւորութիւնը
Կապադովկիայումը։

ԳԼՈՒԽ Բ.

284—239. Արդուարդից յետ տիրապետ եղաւ Հայաստանումը
Հրանտ կամ Հորոնտ՝ Սելեւկիացոց հարկատուու-
թեան ներքոյ՝ իսկ յետոյ տիրեց մեր աշխարհին Հայ-
239—189. ոց երեւելի իշխաններից մինը՝ Արտաւազ, որ տա-
րածեց իւր իշխանութիւնը մինչեւ Ատրպատականի

սահմանները։ Սա արհամարհեց Սելեւկիացոց իշխանութիւնը եւ չէր ուղարկում նոցա հարկ. վասն որոյ Սելեւկիացոց թագաւորը Անտիոքոս երրորդ, որ կոչուեցաւ մեծ, եկաւ սորա վերայ պատերազմով եւ սա չկարողանալով կռուել նորա հետ, հնազանդեցաւ նորան եւ սկսաւ հատուցանել պայմանադրած հարկը. յետոյ շատ տարի կառավարելով Հայաստան աշխարհը խաղաղութեամբ՝ մեռաւ։ Սորա մահից յետ Անտիոքոս կարգեց Հայաստանումը երկու կուսակալ, մինը՝ Մեծ Հայաստանումը Արտաշաս անունով, եւ միւ- 189—159.
սը՝ փոքր Հայաստանումը՝ Դարեհ կամ Զահրատ։

Այս ժամանակներում Հռոմայեցիք պատերազմումէին Կարթագինեցոց հետ, եւ նոցա սպարապետն էր Աննիբաղ, իսկ Հռոմայեցոցը Ցիպիոն, որ Աֆրիկեցոց յաղթելու պատճառով կոչուեցաւ Աֆրիկեան։ Հռոմայեցիք իւրեանց յաղթութիւնից յետ պահանջումէին, որ Կարթագինեցիք տան Աննիբաղին իւրեանց ձեռը. այդ պատճառով Աննիբաղ փախել էր Սելեւկիացոց Անտիոքոս երրորդ թագաւորի մօտ, յետոյ երբ Հռոմայեցիք պատերազմեցին Անտիոքոսի հետ եւ նորան նոյնպէս յաղթեցին, սկսան նորանից նոյնպէս պահանջել Աննիբաղին, որ անճարացած փախաւ Հայաստան Արտաշաս կուսակալի մօտ եւ եղաւ նորա մտերիմ եւ սիրելի բարեկամը։ Փոքր ժամանակից յետ Հայաստանի երկու կուսակալը Արտաշաս եւ Դարեհ տեսանելով Հռոմայեցոց առաւել եւ առաւել զօրանալը, ուխտ հաշտութեան եւ բարեկամութեան դրեցին նոցա հետ, կրկին հաստատուեցան իւրեանց իշխանութեան մէջ, նաեւ թագաւորի անուն ստացան, վասն որոյ եւ արհամարհեցին Սելեւկիացոց իշխանութիւնը. այնուհետեւ Աննիբաղ կասկածելով Արտաշասից՝ նորա միաբանութեան մասին Հռոմայեցոց հետ՝ փախաւ Կրետէ կղզի (1)։ Բայց յե-

(1) Կրետէ կղզին Միջերկրական ծովի վերայ է եւ կոչուումէ այժմ՝ Կանդիա։

տոյ, երբ Սելեւկիացոց վերայ թագաւորեց Անտիոքոս
չորրորդ՝ Եպիփան (երեւելի), գնաց պատերազմով
Արտաշասի վերայ եւ հարկադրեց նորան առաջին սո-
վորութեամբ իւր աշխարհի հարկը հատուցանել Սե-
լեւկիացոց։ Արտաշասի մահից յետ տիրապետեց Հա-
159—149. յաստանումը նորա որդին Արտաւազդ՝ վերջին
կուսակալը։

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ,

ՎԱՂԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻՑ ՄԻՆՉԵՒ ԱՐՏԱՇԻՐ ԹԱԳԱՒՈՐԸ՝ ՎՌԱՄՇԱՊՀՈՅ ՈՐԴԻՆ։

ԳԼՈՒԽ Ա.

Պարթեւաց ազգը (¹) *շատ զօրեղ էր այդ ժամա-
նակներում. նոցա թագաւորը մեծն Արշակ՝ առաջին
Արշակ Պարթեւի թոռը տիրապետեց բոլոր Արեւել-
քը, յաղթեց Սելեւկիացոց կամ Ասորեստանեայց եւ
այդպէս նուաճեց համարեա բոլոր Ասիան։ Սա եկաւ
անհամար զօրքով եւ մեր Հայաստան աշխարհ եւ տի-
րապետեց նորա բոլոր երկիրները. Արտաշասի որդուն
Արտաւազդին արտաքսեց կուսակալութիւնից եւ իւր*
149—127. *եղբօրը Վաղարշակին կարգեց թագաւոր Հայաս-
տանումը 149 տարի Քրիստոսի ծնունդից առաջ եւ
յանձնեց նորան Մեծ եւ Փոքր Հայաստանը, պատուի-
րելով կարգել իւր թագաւորական աթոռը Մծբին
քաղաքումը եւ համանգամայն տիրապետել այլ եւս
մերձակայ երկիրներ՝ «Որչափ միտք քո եւ քաջու-*

(¹) Պատմել աշակերտներին Պարթեւաց ազգի ծագումն. առաջին Արշակի յաղթութիւնները եւ Պարթեւաց թագաւորութիւնը հիմնարկելը։

թիւն հասանեն, զի սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի (²)»:

Վաղարշակ հաւաքեց բազմաթիւ զօրք եւ գնաց նոցա հետ Փոքր Հայաստանի հիւսիսի արեւմտեան կողմը. նորա գնալը ինչպէս լսան Խաղտիք, Լազիկեցիք, Պոնտացիք, Կապադոկացիք եւ Փռիւգացիք, միաբանուեցան եւ դուրս եկան Վաղարշակի առաջը. բայց Վաղարշակ իւր քաջ մարդիկով Հայկի զարմից, մանաւանդ Բագարատ իշխանի հետ, որ Ծամբատի ցեղիցն էր, յաղթեց այն ազգերին, շատին կոտորեց եւ շատին փախուստ դարձրեց, եւ ապա յետ դարձաւ Մծբին: Այս տեղ ցանկանալով իմանալ թէ ինչ թագաւորներ, կամ ինչ կառավարութիւն եւ կարգեր եղել Հայաստանումը իւրեանից առաջ, միով բանիւ՝ կամելով տեղեկանալ Հայոց աշխարհի պատմութեանը եւ չգտանելով Հայաստանի մէջ մին գիրք, ուր կարողանար գտանել իւր ցանկացած տեղեկութիւնները, ուղարկեց Մարիբաս Կատինայ անունով մին Ասորի ուսումնական, քաղդէացոց եւ յունաց լեզուումը վարժ՝ իւր եղբօր Արշակի մօտ առանձին թղթով, եւ խնդրեց նորանից ցոյց տալ Մարիբասին արքունի դիւանումը հին պատմութիւնների մատեանները, այն նպատակով, որ եթէ Մարիբաս գտանէ նոցա մէջ Հայոց ազգի վերայ գրած բան՝ հանէ եւ գրէ բոլորը: Արշակ շատ գովեց Վաղարշակի ցանկութիւնը եւ խնդիրը, եւ հրամայեց բացել Մարիբասի համար Նինուէ քաղաքի նախնի թագաւորների գրքատունը, ուր Մարիբաս գտաւ մին մատեան Յունաց լեզուով գրած, այսպիսի վերնագրով՝ «Այս մատեանը Աղեքսանդրի հրամանով քաղդէական լեզուից թարգմանուեցաւ յոյն լեզու, եւ պարունակումէ իւր մէջ հին ազգերի պատմութիւնը»: Այս գրքից հանեց Կատինացին կարգով Հայոց ազգին վերաբերած

(²) Խորեն. Գիրք Ա. Գլ, Բ:

գրոյցները սկսած Հայկից մինչեւ համարեա Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակները, գրեց բոլորը յունարէն եւ ասորերէն, եւ բերեց Վաղարշակի մօտ Մծբին քաղաք: Վաղարշակ շատ ուրախացաւ այդ բանին եւ հրամայեց մեծ զգուշութեամբ պահպանել Մարիբասի գրած եւ բերած պատմութիւնը իւր գանձարանի մէջ: Յետոյ Մարիբաս այլ զանազան գրքերից քաղեց այլ եւ այլ պատմական տեղեկութիւններ. գրեց եւս Վաղարշակի, նորա որդու Արշակի եւ առաջին Արշակ Պարթեւի, նոյնպէս եւ երկրորդ կամ մեծն Արշակի գործերը: Մարիբաս Կատինայի մատեանը ունի մեր ազգի համար անչափելի գին եւ յարգ, որովհետեւ եղաւ մեր պատմութեան առաջին եւ գլխաւոր աղբիւրը, ուստի Մովսէս Խորենացին քաղումէ իւր մեզ համար անգին պատմութիւնը՝ ազգի սկզբնաւորութիւնից մինչեւ առաջին Արտաշէսը՝ Վաղարշակի թոռը:

Վաղարշակ այն Մարիբասի պատմութիւնից մեր ազգի ծագմանը եւ որպիսութեանը ստուգութեամբ տեղեկանալուց յետ, սկսաւ գեղեցկացնել Հայաստանը եւ զանազան կարգեր դնել: 1. Հայաստանի սահմաններում նշանակեց կուսակալներ կամ տեղապահներ. քաղաքների մէջ դատաւորներ, իրաւարարներ, գրագիրներ եւ այլն: 2. Բագարատ իշխանին նշանակեց թագադիր Արշակունեաց ցեղի թագաւորներին. այս այն Բագարատն է, որ Հրէից ազգից էր Շամբատի տոհմից, քաջ եւ բարեմիտ մարդ: 3. Կարգեց հանդերձապետ եւ իւրեան զգեցուցանողներ Գանանիդ՝ Գանանացու տոհմից, ուստի Գնդունիք կամ Գանանիդունիք: 4. Սպառազինուած թիկնապահներ Խորխոռունեաց տոհմից, որոց անունը դուրս է գալ Հայկի որդու Խոռի անունից: 5. Արքունական որսապան Դատ իշխանին, որ Գեղամի թոռնի Գառնիկի եւ Գառնիկի որդու Վարաժի ցեղից էր, որից ծագուեցան Վարաժնունիք: 6. Արծուէկիրք. սոցա անունով կոչուումէ առանձին տոհմ Արծրունիք, որ նշանակումէ ար-

ծիւ ունի կամ արծիւ բարձող Թագաւորի առաջեւ: Նոյնպէս կարգեց վերակացուներ բազէ կամ այլ հաւ որսացողների վերայ, եւ սոցանից ծագուեցան Հաւունիք կամ Հաւնունիք: 7. Նշանակեց տակառապետ Գին անունով մին մարդ, որից ծագուեցաւ տոհմ՝ Գնունիք, որ ստուգաբանուումէ եւս՝ գինի ունի: 8. Նշանակեց վերակացուներ զէնարանների եւ սպանդների վերայ, եւ այս տեղից ծագուեցան Սպանդունիք: 9. Տիգրանուհու ցեղից (այսինքն Տիգրանի քրոջ) կարգեց չորս մարդ առանձին սպառազինուած մարդիկով արքունական դրանը պահպանող. սոքա եւ սոցա յետագաները կոչուեցան Ոստանիկ: 10. Սահմանադրեց Մարաց Աժդահակ Թագաւորի ցեղից մինին լինել երկրորդ՝ Թագաւորից յետ. եւ այդ ցեղի նահապետը կոչուեցաւ Մուրացան, այսինքն՝ Մարաց տէր, որպէս եւ բոլոր ազգը կոչուեցաւ՝ Մուրացեանք, որ եւ Վիշապազունք:

Վաղարշակ իւր անդրանիկ որդուն Արշակին պահեց իւր մօտ Մծբին քաղաքումը՝ իբրեւ Թագաւորութեան ժառանգ. իսկ միւս որդոցը ուղարկեց Հաշտենից գաւառը (1), եւ իւրաքանչիւրին նշանակեց ռոճիկ. այնուհետեւ օրէնք կամ սովորութիւն եղաւ Արշակունեաց մէջ, որ Թագաւորը մին որդուն պահումէր իւր մօտ, որ իւրեան յաջորդէ. իսկ միւս որդոց ուղարկումէր նոյն Հաշտենից գաւառը: Այս Վաղարշակի յաջորդները կոչուեցան Արշակունիք, մեծն Արշակ Պարթեւի անունով, եւ նոյն անունով նաեւ Հայոց Թագաւորութիւնը կամ բոլոր ազգը օտարազգի պատմաբանները կոչումեն երբեմն Պարթեւ, որպէս եւ Պարսից ազգը, այնպէս՝ որ շատ ժամանակ Հայոց եւ Պարսից անխտիր կոչումեն Պարթեւք: Վաղարշակ մեռաւ Մժբին քաղաքումը:

---

(1) Հաշտենից գաւառը Չորրորդ Հայաստանումն էր:

ԳԼՈՒԽ Բ.

127—114. Վաղարշակի մահից յետ թագաւորեց Հայոց վերայ նորա որդին Արշակ առաջին։ Սորա ժամանակ խռովութիւն եղաւ Կովկասու լերին կողմերում Բուլգարների երկրումը եւ այն խռովութեան պատճառով նոցանից շատը եկան մեր Հայոց աշխարհ եւ Արշակ տուեց նոցա բնակութեան տեղի Բասէն գաւառումը ([1]). եւ որովհետեւ այն բուլգարական գաղթականների իշխանի անունն էր Վունդ, վասն որոյ եւ նոցա բնակութեան տեղին, այսինքն՝ վերին Բասէնը կոչուեցաւ Վանանդ։

114—89. Արշակից յետ թագաւորեց Հայաստանումը նորա որդին Արտաշէս առաջին, Արշական Պարսից թագաւորին ժամանակակից, որ համարւումէր պատուով ու զօրութեամբ առաջին, իսկ Հայոց թագաւորը երկրորդ։ Արտաշէս իւրեան նախագահ չինեց եւ Արշական չկարողացաւ ընդդիմանալ նորան, որովհետեւ նա նուաճեց բոլոր Պարսից՝ եւ Պարսկաստանումը հրամայեց դրամ հատանել իւր անունով եւ իւր պատկերը նորա վերայ փորագրել։ Սա իւր որդուն Տիգրանին յանձնեց Վարաժին՝ Դատի որդուն (որին որ Վաղարշակ կարգել էր որսապան) պատերազմական ուսումն տալու համար. իսկ իւր դստերը, որ էր Արտաշամայ, տուեց կնութեան Միհրդատին՝ Վրաց բդեշխին, եւ յանձնեց նորան Մաժակի եւ միջերկրեայց կառավարութիւնը. ինքը գնաց զօրքով փոքր Ասիայի՝ զանազան երկիրները մինչեւ Հելլեսպոնտոս ([2]) եւ տիրեց Թրակիան եւ Ելլադան եւ ոչ ոք չգտանուեցաւ նորան դիմակաց, որովհետեւ թէպէտ

([1]) Բասէն գաւառը Արարատեան աշխարհումն էր՝ Բարձր Հայոց սահմանակից, եւ բաժանուումէր վերին եւ ստորին Բասէն. վերին Բասէնը կոչուումէր երբեմն՝ Անփայտ Բասէն։

([2]) Յունաց ծովի եւ Պրոպոնտոսի (Մարմառա ծովի) մէջ նեղուց, այժմ՝ Դարդանել։

Հռոմայեցիք շատ զօրաւոր էին այն ժամանակ, բայց իւրեանց ներքին աղմուկներով եւ զանազան պատերազմներով պարապած գոլով, ձեռնհաս չէին Արտաշէսի հետ կռուելու։ Արտաշէսին սպանեց իւր զօրքը, որի մէջ աղմուկ եւ խռովութիւն էին ծագել յանկարծակի։ Նորա որդիքն էին Տիգրան, Արշամ եւ Գոռ։

Առաջին Արտաշէսի մահից յետ թագաւորեց նորա 89—55.
որդին Տիգրան երկրորդ, Պարսից Արշակ թագաւորի ժամանակը։ Սորա թագաւորութեան սկզբումը Յոյնք լսելով Արտաշէսի մահը եւ նորա զօրքի խռովութիւնը, մտածեցին գալ մեր աշխարհ. Տիգրան դուրս եկաւ նոցա առաջը Միհրդատի հետ եւ փախստական արեց նոցա. յետոյ գնաց Մաժակ, տիրապետեց փոքր Ասիան, եւ այն տեղ թողեց Միհրդատին զօրքով եւ անուանեց նորան Պոնտոսի եւ միջերկրեայց թագաւոր։ Ինքը վերադարձաւ Հայաստան, տիրեց այլ եւ այլ ազգերի եւ եղաւ քաջ եւ մեծանուն թագաւոր աշխարհի մէջ. շինեց շատ մեհեաններ. Ափրոդիտէի պատկերը բերեց Անի ([1]) *ամրոցից Աշտիշատ քաղաք* ([2]) *եւ դրեց Հերակլի պատկերի հետ։*

Միհրդատ ([3]), *որին որ Տիգրան կարգել էր Պոնտոսի թագաւոր, շատ զօրացաւ եւ անուանի եղաւ ամենայն ազգերի մէջ։ Նորա քեռորդիքը, որ Կապատոկիայի Արիարաթ թագաւորի որդիքն էին, ապըս-*

([1]) Անի՝ այժմ Կամախ, անառիկ եւ ամուր քաղաք է Բարձր Հայաստանի Դարանաղեաց գաւառումը, ուր Հայոց թագաւորների գերեզմաններն էին եւ արքունի գանձը։

([2]) Աշտիշատ նշանակում է յ ա ճ ա խ ա գ ո հ. Տուրուբերան աշխարհի Տարօն գաւառումն էր։

([3]) Միհրդատ՝ Խորենացու վկայութեամբ՝ (Գիրք Բ, Գլ. 11) Վրաց բդեշխ էր, եւ Տիգրանի քեռայր. սա տիրապետեց Պոնտոսի եւ շինեց այն տեղ Ամասիա քաղաք Իրիս գետի մօտ։ Սորան յաղթեց Պոմպէոս Հռոմայեցոց զօրավարը։ Իսկ միւս Միհրդատն էր սորա որդին եւ Տիգրանի քեռորդին, որ ապստամբուեցաւ Տիգրանից եւ անձնատուր եղաւ Յուլիոս Կեսարին։

տամբուեցան նորանից. վասն որոյ Միհրդատ սպանեց նոցա եւ իւրեան գրաւելով Կապադովկիան՝ նշանակեց այն տեղ թագաւոր իւր ութը տարեկան որդուն, տալով նորան անուն Արիարաթ՝ Գորդիոսի խնամակալութեան ներքոյ: Կապադովկացիք խնդրեցին Հռոմայեցոց ազգից օգնութիւն եւ նոքա ուղարկեցին Կապադովկիա Սիլլային՝ Կիլիկիայի կուսակալին, որ պատերազմեց Գորդիոսի հետ, վանեց Կապադովկիայից նորան եւ Արիարաթին, եւ կարգեց այն տեղ թագաւոր Արիոբարզանին՝ Կապադովկացոց թագաւորների ցեղից: Միհրդատի խնդիրքով Տիգրան ուղարկեց զօրք՝ Միհրան եւ Բակուր զօրագլուխների առաջնորդութեամբ՝ Արիոբարզանին ընդդէմ, որին հետ միացած էր Նիկոմիդէս՝ Բիւթանացոց թագաւորը: Նոքա ինչպէս լսան Հայոց զօրքի գալը, փախան Հռոմ եւ Հայք կրկին անգամ հաստատեցին թագաւոր Կապադովկիայումը Արիարաթին՝ Միհրդատի որդուն: Այդ միջոց Միհրդատ ընդարձակեց իւր տէրութիւնը, շինեց մինչեւ 300 նաւ եւ Տիգրանի օգնութեամբ նուաճեց զանազան ազգեր, որոց մէջ էին եւ Եգերացիք, որ ապստամբուել էին Հայոց իշխանութիւնից Արտաշէսի մահից յետ, եւ, որպէս ասումեն պատմագիրները, նա միայն գտանուեցաւ մահկանացուների մէջ, որ խօսումէր քսաներկու լեզու եւ իւր հպատակ ազգերից ոչ մինի հետ չէր խօսում երբէք թարգմանչի միջնորդութեամբ՝ որքան ժամանակ թագաւորեց: Երբ Հռոմայեցիք տեսան Միհրդատի քաջագործութիւնները, ուղարկեցին մինչեւ 200 հազար զօրք նորա վերայ. բայց մին կողմից Միհրդատ, միւս կողմից Տիգրան, նոցանից շատին կոտորեցին, շատին ձերբակալ արեցին եւ շատին փախուստ դարձրեցին: Այս վտանգի նման վտանգ Հռոմայեցիք դեռ եւս չէին տեսած, վասն որոյ մեծ վարանման մէջ էին. եւ թէպէտ սկսան ժողովել զօրք գեղացիներից եւ արհեստաւորներից, բայց նայելով Ասյանաղեան զօրքի շատութեանը եւ զօրութեանը, անյոյս եղած

ցրուեցան։ Սակայն երբ Միհրդատ տիրապետեց Փռիւգիան, Միւսիան եւ հասաւ մինչեւ Կարիա եւ Լիկիա, նորա աշխարհակալութիւնների համբաւը վրդովումէր Հռոմայեցոց սիրտը, մինչեւ նոքա կրկին անգամ ուղարկեցին նորա վերայ Սիլլային եւ յետոյ Մուրենոսին. այդ անգամ պատերազմը տեւեց երկու տարի եւ աւարտուեցաւ զանազան պայմանադրութիւններով, որոց մէջ մինն էր այն, որ Կապադովկիան յետ դարձուի Արիոբարզանին։ Մին քանի տարուց յետ Մուրենոս զօրավարը կրկին սկսաւ պատերազմել Միհրդատի հետ, բայց Սիլլայ ուղարկեց դեսպան Գաբինոսին եւ միւս անգամ նորոգեց հաշտութիւնը։ Միհրդատ այդ միջոց նուաճեց Բոսփոր գաւառը եւ կարգեց այն կողմերումը կառավարիչ տեղապահ իւր որդուն, որի անունն էր Մեհար կամ Մախար։

Այս ժամանակներում Սելեւկիացիք քաղաքական խռովութիւնների մէջ գտանուելով, խորհուրդ արեցին մին օտարազգի իշխան ընտրել իւրեանց թագաւոր. եւ որովհետեւ ամենայն թագաւորների մէջ երեւելի էր այդ ժամանակ մեր Տիգրան թագաւորը, որին կոչումէին արքայից արքայ, վասն որոյ միաբան հաւանութեամբ ընտրեցին նորան իւրեանց թագաւոր։ Այդ պատճառով Տիգրան գնաց Ասորւոց երկիր, վանեց Անտիոքոս Պիոսին եւ պայազատեց Ասորւոց վերայ։ Այն տեղ գտաւ Բարշամի արծաթի պատկերը եւ հրամայեց տանել Հայաստան, Թորդան գաւառ (1). այս այն Բարշամն է, որին սպանել էր Արամ եւ Ասորիք աստուածացուցած պաշտումէին։ Այն տեղից գնաց Տիգրան Պաղեստինի կողմերը, գերի վարեց շատ Հրէայ, յետոյ դարձաւ Մծբին եւ բնակեցրեց այն գերիներին Վարդգէսի աւանումը՝ Քասաղ գետի վերայ։

---

(1) Բարձր Հայաստանի Դարանաղի գաւառումը։

ԳԼՈՒԽ Բ.

Սիլլայի մահից յետ՝ Տիգրան գնաց Կապադովկիա եւ առեց բոլոր երկիրը. Մաժակի բնակիչներին փախեց Միջագետքի մէջ եւ մասն ինչ Տիգրանակերտ. յետոյ դարձաւ Հայաստան եւ ուղարկեց մեծ զօրք Միհրդատի մօտ, որովհետեւ Միհրդատ միւս անգամ սկսել էր պատերազմել Հռոմայեցոց հետ: Միհրդատ Տիգրանի օգնութեամբ առաւել զօրացած՝ դրաւեց Հռոմայեցոց ձեռից Ասիայի համարեա բոլոր վերնակողմերը, եւ Հռոմայեցիք թէպէտ ուղարկեցին նորա առաջ Լուկուլլոս սպարապետին, բայց Միհրդատ մընաց յաղթող ծովի եւ ցամաքի վերայ, եւ միայն Յուլիոս Կեսար Միհրդատի առած քաղաքներից շատը կարողացաւ քաղցրութեամբ կրկին նուաճել: Միհրդատ յառաջ տանելով իւր յաղթութիւնները, պաշարեց Կիզիկոն ([1]) քաղաքը, բայց այդ տեղ բաղդը չյաջողեց նորան. որովհետեւ Լուկուլլոս գնաց օգնութիւն քաղաքին, եւ թէպէտ չհամարձակուեցաւ դիմել Միհրդատի վերայ, բայց պաշարեց նորան քամակից, այնպէս որ Միհրդատ մնաց մէջ տեղում. եւ Կիզիկոն քաղաքի բնակիչները սաստիկ պատերազմելով մին կողմից, իսկ Լուկուլլոս միւս կողմից՝ մեծ հարուած տուեցին Միհրդատին, որ այդ դժուար հանգամանքումը իւր մնացած զօրքով՝ ճեղքելով Լուկուլլոսի բանակը՝ անցաւ միւս կողմը եւ փախաւ Պոնտոս: Այս յաղթութիւններից յետ Լուկուլլոս տիրապետեց շատ տեղեր փոքր Ասիայի մէջ. իսկ Միհրդատ թէպէտ եւ պատրաստեց դարձեալ զօրք Հռոմայեցոց հետ միւսանգամ կռուելու համար, բայց նորա զօրքի մէջ խռովութիւն ծագուեցաւ, շատը նորան թողեց եւ

([1]) Բիւթանիայումն էր (въ Виѳиніи), Պրոպոնտոսի ծովեզրումը (наберегу Мраморнаго моря). ամրապարիսպ եւ աշտարակազարդ քաղաք, Հռոմայեցոց համար պատուելի՝ իբրեւ քաղաք ոստանի, այսինքն՝ ազատ:

հեռացաւ, շատը գնաց միացաւ Հռոմայեցոց հետ.
վասնորոյ Միհրդատ կասկածելով՝ թէ մի գուցէ ընկ-
նի Հռոմայեցոց ձեռքը, որ շատ հետեւումէին նորան
բռնել, փախաւ Հայաստան Տիգրանի մօտ, որին շատ
եւ շատ անհաճոյ թուեցաւ նորա փախուստը:

Լուկուլլ պահանջեց Տիգրանից Միհրդատին, ասե-
լով դեսպանի միջնորդութեամբ՝ թէ հակառակ դի-
պուածումը սաստիկ պատերազմ կտայ Տիգրանին:
Այդ համարձակ խօսքերին Տիգրան պատասխանեց
միայն, թէ «Ազգականութիւնը չէ ներում ինձ մատ-
նել Միհրդատին, թէպէտ եւ թշնամի լինէր նորան.
վասնորոյ պատրաստ եմ այդ բանի վերայ պատերազ-
մել Հռոմայեցոց հետ»: Լուկուլլ պաշարեց Տիգրանա-
կերտ քաղաքը. Տիգրան ժողովեց բազմաթիւ զօրք,
(ոմանք ասումեն մինչեւ 350 հազար մարդ, այլք՝ մին-
չեւ 600 հազար) եւ գնաց Լուկուլլի վերայ. ինչպէս
տեսաւ Հռոմայեցոց զօրքը, ասաց ամբարտաւանու-
թեամբ. «Ի՞նչ են դոքա. եթէ դեսպաններ են՝ շատ
են. իսկ եթէ թշնամիներ՝ պատերազմելու համար
եկած, շատ փոքր են»: Այսպէս արհամարհելով Հռո-
մայեցոց պատրաստութիւնը, Տիգրան բոլորովին ան-
հոգ մնաց, կարծելով, թէ մին շնչով կկլանէ նոցա,
եւ նորա զօրքը եւս անփոյթ լինելով՝ սկսան պարա-
պել խրախութեամբ: Լուկուլլ հասկացաւ Տիգրանի
միտքը եւ քաղեց օգուտ նորա անհոգութիւնից. յան-
կարծ յարձակուեցաւ նորա վերայ, եւ նա անպատ-
րաստ գոլով իւր կարգադրութեան մէջ՝ շփոթուեցաւ
եւ հրամայեց զօրքին յետ դառնալ. Հռոմայեցիք
ընկան Հայոց զօրքի վերայ եւ նոցանից շատին կոտո-
րեցին, շատին փախուստ դարձրեցին եւ շատին գե-
րի վարեցին: Լուկուլլ մտաւ Տիգրանակերտ եւ յա-
փշտակեց քաղաքի հարստութիւնը, նոյնպէս եւ թատ-
րոնական զարդերը, որ Տիգրան զանազան տեղից հա-
ւաքած էր: Տիգրան ինչպէս լսաւ, որ Լուկուլլ առել
է Տիգրանակերտը, ուղարկեց նորա վերայ իւր հեծե-
լազօրը, եւ նա հարկադիր եղաւ գնալ Մծբին քաղա-

քի վերայ, որի վերակացուն էր այն ժամանակ Տիգրանի եղբայրը Գուռ։ Այդ քաղաքի հետ բոլոր ամառը կռուեց Լուկուլլ եւ չկարողացաւ առնուլ, որովհետեւ պատած էր կրկին պարսպով եւ Տիգրան իմանալով նորա անառիկ լինելը, չգնաց նորան օգնութիւն. բայց ձմեռան սկզբումը, երբ բնակիչները կարծելով՝ թէ Հռոմայեցիք ձանձրացած պէտք է լինեն, անհոգ կեցած էին եւ արտաքին պարսպի պահապանները հեռացած, Հռոմայեցիք շինեցին մեքենաներ եւ բարձրացան պարսպի վերայ, կոտորեցին մնացած պահապաններին եւ առեցին հեշտութեամբ երկրորդ պարիսպը. վերջապէս բնակիչները եւ Տիգրանի եղբայրը Գուռ անձնատուր եղան Լուկուլլին։ Սորանից յետ Տիգրան կամենալով վանել իսպառ Հռոմայեցոց, ուղարկեց Միհրդատին Լուկուլլի վերայ եւ ինքը սկսաւ պատերազմել միւս կողմից. նոքա երկուսը այնքան հարուածներ տուեցին Լուկուլլին քանիցս անգամ, մինչեւ կարողացան յետ դարձուցանել այն տեղերը, որ Հռոմայեցիք առել էին նոցանից. Տիգրան առեց եւս Կապադովկիան եւ յանձնեց Միհրդատին, եւ նոցա քաջութեան համբաւը տարածուեցաւ ամենայն տեղ ու մեծ տարակուսանքի մէջ ձգեց Հռոմի ծերակոյտը, որ հարկաւոր համարեց կարգել այն զօրքի վերայ ընդհանուր հրամանատար Պոմպէոսին, յանձնելով նորան վերջացնել այն պատերազմը կամ յաղթութեամբ եւ կամ հաշտութեամբ։ Պոմպէոս գնաց Միհրդատի վերայ. բայց որովհետեւ այն կողմերը աւերել էին Տիգրան եւ Միհրդատ, վասնորոյ ուտեստի պակասութիւնը հարկադրեց Հռոմայեցոց զօրքի շատին փախչել Միհրդատի մօտ, իսկ մնացած զօրքը վանեց Միհրդատ։ Պոմպէոս գնաց Փոքր Հայաստան. նորա քամակից գնաց եւ Միհրդատ. բայց այդ անգամ այնքան հարուած ստացաւ Պոմպէոսից, որ հարկադիր եղաւ գնալ նոր զօրք ժողովել։ Այդ միջոց Պոմպէոս տիրապետեց շատ երկիրներ, որ Միհրդատի իշխանութեան ներքոյ էին եւ գերի վարեց նորա որդուն՝ Փոքր Միհրդատին։

Անբաղդապէս Տիգրանի որդին Տ ի ր ա ն ապստամբուեցաւ այդ ժամանակ իւր հօրից եւ մին քանի Հայոց նախարարների հետ գնաց Արշէզ Պարսից թագաւորի մօտ, գրգռեց նորան պատերազմ Տիգրանին ընդդէմ եւ նորա հետ միասին եկաւ Հայաստան, առեց մին քանի քաղաքների ու յետոյ պաշարեց Արտաշատ քաղաքը (1)․ բայց չկարողացաւ առնուլ, վասնորոյ Արշէզ թողեց նորան այն տեղ իւր զօրքով եւ ինքը վերադարձաւ իւր աշխարհը։ Տիգրան դիմեց բարկութեամբ իւր որդու վերայ եւ նա անճարացած փախաւ եւ դիմեց Պոմպէոսին, որ յետոյ Տիրանի առաջնորդութեամբ մտաւ Հայաստան եւ ապա հաշտութիւն դրեց Տիգրանի հետ. Տիգրան յետ դարձրեց Հռոմայեցոց՝ Ասորոց եւ Փիւնիկեցոց աշխարհի մասը, որ առել էր ինքը Սելեւկիացոց ձեռից, նա եւս Կապադովկիայի եւ Կիլիկիայի մասը։

Նոյն ժամանակներում Միհրդատի որդին Փառնակէս ընդդիմացաւ իւր հօրը, սկսաւ թագաւորել նորանից անկախ ու կռուել այն ամրոցի հետ, ուր բընակում էր Միհրդատ՝ Պանտոսումը։ Միհրդատ շատ նեղութեան եւ դժուարութեան մէջ էր, նորա մտերիմ բարեկամները թողել էին նորան, զօրքը ապըստամբուել էր նորանից եւ երբ իմացաւ, թէ իւր Փառնակէս որդին միտք ունի նորան բռնել եւ Հռոմայեցոց ձեռը մատնել, խմեց թունալից բաժակը եւ մեռաւ։

Պոմպէոս․ որ Ասորոց երկրումն էր, գնաց Հրէաստան եւ առեց Երուսաղէմը․ յետոյ դարձաւ Հռոմ մեծ յաղթութեան հանդիսով։ Ասորոց երկրի վերայ վերակացու կարգուեցաւ Գաբինոս Հռոմայեցի, որի

---

(1) Արտաշատ Արարատեան աշխարհումն էր, այն տեղումը, ուր Երասխ եւ Մեծամօր գետերը խառնուումեն։ Այս քաղաքի շինութիւնը վերածելի է Ա. Արտաշէսին, Տիգրանի հօրը. իսկ Բ Արտաշէսին՝ Սանատրուկի որդուն՝ սորա նորոգութիւնը միայն։ (Տես ստորագր. հին Հայաստ. Ինճիճեանի. եր. 489)։

ժամանակը Տիգրան դիմեց զօրքով Հռոմայեցոց վերայ, եւ Գաբինոս պէտք էր այն միջոց գնար Եգիպտոս; որովհետեւ Պտղոմէոս օգնութիւն էր խնդրում նորանից՝ Աղեքսանդրացոց ընդդէմ. վասնորոյ գնալու ժամանակը ծածուկ հաշտութիւն հաստատեց Տիգրանի հետ եւ յետ դարձրեց գերութիւնից Տիգրանի քեռորդուն՝ Փոքր Միհրդատին. իսկ ինքը համբաւ հանեց, թէ իւր զօրականները թագուն բաց են թողել նորան: Տիգրան կասկածելով, թէ գուցէ այդ Փոքր Միհրդատը իւր հարազատ քեռորդին չլինի, չտուեց նորան իւր հօր ժառանգութիւնը. վասնորոյ Փոքր Միհրդատը դիմեց Յուլիոս Կեսարին, որից ըստացաւ յետոյ Պերգամոնի (1) իշխանութիւնը. Յետ ժամանակաց այս Փոքր Միհրդատը գնաց Մաժակ, նորոգեց այն քաղաքը եւ Յուլիոսի պատուի համար կոչեց՝ Կ ե ս ա ր ի ա:

Յուլիոս Կեսարի մահից յետ՝ հռոմէական հասարակապետութեան ծայրագոյն կառավարիչը եղաւ հօկտաւիանոս (յետոյ կայսր առաջին), որի հետ իշխանակից էին Անտոնինոս ու Լեպիդոս (2): Տիգրան ծերացած էր այդ ժամանակ եւ ակար. վասնորոյ Հռոմայեցիք առեցին Ասորոց այն մասը, որ պատշաճումէր Տիգրանին. Տիգրան հարկադիր եղաւ միաբանուել Պարսից Արշէգ թագաւորի հետ եւ այդ միաբանութիւնը հաստատելու համար դարձրեց նորան այն նախագահութիւնը, որ իւր հայրը Արտաշէս սեփականել էր իւրեան եւ տուեց իւր դստերը նորա որդուն Բակուրային կնութեան: Արշէգ ուղարկեց մեծ զօրք Տիգրանին օգնութիւն՝ իւր Բակուրայ որդու հետ. Տիգրան՝ նորա եւ իւր զօրքը կարգեց Բարզափրան սպարապե-

---

(1) Պերգամոն՝ Միսիայումն էր, որ պարունակումէր՝ Դրօաս, Պերգամ եւ Խօլիս:

(2) Պատմել աշակերտներին ընդհանուր պատմութիւնից՝ Հռոմայեցոց եռապետների նշանակութիւնը, անունները եւ ժամանակը մինչեւ կայսրութեան սկզբնաւորութիւնը:

տի կառավարութեան ներքոյ, Թէպէտ եւ սպարապետի անունը՝ պատուի համար տուեց Բակուրային: Բարզափրան նուաճեց Ասորիքը. նորա առաջ Թէպէտ դուրս եկաւ Անտոնինոս, բայց որովհետեւ չունէր բաւական պատրաստութիւն, վանորոյ յետ դարձաւ եւ գնաց Հռոմ: Իսկ Բարզափրան գրմեց Երուսաղէմ, յափշտակեց Հիւրկանոսի (1) ինչքը եւ իւրեան Հիւրկանոսին գերի վարեց Հայաստան, ուր Տիգրան հրամայեց տալ բնակութեան տեղի գերեալ հրէից Շամիրամակերտ քաղաքումը: Հերոդէս փախաւ Հռոմ եւ պատմեց Հոկտաւիանոսին եւ Անտոնինոսին ինչ որ Հայոց եւ Պարսից զօրքը գործեցին. նոքա մեծ զօրքով ուղարկեցին Հերոդէսին Հրէաստան եւ կարգեցին այն տեղ Թագաւոր, որ կարողանայ պատերազմել Հայոց եւ Պարսից հետ:

ԳԼՈՒԽ Գ.

Նոյն օրերում Տիգրան մեռաւ եւ նորա տեղ նըստաւ Թագաւորական աթոռը նորա որդին Արտաւազդ առաջին, որին կարգել էր Տիգրան Արարատեան աշխարհի կառավարիչ. այն տեղումը եւս բնակուեցաւ Արտաւազդ եւ չգնաց Միջագետք, ուր էր Հայոց Թագաւորութեան աթոռը: Արտաւազդ անցուցանումէր իւր կեանքը ուտելով, խմելով եւ որս գնալով. այդ պատճառով տաղտկալի եղաւ իւր զօրքին եւ Թշնամիները առեցին շատ տեղեր Միջագետքի մասնից: Անտոնինոս՝ Հռոմայեցոց ծերակուտի եւ Հոկտաւիանոսի խորհրդով՝ գնաց Պարթեւաց ընդդէմ եւ առեց Շամշատ (2) քաղաքը, ուր լաւ

55—30. (20 տարի իւր հօր հետ միասին, յետոյ 5 տարու չափ միայնակ):

(1) Հրէից քահանայապետ էր եւ Թագաւոր:

(2) Կամ Շամուշատ, Սամոստիա. ամուր քաղաք էր Փոքր Հայոց՝ Եփրատ գետի մօտ: Այդ տեղ նահատակուեցան եօթն սուրբ վկայքն Քրիստոսի՝ Մաքսիմիանոս կայսեր ժամանակը. եւ այդ տեղ բնակուումէին երբեմն Արեւորդիք, կռապաշտներ Հայոց ցեղից, որ աստուածացուցանումէին արեգակն:

Տիգրանի մահը եւ ուրախացաւ։ Արտաւազդ թագաւորը կասկածելով, թէ մի գուցէ Անտոնինոս գայ իւր աշխարհը եւս, վարձեց զօրք Կովկասու լերին բնակիչներից, Ալուանից, Վրաց, եւ Ատրպատական աշխարհից. բայց երբ Անտոնինոս բազմաթիւ զօրքով դիմեց արեւելեան կողմը, Արտաւազդ վախեցաւ եւ հաշտութիւն խօսեց Անտոնինոսի հետ, խոստանալով նիզակակից լինել Հռոմայեցոց։ Այդ հաշտութիւնը թէպէտ հաճոյ էր Հոկտաւիանոսին, բայց որովհետեւ նա ծածուկ թշնամացած էր Անտոնինոսի հետ, վասնորոյ գրեց Արտաւազդին, որ չօգնէ Անտոնինոսին։ Անտոնինոս գնաց Պարսից վերայ եւ չստանալով օգնութիւն Արտաւազդից՝ յաղթուեցաւ։ Հռոմայեցիք միաբան սկսան գրգռել Անտոնինոսին՝ Արտաւազդ թագաւորին ընդդէմ, որ հաշտութեան հակառակ ոչ միայն չօգնեց Հռոմայեցոց, այլ եւ օգնութիւն տուեց Պարսից. բայց Անտոնինոս ընդհակառակն՝ կասկածելով թէ գուցէ Արտաւազդ եւս իւրեան յաղթէ, մեծ յարգանք ցոյց տուեց նորան, մանաւանդ որ ինքը եւ իւր զօրքը կարօտ էին ուտեստի, եւ ձմեռն մօտ լինելու պատճառով չէր կարող գնալ վանդաւոր ճանապարհ. վասնորոյ խնդրեց Արտաւազդից հրաման, որ ձմեռն անցուցանէ Հայաստանումը, եւ Արտաւազդ կատարեց նորա խնդիրը, նա եւս ուղարկեց նորա զօրքի համար կերակուր եւ ճանապարհի պաշար։

Երբ որ ձմեռն անցաւ, Անտոնինոս գնաց Եգիպտոս՝ Կղէոպատրա թագուհու մօտ եւ այն տեղ մտածումէր որ եւ իցէ հնարքով բռնել Արտաւազդին եւ իւր վրէժը առնուլ նորանից։ Այդ մտքով ուղարկեց նորա մօտ պատգամաւոր, երբ որ նա Մծբին էր, եւ բարեկամ ձեւանալով հրաւիրեց նորան իւր մօտ Եգիպտոս. բայց Արտաւազդ հասկանալով Անտոնինոսի դաւաճանութիւնը՝ յանձն չառեց գնալ. յետոյ Անտոնինոս գործ դրեց այլ հնարք, խնդրեց Արտաւազդին տալ իւր դստերը նորա որդուն կնութեան։ Ար-

տաւազդ չհամաձայնեց եւ այդ առաջարկութեանը. ապա Անտոնինոս ամարան ժամանակը եկաւ Փոքր Հայաստան եւ այն տեղ հրաւիրեց Արտաւազդին իբր մին խորհուրդ հարցանելու համար. Արտաւազդ չըգնաց: Այն ժամանակ Անտոնինոս գնաց մեծ զօրքով Մեծ Հայաստան, ձեւանալով իբր Պարսից վերայ է գնում եւ միւանգամ հրաւիրեց Արտաւազդին իւր մօտ: Այդ անգամ Արտաւազդ խաբուեցաւ. տեսանելով, թէ Անտոնինոս ամենայն թղթերի եւ գործի մէջ բարեկամութիւն է ցոյց տամ եւ շատ խոստմունք է առնում, գնաց Հռոմայեցոց բանակը, եւ Անտոնինոս խոկոյն բռնեց նորան եւ նորա որդոցը, եւ հրամայեց շղթայել: Հայոց զօրքը ինչպէս տեսաւ, թէ Արտաւազդ եւ նորա որդիքը կապանքի մէջ են, ընտրեց թագաւոր Ա ր շ ա մ ի ն՝ Արտաւազդի հօրեղբօրը:

Արշամ (կամ Արջամ) չունենալով բաւական պատ-
րաստութիւն, որ կարողանար կռուել Հռոմայեցոց 30—1.
հետ, մտածեց հաշտութիւն խօսել. բայց որովհետեւ Հայոց զօրքը չյօժարեցաւ հաշտութեանը, վասնորոյ Արշամ գնաց նոցա հետ Հռոմայեցւոց վերայ, որոց թէպէտ շատ հարուածներ տուեց, բայց վերջումը յաղթուեցաւ. Անտոնինոս առաւել եւս զօրացաւ եւ իւրեան գրաւելով Հայոց համարեա բոլոր երկիրները՝ մասն ինչ պատերազմով, մասն ինչ քաղցրութեամբ, բաժանեց Հայաստանը երեք մասը. Ստորին Հայաստանումը (1) նշանակեց թագաւոր իւր որդուն Աղէքսանդրին. Վերին Հայաստանը (2) յանձնեց Մա-

---

(1) Ստորին Հայք են կոչուում Հայաստանի երկիրները՝ Երասխ գետից սկսած մինչեւ Միջագետք եւ ունի 9 աշխարհ՝ Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական եւ Արարատեան:

(2) Վերին Հայք է ասուում Երասխ գետից մինչեւ Կուր գետը եւ պարունակումէ 6 աշխարհ՝ Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտի, Գուգարք եւ Տայք:

րայ Թագաւորին. Փոքր Հայաստանը առեց Պոնտոսի Թագաւորին՝ Պողեմոնին։ Արտաւազդին եւ նորա որդոցը տարաւ իւր հետ Եգիպտոս Կղէօպատրայի մօտ։

Երբ Հոկտաւիանոս եւ Անտոնինոս պարապած էին անդադար պատերազմներով միմեանց մէջ, մեր Արշամ Թագաւորը ցանկանալով գործ ածել նոցա խռովութեան ժամանակը իւր տէրութեան օգտի համար, միաբանուեցաւ Պարսից Արշաւիր Թագաւորի հետ եւ նորա հետ միասին գնաց յանկարծակի Մարաց վերայ եւ նուաճեց նոցա. յետոյ ազատեց Հռոմայեցոց իշխանութիւնից Ստորին եւ Փոքր Հայաստանը, որը որ տիրապետեց ինքը մինչեւ Կեսարիայի կողմերը. իսկ Վերին Հայաստանը վեր առեց Արշաւիր եւ կարգեց այն տեղ փոխարքայ Արտաշիաս անունով մին Պարսիկ. այնուհետեւ Վերին Հայոց աշխարհը մնաց օտարների ձեռքումը մինչեւ Երուանդի ժամանակը, (որ Թագաւորեց Սանատրուկից յետ)։

Լսելով Անտոնինոսի մահը եւ Հոկտաւիանոսի միապետութիւնը, Արշամ ուղարկեց սորա մօտ դեսպան եւ խնդրեց ուխտ հաշտութեան հաստատել իւրեանց մէջ, խոստանալով հարկ տալ Հռոմայեցոց Միջագետքի եւ Կեսարիայի կողմերի համար եւ լինել նոցա հպատակ։ Հոկտաւիանոս ընդունեց եւ հաստատեց հաշտութեան պայմանները. վասնորոյ Արշամ գնաց բնակեց Միջագետքի մէջ Մծբին քաղաքումը եւ այդ ժամանակից Հայք հարկատու եղան Հռոմայեցոց։ Վերին Հայոց աշխարհները, ինչպէս ասացինք, Պարսից իշխանութեան ներքոյ էին։ Մին քանի տարուց յետ, երբ Հոկտաւիանոս գնաց Ասորոց աշխարհ՝ Վերին Հայոց նախարարները ուղարկեցին նորա մօտ դեսպան եւ գանգատելով Պարսից ազգի բռնութեան վերայ՝ խնդրեցին, որ նոցա վերայ Թագաւոր կարգէ Փոքր Տիգրանին՝ Արտաւազդի որդուն (որ Հռոմ պատանդ էր), եւ խոստացաւ հնազանդ լինել Հռոմայեցոց։ Հոկտաւիանոս, որ սպասումէր այնպիսի մին

առթի, յանձնեց այդ գործը Տիբերիոսին, որ տարաւ Փոքր Տիգրանին վերին Հայաստան եւ այն տեղ կարգեց նորան թագաւոր՝ Արտաշխասի տեղ: Պարսից թագաւորը չկարողացաւ այդ բանին ընդդիմանալ, որովհետեւ նոր հաշտութիւն էր հաստատել կայսեր հետ եւ նորանից երկնչումէր. իսկ Հայոց թագաւորը Արշամ, որ ունէր իւր իշխանութեան ներքոյ Հայաստանի ընդարձակագոյն բաժինը, առաւել ուրախացաւ, որ օտարազգի տիրապետը բարձուաւ եւ իւր մերձաւոր հարազատ Փոքր Տիգրանը (իւր եղբօր թոռը) տիրապետեց նորա փոխանակ: Արշամ շինեց Արշամաշատ քաղաքը (1) եւ մեռաւ, թողլով թագաւորութեան ժառանգ իւր որդուն Աբգարին:

ԳԼՈՒԽ Դ.

Աբգար՝ Արշամի որդին թագաւորեց Հայոց վե- 1—34.
րայ Մծբին քաղաքումը: Սա թիկնաւէտ եւ բարձրա- (Քրիստոսի
հասակ մարդ էր, իւր քաղցր բնաւորութեամբ եւ թուական).
իմաստութեամբ շատ նշանաւոր իւր ժամանակի մարդկանց մէջ, եւ այդ իսկ պատճառով կոչուեցաւ աւագ այր: Յոյնք եւ Ասորիք չկարողանալով ուղիղ արտասանել այդ բառերը, կոչումէին նորան աւագար կամ աբագար, վերջապէս՝ Աբգար: Արաբացիք ասումէին՝ ագպար, եւ որովհետեւ ամենեքեան առ հասարակ այդ անունն էին ընծայում նորան, վասնորոյ նորա բուն անունը չյիշուեցաւ, եւ աբգար բառը դարձաւ յետոյ մականուն Եդեսիայի յետագայ թագաւորների:

Աբգար ուղարկեց իւր Ովդէ քրոջը եւ նորա Սանատրուկ ստնդիաց որդուն սպասաւորներով հանդերձ՝ Հայք երկիրը (2): Ճանապարհումը վեր է կե-

(1) Կամ Արշամուշատ, այլապէս՝ Աշմուշատ, Չորրորդ Հայոց մէջ:

(2) Հայք՝ Հայոց Ձոր գաւառումը Վասպուրական աշխարհի: Այսպէս կոչեց Հայկ իւր պատերազմի տեղը Բելի հետ. յետոյ նոյն անունը ստացաւ այն դաստակերտը, որ շինեց Հայկ իւր պատերազմի տեղումը:

նում սաստիկ մրրիկ եւ գամէ շատ ձիւն Կորդուաց լերին մօտ. Ճանապարհորդները ցիր եւ ցան են լինում, մինը միւսին կորուսանումէ. Սանատրուկի դայեակը Սանոտ (3) վեր է առնում երեխային իւր գրկերի մէջ. երեք օր, երեք գիշեր մնումէ նորա հետ ձիւնի տակումը. յետոյ երբ գնումեն երեխային որոնելու, խնդրակների շունը գտանումէ հոտառութեամբ նորա տեղը, եւ այդպէս երեխային հանումեն ձիւնի մէջից եւ տանումեն Հայք. եւ որովհետեւ Սանոտ պահպանումէ երեխային անվնաս այն վտանգից, այդ պատճառով երեխայի անունը կոչումէ Սանատրուկ, այսինքն՝ Սանոտի տուրք:

Աբգարի թագաւորութեան ժամանակը նշանաւոր է մեր պատմութեան մէջ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ ծննդեամբ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքումը:

Երբ որ մեռաւ Փոքր Տիգրանը Արտաւազդեան, այն՝ որ կարգուած էր Վերին Հայոց թագաւոր, այն կողմի Հայք խորհուրդ արեցին մնալ այնուհետեւ անկախ Հռոմայեցոց իշխանութիւնից: Իսկ Հոկտաւիանոս Օգոստոս կայսրը՝ ինչպէս լսաւ Փոքր Տիգրանի մահը, ուղարկեց նորա տեղ Վերին Հայաստան նորա եղբօրը Երուազին, որ պատանդ էր Հռոմ: Հայք ընդդիմացան Հռոմայեցոց, նոցա զօրքը կոտորեցին եւ վանեցին, կարգեցին իւրեանց թագաւոր այլ Տիգրան, որ Կրտսեր է ասւում: Այդ բանումը Հայոց օգնութիւն տուեց Պարսից թագաւորը Արշաւիր, որ Հռոմայեցոց բարեկամութիւնից բոլորովին հեռացաւ: Օգոստոս կայսրը հարկադիր եղաւ ուղարկել զօրք Հայոց եւ Պարսից վերայ, որ ինչպէս լսան Հռոմայեցոց զօրքի գալը, գրեցին հաշտութեան թուղթ կայսերը եւ նա համաձայնեց, որ կրտսեր Տիգրանը մնայ թագաւոր Վերին Հայաստանում, մի-

(3) Սանոտ՝ Բիւրատ Բագրատունու քոյրն էր եւ Արծրունի Խոսրենի կինը:

այն թէ Հռոմայեցւոց հպատակ լինի։ Երեք տարուց յետ Հայոց նախարարները մերժեցին կրտսեր Տիգրանին եւ Հռոմայեցիք նախարարների հաւանութեամբ կարգեցին վերին Հայաստանումը թագաւոր Ապրսամին՝ Արծրունեաց ազգից (1)։

Հոկտաւիանոս Օգոստոս կայսրը թէպէտ ունէր հաստատուն բարեկամութիւն Աբգար թագաւորի հետ, բայց զանազան հանգամանքներով եւ չարասիրտ մարդկանց թշնամութեամբ փոքր ինչ անբաւականութիւն էր ծագել նոցա մէջ, եւ Օգոստոս վատ աչքով էր նայում մեր Աբգար թագաւորին։ Իւր հաշտութիւնը կայսեր հետ նորոգելու եւ հաստատելու համար Աբգար ճանապարհորդեց Հռոմ եւ երբ բերան առ բերան խօսեց կայսեր հետ, կայսրը հիացաւ թագաւորի իմաստութեանը, անչափ սիրեց նորան, ցանկանումէր միշտ նորա հետ լինել եւ ոչ մին օր չէր թողնում նորան հեռանալ իւրեանից, նա եւս թոյլ չէր տամ նորան վերադառնալ Հայաստան, մինչեւ ինքը կայսրը երկար ժամանակից յետ համաձայնեց արձակել նորան իւր աշխարհը։ Միմեանցից բաժանուելու ժամանակը, կայսրը ասեց Աբգարին, թէ՝ փառք կհամարէր իւրեան, եթէ Աբգար խնդրէր նորանից մին բան. բայց Աբգար իւրեան ոչինչ բանի կարօտ չհամարելով՝ խնդրեց կայսրից միայն շինել Հայաստանումը թէատրոն Հռոմայեցոց ձեւով։ Երբ Աբգար վերադարձաւ Հայաստան, նորա նախարարները եւ մեծամեծները հարցանումէին, թէ ինչ բարի բան էր տեսել Օգոստոս կայսրից. Աբգար պատասխանեց՝ «Ցաւ սրտի անմընաս եւ ուրախութիւն անօգուտ»։ Այդ խօսքերով Աբգար ցանկացաւ յայտնել թէատրոնի նշանակութիւնը, որի հիմնարկութեան համար խնդրել էր

---

(1) Ապրսամին Հռոմայեցիք կոչումեն Արիոբարզան՝ Մարաց ազգից, որովհետեւ նոքա կարծում էին, թէ Արծրունեաց աշխարհը՝ Մարաց աշխարհի մասն է։

Օգոստոսին. այսինքն՝ թէատրոնի մէջ եթէ տրտմալի բան են առաջարկում, հայեցողների սրտին լինումէ ցաւ՝ այլ անվնաս. իսկ եթէ զուարճալի հանդէս են պատկերացնում, լինումէ ուրախութիւն, բայց առանց մին շահի:

Երբ Հոկտաւիանոս Օգոստոս կայսեր մահից յետ թագաւորեց նորա որդէգիրը Տիբերիոս, Աբգար թագաւորը ուղարկեց նորա մօտ դեսպաններ խաղաղութեան եւ սիրոյ դաշն հաստատելու համար. բայց նորա դեսպաններին արհամարհեց Գերմանիկոս (1)՝ Տիբերիոսի որդէգիրը: Աբգար շատ բարկացաւ այդ բանի վերայ եւ մտածումէր ապստամբուել Հռոմայեցոց իշխանութիւնից. բայց որովհետեւ շատ բան էր հարկաւոր այդ դիտաւորութիւնը կատարելու համար, վասնորոյ առ ժամանակ լռեց եւ ծածուկ սկսաւ պատրաստութիւն տեսանել: Նախ եւ առաջ ամրացրեց Եդեսիա քաղաքը (2) անառիկ պարիսպներով, նորոգեց եւ զարդարեց զանազան շինութիւններով, եւ այն տեղ տարաւ իւր արքունիքը եւ մեհեանների մատեանները: Սանատրուկին, որ շատ զօրեղ եւ իմաստուն մարդ էր, կարգեց զօրագլուխ եւ ուղարկեց Շաւարշան գաւառ (3), որ պատրաստուի պատերազմ Հռոմայեցոց ընդդէմ: Այսպիսի զբաղմունքների մէջ էր Աբգար, երբ որ մեռաւ Վերին Հայաստանի թագաւորը Սպրամ, եւ Արտաշէս՝ Պարսից թագաւորը (Արշաւիրի որդին) կարգեց այն տեղ թագաւոր իւր որդուն Արշէզին՝ Հռոմայեցոց կամքին ընդդէմ: Այդ պատճառով Տիբերիոս կայսրը ուղարկեց զօրքով արեւելից կողմը Գերմանիկոսին, որ վանեց Վերին Հայաստանից Արշէզին եւ նորա տեղ նշանակեց՝ Հայոց նախարարների

(1) Գերմանիկոս՝ Օգոստոս կայսեր քրոջ Հոկտաւիայի թոռն էր:

(2) Ասուումէ եւս՝ Ուռհա քաղաք. Միջագետքումը:

(3) Յետոյ կոչուեցաւ Արտազ. Մեծ Հայաստանի Վասպուրական աշխարհումը:

Հաճութեամբ՝ Զենոնին՝ Պոնտոսի Պողեմոն թագաւորի որդուն։ Այլ որովհետեւ այդ միջոց շատ զօրացել էր այն խռովութիւնը, որ Արշաւիր Պարսից թագաւորի մահից յետ ծագել էր Պարսկաստան Արտաշէսի եւ նորա եղբարց մէջ թագաւորութեան մասին, վասնորոյ Աբգար թողեց առ ժամանակ իւր խորհուրդը Հռոմայեցոց հետ պատերազմելու մասին եւ գնաց Պարսկաստան, խաղաղութիւն հաստատեց Արտաշէսի եւ նորա եղբարց մէջ (1)։ *Այս կարգադրութիւնից յետ Աբգար թագաւորը հիւանդացաւ Պարսից աշխարհումը բորոտութեան ցաւով, վասն որոյ շտապելով դարձաւ Եդեսիա։*

Այդ ժամանակ խռովութիւն ծագուեցաւ Հերոդէսի եւ Արաբիայի թագաւորի Արետի մէջ (2)։ *Արետ բարեկամ գոլով Աբգարին, խնդրեց նորանից օգնութիւն, եւ Աբգար ուղարկեց Խոսրէն Արծրունուն, որ Արետի հետ միասին պատերազմեց Հերոդէսին ընդդէմ եւ յաղթեց նորան։ Հերոդէս գրեց Աբգարի վերայ սուտ ամբաստանութիւն Հռոմ, որպէս թէ Աբգար զօրք է ժողովել Պարսից եւ Հայոց ազգից եւ մտադիր է պատերազմել Հռոմայեցոց հետ եւ թէ այս պատճառով էր գնացել նա Պարսկաստան։ Աբգար ինչպէս իմացաւ Հերոդէսի այդ չարամտութիւնը, ուղարկեց դեսպաններ (որոց մէջ կար եւ նորա սուրհանդակը Անանէ) Մառինոս Հռոմայեցոց իշխանի մօտ, որ Պաղեստինի կողմերի վերակացուն էր եւ իւրեան արդարացրեց այն ամբաստանութեան ընդդէմ։*

---

(1) Պարսից թագաւորը Արշաւիր թողեց երեք որդի՝ Արտաշէս, Կարէն եւ Սուրէն եւ մին դուստր Կոշմ անունով. անդրանիկը ցանկանումէր՝ որ իւր տունը որդոց որդի թագաւորութիւն առնէ. միւսները ընդդիմանումէին նորան։

(2) Հերոդէսի եւ Արետի թշնամութեան պատճառն այն էր, որ Հերոդէս պսակուած զոլով Արետի դստեր հետ, արձակեց իւր կնոջը եւ առեց կնութեան իւր եղբօր Փիլիպպոսի կնոջը Հերոդիատային։

ԳԼՈՒԽ Ե.

Աբգարի դեսպանները, որ գնացել էին այդ պատճառով Պաղեստինի կողմերը, յետ դառնալու ժամանակը շատ բան լսեցին զանազան մարդկանցից Քրիստոսի սքանչելագործ բժշկութիւնների մասին. վասն որոյ ցանկանալով նորան տեսանել, գնացին Երուսաղէմ, ականատես եղան այն սքանչելեացը, որ գործումէր աշխարհի Փրկիչը. զարմացան եւ գնացին պատմեցին Աբգար թագաւորին իւրեանց լսածը եւ տեսածը: Աբգար հաստատեց իւր մտքումը, թէ Քրիստոս իսկապէս որդի Աստուծոյ էր. այն զօրութիւնը, ասումէր, Աստուծոյ է եւ ոչ մարդու. որովհետեւ չկայ աշխարհումը մարդ, որ կարողանայ մեռածներին յարուցանել, բայց միայն Աստուած: Եւ որովհետեւ Աբգար եօթն տարի բորոտութեան ցաւի մէջ էր եւ բժիշկներից չէր գտել առողջանալու հընարք, վասնորոյ յոյս դրեց Քրիստոսից ստանալ իւր բժշկութիւնը: Չկարողանալով ինքը անձամբ գնալ Երուսաղէմ, ուղարկեց մին քանի մարդիկ Անանէ սուրհանդակի հետ, հանդերձ թղթով, որի օրինակը այս էր.

«Արշամի որդի Աբգար՝ Յիսուս Փրկչին եւ բարե-
«րարին, որ երեւեցաւ Երուսաղէմացոց աշխարհու-
«մը, ողջոյն:

«Լսած եմ այն հրաշալի բժշկագործութիւնների
«մասին, որ լինումեն քո ձեռով առանց դեղի եւ ար-
«մատների, որովհետեւ՝ ինչպէս պատմումեն՝ դու
«տամես կոյրերին տեսանել, կաղերին գնալ, բորո-
«տներին բժշկումես, դեւերին հանումես եւ մեռածնե-
«րին կենդանացնումես: Ինչպէս ես լսեցի այդ ամե-
«նայն հրաշագործութիւնները, մտքումս հաստատ
«դրեցի երկուսից մինը, թէ դու կամ Աստուած ես
«երկնքից իջած եւ կամ Աստուծոյ որդի: Եւ ես այդ
«պատճառով գրեցի այդ թուղթը, որ քեզ աղաչեմ
«աշխատ լինես՝ գաս իմ մօտ եւ ինձ բժշկես հիւան-

«գուլթխնից: Լսած եմ նոյնպէս, որ Հրէաները տըր-
«տնջում են քո վերայ եւ կամենում են քեզ չարչա-
«րել. ես ունեմ փոքրիկ՝ բայց եւ գեղեցիկ քաղաք,
«եւ նա բաւական կլինի մեզ երկուսներիս»:

Պատմումեն նոյնպէս, թէ Աբգար իւր դեսպանների հետ միասին ուղարկեց եւս մին պատկերահան, որ մեր Հայոց Յայսմաւուրքի մէջ կոչուումէ Յովհաննէս. իսկ Յունաց պատմիչները համարումեն, թէ այն պատկերահանն էր ինքը Անանէ սուրհանդակը, որ գիտէր՝ ասումեն՝ նկարչութիւն: Այդ պատկերահանին ուղարկեց այն մտքով, որ եթէ Յիսուս չըգայ, նորա պատկերը նկարէ եւ բերէ իւր մօտ, որ գոնեա նորա կերպարանքը տեսանելով՝ առնու իւր փափագը: Անանէ եւ նորա ընկերները հասան Հրէաստան այն օրը, երբ Յիսուս մտանումէր Երուսաղէմ. չհամարձակելով անձամբ մերձենալ նորան, մօտեցան Փիլիպպոս Առաքելուն եւ ասացին, թէ ցանկանումեն Յիսուսին տեսանել եւ տալ նորան Աբգարին նամակը: Փիլիպպոս խօսեց Անդրէասի հետ եւ ապա երկուսը միասին յայտնեցին Յիսուսին. Յիսուս ցոյց տուեց իւր ուրախութիւնը եւ հրամայեց Թովմա առաքելուն գրել Աբգարի թղթի պատասխանը, եւ նա գրեց Քրիստոսի բերանից՝ այսպէս.

«Երանի այն մարդուն, որ ինձ չտեսած՝ կհաւա-
«տայ ինձ. գրած է ինձ համար, թէ ով որ կտեսա-
«նէ ինձ՝ չի հաւատար ինձ, իսկ ով որ չի տեսա-
«նիր՝ նա կհաւատայ եւ կապրէ: Իսկ ինչ որ գրու-
«մես իմ գալու մասին, ինձ պէտք է այս տեղ կա-
«տարել այն ամենայն բանը, որի համար ուղար-
«կուած եմ ես. եւ երբ կկատարեմ, այն ժամանակ
«կհամբառնամ նորա մօտ, ով որ ինձ ուղարկել է.
«եւ երբ կհամբառնամ, կուղարկեմ իմ աշակերտա-
«ներիցս մինին, որ քո ցաւը բժշկէ եւ կեանք տայ
«քեզ եւ քոյայնոց»:

Իսկ պատկերահանը կամենալով նկարել Քրիստոսի աստուածային կերպարանքը եւ չկարողանալով մեր-

ձենալ նորան ժողովրդի բազմութիւնից, գնաց նըստաւ մին բարձր վէմի վերայ առանձին եւ ծածուկ, ուղղեց աչքերը Յիսուսի վերայ եւ հետեւումէր կերպարանել նորա դէմքը. բայց որչափ չաշխատեց՝ չըկարողացաւ հանել նորա նմանութիւնը: Ծածկագէտն Քրիստոս տեսանելով պատկերահանի ցանկութիւնը եւ համանգամայն զուր ջանացողութիւնը, հրամայեց կոչել նորան իւր մօտ. վեր առեց գաստառակ, ձըգեց իւր աստուածային երեսի վերայ, ըզանչելի ձեւով իսկոյն տպաւորեց նորա վերայ իւր պատկերը եւ տուեց Անանէին եւ միւս Աբգարի ուղարկած մարդկանց՝ հրամայելով տանել եւ տալ Աբգարին հանդերձ թղթովը: Անանէ եւ նորա ընկերները դարձան շուտով Եդեսիա եւ հասցրեցին Աբգարին Քրիստոսի նամակը եւ անձեռագործ պատկերը: Աբգարի սիրտը լցուեցաւ ուրախութեամբ. նա երկրպագութիւն տուեց պատկերին խոնարհութեամբ եւ հաւատով եւ իսկոյն ձգեց իւր ցաւի թեթեւութիւնը. կարդաց նամակը եւ հրամայեց մեծ զգուշութեամբ պահել նորան պատկերի հետ միասին:

Քրիստոսի հրամանով, նորա համբառնալուց յետ, Թովմա առաքեալը ուղարկեց Թադէոս առաքեալին Եդեսիա Աբգարի մօտ. Թադէոս դրեց իւր ձեռը Աբգարի վերայ Քրիստոսի անունով եւ Աբգար իսկոյն ազատուեցաւ իւր հիւանդութիւնից, զարմացաւ եւ հաւատաց Քրիստոսի Աստուածութեանը: Յետոյ Թադէոս քարոզեց քաղաքի բոլոր բնակիչներին Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը, նորա գալստեան պատճառը, չարչարանքը, խաչելութիւնը, մահը, յարութիւնը, համբարձումը եւ միւսանգամ գալըստը. եւ ապա մկրտեց բոլորեցունց եւ թագաւորին: Եդեսիա քաղաքի դրան վերայ կուոց պատկեր կար, որին ամենայն մարդ, որ քաղաք էր մտանում, պէտք էր երկրպագութիւն տար. Աբգար հրամայեց այն կուոց պատկերը բառնալ եւ նորա տեղ դնել Քրիստոսի անձեռագործ պատկերը ոսկեզարդ շրջանակի մէջ:

Թադէոս առաքեալը քրիստոնէութիւն Եդեսիայումը քարոզելուց յետ, կարգեց այն տեղ եպիսկոպոս՝ Ադդէին, եւ յետոյ Աբգարի հրովարտակով գնաց նորա քեռորդու Սանատրուկի մօտ, որ Շաւարշան քաղաքումն էր Հայոց զօրքի հրամանատար. Սանատրուկ, նորա դուստրը Սանդուխտ եւ այլ շատ մարդիկ նոյն առաքելու քարոզութեամբ հաւատացին Քրիստոսի Աստուածութեանը: Աբգար քրիստոնէութիւնը ընդունելուց յետ ապրեց երեք տարի ու վախճանեցաւ իբրեւ առաջին քրիստոնեայ թագաւոր աշխարհի մէջ եւ թաղուեցաւ Եդեսիա քաղաքումը:

ԳԼՈՒԽ Զ.

Աբգարի մահից յետ թագաւորեցին Հայաստա-
նումը միմեանց հակառակ նորա որդին Անանէ Եդե- 34—38.
սիայումը, եւ քեռորդին Սանատրուկ՝ Շաւարշանու- 38—68.
մը: Սոցա իշխանութեան ժամանակը Հայոց թագաւորութիւնը շփոթուեցաւ եւ ճշմարիտ աստուածպաշտութիւնը վերացաւ: Նախարարները թողեցին քրիստոնէութիւնը եւ կրկին դարձան կռապաշտութիւն. կարողացան շրջել եւ Սանատրուկին իւրեանց կողմը: Սոցա օրինակի նման Անանէն եւս մերժեց Քրիստոսի հաւատը եւ սկսաւ կռոց երկրպագութիւն տալ: Կամենալով նոյն կռապաշտութիւնը թելադրել ժողովրդին, մտածումէր քանդել Փրկչի պատկերը, որ կար քաղաքի դրան վերայ եւ նորա տեղ դնել կռոց պատկեր: Թագաւորի խորհուրդը իմացաւ Ադդէ եպիսկոպոսը եւ գիշերային ժամանակ գնաց ծածուկ քաղաքի դրան վերայ, այն ծոցաւոր տեղը, ուր կար պատկերը, կղմնորով ծածկեց, դուրսից ծեփեց եւ այդպէս հաւասարեցրեց պարսպի որմի հետ, որով եւ խափանեց թագաւորի միտքը, որովհետեւ պատկերը անյայտ եղաւ: Անանէ հրամայեց Ադդէին իւր համար մին գդակ կարել (1). Ադդէ պատասխանեց, թէ

(1) Ադդէ՝ Աբգարի գդակ կարողն էր առաջ:

նորա ձեռները չեն կարող կտրել գդակ այն գլխու Համար, որ Քրիստոսին երկրպագութիւն չէ տամ: Այդ պատասխանի վերայ թագաւորը բարկացաւ եւ Հրամայեց Ադդէի ոտները կտրել. բայց եւ ինքը Անանէն շուտով ստացաւ իւր չարագործութեան պատիժը. Եղեսիայի ապարանը նորոգելու ժամանակը, երբ որ նայումէր ցածիցը վեր եւ Հրամայումէր, թէ որպէս պէտք էր կանգնեցնել մին կճեայ սիւն, սիւնը ընկաւ նորա վերայ եւ ջարդեց նորա ոտները՝ այնպէս, որ չորրորդ օրը մեռաւ Անանէ:

Սանատրուկ ինչպէս լսաւ Անանէի մահը, գնաց Միջագետք: Եղեսիայի բնակիչները, որ ըստ մեծի մասին քրիստոնեայ էին, ուղարկեցին նորա առաջը դեսպաններ եւ խնդրեցին, որ նա երդմամբ խոստանայ չհալածել քրիստոնէութիւնը նոցա մէջ, եւ այս պայմանով միայն խոստացան տալ նորան քաղաքը եւ թագաւորի գանձը: Սանատրուկ երդմամբ խոստացաւ կատարել այդ պահանջմունքը, բայց յետոյ, երբ տիրապետեց քաղաքը եւ բոլոր թագաւորութիւնը, սկսաւ ընթանալ իւր երդմանը Հակառակ. կոտորեց Աբգարի արու զաւակներին, իսկ աղջկանցը Հեռացրեց Հաշտենից կողմը, Աբգարի կնոջ՝ Հեղինէ թագուհուն ուղարկեց Խառան՝ Միջագետքի մէջ. բայց նա չկամենալով բնակուել կռապաշտների Հետ, գնաց Երուսաղէմ՝ Կղոդիոս կայսեր ժամանակը, բոլոր իւր գանձով գնեց ցորեան Եգիպտոսից եւ ընծայեց կարօտելոց, որովհետեւ սով էր այդ միջոց. եւ իւր մահից յետ՝ թաղուեցաւ Երուսաղէմի դրան առաջումը. նորա վերայ շինեցին նշանաւոր շիրիմ, որ կար մինչեւ Խորենացու ժամանակը [1]:

Թադէոս առաքեալը յետ էր դարձել այդ ժամանակ Աղուանից կողմերից եւ կրկին քարոզումէր Քրիստոսի Հաւատը Հայաստանումը. նա ինչպէս լսաւ

---

(1) Գիրք Բ, Գլ. 32.

Սանատրուկի գործերը, շատ տրտմեցաւ. գնաց Կեսարիա, հիմնեց այն տեղ եկեղեցիներ եւ Եդեսիա վերադառնալու ժամանակը պատահեցան նորան ճանապարհումը (Միջագետքի սահմաններում) Հռոմայեցոց դեսպանները, որ ուղարկուած էին Սանատրուկի մօտ, բոլորը ազնուականներ, մինչեւ հինգ հոգի: Թադէոս քարոզեց նոցա քրիստոնէական հաւատը, դարձրեց քրիստոնէութիւն եւ մկրտեց նոցա. նոքա վաճառեցին իւրեանց գոյքը եւ սկսան ինքեանք քարոզել քրիստոսական հաւատը, եւ իւրեանց գլխաւորի անունով, որ կոչուումէր յունարէն Խրիւսի, այն է՝ ոսկի, կոչուեցան Ոսկեանք (1): Սանատրուկ ինչպէս լսաւ այդ անցքը, կոչեց Թադէոս առաքելուն իւր մօտ Շաւարշան գաւառ նահատակեց նորան եւ նորա հետ միասին իւր Սանդուխտ դստերը, եւ յետոյ իւր քրոջը Թադուհուն, երբոր նա ընդունեց քրիստոնէութիւն Բարթուղիմէոս առաքելու քարոզութեամբ, որ այդ ժամանակներում եկել էր նոյնպէս Հայաստան եւ բերել էր Տիրամօր պատկերը (2):

Սանատրուկ նորոգեց Մծբին քաղաքը, որ խախտուել էր գետնաշարժութիւնից. քաղաքի մէջ կանգնել տուեց իւր արձանը, որ ձեռումը բռնած ունէր մին դրամ, իբր ցոյց տալու համար, թէ քաղաքի նորոգման պատճառով Սանատրուկի բոլոր գանձը սպառուեցաւ եւ մնաց մին. այդ մասին, ասումեն, ղոքը կոչուեցաւ Մծբին:

(1) Ձգնումեին Ծաղկեոյ լերանց մէջ, Արարատեան աշխարհի Բագրեւանդ գաւառին սահմանակից. 43 տարուց յետ գնացին Արտաշատ քաղաք, ուր նահատակեց նոցա Արտաւազդ Բ՛ Բ Արտաշէսի որդին:

(2) Պատմել աշակերտներին այդ պատկերի նկարման եւ Հայաստան բերելու հանգամանքը. նորանով եղած հրաշագործութիւնները այն տեղումը, որ կոչուումէր Դարբնաքար (Վասպուրական աշխարհի Անձեւացեաց գաւառումը) եւ որ Բարթուղիմէոս առաքեալը անուանեց Հոգւոց վանք:

*

ԳԼՈՒԽ Է.

Այն ժամանակ, երբ Սանատրուկ թագաւորումէր Ստորին Հայաստանումը, Վերին Հայաստանումը զանազան տիրապետներ բռնացան եւ շատ փոփոխութիւններ եղան կառավարութեան մասին: Զենոնի մահից յետ, որին թագաւոր էին կարգել Հռոմայեցիք Վերին Հայաստանումը, Պարսից թագաւորը Արտաշէս՝ նշանակեց իւր որդուն Արշակին. եւ տեսնելով, թէ կայսրը չէ ընդդիմանում այդ բանին, սկսաւ ընդարձակել իւր իշխանութիւնը մինչեւ Կապադովկացոց աշխարհ եւ խստութեամբ վարուել իւր ազգի հետ: Նորա նախարարները անբաւական գոլով նորանից, ծածկաբար դեսպան ուղարկեցին Տիբերիոս կայսեր մօտ եւ խնդրեցին նորանից այլ ամն իւրեանց թագաւոր: Կայսրը ուղարկեց զօրքով Տարադատին (որ Արշաւիր Պարսից թագաւորի ազգականն էր եւ մին քանի այլ անձանց հետ պատանդ էր Հռոմ) Արտաշէսի վերայ. եւ նոյն ժամանակ գրեց Վրաց Փարսման թագաւորի եղբօր Միհրդատին, որ նա գնայ զօրքով Վերին Հայաստան, այն մտքով, որ եթէ Արտաշէս գնայ այն տեղ իւր որդուն Արշակին օգնութիւն, Տարադատին հեշտ լինի Պարսից տէրութիւնը նուաճել: Միհրդատ՝ Արշակի ծառաների միջնորդութեամբ դեղակուր արեց նորան եւ յետոյ մտաւ զօրքով Վերին Հայաստան, առեց Արտաշատ քաղաքը եւ եղաւ այն տեղ թագաւոր: Արտաշէս ուղարկեց զօրք Միհրդատի վերայ եւ յաղթուեցաւ. յետոյ թէպէտ ցանկանումէր կրկին զօրք ժողովել եւ գնալ Հայաստան, բայց լսելով, թէ Վիտելիոս Հռոմայեցին գամէ նորա վերայ Պարսկաստան, փախաւ Վրկանի կողմերը եւ Վիտելիոս կարգեց Տարադատին թագաւոր Պարսկաստան, թէպէտ եւ երկար ժամանակ չըմնաց նա, եւ Արտաշէս՝ նախարարների ցանկութեամբ՝ կրկին անգամ տիրապետեց իւր աշխարհը:

Վրաց Փարսման թագաւորը ունէր մին որդի Հըռամիզդ կամ Հռադամիզդ անունով, որ շատ զօրեղ մարդ էր եւ հետեւումէր Վրաց թագաւորութիւնը յափշտակել իւր հօր ձեռից: Հայրը երկնչելով նորանից, սկսաւ հաւանեցնել նորան, որ գնայ Վերին Հայաստանը առնու Միհրդատի ձեռից. Նա համաձայնեցաւ, վեր առեց իւր հօրից բաւական զօրք եւ յանկարծակի դիմեց Միհրդատի վերայ եւ սպանեց նորան: Հռոմայեցիք խնդրելով առաւել իւրեանց դիւրութիւնը կամ հանգստութիւնը, չցանկացան վրէժ առնուլ այդ մասին Հռամիզդից, մանաւանդ որ կասկածումէին, թէ մի գուցէ Պարսից հետ եւս կռիւ յառաջանայ: Այդ միջոց Պարսից թագաւորը Դարեհ Ողոգէս ահագին զօրութեամբ դիմեց Վերին Հայաստան, արտաքսեց Վրաց, եւ Արտաշատ քաղաքումը հաստատեց թագաւոր իւր եղբօրը, որ կոչւումէր Տիրիթ, եւ Հայք ուրախութեամբ ընդունեցին սորան, որովհետեւ Արշակունի էր:

Նոյն օրերում մեռաւ Կղոդիոս կայսրը եւ թագաւորական աթոռը նստաւ Ներոն: Սանատրուկ Հայոց մեծ թագաւորը, որ բնակւումէր Միջագետքի մէջ, ուղարկեց դեսպաններ երեւելի ընծաներով Ներոնի մօտ, նոյնպէս եւ սովորական հարկը եւ կրկին հաստատեց առաջին հաշտութիւնը: Ներոն ինչպէս լսաւ, որ Պարսից ազգը կրկին տիրապետել է Վերին Հայաստանը, հրամայեց զօրք ժողովել եւ գնալ Վերին Հայոց սահմանների մօտ եւ յանձնեց զօրքի վերայ իշխանութիւնը Կորբուղոնին: Կորբուղոն առեց Հայաստանի այլեւայլ քաղաքները, Վանանդ, Արտաշատ, շատ շրջակայ աւաններ եւ յետոյ Ապարան ([1]) քաղաքը: Այդ յաղթութիւնները հեշտութեամբ էր գործում Կորբուղոն, որովհետեւ եւ Պարսից թագաւորը Դա-

([1]) Կամ Ապարաններ, Սիւնեաց աշխարհումը, Նախիջեւանի հիւսիսակողմումը:

րեհ՝ Տիրիթի եղբայրը պատերազմ ունէր այդ միջոց Վրկանաց հետ եւ ձեռնհաս չէր օգնել իւր եղբօրը. նոյնպէս եւ Հայոց մեծ թագաւորը Սանատրուկ չէր համարձակւում ձեռնտու լինել Տիրիթին, որովհետեւ Հռոմայեցոց հպատակ էր: Այդ հանգամանքները օգնեցին Կորբուլոնին եւ տուեցին նորան հնարք Վերին Հայաստանը նուաճելու: Տիրիթ անճարացած, գնաց իւր Դարեհ եղբօր մօտ Վրկանի կողմերը եւ Կորբուլոն՝ Ներոնի հրամանով կարգեց Վերին Հայաստանում թագաւոր Կրոսերագոյն Տիգրանին՝ Փոքր Տիգրանի եղբօրորդուն, եւ ինքը գնաց Ասորոց երկիր, որ յանձնուած էր նորա վերատեսչութիւնը: Դարեհ Ողոգէս, թէպէտեւ Վրկանաց հետ պատերազմով պարապած, ինչպէս տեսաւ իւր եղբօրը Տիրիթին՝ Վերին Հայաստանի թագաւորութիւնից զրկուած եւ իմացաւ, որ Հռոմայեցիք կարգել են այն տեղ թագաւոր Կրոսերագոյն Տիգրանին, գնաց սաստիկ պատերազմով Վերին Հայաստան եւ հարկադրեց Հըռոմայեցոց հաշտութիւն առաջարկել. Հաշտութեան դաշինքը այն եղան, որ Հռոմայեցոց զօրքը, որոց Պարթեւացիք՝ այսինքն Պարսիկք եւ Հայք պաշարել էին, լինեն ազատ եւ իսպառ հեռանան Հայոց սահմաններից, նոցա հետ հեռանայ եւ Տիգրան. իսկ Դարեհ ուղարկէ դեսպան Ներոնի մօտ՝ խաղաղութիւն հաստատելու համար: Խաղաղութեան հիմն եղաւ այն, որ Տիրիթ մնաց տիրապետ Վերին Հայաստանումը, եւ պատուէր ստացաւ Ներոնից նորոգել Արտաշատ քաղաքը, որ աւերել էր Կորբուլոն. Տիրիթ կատարեց կայսեր յանձնարարութիւնը եւ նորա պատուի համար կոչեց նորոգուած քաղաքը Ներոնիա: Այս Վերին Հայոց թագաւորութիւնը երկար չտեւեց առանձնակի, որովհետեւ Տիրիթի մահից յետ միաւորուեցաւ Ստորին Հայոց տէրութեան հետ Երուանդ թագաւորի ժամանակը՝ Սանատրուկից յետ:

ԳԼՈՒԽ Ը.

Սանատրուկի մահը եղաւ առանձին դիպուածով։
Մին օր որս էր գնացել նա իւր ծառաների հետ. նո-
ցանից մինը ձգեց նետը որսի վերայ, բայց նետը սը-
խալմամբ ընկաւ թագաւորի վերայ եւ սպանեց նո-
րան։ Նորա մահից յետ թագաւորեց Ստորին Հայաս-
տանումը Երուանդ Երկրորդ, շատ յաղթանդամ
եւ սրտով մարդ, ահաւոր եւ դաժան, բայց բարքով
հեզահոգի եւ առատաձեռն, կենցաղավարութեան
մէջ խոնարհ եւ համեստ, որով սիրելի եղաւ ամենե-
ցուն եւ իւր մեծամեծ գործերով՝ Հայոց նախարար-
ների մէջ Սանատրուկի ժամանակը՝ առաջինն էր եւ
երեւելին։ Այդ հանգամանքները պատճառ եղան,
որ երբ Սանատրուկ մեռաւ, Հայոց նախարարները
միաբան եւ համակամ՝ փոխանակ նորա որդոցը՝ ընտ- 68—88.
րեցին իւրեանց թագաւոր Երուանդին։ Սա կասկա-
ծելով, թէ մի գուցէ Սանատրուկի որդիքը երբ եւ
իցէ յափշտակեն նորանից թագաւորութիւնը, կոտո-
րեց նոցա ամենեցուն եւ մի միայն կենդանի մնաց
Սանատրուկի փոքրիկ որդին Արտաշէս, որովհետեւ
նորա ստնտուն վեր առեց նորան, փախաւ Հեր գա-
ւառը [1] եւ յայտնեց այդ մասին Բիւրատ Բագրա-
տունու որդուն՝ Սմբատին, որ այն ժամանակ բնա-
կուումէր իւր Սմբատաւան գեղումը [2]։ Սմբատ ինչ-
պէս լսաւ Սանատրուկի մահը եւ նորա որդոց ըս-
պանութիւնը, վեր առեց իւր երկու դստերացը՝ Սըմ-
բատանոյշին եւ Սմբատուհուն եւ տարաւ Բայբերդ-
ամուր քաղաքը [3]. ինքը գնաց այն տեղից Հեր գա-
ւառ, վեր առեց Արտաշէս մանուկին, եւ իմանալով,
թէ Երուանդ աշխատումէ նորան գտանել եւ սպա-

---

[1] Պարսկահայոց աշխարհումը։

[2] Բարձր Հայաստանի Սպեր գաւառումը։

[3] Բարձր Հայոց աշխարհումը՝ ճորոխ գետի մօտ։

նանել, փախաւ նորա հետ անծանօթ տեղեր, շրջում էր սարերի եւ դաշտերի մէջ, մինչեւ որ մին յաջող դիպուածով գնաց վերջապէս Պարսկաստան Դարեհ թագաւորի մօտ եւ յայտնեց նորան Սանատրուկի որդոց վիճակը: Երուանդ գրեց Դարեհին եւ Սըմբատին, թէ այդ Արտաշէս մանուկը Սանատրուկի որդին չէ, այլ մին հովուի որդի է, եւ խնդրեց որ Դարեհ նորա ձեռը տայ այդ մանուկին, բայց Դարեհ չկատարեց նորա ցանկութիւնը:

Երուանդ, որ միշտ մտատանջ էր լինում Սանատրուկի որդու Արտաշէսի մասին, թէ մի գուցէ Պարսից օգնականութեամբ արտաքսէ իւրեան աթէրութիւնից, երբ լսաւ Տիրիթի մահը, (որ թագաւորումէր Վերին Հայաստանումը) մտածեց գրաւել նորա աթէրութիւնը, որ ունենալով բոլոր Հայոց իւր իշխանութեան ներքոյ եւ Հռոմայեցոց՝ իւր օգնական, կարողանայ կռուել Արտաշէսի հետ, որ թագաւորութեան օրինաւոր ժառանգն էր: Այդպիսի նպատակի հասանելու համար, ուղարկեց դեսպան Վեսպասիանոս կայսեր մօտ եւ խնդրեց, որ Վերին Հայոց աթէրութիւնը տայ իւրեան եւ նորա փոխարէն առաջարկեց բոլոր Հայոց կալուածները Միջագետքի մէջ: Կայսրը յայտնեց իւր համաձայնութիւնը եւ Երուանդ տիրապետեց բոլոր Հայաստանը՝ թէ Ստորին եւ թէ Վերին. փոխադրեց իւր արքունիքը Արմաւիր: Այնուհետեւ Միջագետքի իշխանութիւնը իսպառ դուրս եկաւ Հայոց ձեռից եւ Հռոմայեցիք կարգեցին այն տեղ առանձին իշխան՝ իբրեւ փոխարքայ Եդեսիա քաղաքումը, որի կառավարութեան ներքոյ մնացին Միջագետքի մէջ բնակուած բոլոր Հայք:

Երուանդ Բ շինեց երեք քաղաք՝ Երուանդաշատ [1],

---

(1) Կոչւում էր Երուանդաքար՝ քարաժայռ դրից համար. Արարատեան աշխարհի Երասխաձոր գաւառումը: Երուանդ շինեց այդ քաղաքը բլրի վերայ, չորս կողմը պատեց պարսպով եւ վերեւումը շի-

Երուանդակերտ (1) եւ Բագարան (2). եւ այդ ժամանակ, երբ որ նա պարապած էր քաղաքների շինութեամբ, նորանից ապստամբուեցան Ուտէացոց աշխարհի բնակիչները Վերին Հայաստանումը: Երուանդ ուղարկեց այն տեղ մեծ զօրք Արգամ իշխանի հետ, որ էր նահապետ Մուրացեան տոհմի կամ Մարաց տէր. սա գնաց նուաճեց եւ կրկին հընազանդեցրեց Երուանդին այն երկիրը. եւ Երուանդ այդ քաջութեան համար ընծայեց Արգամին իրաւունք կոչուելու երկրորդ՝ թագաւորից յետ (3):

նեց միջնաբերդ՝ պղնձի դռներով. մէջ տեղումը՝ պարսպից մինչեւ միջնաբերդի դուռը՝ շինեց երկաթի պատուածեւ սանդուխք երկու առանձին ճանապարհով, մինը՝ ամենեցուն համար, որ բաց էր լինում ցերեկը եւ փակուում էր գիշերը, միւսը՝ գիշերային եւ ծածուկ՝ որոգայթների եւ աստիճանների մէջ, որ բացուում էր գիշերը այնպիսի մարդկանց համար, որ երբ կամենային մին դաւաճանութիւն գործել թագաւորին՝ բռնուէին այն որոգայթների մէջ: Այս տեղ փոխադրեց Երուանդ իւր արքունիքը Արմաւիր քաղաքից, որովհետեւ ցանկանում էր ամուր տեղ բնակուել այն վտանգաւոր ժամանակը, երբ որ կասկածանք ունէր Արտաշէսի կողմից, որպէս եւ պատահեցաւ իսկ. բայց արքունիքը կային այդ տեղ միայն Երուանդի ժամանակը, որովհետեւ Արտաշէս տարեց յետոյ Արտաշատ քաղաք:

(1) Դաստակերտ կամ աւան Արարատեան աշխարհի Երասխաձոր գաւառումը՝ հանդէպ Երուանդաշատ արքայանիստ քաղաքին: Այդ աւանը շինեց Երուանդ բլրի վերայ եւ զարդարեց գեղեցիկ ծաղկոցներով եւ այգիներով: Կոչուեցաւ եւս Մ ա ր մ է տ այն պատճառով, որ երբ Արտաշէս եկաւ զօրքով այդ տեղ, հրամայեց զօրքին աղաղակել մ ա ր ա մ ա տ, որ նշանակում է մ ա ր ե կ ա ւ, այսինքն՝ այն մարդը, որին դու կոչում էիր մ ա ր, ահա եկել է եւ առնում է քաղաքդ. որովհետեւ Երուանդ իւր թղթի մէջ կոչել էր Արտաշէսին՝ մ ա ր:

(2) Արարատեան աշխարհումն էր, Ախուրեան գետի վերայ, քառասուն ասպարիզով Երուանդաշատից հեռի: Կոչուեցաւ Բ ա գ ա ր ա ն, այսինքն՝ բագինների աւան կամ կռոց տեղ, այն պատճառով, որ երբ Երուանդ այդ քաղաքը շինեց, հրամայեց բերել այդ տեղ կուռքերը Արմաւիր քաղաքից, եւ վախենում էր դնել նոցա Երուանդաշատ քաղաքումը, որ չլինի թէ զոհագործութեան ժամանակը, երբ ժողովուրդը բազմանում է, անզգուշութիւն ծնանի քաղաքի պահպանութեան մասին:

(3) Առաջին Վաղարշակը նախարարութիւնները կարգելու ժամանակը, թագաւորից յետ երկրորդ լինելու իրաւունքը տուել էր Մուրաց-

Իսկ Սմբատ Բագրատունին, որ Պարսկաստան էր Արտաշէսի հետ, շատ քաջութիւններ ցոյց տուեց Դարեհի զանազան պատերազմների մէջ, վասնորոյ եղաւ շատ սիրելի Պարսից թագաւորին եւ նորա նախարարներին։ Եւ որովհետեւ նոցա յայտնի էր, թէ Սմբատ մի միայն ցանկութիւն ունի, որ Արտաշէս մանուկը ստանայ Հայոց թագաւորութեան աթոռը՝ իբրեւ օրինաւոր ժառանգ, վասնորոյ Դարեհ կամենալով վարձատրել Սմբատի հաւատարմութիւնը եւ քաջութիւնը, տուեց նորան այն վարձը, որ ամենայն փառքից եւ իշխանութիւնից առաւել գերադանց էր նորա համար — բազմաթիւ զօրք, որ գնայ Հայաստան, Երուանդին վանէ եւ Արտաշէսին կարգէ նորա տեղ թագաւոր։ Սմբատ եւ Արտաշէս եկան Պարսից զօրքով Հայաստան՝ Երուանդակերտ քաղաքի մօտ եւ մեծամեծ կոտորմունքից եւ արիւնհեղութիւնից յետ՝ առեցին քաղաքը. Արտաշէսի զինուորներից մինը սրով սպանեց Երուանդին, որ թագնուած էր իւր պալատի մէջ։

ԳԼՈՒԽ Թ.

Սմբատ ասպետը ինչպէս առեց Երուանդի քաղա-
քը, գտաւ արքունի գանձարանումը Սանատրուկի
թագը եւ դրեց Արտաշէսի գլուխը՝ հաստատելով
88—129. նորան թագաւոր ամենայն Հայոց։ Արտաշէս Բ՛ թա-
գաւոր հաստատուելուց յետ՝ մեծամեծ պարգեւներ
ընծայեց երախտաւոր անձանց. Նախ՝ Սմբատ ասպե-
տին նշանակեց Հայոց սպարապետ եւ յանձնեց նորան
իւր բոլոր տէրութեան գործակալների վերայ տես-

եանց, որ Աժդահակի ցեղիցն էին. այդ իրաւունքը տեւեց նոցա մէջ մինչեւ երկրորդ Տիգրանը, որ ընծայեց այդ արտօնութիւնը իւր քրոջ մարդուն Միհրդատին, որից յետ ոչ ոք չստացաւ այդ առանձնաշնորհութիւնը։ Երուանդ հաւատարիմ ճանաչելով Արգամին, որ Մուրացեանց ազգիցն էր, կրկին ընծայեց նորան այն յիշեալ իրաւունքը երկրորդական գահ ունենալու։

չութիւն . երկրորդ՝ տուեց իրաւունք Արգամին երկրորդ լինել թագաւորից յետ . երրորդ՝ Դիսակի որդուն Ներսէսին կարգեց իշխան եւ կոչեց նորա նահապետութիւնը դ ի մ ա կ ի ս ե ա ն կամ դ ի մ ա ք ս ե ա ն, որովհետեւ նորա հայրը Դիսակ՝ Արտաշէսին պաշտպանելու համար կորուսել էր պատերազմումը իւր դէմքի կէսը եւ մեռել էր :

Յետոյ սկսաւ Արտաշէս զանազան շինութիւններ շինել . նորոգեց եւ ընդարձակեց Արտաշատ քաղաքը, որ այնուհետեւ կրկին կոչուեցաւ Ա ր տ ա շ ա տ, որովհետեւ Տիրիթի նորոգելուց յետ, որպէս վերեւումը ասացինք, այդ քաղաքը կոչուումէր Ն ե ր ո ն ի ա : Բաժանեց հայաստանը զանազան սահմաններով եւ իւրաքանչիւր սահմանումը կանգնեց նշաններ կոփած քարերով աշտարակի նման, շինեց կամուրջներ եւ բազմաթիւ նաւակներ ծովակների եւ գետերի վերայ, հիմնեց եւս շատ ուսումնարաններ եւ հրամայեց ուսուցանել իւր ժամանակի գիտութիւնները հայոց լեզուով՝ Ասորոց եւ Պարսից գրութեամբ :

Այդ ժամանակներում Ալանաց ազգը (1) . այլ լեռնականների հետ միաբանուած յարձակուեցաւ հայաստան : Արտաշէս ժողովեց յոգնահամար զօրք, յաղթեց եւ վանեց լեռնականներին եւ գերի վարեց Ալանաց թագաւորի որդուն, որ կոչուումէր Սաթէն : Ալանաց թագաւորը խոստացաւ Արտաշէսին մշտնջենաւոր խաղաղութեան ուխտ հաստատել եւ իւր դըստերը, որի անունն էր Սաթինիկ, տալ նորան կնութեան, միայն թէ յետ դարձնէ իւր որդուն Սաթէնին : Արտաշէս ընդունեց առաջարկութիւնը . դարձրեց Սաթէնին իւր հօրը եւ առեց կնութեան նորա Սաթինիկ դստերը :

Արտաշէսի որդին Արտաւազդ շատ զօրաւոր եւ հպարտ մարդ էր : Ցանկանալով լինել թագաւորից

---

(1) Կոչուումեն եւս Աղուանք . նոցա բնակութիւնն էր Կովկասու սարերի մօտ :

յետ երկրորդ, նախանձուումէր Արդամին, որ ունէր այդ պատիւը: Այս պատճառով զանազան չարախօսութիւններ առնելով Արդամի վերայ իւր հօր առաջեւ, իբր թէ Արդամ մտածումէ յափշտակել նորանից թագաւորութիւնը, կարողացաւ Արդամին այնչափ ատելի առնել իւր հօր եւ եղբարց աչքերի առաջեւ, մինչեւ Արտաշէս զրկեց Արդամին երկրորդական գահից եւ ընծայեց այդ առաջին պատուանշանը տէրութեան մէջ իւր որդուն Արտաւազդին: Արդամ եւ նորա որդիքը սկսան պատերազմել Արտաւազդի հետ եւ այդ պատերազմումը Արտաւազդ սպանեց Արդամին, նորա որդոցը եւ ամենայն երեւելի անձանց նորա ազգից: Նոյն ձեւով նախանձուում էր Արտաւազդ եւ Սմբատ սպարապետին, մինչեւ նա ինքնայօժար կամքով թողեց Հայոց զօրքի վերայ սպարապետութիւնը, գնաց բնակուեցաւ Տմորիս (1) գաւառումը եւ սպարապետութիւնը ստացաւ Արտաւազդ:

Արտաշէս յուսալով իւր որդոց քաջութեանը՝ արհամարհեց Հռոմայեցոց, որպէս եւ Պարսից թագաւորը Արտաշէս Տրայիանոս կայսրը ուղարկեց զօրք Արեւելք. Նոցա առաջ դուրս եկան Արտաշէսի որդիքը Տիրան, Զարեհ եւ Արտաւազդ եւ վանեցին նոցա: Տրայիանոս միւսանգամ պատրաստեց մեծ զօրք եւ ինքը գնաց Հայոց եւ Պարսից վերայ՝ Արտաշէս փախեցաւ տալ նորա հետ պատերազմ, վասնորոյ գնաց Տրայիանոսի առաջ ընծաներով եւ հաստատեց նորա հետ խաղաղութեան դաշն: Յետոյ Տրայիանոս գնաց եւ նուաճեց Պարսկաստանը եւ այդ յաղթութիւնների համար ստացաւ մականուն Պարթիկուս եւ Արմենիակուս, այսինքն՝ Պարթեւեան եւ Արմենեան: Երբ Տրայիանոսից յետ կայսերական աթոռը նստաւ Ադրիանոս, Արտաշէս Հայոց թագաւորը ուղարկեց

---

(1) Տմորիս կամ Կորդրիք, գաւառ էր Կորճէից աշխարհումը, Ռշտունեաց սահմանակից, Ասորեստանին մօտ:

նորա մօտ դեսպան եւ նորոգեց առաջին հաշտութիւնը : Արտաշէս մեռաւ եւ թաղուեցաւ Բակուրակերտ աւանումը (1) :

ԳԼՈՒԽ Ժ.

Երկրորդ Արտաշէսի մահից յետ թագաւորեց նո- 129—131.
րա որդին Արտաւազդ Երկրորդ : Սա իւր բոլոր եղբարցը հալածեց Արարատից եւ տուեց նոցա բնակութեան տեղ Առբերանի գաւառումը (2), *եւ որովհետեւ ինքը որդի չունէր, վասնորոյ պահեց իւր մօտ Տիրան եղբօրը, որ լինի թագաւորութեան յաջորդ : Մանկութիւնից սկսած մինչեւ իւր մահը մոլի կեանք էր վարում սա. վասնորոյ կարծիք կար Հայոց մէջ, թէ Աժդահակի զարմի կանայք հմայել են սորան կախարդութեամբ երիտասարդական հասակումը եւ այս մոքով ասուումէր սորա վերայ առասպելական երգերի մէջ՝ Խորենացու վկայութեամբ. թէ «Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ եւ դեւ փոխանակ եդին* (3)» : *Սա մին օր գնաց որս Մասիս լերին մօտ. ինչպէս հասաւ Մեծամօր գետին (որ կոչուումէ եւս Ազատ գետ), անց կեցաւ Արտաշատի կամուրջը, խելագարուեցաւ, սկսաւ այս կողմն այն կողմն թափառել, ընկաւ մին մեծ խորխորատի մէջ եւ անհետացաւ այնուհետեւ : Առասպելական երգերի մէջ ասուումէր, թէ այդ բանը պատահեց նորան այն պատճառով, որ երբ նորա հօր Արտաշէսի գերեզմանի վերայ շատ մարդ սպանուումէր իւր անձը նորա պատուի եւ սիրոյ համար, իբր Արտաւազդ ասած է եղել իւր մեռած հօրը՝ «Երբ դու գնացիր, քեզ հետ*

---

(1) Վասպուրական աշխարհի Մարանդ գաւառումը :

(2) Առբերանի՝ Վասպուրական աշխարհի գաւառներից մինն էր. այն տեղ սովորաբար բնակուումէին Հայոց թագաւորների եղբայրներ եւ քոյրերը :

(3) Գիրք Բ, Գլ. 58.

տարար բոլոր երկիրս. ես այժմ աւերակների՞ վերայ թագաւորեմ»․ եւ այդ պատճառով իբր թէ Արտաշէս անիծել է նորան ասելով՝ «Եթէ դու որս գնաս ազատ Մասիսի վերայ, քեզ կըռնեն քաջերը, կտանեն ազատ Մասիսի վերայ, այն տեղ կմնաս եւ լոյս չես տեսանիր»։ Եւ այդ պատճառով պառաւ կանայք ասումէին նորա համար, թէ Արտաւազդ մին այրի մէջ կապած է շղթաներով. եւ նորա մօտ կան միշտ իբր թէ երկու շուն, որ անդադար կրծումեն այն շղթաները, որ նա կարողանայ դուրս գալ այն տեղից եւ աւերել աշխարհս. բայց դարբինների կռանահարութեան ձայնով այն շղթաները իբր թէ առաւել պնդանումեն։ Այդ աւանդութեանը շատ տգէտ դարբիններ հաւատ ընծայելով, կիւրակէ օրերը եւս երկու կամ երեք անգամ խփումէին կռանով սալը, որ չիցէ թէ այն պարապ օրերը՝ կռանահարութիւն չլինելու պատճառով, թուլանան Արտաւազդի շղթաները։

131—152. Արտաւազդից յետ թագաւորեց Հայոց վերայ նորա եղբայրը Տիրան առաջին։ Սա իւր արքունիքը փոխադրեց Արարատեան աշխարհից Զրմէս աւանը ([1]), եւ այն տեղ իւր Երանեակ դստերը տուեց կնութեան Տրդատ Բագրատունուն, որ քաջն Սմբատ Բագրատունու դստեր Սմբատուհու որդին էր։ Սորա մահը եղաւ անակնկալ ձեւով՝ մին օր լերանց մօտ զբօսնելու ժամանակը, մեծ կտոր ձիւն ընկաւ սորա վերայ եւ հեղձամահ արեց։

152—194. Նորա տեղ թագաւորեց նորա եղբայրը՝ Արտաշէսի փոքր որդին՝ Տիգրան Երրորդ, որ կոչուումէ եւս Վերջին։ Երբ որ Հռոմայեցոց կայսրը Անտոնինոս Պիոս մեռաւ եւ նորան յաջորդեցին Մարկոս Որեղիոս Անտոնինոս իմաստասէր եւ նորա կայսերակիցը Վերոս Ղուկիոս, Պարսից թագաւորը Պերոզ գնաց Ասորիք

([1]) Բարձր Հայոց աշխարհի Եկեղեաց գաւառումը։

եւ վանեց այն տեղից Հռոմայեցոց, յետոյ Հայոց հետ միաբանուած մտածումէր գնալ Կեսարիայի կողմերը։ Այն ժամանակ Սեւերիանոս Հռոմայեցին, Կապադովկիայի վերակացուն, դիմեց Հայաստան մեծ զօրքով, բայց Խոսրով Հայոց զօրավարը՝ Հայոց եւ Պարսից զօրքով յաղթեց նորան եւ սպանեց եւս։ Այդ անցքը ինչպէս լսաւ Մարկոս Որեղիոս կայսրը, ուղարկեց Պարսից եւ Հայոց վերայ Ղուկիոս Վերոսին, որ դեռ եւս չէր հասել տեղ, երբ Տիգրան դիմեց Միջերկրային կողմերը եւ կամենումէր կորզել Փոքր Հայաստանը, բայց անյաջողութեան հանդիպեց, մին աղջիկ խաբէութեամբ ձերբակալ արեց նորան։ Յետոյ երբ եկաւ Ղուկիոս Վերոս եւ նուաճեց Միջերկրային կողմերը, տեսաւ Տիգրանին կապանքի մէջ, շատ խնայեց նորան, կրկին արձակեց եւ կարգեց դարձեալ Հայոց թագաւոր՝ Հռոմայեցոց իշխանութեան ներքոյ։

Այդ վերջին Տիգրանից յետ թագաւորեց նորա որդին Վաղարշ, որ զանազան շինութիւններ արեց. 194—214.
Նախ՝ իւր ծննդեան տեղումը շինեց աւան եւ կոչեց իւր անունով Վաղարշաւան (1)։ Յետոյ պատեց պարըսպով Վարդգէսի աւանը, որ ասուումէր Արտիմէդ, եւ անուանեց այն քաղաքը Վաղարշապատ (2) եւ այն տեղ փոխադրեց իւր արքունիքը։ Սորա շինածն է նոյնպէս Վաղարշակերտ (3)։

Վաղարշի թագաւորութեան ժամանակը Խազիրք

(1) Արարատեան աշխարհի Բասէն գաւառումը, ուր խառնուումեն Մուրց եւ Երասխ գետերը։ Այդ տեղումը Վաղարշի մայրը Մեմփարա՝ Արարատ գնալու ժամանակը, ձմեռն այն տեղ անցուցանելու համար, ծնել էր նորան ճանապարհումը։

(2) Արքայանիստ մայրաքաղաք էր Արարատեան աշխարհումը Քասաղ գետի վերայ. այժմ աւերակ է։

(3) Արարատեան աշխարհի Բագրեւանդ գաւառումը, որ այդ քաղաքի անունով կոչւումէ նոյնպէս Վաղարշակերտ։

եւ Բասիլք (1) դուրս եկան Ճորայ դռնից (2), անց կեցան Կուր գետը եւ դիմեցին Հայաստան։ Վաղարշ Թագաւորը մեծ զօրք հաւաքեց եւ փախստական արեց նոցա. բայց երբ նոցա քամակից գնումէր վանելով, նոքա դարձան եւ սկսան կրկին պատերազմել. այդ միջոց մեր Թագաւորը մին աղեղնաւորից ստացաւ հարուած եւ մեռաւ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վաղարշի մահից յետ Թագաւորեց Հայաստանու-
214—259. *մը նորա որդին Խոսրով Առաջին, որ կոչուումէ եւս Մեծ։ Սա իւր Թագաւորութեան սկզբումը գնաց զօրքով Խազրաց եւ Բասլաց վերայ՝ իւր հօր սպանութեան վրէժը նոցանից պահանջելու. նոցա սաստիկ հարուածներ տուեց, նուաճեց նոցա եւ հարիւրից մին պատանդ վեր առեց նոցանից։ Յետոյ սկսաւ Հայաստանի մէջ զանազան ապարաններ եւ իջեւաններ շինել. եւ որովհետեւ այդ ժամանակ կային արդէն Հայաստանումը քրիստոնեայք, նոցա գործ ածեց իւր շինութիւնների համար ծանր աշխատարկութեան մէջ եւ շատին նահատակեց։*

Հռոմայեցոց կայսրը Անտոնինոս Կարակաղոս գնաց պատերազմով արեւելեան կողմեր եւ յետոյ մօտեցաւ Հայոց սահմաններին. Խոսրով Թագաւորը գնաց նորա առաջը բարեկամական ձեւով. կայսրը բռնեց նորան եւ պահեց իւր մօտ, որովհետեւ միտք ունէր տիրապետել Հայաստանը։ Հայք իմացան կայսեր դիտաւորութիւնը, մեծ զօրքով պատրաստուեցան պատերազմ, եւ նա երկնչելով արձակեց Խոսրովին պատ-

(1) Խազիրք եւ Բասիլք Սարմատացոց ազգիցն էին, Էթիլ (Վօլգա) գետի մօտ՝ Կովկասու լերանց հիւսիսակողմումը։

(2) Կոչուումէ եւս Ալանաց կամ Կասպից դուռն. այդպէս էր ասուում կիրճը Ալանաց սահմաններում, ուր Կովկաս լերին բազուկը մօտենումէ Կասպից ծովի եզրին։

ւով: Բայց երբ որ գնաց Նիկոմիդիա, ուղարկեց այն տեղից մեծ զօրք Հայոց վերայ եւ Խոսրով Հռոմայեցոց շատին կոտորեց, շատին փախուստ դարձրեց: Փոքր ժամանակից յետ կայսրը պատերազմեց Պարսից Արտաւան թագաւորի հետ Միջագետքի մէջ եւ այն տեղ մեռաւ. իսկ Արտաւան Հռոմայեցոց կայսերը յաղթելուց յետ շատ մեծամտեցաւ, կարծելով՝ թէ բոլոր աշխարհը կարող էր տիրապետել: Այդպիսի ամբարտաւանութեան եւ գոռոզամտութեան մասին սաստիկ ատումէին նորան իւր նախարարները, մինչեւ նոցանից մինը՝ Արտաշիր, Սասանի որդին, ազգով Պարսիկ, հաւաքեց զօրք, կռուեց Արտաւանի հետ, սպանեց նորան եւ ինքը եղաւ թագաւոր: Այնուհետեւ Պարսից թագաւորութիւնը՝ Պարթեւաց կամ Արշակունեաց ցեղից բարձուեցաւ եւ տիրապետեց Սասանեանց ցեղը 226 թուականին եւ տեւեց 400 տարու չափ մինչեւ Հագարացոց իշխանութիւնը: Մեր Խոսրով թագաւորը լսելով այդ համբաւը՝ շատ տրտմեցաւ, քանիցս անգամ պատերազմեց Արտաշրի հետ, եւ թէպէտ յաղթող էր հանդիսանում պատերազմների մէջ, բայց չէր կարողանում իսպառ ջընջել Սասանեանց տէրութիւնը եւ վերականգնել Արշակունեաց իշխանութիւնը Պարսկաստանում, մինչեւ միաբանուեցաւ Հռոմայեցոց Աղէքսանդր Սեվեր կայսեր հետ եւ նորա օգնութեամբ, թէպէտ պատերազմը տեւեց տասն տարու չափ, բայց վերջապէս յաղթեց Արտաշրին եւ հալածեց Հնդկաց աշխարհ. որով եւ գերութեամբ աւերեց Պարսկաստանը եւ մեծ աւարով դարձաւ Ատրպատական աշխարհ (1):

Իսկ Արտաշիր Սասանեան Պարսից թագաւորը, որ

---

(1) Ասումեն, թէ Խոսրով թագաւորը Ատրպատական աշխարհի այն գաւառը, ուր առաջին անգամ ցած եկաւ, կոչեց Վարուժ կամ Վարուժան, կամելով իբր թէ ասել, թէ վարեց ուժով Սասանեանց. յետոյ շինեց այն տեղ քաղաք եւ կոչեց Դավրէժ, իբր թէ Արտաշրի վ ր է ժ ի համար շինուեցաւ դ ա. որ կոչուեցաւ եւս Գանձակ եւ երկրորդ Եկբատան:

փախել էր իւր զօրքով Հնդկաց աշխարհ, տեսանելով՝ թէ չէ կարող այնուհետեւ տիրել Պարսից՝ որքան ժամանակ կենդանի էր Խոսրով, մտածեց նենգութեամբ սպանանել նորան: Այդ դիտաւորութիւնը կատարելու համար խոստացաւ իւր նախարարներին տալ երկրորդական գահը այն մարդուն, ով որ կսպանէ Խոսրովին: Նոցանից մինը՝ Անակ անունով, որ Պահլաւունեաց ազգիցն էր եւ Սուրենեան ցեղից, յանձն առեց այդ գործը կատարել. վեր առեց իւր բոլոր ընտանիքը եւ իբր անբաւական գոլով Արտաշրից՝ փախաւ կեղծաւորաբար Ատրպատական աշխարհի սահմանները Կորդուաց մէջ: Խոսրով թագաւորը լսելով այդ համբաւը եւ չիմանալով Անակի նենգամիտ նպատակը, ուղարկեց զօրքի գունդ, որ բերեն նորան իւր մօտ անվտանգ, եւ այդպէս Անակ եկաւ նախ Ուտէացոց աշխարհ եւ ապա բնակուեցաւ մեծ պատուով արքայանիստ քաղաքումը Վաղարշապատ:
257. Այդ տեղ նորա կինը Ոգոհէ կամ Ոգոհի ծնաւ որդի, որ կոչուեցաւ Գրիգոր եւ յետոյ եղաւ մեր Հայոց ազգի Լուսաւորիչը:

Այնուհետեւ Անակ սպասումէր յաջող դիպուածի, որ Խոսրովի սպանութեան խորհուրդը կատարէ, եւ այդ դիպուածը շուտ պատահեց: Մին օր, երբ Խոսրով գնաց դաշտ որս անելու եւ հրաւիրեց իւր հետ Անակին եւ նորա եղբօրը, նոքա երկուսը խնդրեցին թագաւորին մին կողմը՝ իբր ծածուկ խօսք ասելու համար եւ այն տեղ իսկոյն սպանեցին նորան եւ փախան: Հայոց նախարարները մին քանի զօրականներով վաղեցին նոցա քամակից եւ հասան նոցա Երասխ գետի մօտումը, բռնեցին Անակին եւ նորա եղբօրը եւ Ջրահեղձ արեցին նոցա գետի մէջ: Իսկ Խոսրով թագաւորը կիսամեռ՝ հրամայեց ջնջել բոլորովին Անակի տունը եւ ազգատոհմը, եւ մեռաւ: Հայոց ազգը նորա հրամանը կատարելով եւ համանգամայն իւր վրէժը առնելու համար սկսաւ կոտորել Անակի ազգատոհմը. այդ սպանութիւնից ազատուեցաւ, Սա-

տուծոյ խնամքով, նորա նորածին որդին Գրիգոր, որ պէտք էր լինէր Հայաստանի Առաքեալը եւ Լուսաւորիչը. երեխայի սնտու դայեակը Սոփիա անունով, Անակի տան կոտորածի օրերում, վեր առեց նորան եւ փախաւ Կեսարիա, ուր սնուցանելով նորան մեծ հոգացողութեամբ, երբ մեծացաւ եւ չափահաս եղաւ Գրիգոր, պսակեց նորան մին պարկեշտ օրիորդի հետ Մարիամ անունով, որ Դաւիթ կոչուած մին քրիստոնեայի դուստրն էր: Այդ ամուսնութիւնից ծընան երկու որդիք Վրթանէս եւ Արիստակէս. երեք տարուց յետ սուրբ Գրիգոր եւ նորա կինը Մարիամ փոխադարձ հաւանութեամբ մեկնուեցան միմեանցից. Մարիամ գնաց կանանց վանք եւ մնաց այն տեղ մինչեւ իւր մահը: Արիստակէս եղաւ նոյնպէս կրօնաւոր. իսկ Վրթանէս ամուսնացաւ եւ ունեցաւ երկու որդի՝ Գրիգորիս եւ Յուսիկ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Խոսրովի մահից յետ մեծ շփոթութիւն ծագուեցաւ Հայաստան այն մասին, որ Պարսից թագաւորը Արտաշիր զօրացաւ եւ հաւաքուումէր գալ մեր աշխարհ: Այդ պատճառով Հայոց նախարարները եւ իշխանները խնդրեցին օգնութիւն Հռոմայեցոց կայսրից Վաղերիանոսից, որ գոլով այն ժամանակ աղմուկների մէջ (1), ձեռնահաս չէր նպաստաւոր լինել Հայոց. վասնորոյ Արտաշիր համարձակ եկաւ Հայաստան, սաստիկ պատերազմեց եւ աւերեց Հայաստանի շատ երկիրները. Խոսրովի որդոցը կոտորեց եւ միայն մին որդուն Տրդատին կարողացաւ Արտաւազդ նախարարը Մանդակունի փախցնել Հռոմ, ուր նա կայսեր դրանը Լիկիանոս Հռոմայեցոց իշխանի հովանաւորութեան

---

(1) Վաղերիանոս ունէր այն միջոց պատերազմ Գոթացոց եւ Զենոբիա Ասորոց թագուհու հետ:

*

ներքոյ բնակուեցաւ ապահով: Այսպէս Արտաշիր
Պարսկ Պարսից թագաւորը տիրապետեց մեր աշխարհը 26
միջոց. 259—286 տարի Խոսրովի մահից սկսած մինչեւ իւր մահը:

Այդ ժամանակ սուրբն Գրիգոր, որ Կեսարիայումըն էր, երբ ստոյգ տեղեկացաւ, թէ Տրդատ Խոսրովի որդին է, որին իւր հայրը Անակ սպանել էր, գընաց նորա մօտ Հռոմ եւ սկսաւ մտերմաբար ծառայել նորան՝ իւր հօր գործած սպանութեան փոխարէն. շատ սիրելի եղաւ նորան եւ այնուհետեւ՝ միշտ նորա մօտ էր լինում, բայց ծածկաբար. այսինքն՝ Տրդատ չգիտէր թէ ում որդին էր Գրիգոր:

Ինքը Տրդատ իւր ուժեղութեամբ եւ յաջողակ զինաշարժութեամբ շատ երեւելի հանդիսացաւ Հռոմ եւ շատ զարմանալի քաջութեան օրինակներ ցոյց տուեց այն տեղ, մանաւանդ Դիոկղետիանոս կայսեր ժամանակը (1), որ վերջապէս հաւատի տեղեկանալով՝ թէ Տրդատ Խոսրովի որդին է, թշնամիների ձեռից ազատուելու համար Հռոմ եկած, իբրեւ վարձ նորա քաջութեանը եւ հաւատարմութեանը դրեց նորա գլուխը թագ եւ Հռոմայեցոց զօրքի հետ ուղարկեց Հայաստան, որ լինի թագաւոր իւր սեփական երկրումը: Տրդատ գնաց Հռոմայեցոց զօրքով Կեսարիա եւ ուղարկեց պատգամաւորներ Հայաստան՝ Հայոց Նախարարների մօտ, որոց յանձնել էին Հայաստանի կառավարութիւնը Արտաշիր եւ նորա որդի Շապուհ, եւ յայտնեց նոցա իւր թագաւորելը: Հայոց Նախարարները ուրախ սրտով գնացին Տրդատի առաջը, եւ միաբան հաւանութեամբ ընդունեցին նորան իւրեանց
286—342. թագաւոր: Նոցա հետ միասին Տրդատ եկաւ Անի ամրոց եւ այն տեղ գտաւ Օտայ իշխանին, որ Պարսից ապստամբութեան ժամանակը անվնաս պահպանել էր ամրոցը, թագաւորական գանձը եւ Տրդատի քը-

(1) Պատմել աշակերտներին Տրդատի արած քաջութիւնները Հռոմ, Հռչեկի հետ մենամարտութիւնը, եւ այլն:

րոջը Խոսրովիդուխտին. նորան յայտնեց Տրդատ իւր շնորհակալութիւնը եւ կարգեց հազարապետ. իսկ Արտաւազդ նախարարին, որ իւր փրկութեան պատճառն էր եղել, նշանակեց զօրքի վերայ սպարապետ։ Յետոյ գնաց Երիզա քաղաք (¹), ուր կար Անահիտ չաստուածուհու մեհեանը ։ Այն տեղ Տրդատ զոհ բերեց եւ հրամայեց Գրիգորին, որ միշտ ծառայումէր նորան, տանել նուէր այն մեհեանը վարդեր եւ ծաղիկներ. Գրիգոր հրաժարուեցաւ այդ գործից, ասելով թագաւորին, թէ նա միայն ճշմարիտ Աստուծոյ է մատուցանում պաշտօն, որ երկնի եւ երկրի Արարիչն է եւ ոչ թէ ձեռագործ կուռքերի ։ Տրդատ զարմացաւ եւ բարկացաւ նորա համարձակ դիմախօսութեան վերայ, մանաւանդ որ նորանից ոչ մին խօսք չէր լսած իւր հրամանին հակառակ, եւ իսկոյն հրամայեց պահել նորան ։ Միւս օրը կոչեց նորան իւր առաջը եւ հարցանելով նորա ունեցած կրօնի հանգամանքը, ստիպումէր նորան երկրպագութիւն տալ կուռքերին. իսկ Գրիգոր աքանչելի խօսքերով ցոյց էր տամ հեթանոսական կրօնի սնոտիութիւնը եւ Քրիստոսի հաւատը համարձակ մեծացուցանումէր՝ ոչինչ համարելով Տրդատի յորդորանքը եւ սպառնալիքը ։ Այն ժամանակ սկսաւ Տրդատ զանազան տանջանք տալ սուրբ Գրիգորին. այլ երանելին, որին պահպանումէր Ամենակարողը հայոց ազգի լուսաւորութեան համար, համբերութեամբ տանումէր ահագին տանջանքները, թւով մինչեւ տասներկու, եւ Տրդատ իւր նախարարներով հանդերձ հիանումէին նորա անօրինակ համբերութեան վերայ ։ Այդ միջոց Աշոցի (²) տէրը Տաճատ, որ տեսած էր Գրիգորին

(¹) Երիզա կամ Երեզ ռամկօրէն Երզնկայ կամ Եզնկայ հռչակաւոր քաղաք էր Բարձր Հայոց Եկեղեաց գաւառումը՝ Գայլ գետի մօտ. այս տեղ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը կրեց իւր չարչարանքը Տրդատ թագաւորից ։

(²) Աշոց՝ Արարատեան աշխարհի գաւառներից մինն է ։

կեսարիայումը եւ տեղեկացել էր նորա ազգատոհմին, յայտնեց Արտաւազդ սպարապետին ով եւ ինչ ազգից լինելը Գրիգորի, եւ նա պատմեց Թագաւորին, թէ այդ Գրիգորը Անակի որդին է, որ սպանել էր նորա հօրը Խոսրովին: Տրդատ եւս առաւել զայրացաւ, եւ տուգապէս այդ բանը իմանալուց յետ՝ հրամայեց Գրիգորի ձեռերը եւ ոտերը կապել, եւ տանել քցել նորան Արտաշատի բերդի մէջ եղած խոր վիրապը, ուր քցում էին մահապարտներին. Թագաւորի հրամանը կատարեցին եւ սուրբն Գրիգոր այն խոր վիրապումը՝ թունաւոր զեռուններին եւ ամեհի գազաններին մէջ մնաց տասնչորս տարի անվնաս:

Այդ միջոց Տրդատ թագաւորը Հայոց եւ Հռոմայեցոց զօրքի հետ միասին գնաց Հայաստանի այն քաղաքների վերայ, որոց իշխումէին Պարսիկք եւ տիրապետեց այն քաղաքները: Յետոյ դիմեց Ասորեստան, որ այն ժամանակ Պարսից իշխանութեան ներքոյ էր եւ շատ տեղեր գրաւեց նոցանից: Պարսից թագաւորը Շապուհ տեսանելով Տրդատի գործերը, եկաւ զօրքով Հայաստան. պատերազմը եղաւ երեք անգամ եւ իւրաքանչիւր անգամը Տրդատ յաղթող գտանուեցաւ, սաստիկ կոտորած արեց եւ բոլոր Պարսից զօրքը փանեց: Նա նուաճեց եւս Վրաց եւ Աղուանից աշխարհը. իսկ Միջագետքը մնացին Հռոմայեցոց հպատակ: Այսպէս բոլոր Հայոց աշխարհը տիրապետելուց յետ, հրամայեց գաւառապետներին որ նոքա որոնեն եւ քննեն ամենայն տեղ, եթէ մին մարդ կուռքերին երկրպագութիւն չտայ եւ պաշտէ Քրիստոսին, նորան՝ ձեռերը ոտերը կապած ուղարկեն թագաւորի դուռը եւ նորա ամենայն ինչքը մատնողներին լինի:

Տրդատ ամուսնացաւ Ալանաց Աշխարադ թագաւորի դստեր Աշխէնի հետ, որ հասակով եւ գեղեցկութեամբ հաւասար էր Տրդատին: Այդ ամուսնութիւնից ծնաւ Խոսրով փոքր կամ երկրորդ, որ իւր ծնողացը ամենեւին նման չէր:

Այն ժամանակ, երբ Տրդատ Թագաւորը Հռիփսիմեան (1) կուսանացը նահատակելուց յետ, դիւահարուեցաւ, նորա բժշկութեան համար աստուածային յայտնութեամբ Խոսրովիդուխտի տեսլեան մէջ՝ դուրս հանեցին սուրբ Գրիգորին Արտաշատի խոր վիրապից եւ բերեցին Վաղարշապատ. Սուրբն Գրիգոր տեսանելով Թագաւորի եւ նորա հետ մին քանի իշխանների գազանակերպ մոլեգնութիւնը, խղճահար եղաւ, սկսաւ յորդորել նոցա, որ ապաշխարեն եւ լսեն կարգով ճշմարիտ Աստուծոյ ամենայն խորհուրդները եւ մարդասիրութեան գործերը, որով միայն պէտք էր լինէր նոցա փրկութիւնը. եւ երբ նոքա ուրախութեամբ յանձն առեցին ունկնդրութիւն, հրամայեց նոցա յառաջագոյն պահել ծոմ հինգ օր եւ յետոյ խօսեց նոցա առաջեւ վաթսուն օր, սրբուհի Հռիփսիմեանց նահատակութեան տեղումը, մեկին եւ բացայայտ վարդապետութեամբ՝ Աստուծոյ արարչագործութեան վերայ, երրորդութեան եւ մարդեղութեան խորհրդի, նոյնպէս առաքեալների քարոզութեան եւ եկեղեցու հաստատութեան վերայ: Վաթսունեւվեց օրից յետ պատմեց նոցա իւր տեսիլը (2), եւ այն տեսլեան ձեւով հրամայեց Թագաւորին եւ ամենեցուն շինել վկայարաններ սրբուհի Հռիփսիմեանց վերայ. ամենեքեան ձեռնամուխ եղան այդ գործը կատարելու, Տրդատ Թագաւորը, նորա կինը Աշխէն եւ քոյրը Խոսրովիդուխտ փորեցին հողը այն տեղի պատրաստութեան համար, ուր սուրբն Գրիգոր դրեց սրբուհիների մարմինը արկղների մէջ. վկայարանների շինութեան համար Աշխէն եւ Խոսրովիդուխտ փորումէին նոյնպէս հողը, լցնումէին

---

(1) Պատմել աշակերտներին Հռիփսիմեանց եւ Գայիանեանց փախչելը Հռոմից Հայաստան Դիոկղետիանոս կայսեր հալածանքից, Հռիփսիմէի ընդդիմութիւնը Տրդատի կամքին, եւ նորա նահատակութիւնը իւր երեսունեւեօթն ընկերների հետ:

(2) Պատմել նոյնպէս Գրիգոր Լուսաւորչի տեսիլը:

իւրեանց հանդերձները հողով եւ տանումէին դուրս.
Ինքը Տրդատ թագաւորը կրումէր ծանր քարեր նոյն
շինութեան համար: Երբ շինուեցան երեք վկայարա-
նը, (մինը Հռիփսիմեանց համար, միւսը Գայիանեանց
եւ երրորդը մենաւորի համար, որ կատարուեցաւ
հնձանայարկումը), սուրբն Գրիգոր հրամայեց թա-
գաւորին եւ բոլոր բազմութեանը այն Միածնի իջ-
ման տեղումը ծունր դնել, եւ ինքը արտասուքով ըն-
կաւ խնդրել թագաւորի եւ բոլոր հարուածելոց հա-
մար բժշկութիւն. եւ թագաւորը մերկացաւ իւր այ-
լանդակ կերպարանքը եւ ստացաւ իւր առաջին գե-
ղեցկութիւնը. Նորա նման եւ բոլոր հիւանդները
ազատուեցան իւրեանց ցաւից: Այնուհետեւ Տրդատ
թագաւորը սուրբ Գրիգորի հետ սկսաւ շրջել Հայաս-
տանի երեւելի քաղաքները եւ կուռքերի արձանները
կամ պատկերները ամենայն տեղ կործանել: Արտա-
շատ քաղաքումը կործանեցին Անահիտի պատկերը.
Թորդան գեղումը ([1]) Բարշամինի պատկերը, Անի ամ-
րոցումը Արամազդի արձանը. Ինքը սուրբ Գրիգոր
ուր հասանումէր, ամենայն տեղ բնակիչներին դար-
ձուցանումէր քրիստոնէութիւն, որպէս երկար եւ
կարգով գրումէ Ագաթանգեղոս ականատես պատ-
մագիրը:

Երբ Գրիգոր Լուսաւորիչը եւ Տրդատ թագաւորը
դարձան Վաղարշապատ, բոլոր Հայք միաբան, միա-
խորհուրդ ընտրեցին սուրբ Գրիգորին իւրեանց հո-
վիւ. վասնորոյ մեծ պատրաստութեամբ, հնդետա-
սան նախարարներով եւ թագաւորի նամակով գնաց
նա Կապադովկիայի Կեսարիա քաղաքը՝ Ղեւոնդիոս
հայրապետի մօտ, որ ձեռնադրեց նորան արքեպիս-
302. կոպոս Հայոց աշխարհի: Նորա վերադառնալու ժա-
մանակը, Տրդատ վեր առեց իւր հետ Աշխէն թագու-

([1]) Թորդան գեղը Բարձր Հայաստանի Դարանաղեաց գաւառումն էր. այն տեղ էր Գրիգոր Լուսաւորչի գերեզմանը:

հուն, Խոսրովիդուխտին եւ զօրք, դուրս եկաւ Վաղարշապատից եւ գնաց Գրիգոր Լուսաւորչի առաջը Բագրեւանդ գաւառի Բագուան քաղաքագիւղը Եփրատ գետի մօտ։ Այն տեղ սուրբն Գրիգոր միւսանգամ քարոզեց, մին ամսի չափ մարզեց եւ աշակերտեց Թագաւորին եւ ամենեցուն մկրտութիւն ընդունելու համար եւ յետոյ մկրտեց Եփրատ գետի մէջ Թագաւորին, նորա զօրքը եւ մինչեւ 400 հազար մարդ, որ հաւաքուած էին այն տեղ Հայաստանի զանազան կողմերից. Տրդատի անունը փոխեց, կոչելով նորան Յովհաննէս՝ Յովհաննէս Կարապետի պատուի համար։ Սորանից յետ սկսաւ շրջել Հայաստանի զանազան գաւառները եւ քաղաքները եւ մկրտել մնացեալներին. շինումէր ամենայն տեղ եկեղեցի, ձեռնադրումէր քահանաներ եւ եպիսկոպոսներ, հիմնումէր դպրոցներ, կարգումէր վարժապետներ. ուշիմ աշակերտներին ինքն էր ուսուցանում։ Շինեց եւս Հայաստան աշխարհումը շատ վանքեր, կուսանոցներ եւ հիւրանոցներ. Նմանապէս հիմնեց Էջմիածնի եկեղեցին։ Այդպէս մեր Հայաստան աշխարհը աստուածպաշտութեան կարգերով պայծառացնելուց յետ, մեր Լուսաւորիչը ժամանակ ժամանակ մեկուսանումէր մարդկանցից անապատումը եւ ճգնումէր պահօք եւ աղօթիւք։

Մին օր աստուածային ազդեցութեամբ գնաց Սեպուհ լեառը (1) եւ այն տեղ գտաւ Մանի (2) կուսին, որ ճգնումէր խստակրօն կեցութեամբ. երեք օրից յետ վախճանուեցաւ սրբուհին. Գրիգոր Լուսաւորիչը թաղեց նորան, եւ յետոյ ինքը առանձնացած ճգնումէր նոյն տեղումը, որ կոչուեցաւ Մանեայ այր։ Այդ ժամանակներում քրիստոնէութիւնը հաստա-

---

(1) Դարանաղեաց գաւառումը Բարձր Հայաստանի:

(2) Հռիփսիմեան կոյսերից մինն էր, որ յետ մնալով իւր ընկերներից, նոցա Հայաստան գնալու ժամանակը, գնաց Դարանաղեաց գաւառը եւ ճգնումէր այն տեղ:

տուեցաւ եւ Վրաց աշխարհումը։ Նունէ կոյսը, Հը-
ռիփսիմեանց ընկերներից մինը, որ Հռոմից փախչե-
լու ժամանակը գնացել էր Վրաստան, բնակւումէր
Մծխիթա քաղաքումը եւ այն տեղ սքանչելիք էր
գործում հիւանդների վերայ։ Վրաց Միհրան թագա-
ւորի որդուն եւ կնոջը բժշկեց աղօթքով՝ եւ ինքը
Միհրան, երբ որ նորան սաստիկ մէգ էր պատել
որս գնացած ժամանակը, սկսաւ աղօթել ճշմարիտ
Աստուծոյ, որպէս լսել էր Նունէից եւ խոստացաւ,
եթէ ազատուի այն խաւարից, նորան միայն պաշտել.
Նորա խնդիրը կատարուեցաւ, եւ նա դարձաւ տուն,
կոչեց իւր մօտ Նունէին եւ լսելով նորանից քրիստո-
սական հաւատի պարունակութիւնը, ընդունեց քը-
րիստոնէութիւն եւ շինեց եկեղեցի։ Նորա օրինակով
եւ բոլոր ժողովուրդը հաւատաց Քրիստոսի աստուա-
ծութեանը։ Սրբուհին Նունէ յայտնեց Վրաց դար-
ձումն մեր Գրիգոր Լուսաւորչին, որ շատ շատ ու-
րախացաւ լսելով այդ համբաւը եւ ուղարկեց Նունէ-
ին հրաման կործանել՝ կուռքերի պատկերները եւ
նոցա տեղ դնել խաչ։ Նունէն կատարեց այդ պա-
տուէրը։

306. Հռոմումը թագաւոր եղաւ այդ ժամանակ մեծն
Կոստանդիանոս, որ ընդունեց քրիստոսական հաւատը
եւ հանդիսացաւ քրիստոնէութեան զօրաւոր պաշտ-
պան, որպէս յառաջադոյն հալածիչ՝ յետադայ դի-
պուածով։ Նա շատ դժուարանումէր յաղթել Մաքսեն-
տին (Մաքսիմիանոսի որդուն) իւր կայսերակցին եւ երբ
գնումէր նորա վերայ պատերազմ, ճանապարհումը
մտածումէր, թէ ո՛ր աստուծոյ իւրեան օգնութիւն
խնդրէ. այն ժամանակ երեւեցաւ նորան խաչանման
լոյս օդի մէջ եւ այն լուսեղէն խաչի վերայ գրած
312. էր՝ «Դորանով յաղթիր»։ Կոստանդիանոս հաւատաց
Քրիստոսի աստուածութեանը եւ յիրաւի յաղթող
դտանուեցաւ. մկրտուեցաւ սուրբ Սեղբեստրոսից եւ
հրամայեց տարածել Քրիստոնէութիւնը Հռոմի մէջ.
Նոյնպէս եւ նորա մայրը Հեղինէ հաւատաց Քրիստո-

սին, յետոյ գնաց Երուսաղէմ եւ գտաւ այն տեղ
Քրիստոսի սուրբ Խաչը։ 327.

Տրդատ Թագաւորը եւ Գրիգոր Լուսաւորիչը լսելով մեծին Կոստանդիանոսի քրիստոնէութիւն դառնալը՝ շատ ուրախացան եւ գնացին Հռոմ շնորհաւորել նորան այդ ուրախութիւնը. մեծ պատւով ընդունուեցան Կոստանդիանոսից եւ Սեղբեստրոսից եւ մընացին այն տեղ մին ողջոյն ամիս. (սուրբն Սեղբեստրոս ձեռնադրեց սուրբ Գրիգոր Լուսաւորչին Հայոց Պատրիարգ կամ Եպիսկոպոսապետ, յետոյ վերադարձան Հայաստան։)

Այդ ժամանակներում յայտնուեցաւ Ա ր ի ո ս հերետիկոսապետը, որ Աղէքսանդրիա քաղաքի (Եգիպտոսումը) երէց էր եւ Մելիտիոս Եգիպտոսի եպիսկոպոսին համախոհ։ Սա սկսաւ մոլար վարդապետութիւն քարոզել Քրիստոսի մասին. հաստատումէր, որպէս թէ Որդին Աստուծոյ կամ Բանն Աստուած համագոյակից չէ Հօր, այլ արարած։ Այդ աղանդի հետեւողները, որ կոչուումէին Արիոսեանք, սկսան շատանալ։ Սուրբն Կոստանդիանոս՝ Սեղբեստրոս պատրիարգի հաւանութեամբ հրամայեց ժողով գումարել Նիկիայ քաղաքումը Բիւթանիայի, 325 Թուակա- 325.
նումը, ուր հաւաքուեցան 318 եպիսկոպոս եւ ներկայ գտնուեցաւ Հայոց ազգից՝ Գրիգոր Լուսաւորչի փոքր որդին Արիստակէս։ Սուրբ Հարք (որոց մէջ զօրեղ հակառակախօս էր Արիոսին Աթանաս սարկաւագը, յետոյ Պատրիարգ Աղէքսանդրիոյ) Արիոսի մըտքերը քննելուց յետոյ՝ դատապարտեցին նորան եւ մերժեցին եկեղեցու հաղորդակցութիւնից. յետոյ գրեցին եւ հաստատեցին հաւատի հանգանակը։ Ժողովի դաւանութիւնը սուրբ Արիստակէսը բերեց Վաղարշապատ, եւ Գրիգոր Լուսաւորիչը ընդունեց հանգանակը եւ կնքեց այս բառերով՝ «Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկրպագանելով Սրբոյ Երրորդութեան եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»։

Սորանից յետ Գրիգոր Լուսաւորիչը յօրինեց շատ վարդապետական ճառեր, որոց հաւաքումն կոչուումէ Յաճախապատում, եւ յետոյ խոյս առանձնացաւ, յառաջագոյն Գլակայ վանքումը եւ ապա Սեպուհ լերին մէջ Մանեայ այրումը, ոչ իբրեւ մարդ հողեղէն, այլ իբրեւ մին երկնաքաղաքացի. բոլորովին հոգիացած միշտ-եւ անդադար աղօթքով պարապած, աստուածային տեսութեան եւ երանական կեանքի մէջ՝ եւ փոքր ժամանակից յետ փոխուեցաւ իւր անձկալի Քրիստոսի մօտ՝ 30 տարի Հայրապետական իշխանութիւնը կառավարելուց յետ: Նորա մարմինը հովիւները գտան եւ թաղեցին այն տեղ անյայտ ձեւով՝ եւ միայն շատ տարուց յետ մին Գառնիկ անունով ճգնաւոր աստուածային յայտնութեամբ գտաւ Մանեայ այրումը եւ տարեց Թորդան աւանը՝ յետոյ բերեցին նորա մարմինը Վաղարշապատի եկեղեցի եւ ապա Դուին քաղաք, երբոր Հայրապետական աթոռը այն տեղ փոխադրուեցաւ. իսկ մին քանի ժամանակից յետ նորա մարմնի նշխարները տարածուեցան զանազան աշխարհ, մասն ինչ Կոստանդնուպօլիս եւ մասն ինչ Իտալիա:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հայոց իշխանները շատ թուլացել էին այդ ժամանակ քրիստոնէական առաքինութիւնների մէջ. նոցա թիւր վարքը յանդիմանում էր անդադար Արիստակէս, որ յաջորդել էր Հայրապետական աթոռը՝ իւր հօր Գրիգոր Լուսաւորչի անապատումը առանձնանալուց յետ՝ նորա խրատներով դժուարանում էին նախարարները, մինչեւ նոցանից մինը՝ Արքեղայոս, որ Չորրորդ Հայոց իշխանն էր, յայտնապէս թշնամացաւ Արիստակէսի հետ եւ վերջապէս սպանեց նորան, երբ որ նա գնում էր Ծոփաց գաւառը (1): Միւս կող-

(1) Ծոփք՝ Չորրորդ Հայոց աշխարհումը գաւառ էր:

մից Տրդատ թագաւորը նոյնպէս խրատում էր նախա-
րարներին եւ յորդորում էր նոցա լինել առաքինա-
գործ եւ իսկապէս քրիստոնեայ՝ բայց տեսնում էր,
թէ նոքա օր ըստ օրէ վատթարանում են. վասնորոյ Պարապ
հրաժարուեցաւ թագաւորութիւնից եւ գնաց ճգնե- միջոց.
լու Սեպուհ լերին մէջ, այն տեղումը, ուր առաջ 342—344.
ճգնում էր Գրիգոր Լուսաւորիչը: Նախարարները
գնացին խնդրեցին նորան, որ յետ գայ եւ կրկին
թագաւորութիւն առնէ Հայաստան եւ խոստացան
ուղղել իւրեանց վարքը. բայց Տրդատ յանձն չառեց,
եւ նոքա դեղատուութեամբ կարճեցին նորա կեանքը:
Նորա մահից յետ ընտրուեցաւ Հայոց թագաւոր նո-
րա որդին Խոսրով Երկրորդ, որ շատ անհոգ մարդ Խոսրով Բ.
էր եւ միայն զբօսանքով եւ որսով պարապած, մին- 344—353.
չեւ այնքան, որ Պարսից Շապուհ թագաւորի խո-
րամանկութեամբ Կովկասու լերին մօտակայ բնակիչ-
ները եկան զօրքով Հայաստան եւ միայն Կոստանդին
կայսեր օգնութեամբ կարողացաւ Խոսրով ընդդիմա-
նալ նոցա եւ այդ միջոցումը եւս մեռաւ:

Երկրորդ Խոսրովի մահից յետ սուրբ Վրթանէսը
Հայոց նախարարների հաւանութեամբ վեր առեց
նորա որդուն Տիրանին եւ գնաց Կոստանդնուպոլիս
Կոստանդին կայսեր մօտ, որի հաճութեամբ Տիրան Տիրան Բ.
Երկրորդ վերադարձաւ Հայաստան եւ կարգուեցաւ 353—363.
թագաւոր:

Շապուհ Պարսից թագաւորը, Յունաց վրայ պա-
տերազմ գնալու ժամանակը անցանելով Հայաստանի
սահմանների մօտից, մտածեց խաբէութեամբ բռ-
նել Տիրանին, որովհետեւ նա Յուլիանոս կայսերը
ձեռնտու էր եղել՝ նորա Պարսից հետ պատերազմե-
լու ժամանակը. բարեկամական թղթով հրաւիրեց
Տիրանին իւր մօտ, որ չհասկանալով նորա խորաման-
կութիւնը կատարեց նորա ցանկութիւնը, եւ Շապուհ
սկսաւ կշտամբել Տիրանին իւր զօրքի առաջեւ եւ
իսկոյն հրամայեց հանել նորա աչքերը. բայց եւ
երկնչելով Հայերից, որ չիցէ թէ վրէժխնդիր լինեն

այդ բանի մասին, կարգեց թագաւոր Տիրանի որդուն
Արշակ Բ. Արշակին: Այդ Շապուհ ոչինչ չկարողացաւ գործել
363—381. Յունաց հետ, որովհետեւ Վաղենտիանոս ուղարկեց նորա վերայ շատ զօրք եւ փախստական արեց նորան իւր աշխարհ: Սա շատ նեղումէր քրիստոնէից, որ ծածուկ պահպանում էին քրիստոսական հաւատը
361. եւ նոցանից շատերին նահատակեց, որոց մէջ համարուումէ եւ սուրբ Սարգիսը իւր Մարտիրոս որդով (1):

Վաղենտիանոս կայսրը գրեց թուղթ Արշակ թագաւորին, որ նա չմնայ Պարսից հնազանդութեան ներքոյ, այլ լինի Յունաց իշխանութեան հպատակ: Արշակ չյարգեց կայսեր գրութիւնը եւ արհամարհանքով յետ դարձրեց նորա դեսպաններին. բայց եւ Շապուհ Պարսից թագաւորի հետ եւս հաստատուն բարեկամութիւն չհիմնեց, այլ մնաց անհոգ երկու կողմից: Վաղենտիանոս շատ բարկացաւ այդ բանի վերայ եւ ուղարկեց Թէոդոս զօրավարին մեծ զօրքով Հայաստան: Արշակ վախեցաւ եւ դիմեց Ներսէս Կաթուղիկոսին, որ այդ պատճառով գնաց Թէոդոսի առաջեւ եւ իմաստուն խօսքերով կարողացաւ համոզել նորա սիրտը եւ յետոյ գնաց կայսեր մօտ. կայսրը յարգելով Ներսէսի խնդիրը, թոյլ տուեց պատերազմը, շատ մեծարեց Ներսէսին եւ նորա վերադառնալու ժամանակը Հայաստան՝ արձակեց նորա հետ մին քանի պատանդներ, որոց մէջ էր եւ Գնէլ, Արշակի եղբօր Տրդատի որդին եւ ուղարկեց Արշակի համար կնութեան իւր ազգական կոյսը Ողոմպիադա անուանով: Գնէլը երբոր վերադարձաւ Հայաստան, առեց իւրեան կին Փառանձեմին՝ Սիւնեաց նահապետի դստերը: Փոքր ժամանակից յետ Արշակ սպանեց Գնելին՝ նորա թշնամիների չարախօսութեամբ եւ նորա կնոջը Փառանձեմին առեց իւրեան կնութեան՝

(1) Պատմել աշակերտներին սուրբ Սարգսի ով լինելը եւ նորա նահատակութեան պատճառը:

քրիստոնէական օրէնքին հակառակ, վասն զի ունէր կին, որ էր Ոլոմպիադա թագուհին։ Արշակի այդ երկրորդ կինը Փառանձեմ նախանձուելով Ոլոմպիադայի առաջնութեանը կամ տիկնութեանը, գործեց նորա հետ զարհուրելի եւ անլուր չարութիւն, խառնեց հաղորդութեան բաժակի մէջ մահաթոյն մին Մրջիւնիկ անունով անօրէն քահանայի ձեռով եւ այդպէս հաղորդութեան սուրբ խորհուրդը շինելով սպանութեան գործի՛ վերջացրեց Ոլոմպիադայի կեանքը։

Արշակ շինեց մին քաղաք եւ կոչեց նորան Արշակաւան ([1])։ Կամելով լցնել այդ քաղաքը բնակիչներով, հրաման տուեց, որ ամենայն մարդ, ով որ կգնայ այն տեղ բնակուելու՛ ազատ լինի դատաստանից որ եւ իցէ յանցանքի մէջ։ Այդ հրամանի զօրութեամբ ամենայն չարագործք, գող, աւազակ, մարդասպան, գնաց բնակուեցաւ այն տեղ՛ արժանաւոր պատժից ազատուելու պատճառով։ Հայոց նախարարները եւ իշխանները շատ անբաւական եղան այդ կարգադրութեամբ. բազմիցս խնդրեցին թագաւորին, որ փոխէ այդ հրամանը, բայց նա հերքեց նոցա խնդիրը։ Այդ հանգամանքը եղաւ մեծ տարաբաղդութեան պատճառ Հայոց թագաւորի եւ ազգի համար։ Նախարարները բոլորեքեան թուղթ գրեցին Պարսից Շապուհ թագաւորին եւ աղաչեցին նորան որ գայ Հայաստան եւ քանդէ Արշակաւան քաղաքը, խոստանալով լինել նորան օգնական այդ գործումը։ Շապուհ ուրախութեամբ ուղարկեց զօրք Արշակի վերայ, որ Հայոց նախարարների ձեռնտուութեամբ պաշարեցին Անի ամրոցը, ուր թաքնուել էր Արշակ. իսկ նա այդ միջոցում կարողացաւ փախչել Կովկասու կողմերը եւ Վրաց ապաւինել։ Նախարարները Պարսից զօրքի հետ գնացին Արշակաւանի վերայ եւ բոլոր բնակիչներին կոտորեցին։ Արշակ Վրաց զօրքի հետ

([1]) Մասեաց լերին մօտ Կոգովիտ գաւառումը ։

դարձաւ Հայաստան եւ պատերազմեց նախարարների հետ. նոյն միջոցումը եկաւ յանկարծ Արշակի վերայ Յունաց զօրքը, որովհետեւ Վաղենտիանոս հաւատի իմացել էր, թէ Հայերը միաբան են Պարսիկների հետ եւ թէ Արշակ օգնութիւն էր տուել Շապուհին Յունաց հետ պատերազմելու ժամանակը: Արշակ զարհուրեց՝ խնդրեց մեծն Ներսեսին, որ բարեխօս լինի Թէոդոս զօրավարի եւ կայսեր առաջեւ, խոստացաւ նորան՝ իւր բոլոր չար ճանապարհը եւ չար գործերը թողնել այնուհետեւ եւ ուղղել: Ներսէս յանձն առեց օգնութիւն տալ Հայաստանին այդ դժուար հանգամանքումը. նախ եւ առաջ հաշտեցրեց նախարարներին իւրեանց թագաւորի հետ. (միայն Արծրունեաց նահապետը Մերուժան եւ նորա քրոջ մարդը Վահան Մամիկոնեան մնալով անհաշտ, գնացին, Պարսից թագաւորին եղան հպատակ՝ Քրիստոսի հաւատը ուրացած). յետոյ գնաց Թէոդոս զօրավարի առաջը եւ խնդրեց նորան ներողամիտ լինել Հայոց, խոստացաւ տալ Յունաց հարկ եւ պատանդներ նախարարների որդիքից, որոց մէջ էր եւ Պապ՝ թագաւորի որդին: Թէոդոս ընդունեց Ներսեսի միջնորդութիւնը, վեր առեց պատանդներին եւ առաջարկեց Ներսեսին գնալ իւր հետ Կոստանդնուպօլիս. այն տեղ յայտնեց բոլոր հանգամանքները Վաղէս կայսերը եւ տուեց նորան Արշակի խոնարհական թուղթը. կայսրը ոչ այն թուղթը կարդաց եւ ոչ հաշտութեանը հաւանեց, նաեւս Ներսեսին չհամաձայնեց տեսանել, այլ հրամայեց նորան աքսորել, իսկ պատանդներին սպանանել. եւ թէպէտ Թէոդոսի միջնորդութեամբ այն պատանդներին ընծայեց իւրեանց կեանքը, բայց Ներսեսին կրկին անգամ սաստիկ հրամայեց աքսորել (¹): Այդ աքսորանքից Ներսեսին յետ

(¹) Ներսեսին ուղարկեցին մին անմարդաբնակ կղզի, որ ոմանց կարծիքով Պատմոս կղզին էր, Յունաց ծովի մանր կղզիներից մինը՝ Սամոս կղզու մօտ:

դարձրեց Թէոդոս իւր կայսերութեան ժամանակը:

Այս ժամանակներում ծագուեցան նոր կրօնական
մոլորութիւններ, որոց մինը եւ գլխաւորը պաշտպանում
էր Մակեդոնին՝ Կոստանդնուպօլսի պատրիարգին,
որ ասում էր, թէ Հոգին սուրբ արարած է (1):
Այդ հանգամանքից յառաջացել էին զանազան խռովութիւններ
Եկեղեցու մէջ եւ մեծն Թէոդոս հարկադիր
եղաւ ժողով գումարել Կոնստանդնուպօլիս
381 թ. ուր հաւաքուեցան 150 հայրապետ, որոց մէջ 381.
ներկայ գտանուեցաւ Հայոց կողմից մեծն Ներսէս:
Ժողովը հերքեց եւ նզովեց Մակեդոնին, եւ խոստովանեց
Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ՝ համագոյակից
եւ փառակից Հօր եւ Որդւոյ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Շապուհ Պարսից թագաւորը ուղարկեց կրկին անգամ մեծ զօրք Արշակի վերայ՝ իւր Ալանոզան անունով սպարապետի առաջնորդութեան ներքոյ. եւ Արշակ տեսանելով, թէ ոչ մին նախարար իւրեան օգնութիւն չէ հասուցանում, փախաւ եւ թագնուեցաւ: Հայոց նախարարները, որ տաղտկացած էին Արշակից՝ նորա զանազան չարագործութիւնների մասին, իսպառ թողեցին նորան եւ գնացին անձնատուր եղան Շապուհին, որ սիրով ընդունեց նոցա, յետոյ մեծ պատուով դարձրեց իւրեանց աշխարհը եւ գրեց Ալանոզանին, որ նախարարների հետ քաղցրութեամբ վարուի եւ հետեւէ բռնել Արշակին: Այդ հրամանի զօրութեամբ Ալանոզան սկսաւ պահել բոլոր ճանապարհները, որ կարողանայ ձեռք բերել Արշակին. եւ Արշակ տեսանելով, թէ ոչ ինչ փրկու-

(1) Միւս մոլորութեան հնարողը Ապողինարն էր, որ հաստատում էր, թէ Քրիստոսի մարմինը ցած է իջել երկնքից: Կային միւս եւս հերետիկոսներ Եւնոմեանք, որ ասում էին. թէ Հոգին սուրբ չէ բղխում Հօրից, այլ Որդուց:

Թեւան հնարք չունի, գնաց ինքը իւր կամքով Ալանոզանի մօտ եւ նորա հետ Շապուհ թագաւորի առաջը: Շապուհ կեղծաւորաբար ընդունեց Արշակին մեծ պատուով եւ գրեց Հայոց նախարարներին, որ վեր առնեն Փառանձեմ թագուհուն եւ գնան շուտով նորա մօտ Պարսկաստան: Նախարարները շատ խռովեցան այդ բանի վերայ. մտածումէին, եթէ գնան, իւրեանց եւս Շապուհ կպահէ իւր մօտ եւ յետոյ իւրեանց կանանցը եւս կտանէ Պարսկաստան, իսկ եթէ չգնան, այն ժամանակ մեծ պատերազմ պէտք է բացուի Հայաստանի հետ. վերջապէս այդ տարակուսանքը վճռեցին այնպէս, որ ուղարկեցին դեսպան Շապուհի մօտ եւ խնդրեցին նորան, որ թողնէ նոցա իւրեանց աշխարհումը. իսկ Շապուհ, որ հաստատ դրած էր մտքումը Հայոց աշխարհը բոլորովին նուաճել, չհամաձայնեց նախարարների խնդիրը կատարել. վասնորոյ նախարարները յարձակուեցան Պարսից զօրքի վերայ, սաստիկ կռուեցան նոցա հետ եւ փախստական արեցին, սակայն եւ ինքեանք երկիւղից սոխալուած՝ հեռացան իւրեանց աշխարհից՝ ոմանք Յունաստան եւ ոմանք այլ եւ այլ կողմեր՝ նոցա հետ գնաց Կոստանդնուպօլիս եւ Վարազդատ Արշակունին (1): Փառանձեմ թագուհին վեր առեց իւր գանձը եւ Մուշեղ Մամիկոնէի հետ գնաց Արտագէրս բերդը (2) եւ այն տեղ ամրացաւ: Շապուհ ինչպէս լսաւ այդ բաների համբաւը, իսկոյն հրամայեց Արշակին շղթայել եւ տանել Խուժաստանի անյուշ բեր-

---

(1) Վարազդատ կոչուումէ եւս Արտաւազդ՝ շատ զօրեղ եւ սրտով մարդ էր. սորան թագաւոր կարգեց Հայաստանումը Թէոդոս մեծը՝ Պապ թագաւորից յետ:

(2) Արտագէրս կամ Արտագերից բերդը անմատչելի տեղ էր Արշարունեաց գաւառումը Արարատեան աշխարհի. այդ բերդը շինել էր Արշակ:

դը (¹). յետոյ Մերուժան Արծրունու եւ Վահան Մամիկոնէի հետ ուղարկեց բազմաթիւ զօրք Հայաստան, որ բոլոր աշխարհը աւերեն։ Մերուժան եւ Վահան եկան Հայաստան, դիմեցին Արտագերից բերդի վերայ, ուր ամրացած էր Փառանձեմ, բայց չկարողացան առնուլ այն բերդը, որովհետեւ անմատչելի էր եւ անառիկ. սակայն նորա բնակիչները երբոր տեսան, թէ նոցա ոչինչ փրկութեան յոյս չկայ Պապի կողմից (Արշակի որդու), անձնատուր եղան Պարսից. այն ժամանակ Մերուժան եւ Վահան քանդեցին այն քաղաքը եւ այլ շատ քաղաքներ աւերեցին Հայաստանումը։

Այսպիսի թշուառութիւնների համբաւը երբ լսաւ Արշակ, ինքը իւրեան սպանեց։ Իսկ Շապուհ կրկին 381.
անգամ զօրք ուղարկեց Հայաստան Մերուժանի հետ եւ խոստացաւ նորան Հայոց թագաւորութիւնը, եթէ կարողանայ դարձուցանել այն աշխարհը Պարսից կրօն։ Մերուժան եկաւ Հայաստան, սկսաւ եպիսկոպոսներին եւ քահանաներին բռնել եւ շղթայակապ ուղարկել Պարսկաստան, ուր նոցանից շատը զանազան տանջանքներով սպանուեցան եւ ոմանք մնացին բանտարկուած։ Յետոյ այդ աստուածուրաց Մերուժանը այրեց ամենայն գրեանքը եւ մատեանները, որ գտաւ Հայաստանումը յունարէն գրով գրած, եւ հրամայեց որ բոլոր Հայաստան աշխարհումը ոչ ով չսովորէ Յունաց լեզուն եւ գրութիւնը, այլ միայն ուսանեն պարսկերէն. որովհետեւ այդ ժամանակ Հայերը Յունաց եւ Ասորոց գրով էին գրում ուսումնական եւ հոգեւորական գրքերը եւ մեր Հայկական նշանագիրները հնարած չէին դեռ եւս։

(¹) Խուժաստանը համարուումէ Պարսից եւ Քաղդէացոց երկրի միջոցումը. անյուշ կամ անուշ բերդումը Պարսից թագաւորները դնումէին ծանր մեղապարտներ. եւ այնուհետեւ չկար ոչ օրէնք եւ ոչ հնարք յուշ բերել այն մեղապարտներին կամ մտածել ազատել նոցա այն տեղից երբ եւ իցէ. եւ այդ պատճառով կոչուեցաւ անյուշ բերդ, այսինքն՝ անյիշելի։

*

Այդ բոլոր հանգամանքների աղէտալից համբաւը
հասաւ մեծն Ներսեսի ականջը եւ լցրեց նորա սիրտը
անասելի տրտմութեամբ: Սկսաւ նա անդադար աղա-
չել Թէոդոս կայսերը թագաւոր կարգել Հայաստա-
նումը Պապին, ազատել Հայոց աշխարհը Պարսից
ձեռից՝ գոնեա քրիստոնէական սուրբ հաւատը պաշտ-
պանելու համար: Եւ Թէոդոս կայսրը լսաւ Ներսեսի
Պապ. աղաչանքը, թագ կապեց Պապի գլուխը եւ մեծ զօր-
381—384. քով ուղարկեց նորան Հայաստան Տերենտիանոս սպա-
րապետի հետ. իսկ նորա կնոջը Զարմանդուխտին եւ
երկու որդոցը՝ Արշակին եւ Վաղարշակին պահեց իւր
մօտ պատանդ: Հայոց նախարարները, որ փախել էին
Հայաստանից Շապուհի երկիւղի պատճառով, եկան
միաբանուեցան Պապի հետ, եւ բոլորը միասին Յու-
նաց զօրքի օգնութեամբ պատերազմեցին Պապի հետ
եւ յաղթեցին նոցա. Մերուժանին բռնեցին, եւ
Սմբատ Բագրատունին մին ջեռուցած շամփուր պը-
սակաձեւ բոլորեց եւ դրեց նորա գլուխը՝ ասելով նո-
րան. «Ես Բագրատունի ասպետ եմ, եւ Բագրատու-
նեաց վաղուց տուած է իշխանութիւն թագադիր լի-
նելու Հայոց թագաւորներին. ահա թագ եմ դնում
քո գլուխը, որովհետեւ դու ցանկանում եւ հետեւում
էիր Հայոց թագաւոր լինել»: Պատերազմից յետ
Հայաստանը խաղաղուեցաւ Պապի թագաւորութեան
եւ Սմբատի սպարապետութեան ներքոյ. բայց ոչ եր-
կար ժամանակ, որպէս կտեսանենք յետագայ գըլ-
խումը:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Պապի թագաւորութեան սկզբումը Ներսէս մեծը համոզումէր եւ խրատումէր նորան, որ իւր հօր Արշակի ճանապարհը չգնայ, այլ լինի առաքինասէր եւ արդարադատ, նախարարների եւ ժողովրդի հետ վարուի քաղցրութեամբ եւ խնամքով: Պապ խոստացել էր կատարել Ներսեսի բարի խորհուրդները, բայց յետոյ սկսաւ ծառայել իւր կրքերին: Այդ պատ-

ճառով Ներսէս չէր դադարում խրատել նորան, յանդիմանումէր եւ յորդորումէր միշտ զգաստ եւ առաքինասէր լինել. Նորա խրատները եւ կշտամբանքը չէին ուղղում Պապի ընթացքը, այլ առաւել զայրացնում էին, մինչեւ այնքան, որ Պապ դեղատուութեամբ վերջացրեց Ներսեսի կեանքը: Նորա տեղ կարգեց Պատրիարգ՝ Շահակ անունով մին արժանաւոր անձն, Հայոց Եպիսկոպոսների ձեռնադրութեամբ, առանց Կեսարիայի Արքեպիսկոպոսին: Սորանից յետ Պապ մեծամտուեցաւ եւ միտք արեց կայսեր հնազանդութիւնից եւս դուրս գալ. արտաքսեց Տերենտիանոս սպարապետին եւ իմանալով որ կայսրը կբարկանայ այդ գործի վերայ, ժողովեց զօրք եւ պատրաստուեցաւ պատերազմ: Թէոդոս կայսրը ինչպէս իմացաւ այդ հանգամանքը գրեց հրաման Տերենտիանոսին յետ դառնալ եւ պատերազմել Պապի հետ եւ նոյն ժամանակումը հրամայեց Կապադովկիայի կողմերումը եղած զօրքերին գնալ շուտով Տերենտիանոսին օգնութիւն: Մինչդեռ Հայոց զօրքը անհոգ նստած էր, Տերենտիանոս յանկարծակի եւ անակնկալ ժամումը հասաւ նոցա բանակը (1), նոցանից շատին կոտորեց, շատին փախստական արեց եւ Պապին բռնեց տարաւ Թէոդոսի մօտ: Կայսրը սկսաւ յառաջադոյն իւր արած բարերարութիւնները համարել նորա առաջեւ, նկարագրեց նորա ապերախտութիւնը դէպ ի Ներսէսը, յետոյ յիշեց Ներսեսի սպանութիւնը նորա ձեռով, եւ ապա իբրեւ արժանաւոր պատիժ նորա չարագործութիւններին եւ ապերախտութեանը՝ հրամայեց սպանել նորան, եւ նորա տեղ կարգեց Վարազ-
Հայաստան թագաւոր Վ ա ր ա զ դ ա տ Արշակունուն, դատ.
որ Շապուհի ապստամբութեան օրերում փախել էր 384—386.
կայսեր դուռը:

---

(1) Բագրեւանդ գաւառումը Արարատեան աշխարհի:

Վարազդատ եկաւ Հայաստան Յունաց զօրավարների հետ, եւ երբ այն զօրավարները կամենումէին իւրեանց կամքով կառավարել նորա տէրութիւնը՝ իբրեւ երախտաւորներ, Վարազդատին շատ դժուար թուեցաւ այդ բանը եւ մտադիր եղաւ կայսեր հնազանդութիւնից դուրս գալ։ Այս մտքով գրեց Շապուհ Պարսից թագաւորին մտերմութեան թուղթ եւ խոստացաւ հատուցանել միշտ նորան կայսեր հարկը, եթէ իւրեան օգնէ ընդդէմ կայսեր։ Այդ ապստամբութեան խորհուրդը իմացան Յունաց զօրավարները եւ յայտնեցին կայսեր. կայսրը հրամայեց նոցա յորդորել Վարազդատին գնալ Կոստանդնուպօլիս եւ եթէ նա չյօժարանայ գնալ՝ կապանքով բերել նորան այն տեղ։ Վարազդատ չկարողացաւ ընդդիմանալ այդ հրամանին, որովհետեւ Պարսից կողմից չէր ըստացել դեռ եւս օգնութիւն. վասնորոյ բռնադատուած գնաց կայսեր մօտ. բայց երբոր հասաւ Կոստանդնուպօլիս, կայսրը տեսութեան իսկ արժանի չարեց նորան, այլ հրամայեց երկաթի կապանքով կապել եւ իբրեւ մին ապստամբ մարդ աքսորել Թու-
386. լիս կղզին (1)։

Թէոդոս մեծը տեսանելով Հայոց թագաւորների վարանջութիւնը, մտածեց երկու թագաւոր կարգել Հայաստանումը այն նպատակով, որ եթէ մինը գլուխ բարձրացնէ, միւսը չկարողանայ միաբանուել
Արշակ եւ նորա հետ. վասնորոյ թագաւոր նշանակեց Պապի
Վաղարշակ, երկու որդոցը միասին՝ Ա ր շ ա կ ի ն եւ Վ ա ղ ա ր շ ա-
Պապի որդի- կ ի ն, որ այդ ժամանակ Կոստանդնուպօլիս էին իբ-
քը · րեւ պատանդ իւրեանց մօր Զարմանդուխտի հետ։
386—388. Արշակ բնակուեցաւ Դուին քաղաքումը (2), իսկ Վա-

---

(1) Թուլիս կղզին կոչուումէ այժմ Խօչանդիա՝ Հիւսիսային Ովկիանոսի մէջ արեւմտից կողմումը։

(2) Արարատեան աշխարհումը։

ղարշակ Երիզայ [1] եւ նոյն տարի վախճանուեցաւ: Պարսից թագաւորը Շապուհ, որ միշտ մտածումէր մին հնարքով խլել Հայոց աշխարհը Յունաց ձեռից, ինչպէս լսաւ Վաղարշակի մահը, միտք արեց միայլ մարդ կարգել նորա տեղ թագաւոր իւր իշխանութեան ներքոյ, որ այդ ձեւով կարողանայ տիրապետել Հայաստանի գոնեա մին մասը. բայց եւ երկիւղ կրելով կայսրից, բարեկամութիւն հաստատեց յառաջագոյն Թէոդոսի որդու Արկադէոսի հետ, որ կառավարումէր այդ միջոց Արեւելքի կողմերը եւ նորա միջնորդութեամբ հիմնեց հաշտութիւն Թէոդոսի հետ: Հաշտութեան դաշինքը հաստատելու ժամանակը խօսք բացեց Շապուհ Հայոց աշխարհի վերայ եւ խնդրեց կայսրից, որ այդ աշխարհի մին մասը ինքը ստանայ. կայսրը համաձայնեց. վասնորոյ եւ բաժանեցին բոլոր Հայաստանը երկու մասը, Արեւմտակողմը՝ Փոքր Հայաստանից եւ Միջագետքից սկսած մինչեւ Տարօնի [2] սահմանները մնաց Յունաց իշխանութեան եւ հարկատուութեան ներքոյ. իսկ Արեւելակողմը, որ առաւել ընդարձակ էր՝ Արարատեան աշխարհից սկսած, եղաւ Պարսից հպատակ: Հայաստանի բաժանումն շատ տրտմեցրեց Արշակին, որ տեսանումէր այդ պառակտման մէջ Հայոց ազգի հակառակութեան եւ անմիաբանութեան պտուղները. թողեց Արարատեան աշխարհը եւ բոլոր Պարսից մանսը եւ գնաց բնակուեցաւ Երիզայ քաղաքումը (Բարձր Հայաստան), լաւ համարելով փոքրով բաւականանալ քրիստոնեայ թագաւորի բարեկամութեան մէջ, քան թէ շատ բան ունենալ հեթանոս թագաւորի լուծի ներքոյ: Շատ նախարարներ գնացին նորա հետ Հայաստանի Յունաց մասը. Շապուհ դառնացաւ այդ

---

(1) Ռամկօրէն Երզնկայ, Երզնկա կամ Արզնկայ, քաղաք էր Եկեղեաց գաւառումը Բարձր Հայոց, Գայլ գետի վերայ հիւսիսի կողմից, որ տեղ Տրդատ թագաւորը չարչարեց սուրբ Գրիգոր Լուսաւորչին:

(2) Տուրուբերան աշխարհումը:

քանի վերայ, եւ այն գաղթականներին յետ բերելու նպատակով՝ կարգեց թագաւոր իւր մասնի մէջ մին
Խոսրով Գ. Արշակունի Խոսրով անունով, որ դորանով հաւանե-
388—392. ցրեց Հայոց նախարարներին վերադառնալ իւրեանց աշխարհը, այսինքն Հայաստանի պարսկական մասը: Եւ երբ Արշակ մեռաւ, Խոսրով խնդրեց Արկադէոս կայսրից, որ իւրեան յանձնէ Հայաստանի յունական բաժինը, խոստանալով նորան ճշդութեամբ հատուցանել այն աշխարհի հարկը, որպէս եւ մատուցանում էր Պարսից թագաւորին իւր մասնի համար: Արկադէոս կատարեց նորա խնդիրը եւ այնուհետեւ Խոսրով տիրապետեց բոլոր Հայաստանը՝ տալով հարկ Յունաց եւ Պարսից:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Փայլումէին այդ ժամանակ մեր Հայաստան աշխարհումը երկու լուսապայծառ ջահեր եկեղեցու եւ լեզուի մէջ՝ սուրբն Մեսրոպ եւ մեծն Սահակ կաթուղիկոս: Մեսրոպ Տարօնի գաւառիցն էր (Հացեկաց կամ Հացիկ գեղից), մին բարեպաշտ մարդու որդի, որ կոչւումէր Վարդան. իսկ մեծն Սահակ մեծն Ներսեսի որդին էր, որ Խոսրով թագաւորի եւ բոլոր ազգի հաւանութեամբ ձեռնադրուեցաւ կաթուղիկոս: Շապուհ Պարսից թագաւորը լսելով ուրախութեամբ Հայոց նախարարների այլ եւ այլ չարախօսութեանը, իբր թէ Խոսրով առաւել Յունաց կողմն է հակամիտուած՝ քան թէ իւր, եւ թէ առանց իւր (Շապուհի) գիտութեան կամ հրամանի կարգել է քահանայապետ Սահակին, կոչեց Խոսրովին իւր մօտ, բայց նա չըգնաց եւ խնդրեց Արկադէոս կայսրից օգնութիւն Շապուհին ընդդէմ. իսկ երբ Արկադ հրաժարուեց նորան օգնութիւն տալուց եւ Շապուհ իւր որդու Արտաշրի հետ զօրք ուղարկեց Խոսրովի վերայ, այն ժամանակ Խոսրով անճարացած գնաց Արտաշրի մօտ, յուսալով ողոքել նորան խոնարհութեամբ եւ խըն-

դրանքով. իսկ Արտաշիր կալեց նորան խկոյն շղթա-
ներով եւ ուղարկեց անյուշ բերդը եւ նորա տեղ
կարգեց Հայաստանումը թագաւոր նորա եղբօրը
Վռամշապուհին: Բաղդաւորապէս Արտաշիրը իւր Վռամշա-
հօր մահից յետ թագաւորեց կարճ միջոց, մին տա- պուհ:
րու չափ, եւ մեռաւ, եւ Պարսկաստանի թագաւո- 392—414.
րական աթոռը յաջորդեց Կրման Շահ [1], որ շատ
սիրում էր Հայոց, հաստատեց բարեկամութիւն Վը-
ռամշապուհի հետ եւ արձակեց նորա եղբօրը Խոսրո-
վին անյուշ բերդից:

Մեսրոպ վարդապետը մեծն Ներսեսի աշակերտն
էր եւ Հայոց թագաւորների ատենադպիրը, շատ
ճարտարամիտ եւ հմուտ Ասորոց, Յունաց եւ Պարսից
լեզուներին: Սա տեսանելով աշխարհի ունայնութիւ-
նը՝ առանձնացաւ անապատումը եւ ճգնումէր խստու-
թեամբ. բայց լսելով մեծն Սահակի գործերը, ցան-
կացաւ նորա տեսութեանը եւ մնաց նորա հետ ան-
բաժան: Յետոյ սկսաւ շրջել զանազան քաղաքներ եւ
ամենայն տեղ քարոզել եւ ուսուցանել. աստուածա-
շունչ գիրքը կարդումէր ժողովրդի համար եւ մեկ-
նումէր հայերէն, որովհետեւ աստուածաշունչ մա-
տեանը թարգմանած չէր դեռ եւս Հայոց լեզուով.
մեր Հայոց գրքերը գրուումէին, նա եւս եկեղեցա-
կան պաշտօնակատարութիւնը եւ ընթերցանութիւնը
լինումէին այդ ժամանակ Յունաց եւ Ասորոց գրով,
եւ միայն թագաւորական կամ քաղաքական թղթերի
համար գործ էին ածուում պարսկական տառերը:
Այդ պակասութիւնը մեծ դժուարութիւն էր պատ-
ճառում մեր ազգին, մանաւանդ որ Ասորոց եւ Պար-
սից այբուբենը չէր կարողանում լիովին բացատրել
հայկական լեզուի հնչմունքը: Սուրբն Մեսրոպ շատ
ցաւումէր եւ հոգ էր տանում այդ պակասութեան

---

(1) Կրման շահը այսպէս կոչուեցաւ այն պատճառի, որ իւր թագա-
ւորութիւնից առաջ Կրմանի երկրի կառավարիչն էր, որ Պարսից աշ-
խարհի գաւառներից մինն էր:

մասին. վերջապէս իւր փափագը յայտնեց մեծն Սահակին եւ նորա երկոքեան հետեւումէին գտանել Հայոց նշանագիրերը, բայց շատ դժուարանում էին:

Այդ միջոց խռովութիւն էր ծագել Յունաց եւ Պարսից մէջ Միջագետքումը եւ Կրմանշահը ձեռնահաս չլինելով գնալ անձամբ այն տեղ, գրեց մեր Վռամշապուհ թագաւորին, որ նա գնայ եւ խաղաղացնէ այն խռովութիւնը երկու կողմից: Վռամշապուհ կատարեց նորա խնդիրը, գնաց Միջագետք, խաղաղացրեց այն խռովութիւնը եւ այդ միջոցումը ծանօթացաւ նորա հետ մին Ասորի քահանայ Հաբէլ անունով, որ խօսակցութեան մէջ ասաց Վռամշապուհ թագաւորին, թէ Միջագետքի Ասորի եպիսկոպոսը Դանիէլ՝ հնարել էր Հայոց տառեր եւ խնդրումէ թագաւորից, որ հրամայէ տանել այն տառերը Հայաստան. բայց թագաւորը թողեց այդ բանը առանց մտադրութեան եւ դարձաւ Հայաստան: Սահակ եւ Մեսրոպ երբոր իմացան թագաւորից Դանիէլեան նշանագիրերի գոյութիւնը, ուղարկեցին առանձին բանագէտ մարդ Վահրիճ անունով Հաբէլ քահանայի եւ Դանիէլ եպիսկոպոսի մօտ եւ նորա ձեռով ստացան այն Դանիէլեան նշանագիրերը, որը որ գտան պակասաւոր, որովհետեւ բոլոր հայկական հնչմունքը չէին բացատրում: Վասնորոյ Մեսրոպ ինքը գնաց Դանիէլի մօտ, որ նորա խորհրդակցութեամբ կարողանայ կատարելագործել հայկական տառերը, բայց օգուտ չեղաւ: Այն տեղից գնաց Եդեսիա մին Պղատոս անունով հեթանոս հռետորի մօտ, որ շատ հետեւեց կատարել Մեսրոպի խնդիրը, բայց չկարողացաւ. վասնորոյ եւ խորհուրդ տուեց նորան գնալ իւր Եպիփանոս վարժապետի մօտ, հաւատացնելով նորան, թէ նա կարող է գլուխ տանել այդ բանը: Գնաց Մեսրոպ եւ այն Եպիփանոսին որոնելու, բայց շուտով իմացաւ, թէ նա վախճանած է արդէն, եւ թէ կայ նորա աշակերտը Հռուփանոս՝ Յունաց լեզուին շատ հմուտ՝ Սամոսատ քաղաքումը. վասնորոյ

գնաց եւ Սամոսատ, գտաւ Հռուփանոսին, բայց եւ նա ոչինչ չկարողացաւ անել։ Երբ վերջացան ամենայն հնար եւ միջոց, դիմեց Աստուծոյ եւ անդադար աղօթքով խնդրումէր, որ ինքը Ամենակարողը կատարէ նորա փափագը։ Մին օր աղօթքի ժամանակ յափշտակեցաւ մտքով եւ տեսաւ իւր առաջումը մին վէմ, որի վերայ մին ձեռքի թաթ գրումէր կարգով նշանագիրեր, որոց ձեւերը տպաւորուումէին նորա սրտի մէջ։ Գնաց յետոյ կրկին անգամ Հռուփանոսի մօտ եւ պատմեց նորան իւր տեսիլը, եւ նկարագրեց նորա առաջումը այն տառերի ձեւերը, որպէս տեսել էր. եւ Հռուփանոս Սամոսատցին իւր արուեստով օգնեց Մեսրոպին առաւել վայելուչ եւ գեղեցկագիր յօրինել այն գիրերը. Սորանից յետ ամենայն գիրք կամ մատեան, որ գրած էին Յունաց կամ Ասորոց տառերով, Մեսրոպ եւ Սահակ փոխեցին հայերէն, հիմնեցին դպրոցներ Հայաստանի այլ եւ այլ գաւառներում Վռամշապուհի ձեռնտուութեամբ։ Այդ համբաւը տարածուեցաւ ամենայն տեղ. Վրաց իշխանը Բակուրը եւ եպիսկոպոսը Մովսէս խնդրեցին Մեսրոպից, որ նոցա համար եւս հնարէ գիրեր. Մեսրոպ գնաց Վրաստան եւ ստեղծեց Վրաց համար նշանագիրեր, որպէս, փոքր ժամանակից յետ, եւ Աղուանից համար։ Երբ Մեսրոպ Վրաստան էր, սուրբ Սահակը
սկսաւ թարգմանել հին կտակարանը Հայոց լեզու Ա- 411.
սորի լեզուից, որովհետեւ այդ ժամանակ չկար մեր ազգի մէջ ընտիր աստուածաշունչ գիրք Յունաց լեզուով. վասն զի ուրացող Մերուժանը այրել էր բոլոր յունական մատեանները Հայոց աշխարհումը, եւ յետոյ, երբ Հայաստանը բաժանուեցաւ երկու մասը՝ յունական եւ պարսկական, Պարսիկները արգելեցին
Հայոց ուսանել Յունաց լեզուն եւ գիրը։ Փոքր ժամա- 433.
նակից յետ Սահակ եւ Մեսրոպ ուղարկեցին իւրեանց մին քանի աշակերտներին Կոստանդնուպօլիս՝ աստուածաշունչ գրքի ընտիր օրինակը գտանելու համար, եւ նոքա Մաքսիմիանոս Պատրիարգի միջնոր-

դութեամբ՝ որոնեցին եւ գտան մին ստոյգ եւ անվրէպ օրինակ Հին եւ Նոր կտակարանների եօթանասնից թարգմանած եւ յունարէն գրած եւ բերեցին Հայաստան Սահակի եւ Մեսրոպի մօտ, որ իւրեանց աշակերտների գործակցութեամբ թարգմանեցին բոլորը Հայերէն այնպիսի զարմանալի ճշդութեամբ եւ հաւատարմութեամբ, մինչեւ Հայերէնագէտ եւրոպացիք կոչումեն նոցա թարգմանութիւնը դշխոյ ամենայն թարգմանութեանց եւ ասումեն, թէ նոյն իսկ յունական թարգմանութիւնը արժան էր ուղղագրել համեմատելով հայկականի հետ (1)*. Թող ոճի վսեմութիւնը եւ ճշգրիտ ազգային մաքրախօսութիւնը :*

ԳԼՈՒԽ ԺԷ.

413. *Վռամշապուհ մեռաւ եւ թողեց մին որդի Արտաշէս, որ դեռեւս մանուկ էր. վասնորոյ Սահակ Կաթուղիկոսը նախարարների խորհրդակցութեամբ գընաց Պարսից Յազկերտ թագաւորի մօտ եւ խնդրեց, որ միւսանգամ թագաւոր կարգէ Հայաստանումը Խ ո ս ր ո վ ի ն՝ Վռամշապուհի եղբօրը. Յազկերտ հա-*
Խոսրով *մաձայնեց եւ Խոսրով եղաւ կրկին անգամ թագաւոր,*
կրկին ան- *բայց միայն մին տարի թագաւորեց եւ մեռաւ : Նորա*
գամ. *մահից յետ, որովհետեւ Յազկերտ ունէր միշտ մըտա-*
414—415. *քումը Հայոց նախարարներին քրիստոնէական հաւատից շրջել եւ հեռացնել Յունաց ազգից, վասնորոյ չկամեցաւ իւր բաժնի մէջ թագաւոր նշանակել մին*
Շապուհ *Հայ ոք, այլ կարգեց իւր որդուն Շ ա պ ո ւ հ ի ն, որ*
պարսիկ. *նոյնպէս թագաւորեց կարճ միջոց՝ չորս տարի միայն։*
415—419. *Լսելով իւր հօր Յազկերտի հիւանդութիւնը՝ գնաց նորան տեսութիւն, եւ երբ Յազկերտ մեռաւ, ինքն*

(1) Լակրոզի, Շրեդեր եւ ուրիշները. տես Վիստոնեանց լատինական թարգմանութիւնը Մովսէս Խորենացու. յառաջաբանութիւն. Լոնտոն, 1736 :

եւս Շապուհ նոյն օրը սպանուեցաւ Յազկերտի ծառաներից. եւ Յազկերտի տեղ եղաւ Պարսկաստանումը թագաւոր Վռամ Երկրորդ:

Այս Վռամ Երկրորդ մեծ չարիք եւ տառապանք էր հասուցանում Հայոց ազգին իւր բաժնումը. եւ սուրբ Սահակը տեսանելով իւր ազգի նեղութիւնը Պարսից ձեռից, հեռացաւ, գնաց Յունաց բաժինը, որ կառավարուումէր այդ ժամանակ յոյն եւ հայ վերակացուներով: Բայց այն կողմի հայ նախարարները եւ իշխանները չընդունեցին նորան, որովհետեւ մտել էին արդէն Կեսարիայի եպիսկոպոսի առաջնորդութեան ներքոյ, եւ Յունաց վերակացուները արգելել էին այն տեղ Հայոց լեզուի ուսումնառութիւնը, կարծելով, թէ Մեսրոպեան նշանագիրները հնարուած էին այն մտքով, որ Հայերը չսովորեն յունարէն: Այդ պատճառով սուրբ Սահակը գրեց թուղթ Յունաց կայսերը Փոքր Թէոդոսին Մեսրոպի ձեռով եւ խնդրեց, որ հրամայէ ընդունել իւրեան Հայաստանի յունական բաժնումը: Կայսրը կատարեց նորա խնդիրը եւ գրեց հրաման Անատոլիոս զօրավարին եւ յոյն վերակացուներին, որ ընդունեն Սահակին իբրեւ Կաթուղիկոս հաւասարապատիւ Կեսարիայի Արքեպիսկոպոսին եւ թոյլ տան նորան հիմնել Հայոց դպրոցներ: Հրամայեց եւս նոյն Անատոլիոսին շինել Հայոց աշխարհումը մին առանձին քաղաք կայսերական զօրքի բնակութեան համար՝ Պարսից արշաւանքին ընդդէմ: Անատոլիոս շինեց Կարնոյ քաղաքը եւ կոչեց նորան Թէոդոսուպօլիս՝ կայսեր յիշատակի եւ պատուի համար (1):

Հայաստանը Շապուհի մահից յետ մնաց առանց Պարապ
թագաւորի երեք տարի: Վռամ Պարսից թագաւորը միջոց.
տեսաւ, թէ այնչափ չարիք գործելով Հայաստանին՝ 419—422.

---

(1) Կարին գաւառումը Բարձր Հայաստանի. այժմ կոչուումէ Արզրում կամ Էրզիրում տես Ստորագրութիւն Հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822:

ոչինչ օգուտ չքաղեց, այլ մանաւանդ վնասուեցաւ,
որովհետեւ աշխարհը ամայացաւ եւ արքունական
հարկը չէր ստացուում լիովին, կարգեց վերջապէս
Արտաշիր. Թագաւոր Վռամշապուհի որդուն Արտաշէսին, ո-
422—428. րի անունը փոխեց Արտաշիր, իւր Արտաշիր Սա-
սանեան նախնու յիշատակի համար։

Սահակ եւ Մեսրոպ միաբան խորհրդակցութեամբ
ուղարկեցին մին քանի աշակերտներ այլ եւ այլ լու-
սաւոր քաղաքներ, Կոստանդնուպօլիս, Աղէքսանդրիա,
Աթէնք, թէ ուսումնառութեան եւ թէ զանազան
գրքեր թարգմանելու համար։ Խորենացին գովասա-
նութեամբ յիշումէ, թէ Սահակ եւ Մեսրոպ ունէին
մինչեւ վաթսուն երեւելի աշակերտներ. բայց նոցա
բոլորի անունները յայտնի չեն մեզ։ Նոցա մէջ հռչա-
կաւորքն էին Յովսէփ՝ Վայոց Ձորից, որ եղաւ յե-
տոյ Կաթուղիկոս, Յովսէփ Պաղնացի, Յովհան Եկեղե-
ցացի, Ղեւոնդ երէց, Գիւտ Կաթուղիկոս, Եզնակ Կող-
բացի, Կորիւն Սքանչելի, Եղիշէ վարդապետ, Մով-
սէս Խորենացի, Մամբրէ Վերծանող՝ Մովսէս Խորե-
նացու կրտսեր եղբայրը, Դաւիթ՝ Խորենացու քեռ-
որդին, որ փիլիսոփայութեան մէջ քաջավարժ լինելու
պատճառով՝ կոչուեցաւ Անյաղթ փիլիսոփայ, Ղազար
Փարպեցի եւ այլք։ Սոքա ամենքեան մեր հարա-
զատ, երանելի եւ իմաստուն վարդապետներն են,
որ եղան մեր Հայաստանեայց Եկեղեցու փառքը եւ
վայելչութիւնը, մեր Արամեան ազգի պարծանքի պը-
սակը, մեր գրականութեան եւ լեզուի օրէնսդիրները
եւ հաստատացուցիչքը, այնպէս, որ սոցանով այդ
հինգերորդ դարը կոչուեցաւ Հայոց գրականու-
թեան ոսկեղէն դար. սոքա երեւեցան իբրեւ
լուսապայծառ աստղեր այնպիսի ժամանակում, երբ
կռապաշտութեան եւ կրակապաշտութեան խաւարը
պատել էր մեր աշխարհը Պարսից բռնակալութիւնից։

Արտաշիր Թագաւորը ինչպէս նստաւ Թագաւոր
Հայաստան սկսաւ մարմնաւոր ախտերի ծառայել եւ
այդ պատճառով եղաւ Հայոց Նախարարներին տաղտ-

կալի։ Սուրբ Սահակը թէպէտ եւ միշտ խրատումէր նորան, բայց նա ցոյց տալով իւրեան անմեղ, արդարանումէր նորա առաջեւ եւ յետոյ առաւել եւս վատթարանումէր։ Նախարարները տեսանելով՝ թէ ուղղութեան յոյս չկայ նորանից, ժողովեցան սուրբ Սահակի մօտ եւ առաջարկեցին նորան՝ նոցա հետ միաբան խնդրել Վռամից բառնալ Արտաշրից Հայոց թագաւորութիւնը եւ կարգել նորա տեղ Հայաստանումը պարսիկ կառավարիչ։ Սահակ Կաթուղիկոսը տեսանելով, թէ այդ ցանկութիւնը պէտք է լինի աղգի կործանման պատճառ, սկսաւ խրատել եւ խաղաղացնել նախարարներին. Համոզում էր նոցա, որ փոքր ինչ ժամանակ համբերեն եւ փոխանակ Պարսից թագաւորին դիմելու՝ Աստուծոյ ապաւինել եւ Յունաց կայսերը դիմել. սակայն նորա աղգասէր խրատները եւ հայրական համոզանքը մնացին առանց ներգործութեան. Նախարարները գնացին Վռամի մօտ եւ իւրեանց հետ տարեցին մին Սուրմակ անունով երէց, որ նորան կարգեն Կաթուղիկոս Սահակի տեղ։ Պարսիկ թագաւորի առաջումը ամենակերպ չարախօսեցին Արտաշրի եւ Սահակի վերայ, հաստատելով, թէ նոքա հակամիտուած են Յունաց կողմը։ Վռամ կոչեց Արտաշրին եւ Սահակին, որ թէպէտ կարողացան արդարացնել իւրեանց անձը, բայց որովհետեւ Վռամ շատ յօժար էր Հայոց աղգից թագաւորութիւնը բառնալ, վասնորոյ լսաւ առաւել նախարարներին եւ Սուրմակին, քան թէ Արտաշրին եւ Սահակին, մանաւանդ որ Հայոց նախարարները խընդրումէին անդադար ուղարկել իւրեանց աշխարհը մին պարսիկ վերակացու։ Այդ հանգամանքներով Վռամ զրկեց Արտաշրին թագաւորական պատուից եւ ուղարկեց նորան Խուժաստան։ Իսկ սուրբ Սահակից առեց պատրիարգական իշխանութիւնը, ձգեց նորան բանտ եւ նորա տեղ կարգեց Սուրմակ երէցին. Արտաշրի տեղ ուղարկեց Հայաստան մին պարսիկ մարզպան, որի անունն էր Վ ե հ մ ի հ ր շ ա պ ո ւ հ։ Ահա

այսպէս վերջացաւ Արշակունեաց տէրութիւնը Հա-
յաստանումը 428 թուականին, եւ այնուհետեւ Հայք
մնացին անհաւատների ծառայութեան լծի տակ եւ
առանց սեփական թագաւորի 428 տարի՝ Արտաշրի
տարագրութիւնից սկսած մինչեւ Աշոտ Բագրատու-
նու թագաւորելը 856 թուականումը:

Սուրբ Սահակը դեռեւս չէր վերադարձել Հայաս-
428. տան Պարսից երկրից, երբ Կոստանդնուպօլիս Նստաւ
Յունաց Պատրիարգ Նեստոր, Թէոդորոս Մոպսուես-
տացու աշակերտը, որ հնարեց նոր մոլորութեան ա-
ղանդ, թէ ամենօրհնեալ կոյսը Մարիամ՝ Աստուա-
ծածին չէ, այլ քրիստոսածին կամ մարդածին, եւ
թէ Աստուած երկու որդի ունէր, մինը բնական՝ յա-
ւիտենականութիւնից ծնած հօրից, միւսը որդե-
գրական՝ ժամանակով ծնած Մարիամից: Այդ մոլորու-
թիւնը ինչպէս լսան ժամանակակից հայրապետները,
զինուեցան Նեստորին ընդդէմ, մանաւանդ Կիզիկոնի
եպիսկոպոսը Պրոկղ եւ ամենից աւելի Աղէքսանդրիայի
Պատրիարքը սուրբն Կիւրեղ, որ իսկոյն գրեց այդ-
բանի համբաւը Կեղեստինոս պապին: Եւ որովհետեւ
Նեստոր իւր համախոհների հետ արդարացնում էին
իւրեանց մոլորական մտքերը եւ հակաճառում էին
հայրապետներին եւ այդ ձեւով ընդհանուր քրիստո-
նէական եկեղեցու մէջ յարուցել էին շփոթութիւն,
վասնորոյ Յունաց կայսրը Թէոդոս Փոքրը հրաւիրեց
թղթով Կեղեստինոս պապին եւ այլազգի նշանաւոր
հայրապետներին գալ Փոքր Ասիայի Եփեսոս քաղաքը
եւ գումարել տիեզերական ժողով, որ քննէ Նեստորի
մտքերը եւ կանոնական վճիռ հաստատէ: Նոյնպիսի
հրաւիրական թուղթ գրեց կայսրը եւ մեր Սահակ
Կաթուղիկոսին. բայց որովհետեւ նա չէր վերադար-
ձել դեռ եւս Պարսից աշխարհից, այդ պատճառով
չկարողացաւ գնալ այն տեղ: Հաւաքուեցան Եփեսոս
341. 200 եպիսկոպոս (սուրբ Աստուածածնի եկեղեցումը).
երեք անգամ կոչեցին Նեստորին այն ժողով, բայց
նա չեկաւ. վասնորոյ յառաջագոյն քննեցին նորա

խօսքերը եւ յետոյ դատապարտեցին նորան իբրեւ հերետիկոսապետ. դաւանեցին Քրիստոսին մի միայն Աստուծոյ բնական որդի, եւ սուրբ Կուսին՝ Աստուածածին: Ժողովը աւարտուելուց յետ, մին քանի երեւելի եպիսկոպոսներ, Կիւրեղ Աղէքսանդրացի, Մաքսիմիանոս Կոստանդնուպօլսի, Պրոկղ Կիզիկոնի, եւ Ակակ Մելտինի գրեցին թուղթ Հայոց աշխարհ եւ յայտնեցին Նեստորի մոլորութիւնը եւ Եփեսոսի ժողովի վճիռը: Սահակ եւ Մեսրոպ Հայոց եպիսկոպոսների եւ քահանաների հետ միասին կարդացին այն նամակները, գումարեցին առանձին ազգային ժողով Աշտիշատ քաղաքումը, կրկին նզովեցին Նեստորին եւ նորա համախոհներին եւ ընդունեցին Եփեսոսի սուրբ ժողովի դաւանութիւնը:

Մին քանի տարուց յետ կատարեցին իւրեանց
սրբակրօն եւ ազգաշահ կեանքը սուրբն Սահակ եւ 440.
սուրբն Մեսրոպ: Իսկ Վռամ Պարսից թագաւորը մե- 441.
ռել էր արդէն 439 թուականին եւ նորա աթոռը յաջորդել էր նորա որդին Յազկերտ երկրորդ, որ եղաւ քրիստոնէից արեանարբու թշնամի եւ անտանելի տառապանք եւ նեղութիւն պատճառեց մեր Հայոց ազգին:

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՐՈՐԴ.

ՄԱՐԶՊԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ, ՎԵՀԱՄԻՀՐՇԱՊՈՒՀԻՑ ՍԿՍԱԾ ՄԻՆՉԵՒ ԱՇՈՏԻ ԹԱԳԱՒՈՐԵԼԸ:

Մեր պատմութեան չորրորդ պարբերութիւնը, որ սկսանում է Արշակունեաց տէրութեան անկմամբ, պատկերացնում է մեզ մեր ազգի ամենաթշուառ օրերը: Հայաստանի գեղեցկութիւնը եւ հանգստութիւնը, որ շատ ժամանակ առաջ սկսել էին նուաղել, այժմ իսպառ չքացան. Արտաշիր թագաւորը զրկուեցաւ իւր արքայական աթոռից եւ Հայաստանը մնաց առանց թագաւորի 450 տարու չափ՝ այլ եւ այլ օտարազգի եւ երբեմն հայազգի մարզպանների եւ ոստիկանների բռնակալութեան ներքոյ: Պարբերութիւնը իւր սկզբնաւորութեան օրերում ցոյց է տամ մեզ աղէտալի տեսարաններ. մեք տեսանումենք Պարսից բռնաւորութեան սարսափելի պատերազմը Քրիստոսի երկնաւոր ուսման հետ Հայոց աշխարհումը. տեսանումենք մեր ժողովուրդը ոտնակոխ եղած թշնամիներից. մեր հոգեւորականները օտարութիւն հալածուած. մեր նախարարները անարգուած, մեր հին եւ բազմամարդ քաղաքները աւերուած, մեր եկեղեցիները ամայացած եւ սուգ մտած: Հայոց ազգը իւր արեան գնով պաշտպանում է իւր քրիստոսահիմն, առաքելաքարոզ, լուսաւորչական եկեղեցին, զոհ է բերում ամենայն ինչ երկրաւոր, տուն, քաղաք, կալուած, իշխանութիւն, նաեւս իւր սեփական կեանքը, եւ ազատում է միայն իւր հոգու գանձը՝ քրիստոսական կրօնը: Վեր է կենում քաջն Վարդան, սուրբ Սահակի թոռնը, Գրիգոր Լուսաւորչի ցեղից, զօրացնում է լքելոց ձեռքը, խրախոյս է տամ ամենեցուն, որ աներկիւղ պատերազմեն մահու հետ,

կոտորումէ թշնամիներին, առնումէ եկեղեցու վրէժը նորա հալածիչներից եւ ինքը իւր արի ընկերներով ստանումէ նահատակութեան պսակը պատերազմում։ Նոցա վարդագոյն արիւնով ներկուած, արիանումէ եւ զօրանումէ Հայաստանը եւ կարողանումէ տանել այն զարհուրելի աղէտները, որ հասան մեր ազգի վերայ օտար մարզպանների եւ ոստիկանների իշխանութեան ժամանակը։

ԳԼՈՒԽ Ա.

Յազկերտ երկրորդ Պարսից թագաւորը, շատ գոռոզամիտ եւ չարահոգի մարդ, իւր թագաւորութեան սկզբումը սկսաւ գրգռել եւ խռովել մեր Հայաստան աշխարհը, ուր կարգուած էր նորանից՝ առաջին մարզպան Վեհմիհրշապուհ։ Գոռոզամտութեամբ փքացած՝ միտք արեց սա տիրապետել բոլոր ասիական կողմերը եւ բնակիչներին դարձուցանել կրակապաշտութիւն։ Այդ նորա սրտի ցանկութիւնը առաւել եւս բորբոքումէր Պարսից հազարապետը Միհրներսէհ, որ միշտ եւ անդադար յորդորումէր Յազկերտին հետեւել տարածել բոլոր աշխարհումը Պարսից կրօնը եւ խափանել քրիստոնէութիւնը։ Այսպիսի հանգամանքներով Յազկերտ հաստատ դրեց մտքումը կատարել իւր խորհուրդը, այսինքն՝ ստիպել ամենայն քրիստոնեայ մարդու դառնալ կրակապաշտութիւն։ Բայց որովհետեւ կասկածանք ունէր Յունաց կայսրից, թէ մի գուցէ զինուորուի ընդդէմ իւր յառաջադրութեանը, մտածեց յառաջագոյն կայսերը նուաճել պատերազմով. վասնորոյ գնաց զօրքով Մծբնի կողմերը եւ կայսրը՝ Թէոդոս Փոքրը՝ վախեցաւ եւ գրեց Անատոլիս զօրավարին, որ գնայ երեւելի ընծաներով Յազկերտի առաջը եւ խաղաղութեամբ վերջացնէ այն խռովութիւնը։ Անատոլիս կատարեց կայսեր հրամանը եւ Յազկերտ դարձաւ

Վեհմիհրշապուհ, 428—442.

*

իւր քաղաքը Տիսբոն (1), եւս առաւել մեծամտուած. եւ հրամայեց, որ իւր տէրութեան մէջ բնակուած քրիստոնեաներին ստիպեն երկրպագութիւն տալ կրակի եւ արեգակին. եւ որովհետեւ քրիստոնեաները չէին թողնում իւրեանց հաւատը, վասնորոյ նոցանից ոմանց բանտ էին նստեցնում, եւ ոմանց զանազան տանջանքներով սպանում էին: Յազկերտ տեսանելով, թէ չէ կարողանում իւր տէրութեան մէջ հարկադրել քրիստոնեաներին թողուլ իւրեանց կրօնը, մտածումէր հալածել ամենայն քրիստոնեայ մարդոց միայն իւր աշխարհումը, այլ եւ Հայոց, Աղուանից, Վրաց եւ Ասորոց երկրներում, որպէս թելադրումէր նորան Միհրներսեհ: Բայց այն դառնութիւնը, այն զօրեղ հալածանքը, որ հասան մեր աշխարհի վերայ Յազկերտի ձեռքից, այնչափ չէին սաստկանալու, եթէ Հայոց իւրեանց մէջից չգտանուէին ոմանք այդ չարութեանը յօրդորող եւ ձեռընտու. մանաւանդ որ ազգի տարաբաղդութեամբ փոխանակ մինի՛ երկու դաւաճանող գտանուեցան, Վարազվաղան եւ Վասակ, որ մեր աշխարհի աւերման, իւրեանց անձանց եւ այլոց կորստեան առաջին պատճառը եղան:

Վասակ՝ Սիւնեաց իշխանը տուել էր իւր դստերը կնութեան նոյնպէս Սիւնեաց երեւելի իշխանին Վարազվաղանին, որ իւր կնոջը ատումէր. այդ պատճառով ծագել էր մեծ թշնամութիւն Վարազվաղանի եւ Վասակի մէջ: Վարազվաղան վախենալով իւր աներոջից դուրս եկաւ Սիւնեաց աշխարհից եւ գնաց Պարսկաստան. դիմեց Միհրներսեհին եւ գրգռեց նորան Վասակի եւ բոլոր Հայոց ազգին ընդդէմ:

(1) Տիսբոն՝ Բաբիլոնի երկրներից մինն էր՝ Ասորեստանեայց եւ Պարսից սահմաններում, Նինուէի եւ Բաբիլոնի մէջ, Տիգրիս գետի արեւելակողմումը. այդ երկիրը ունէր իւր համանուն քաղաքը Տիսբոն:

Միհրներսեհ մեծ ուրախութեամբ ունկնդիր եղաւ
նորա խօսքերին, խոստացաւ կատարել նորա ամե-
նայն ցանկութիւնը, նաեւ կարգել նորան Սիւնեաց
աշխարհի տէր, եթէ միայն ուրանայ նա քրիստոնէու-
թիւնը եւ դառնայ Պարսից կրօն: Վարազվաղան, որ
բոլորովին կուրացած էր ատելութեամբ դէպ ի իւր
Վասակ աները, ընդունեց արեւապաշտութեան կրօնը
եւ մտադիր եղաւ Հայոց աշխարհը եւս դարձուցանել
նոյն հեթանոսութիւն, յուսալով հասանել այդ ձեւով
մեծ փառքի Պարսից թագաւորի կողմից, եւ մտածե-
լով, որ եթէ Հայք չդառնան կրակապաշտութիւն,
այն ժամանակ գոնեա կկորչեն ամենքեան եւ նոցա
հետ իւր ատելին Վասակ. բայց շատ սխալուեցաւ,
որովհետեւ Վասակ իւր խորամանկութեամբ եւ նման-
օրինակ հաւատարացութեամբ հաճոյացաւ Պարսից
թագաւորին եւ հասաւ մեծ պատուի: Միհրներսեհ,
որ Յազկերտի առաջին խորհրդատուն եղաւ քրիստո-
նեաներին հալածելու մասին, Վարազվաղանի ուրա-
ցութեամբ եւ չարադրգիռ խօսքերով սկսաւ առաւել
եւս յորդորել Յազկերտին իւր դիտաւորութիւնը
յառաջ տանել: Նորա եւ մոգերի խորհրդով Յազկերտ
վճռեց վերջապէս կատարել իւր ցանկութիւնը. սկսաւ
նենգամիտ խաբէութեամբ եւ կեղծուպատիր սիրով
վարուել Հայոց հետ. առանձին հրովարտակով կար-
գեց Հայաստանումը մարզպան Վասակին՝ Վեհմիհր- Վասակ,
շապուհի տեղ եւ Հայոց սպարապետ Վարդան Մամի- 442—452.
կոնէին, հրամայելով Հայոց դորա հետ միասին, որ
ուղարկեն զօրք նորան օգնութիւն Հոնաց ընդդէմ,
որ միայն էին մնացել անյաղթ, որպէս ինքը ասու-
մէր, որովհետեւ արդէն նուաճել եմ Յունաց: Հայք
չհամարձակուեցան ընդդիմանալ նորա հրամանին
եւ ուղարկեցին մեծ զօրքի գունդ Վրկանի կողմը:
Այդ պատերազմը Յազկերտ չկարողացաւ յաղթու-
թեամբ վերջացնել եւ տեսանելով, թէ երկարումէ
գործը, շինեց Ալանաց դրան մօտ մին մեծ եւ ամուր
բերդ եւ նորա չորս կողմումը բնակութեան աւան

եւ զօրքի բանակ Հոնաց ընդդէմ (1)։ *Յետոյ այդ բերդումը եւ բանակումը եղած քրիստոնեայ զօրքին սկսաւ ստիպել, որ թողնեն քրիստոնէական հաւատը եւ երբ նոքա ամենեւին հրաժարուեցան թագաւորի այդ կամքը կատարելուց, զանազան տանջանքներով նոցա չարչարեց։ Տեսանելով, թէ չյաջողեց իւր գործը, խորհուրդ արեց մեծամեծ նեղութիւններով հարկադրել բոլոր Հայաստան աշխարհը թողուլ քրիստոնէութիւնը։ Այդ մտքով գրեց հրովարտակ ամենայն Հայոց եւ հրամայեց նոցա դառնալ Պարսից կրօն։ Նորա թուղթը երբ հասաւ Յովսէփ Կաթուղիկոսի ձեռը, ժողովեց նա Հայոց Եպիսկոպոսներին եւ նախարարներին Արտաշատ քաղաք։ Յառաջադոյն կարդացին թագաւորի հրովարտակը եւ յետոյ միաբան խորհրդակցութեամբ գրեցին նորան համարձակխօս պատասխան, իմաստուն եւ երկարապատում վարդապետութեամբ, որ վերջանումէր այս խօսքերով՝ «Ահա այս է մեր հաւատը, եւ այս հաւատից մեզ ոչ ով չէ կարող բաժանել՝ ո՛չ հրեշտակ եւ ո՛չ մարդ. ո՛չ սուր եւ ո՛չ ջուր. մեր ամենայն ստացուածը քո ձեռքումն է եւ մեր մարմինը քո առաջումը. արա՛ ինչ եւ կամենումես. քեզանից տանջանք՝ մեզանից յանձնառութիւն. քո սուրը եւ մեր պարանոցը»։*

Երբ Յազկերտ կարդաց այդ պատասխանը, շատ բարկացաւ եւ իսկոյն հրամայեց գրել նոր հրովարտակ եւ կոչել իւր մօտ Հայոց երեւելի նախարարներին. նոքա եկան. թագաւորը սկսաւ անձամբ յորդորել նոցա երկրպագութիւն տալ արեգական, եւ երբ նոքա յանձն չառեցին, հրամայեց ձգել նոցա բանտ։ Նախարարները մեծ տարակուսանքի մէջ էին, որովհետեւ յայտնի տեսանումէին, թէ իւրեանց սիրելի բնտանիքը եւ բոլոր Հայոց աշխարհը վտանգի եւ կորստեան էին ենթարկուած առանց իւրեանց.

---

(1) Այս այն բերդն է, որ Եղիշէի գրքի մէջ կոչուումէ Գահավ Հոնաց։

վանորայ չգիտէին, թէ ինչ առնեն. մանաւանդ որ չկար եւս փախչելու հնարք։ Այդ նոցա վարանման ժամանակը, Թագաւորի խորհրդակիցներից մինը, որ ծածուկ քրիստոնեայ էր, եկաւ թաքուն նոցա մօտ գիշերով եւ տուեց նոցա խորհուրդ, որ կատարեն արտաքուստ Թագաւորի կամքը, երկրպագանելով արեգական եւ կրակի, իսկ իւրեանց միտքը ուղղելով դէպ ի Քրիստոս, եւ այդ ձեւով փրկեն իւրեանց անձը եւ բոլոր իւրեանց աշխարհը։ Այդ խորհուրդը թէպէտ մեծ դժուարութեամբ եւ ակամայ, բայց իւրեանց աշխարհը փրկելու համար միայն՝ յանձն առեցին նախարարները. տուեցին արտաքուստ երկրպագութիւն կրակին եւ արեգական, բայց իւրեանց միտքը եւ սիրտը ամբառնալով դէպ ի Քրիստոս։ Թագաւորը շատ ուրախացաւ այդ բանին, տուեց նոցա առատ պարգեւներ, կարգեց կրկին Վասակին մարզպան Հայաստանումը եւ Վարդանին սպարապետ եւ արձակեց նոցա իւրեանց աշխարհը պարսկական զօրքով եւ բազմաթիւ մոգերով հանդերձ, հրամայելով նոցա գնալ շուտով Հայաստան եւ բոլորեցունց դարձուցանել Պարսից կրօն, եւ քրիստոնէական եկեղեցիները փոխել մեհեան։ Եկան Հայաստան Հայոց նախարարները եւ Պարսից մոգերը. վերջինները բնակուեցան Ծաղկոտն գաւառումը Անգղ գիւղաքաղաքի մօտ ([1])։ Սուրբ Ղեւոնդ երէցը ինչպէս իմացաւ նոցա գալուստը եւ դիտաւորութիւնը, գնաց Անգղ քաղաք եւ քաջալերեց բնակիչներին, որ հաստատուն մնան իւրեանց հաւատումը եւ պատերազմեն Քրիստոսի համար։ Փոքր ժամանակից յետ Պարսից մոգպետը իւր ընկերների եւ մի քանի Պարսից զօրականների հետ գնաց եկեղեցու դուռը եւ սկսաւ քանդել եկեղեցին. այն ժամանակ սուրբ Ղեւոնդը այլ եկեղեցականների հետ միասին, սկսաւ կռուել նոցա հետ եւ արգելեց այն գործը։ Շփոթի բարձրա-

([1]) Արարատեան աշխարհումը։

ձայն աղաղակի վերայ հաւաքուեցան քաղաքի բնակիչները եւ քարկոծեցին Մոգպետին, եւ նորա հետ եղած զինուորներին, այնպէս, որ Պարսիկները փախան եւ հազիւ թէ կարողացան հասանել իւրեանց բանակը: Այդ բանի համբաւը տարածուեցաւ Հայաստանում եւ բոլորեքեան առհասարակ զինուորուեցան, նաեւս կանայք առեցին իւրեանց ձեռը սուր եւ վահան, եւ Յովսէփ կաթուղիկոսի, եւ այլ եպիսկոպոսների եւ քահանաների հետ գնացին Անգղ քաղաք, որ քաջութեամբ կռուեն Պարսից բռնութեան ընդդէմ: Մոգպետը տեսանելով, թէ դժուարին է մաքառել Հայոց հետ, խորհուրդ արեց ուրացող Վասակի հետ եւ գրեց Միհրներսեհին, որ նա յօժարեցնէ Թագաւորին թոյլ տալ առ ժամանակ ինչ իւր հրամանը: Վասակ իւր կողմից սկսաւ խաբեբայ խօսքերով եւ խորամանկութեամբ շատ մարդիկ Հայոց ազգից որսալ Պարսից կողմը, ասելով, թէ պէտք է թոյլ տալ փոքր միջոց մոգութեանը, մինչեւ որ գտանենք հնարք արտաքսել խպառ Հայաստանից պարսկական կրօնը: Շատ մարդիկ թուլասիրտ եւ պարզամիտ լռեցին այդ խոստմունքներով. այնուհետեւ լռեցին եւ օրհներգութիւնները եկեղեցիների մէջ. շատ ռամիկներ յայտնապէս թողեցին քրիստոնէութիւնը. մոգերը զանազան քաղաքներում տարածեցին արեգական եւ կրակի պաշտօնատարութիւնը, ունելով իւրեանց ծածուկ օգնական չարամիտ Վասակին, որ յետոյ բերել տուեց Հայաստան մին մեծ գունդ պարսկական զօրքի, որ մոգերը կարողանան համարձակ վարել իւրեանց իշխանութիւնը՝ Հայոց նախարարներից անկասկած:

Վեր կեցաւ քաջ Վարդանը Մամիկոնեան. քաջալերեց Հայոց նախարարներին եւ ազգին. բոլորեքեան Յովսէփ կաթուղիկոսի ներկայութեանը ուխտ դրեցին եւ երդմամբ հաստատեցին Խաչի եւ Աւետարանի առաջեւ՝ մեռանել քրիստոսական հաւատի համար: Սորանից յետ գրեցին թուղթ Յունաց կայսերը

Փոքր Թէոդոսին, ուր յիշելով իւրեանց հաւատակ-
ցութիւնը Յունաց եկեղեցու հետ եւ խոստանալով
Հայաստանի պարսկական բաժինը եւս փոխադրել
Յունաց իշխանութեան ներքոյ, խնդրեցին օգնու-
թիւն Պարսից ընդդէմ. բայց որովհետեւ նոյն տարի
Փոքր Թէոդոսը մեռաւ, նորա յաջորդը Մարկիանոս 450.
չնչին պատճառով հրաժարուեցաւ Հայոց օգնութիւն
տալուց, իբր թէ նորա տէրութիւնը նոր ծագած
Եւրոպական հերետիկոսութեամբ վրդովուած է. բայց
առաւել արգելք եղաւ այդ բանին Անատոլիոս զօրա-
վարը, որ կասկածումէր, թէ մի գուցէ Յունաց բաժ-
նումը եղած Հայք միաբանուելով միւս (պարսկական)
բաժնի Հայոց հետ, դուրս գան Յունաց հպատակու-
թիւնից: Հայք ամենեւին չտրտմեցան Մարկիանոսի
հրաժարմամբ. միայնակ, առանց օգնականի, փոքր,
բայց եւ քաջասիրտ զօրքով վճռեցին մաքառել զօ-
րաւոր Յազկերտին ընդդէմ, որ ուղարկեց Հայաստան
Միհրներսեհի սպարապետութեան ներքոյ իւր բոլոր
զօրքը՝ ամեհի փիղերով հանդերձ: Միհրներսեհ նշա-
նակեց զօրագլուխ Մուշկան Նիւսալաւուրտին եւ պա-
տուիրելով նորան անել ամենայն ինչ գործ պատե-
րազմի մէջ Վասակի խորհրդով, դարձաւ ինքը Պարս-
կաստան: Քաջ Վարդանը ժողովեց իւր զօրքը կար-
գադրեց եւ քաջալերեց նոցա. եւ այդ քրիստոսազէն
զինուորների թիւն էր վաթսուն հազար: Սկսաւ Վար-
դանանց մեծ պատերազմը. քաջ Վարդանը իւր արիա-
սիրտ նիզակակիցների հետ այնքան մեծամեծ քաջու-
թիւններ գործեց, մինչեւ սարսեցրեց Նիւսալաւուր-
տին, որ կարծումէր՝ թէ Վարդանը պէտք է կլանէ
Պարսից գունդը. այստեղ սպանուեցան շատ երեւելի
մարդիկ Պարսից կողմից. բայց յետոյ պարսիկները,
որ բոլոր ուշադրութիւնը դրել էին Վարդանին սպա-
նանելու վերայ, կարողացան պատել նորան չորս
կողմից, նիզակներով եւ սուսերներով վիրաւորեցին
նորան եւ երանելի Վարդանը աւանդեց իւր հոգին
Քրիստոսի ձեռը: Այդ Վարդանանց մեծ պատերազ-

451. մումը, որ եղաւ 451 թուականին, շատ երեւելի Հա-
յոց նախարարներ ընկան, որոց գլխաւորներն էին՝
Վարդան Մամիկոնեան, Վահան Արծրունի, Խորէն Խոր-
խոռունի, Տաճատ Գնթունի, Հմայեակ Դիմաքսեան,
Վահան Գնունի եւ այլք. բայց Պարսից եւ ուրացելոց
կողմից սպանուեցան շատ աւելի. նոցա մէջ ինն մարդ
Պարսից տէրութեան շատ պատուաւոր անձինքն էին:
Պատերազմից յետ ուրացող Վասակը զանազան մեծա-
մեծ չարիք գործեց Հայաստանումը Պարսից հետ միա-
սին՝ շատ եկեղեցիներ քանդեց, շատ քաղաքներ աւե-
րեց, շատ մարդիկ սպանեց՝ բայց ոչինչ չշահուե-
ցաւ, որովհետեւ Մուշկան Նիւսալաւուրտը զայրացած
պատերազմի անյաջողութեան մասին, դադարեց
Հայաստանը նեղելուց, յայտնեց Թագաւորին բոլոր
հանգամանքը եւ պատերազմի վնասը ձգեց Վասակի
վերայ: Թագաւորը բարկացաւ եւ շատ խնայեց, որ
Հայոց հետ ունեցաւ այդպիսի սաստիկ պատերազմ,
որից առաւել վնասուեցաւ քան թէ շահուեցաւ, ո-
րովհետեւ իւր տէրութեան նշանաւոր մարդիկ սպա-
նուեցան եւ անչափ աւերմունք եւ քանդմունք եղան
երկու աշխարհի մէջ. վասնորոյ ցանկանալով իմանալ
այն շփոթութիւնների առիթը, գրեց հրաման Մուշ-
կան Նիւսալաւուրտին, որ իւր տեղ կարգէ մարզպան
Ատրորմիզդ, Հայաստանումը Ա տ ր ո ր մ ի զ դ ին, եւ պատուիրէ նո-
452—464. րան քաղցրութեամբ վարուել Հայոց հետ եւ տալ ա-
զատութիւն աշխարհի բնակիչներին, որ համարձակ
պաշտեն իւրեանց քրիստոնէութիւնը. իսկ Վասակին
ուղարկէ Պարսկաստան եւ ինքը Նիւսալաւուրտ վերա-
դառնայ նոյնպէս իւր աշխարհը: Ատրորմիզդ մտաւ
Արարատեան աշխարհը եւ սկսաւ կեղծաւպատիր սի-
րով յայտնել ամենեցուն Թագաւորի մարդասիրու-
թիւնը. բայց եւ այնպէս Յովսէփ Կաթուղիկոսին,
Ղեւոնդ երէցին, Քաջաջ սարկաւագին եւ նոցա մին
քանի աշակերտներին կապանքով ուղարկեց Պարս-
կաստան Թագաւորի մօտ. յետոյ յայտնեց ամենե-
ցուն Թագաւորի հրամանը, որ լինեն աներկիւղ եւ

եպիսկոպոսները վարեն իւրեանց իշխանութիւնը եւ
պաշտօնը անկասկած։ Հայք, որ ցրուած էին հեռա-
ւոր տեղերում, լսելով այդ նոր կարգադրութիւնը
Պարսից թագաւորի կողմից, հաւաքուեցան իւրեանց
բնակարանը առաջին կարգով եւ աներկիւղ պաշտում
էին քրիստոնէութիւնը եկեղեցիների մէջ. յետոյ
եպիսկոպոսների ժողովով Դուին քաղաքումը ընտրե-
ցին կաթուղիկոս Յովսէփի տեղ Մանազկերտի եպիս-
կոպոսին Մելիտինէին եւ միաբան հաւանութեամբ
փոխադրեցին կաթուղիկոսութեան աթոռը Դուին
քաղաք։ Թէպէտ Յովսէփ կաթուղիկոսը կենդանի էր 452.
դեռեւս, բայց որովհետեւ Հայք կասկած ունէին, թէ
դուցէ Պարսիկները չթողնեն նորան կենդանի, վասն-
որոյ չկարողանալով տեսանել Հայոց աշխարհը ա-
ռանց կաթուղիկոսի, հաւանութեամբ նոյն իսկ Յով-
սէփ կաթուղիկոսի արարին այդ նոր ընտրողութիւ-
նը։ Սորանից յետ Հայոց նախարարները ստացան
Պարսից թագաւորից խաղաղական եւ ողոքական
թուղթ, որով հրաւիրումէր նոցա իւր մօտ. Նախա-
րարները թէպէտ շատ կասկածում էին, բայց վեր-
ջապէս վճռեցին գնալ՝ թուով մինչեւ 36 անձինք։
Հազիւ թէ հասան նոքա Պարսից աշխարհ, Միհրներ-
սէհ հազարապետը իսկոյն հրամայեց բոլորին կապել
շղթաներով եւ ձգել նոյն մահապարտների բանտը,
ուր նստած էին երանելի Ղեւոնդեանք։ Թագաւորը
ատեան բացեց, քննեց պատերազմի պատճառը եւ
ստուգապէս իմացաւ, որ այն ամենայն չփոթութիւն-
ների առիթը եղել է Վասակ. վասնորոյ զրկեց նորան
մարզպանական իշխանութիւնից եւ ամենայն պա-
տուից եւ հրամայեց նստացնել նորան մահապարտ-
ների բանտը, ուր նա չարաչար նեղութիւնից եւ
տանջանքից յետ՝ մեռաւ, ստանալով իւր հաւատու-
րացութեան եւ զանազան չարագործութիւնների
արժանաւոր վարձը։ Յովսէփ կաթուղիկոսը իւր երա-
նելի ընկերներով, որ սուրբ Ղեւոնդ երէցի անունով
կոչւում են Ղեւոնդեանք, նահատակուեցան եւ ստա-

ցան երկնաւոր պսակը. իսկ Հայոց նախարարները
լնն տարի բանտարկութեան մէջ մնալուց յետ, ա-
461. զատուեցան վերջապէս Պերոզ Պարսից թագաւորի
ժամանակը, երբ նա թագաւոր եղաւ իւր հօր Յազ-
կերտի մահից յետ:

Այդ ժամանակների նշանաւոր անցքերից մինն է
թէ ընդհանուր քրիստոնէական եւ թէ մասնաւորա-
պէս մեր Հայոց Եկեղեցու համար Քաղկեդոնի ժողո-
վը, որ եղաւ Մարկիանոս Յունաց կայսեր օրերում,
451. Եւտիքէսին ընդդէմ 451 թուականում: Եւտիքէս՝
Կոստանդնուպօլսու մին վանքի վանահայրն էր. նորա
մոլորութիւնը այն էր, որ խօսելով Նեստորի չարա-
չար բաժանման ընդդէմ, ընկաւ նորա մտքերի հա-
կադիր ծայրը. այսինքն՝ պաշտպանելով Քրիստոսի
անձին միութիւնը Նեստորին հակառակ, ջատագո-
վումէր նաեւս Քրիստոսի բնութեանց միութիւնը՝
շփոթութեամբ հանդերձ: ժողովը նզովեց Եւտիքէսին
եւ նորա համախոհներին, եւ սահմանեց՝ խոստովա-
նել Քրիստոսի մի անձին մէջ երկու բնութիւն: Հայք
ունենալով այդ ժամանակ մեծ պատերազմ Պարսից
հետ, չկարողացան ներկայ գտանուել այն ժողովու-
մը. իսկ յետոյ, երբ պարապեցին Քաղկեդոնական
հարցմունքի քննութեամբ, զանազան յարգելի պատ-
ճառներով չընդունեցին նորան (1): Այդ հանգաման-
քից ծագուեցան մեծամեծ խռովութիւններ Հայոց
եւ Յունաց մէջ. կրօնական խնդիրը դարձաւ քաղա-
քական խնդիր. այնուհետեւ մեր Հայոց յետագայ
յարաբերութիւնները Յունաց տէրութեան հետ լի-
նումէին Քաղկեդոնական հոսման ներքոյ: Եւտիքէսի
հերետիկոսութիւնը եւ Քաղկեդոնի ժողովը, իբրեւ
կրօնական խնդիրներ, վերաբերումեն Եկեղեցական
պատմութեան: Բայց այս ինչ նկատելու արժանի է

(1) Պատմել աշակերտներին, թէ ինչ պատճառով Հայք չընդունեցին Քաղկեդոնի ժողովը:

այս տեղ, որ Եւտիքէսը յոյն էր ազգով, Քաղկեդոնը Յունաց քաղաք, Քաղկեդոնի ժողովումը Հայք ներկայ չգտանուեցան ամենեւին, սակայն Եւտիքէսի մոլորութիւնը՝ նախ Յունաց բերանով, եւ յետոյ այլ քրիստոնեայ ազգերի ձեռով՝ (չգիտեմ՝ սխալմամբ թէ չարակամութեամբ) զօրով եւ բռնութեամբ դըրուեցաւ մեր անարատ եւ մաքուր Հայոց Եկեղեցու վերայ. մեր ազգը միանգամ եւ յաւիտեան կոչուեցաւ քրիստոնեայ ազգերից մոնոֆիզիտ (մի բնութիւն դաւանող՝ Եւտիքեսի մտքով) եւ այդպէս առանց ամենայն ճշմարտութեան ենթարկուեցաւ նոցա զանազան եւ անտեղի զրպարտութիւններին: Չըգիտեմ այդ լուսաւորուած աստուածաբանները, թէ չեն կամենում գիտել, թէ ուղիղ մտքով կարելի է ասել նոյնպէս մի բնութիւն Քրիստոսի մէջ:

ԳԼՈՒԽ Բ.

Պարսից թագաւորը Պերոզ գնաց պատերազմով Հեփթաղաց վերայ (1), եւ յաղթուեցաւ: Այդ դիպուածը փոքր ինչ խրախոյս տուեց Հայոց նախարարներին եւ ազատութեան յոյս անօրէնների բռնութիւնից: Նոքա ծածուկ խորհուրդ արեցին ազատել իւրեանց անձը Պարսից ձեռից. յայտնեցին այդ միտքը Վահան Մամիկոնէին (2) եւ նորա հետ միասին երդմամբ խոստացան Աւետարանի առաջեւ կատարել իւրեանց յառաջադրութիւնը. Հայաստանի մարզպանն էր այդ ժամանակ Ատրվշնասպ: Սա երբ իմացաւ Հայոց միաբանութիւնը Պարսից ընդդէմ, փախաւ գիշերով Հայաստանից Ատրպատականի կողմեր: Հայք ընտրեցին իւրեանց մարզպան Սահակ Բագրատունուն եւ սպարապետ՝ Վահան Մամիկոնէին: Ատրվշնասպ ժողովեց զօրք եւ եկաւ կրկին Հայաստան, բայց ոչինչ չշահուեցաւ. որովհետեւ Հայք,

Ատրվշնասպ, 464—481.

Սահակ Բագրատունի, 481—483.

---

(1) Լեռնական Հոնք:

(2) Վահան Մամիկոնե՝ Մեծն Վարդանի եղբօր Հմայեակի որդին էր:

թէպէտեւ շատ սակաւաթիւ էին, կոտորեցին բո-
լոր Պարսից զօրքը եւ սպանեցին իւրեանց Աորվշնասա-
պին։ Պերող զայրացաւ Հայոց վերայ, մանաւանդ
Վահանի, եւ ուղարկեց մեծ զօրք նորա վերայ. Հայք
կրկին անգամ զօրացան, յաղթեցին Պարսից եւ վա-
նեցին Հայաստանից։ Բայց Սահակ Բագրատունու մա-
հից յետ Պերող կարգեց Հայաստանումը մարզպան
Շապուհ պարսիկ, 483. Շ ա պ ո ւ Հ պ ա ր ս կ ի ն, որ երեք անգամ կռուեցաւ
քաջ Վահանի հետ, կամենալով նորան ձերբակալ
առնել. սակայն չկարողացաւ հասանել իւր նպատա-
կին, որովհետեւ քաջ Վահանը սակաւաւոր մարդի-
կով ՝իւրաքանչիւր անգամը դուրս էր գամ նորա
բազմաթիւ զօրքի առաջը եւ հրաշալի քաջութեամբ
փախուստ էր դարձուցանում նոցա. Նորա ուժեղու-
թիւնը եւ արիասրտութիւնը գերազանց էին այն
ժամանակի մարդկանց զօրութիւնից եւ միայն վէ-
պերի մէջ են յիշուում նորա նմանները։ Հայաստա-
նի գոնեա ժամանակաւոր հանգստութեան համար
Պերողի սպանութիւնից յետ Հեփթաղաց պատերազ-
մումը յաջորդեց նորա աթոռը նորա եղբայրը Վա-
ղարշ, խաղաղասէր եւ խոհեմ մարդ, որի առաջեւ
Շապուհ մարզպանը սկսաւ գովել եւ զարմանալի ցու-
ցանել Վահան Մամիկոնէի քաջութիւնը եւ իմաստու-
թիւնը. պատմեց նորան, թէ որպէս Վահան երեսուն
ընկերով ցիր եւ ցան արեց Պարսից հազարաւոր զօր-
քը, թէ նորա անհնազանդութեան պատճառը Պար-
սից' Պերող թագաւորի բռնակալութիւնն էր եւ
խստութիւնը, թէ Վահան' եթէ լինէր Պարսից ազ-
գին հաւատարիմ կուսակից, նոցա զօրութիւնը շատ
կմեծանար այլազգիների առաջեւ, եւ թէ այդպիսի
հաւատարմութիւն հեշտ կարելի է գտանել Վահանի
մէջ սիրով եւ քաղցրութեամբ։ Շապուհի խօսածը
ազդեցութիւն ունեցաւ Վաղարշի վերայ, մանաւանդ
որ նոյն բանը հաստատեց Հազարաւուխտ' Պարսից
գլխաւոր սպարապետը. վասնորոյ Վաղարշ ուղարկեց
483—484. Հայաստան մարզպան Ն ի խ ո ր ի ն, որ շատ քաղցրաբա-

րոյ եւ բարեխորհուրդ մարդ էր եւ պատուիրեց նո-
րան քաղցրութեամբ եւ սիրով վարուել Հայոց հետ,
մանաւանդ Վահան Մամիկոնեանի, եւ բոլոր Հայաս-
տանի կառավարութիւնը առնել նորա հաճութեամբ
եւ կամքով, որ հնար լինի այդ ձեւով նորա սիրտը
գրաւել եւ քաղցրացնել Պարսից վերայ: Նիխոր մարզ-
պանը ինչպէս եկաւ Հայաստան, տեսութիւն արեց
Վահանի հետ, յայտնեց նորան թագաւորի ողջոյնը
եւ սէրը, եւ խնդրեց, որ խաղաղութեամբ եւ հնա-
զանդութեամբ լինի Պարսից հետ: Վահան պատաս-
խանեց, թէ «Մեր տրտունջը Պերոզ թագաւորի վե-
րայ իրաւացի էր. այժմ երեք բան պէտք է խնդրեմ
թագաւորից եւ եթէ նա կկատարէ իմ առաջարկու-
թիւններս, այն ժամանակ կտեսանէք դուք եւ նա
մեր հաւատարիմ ծառայութիւնը: Առաջինն այն է,
որ մեզ եւ մեր քահանաներին թոյլ տաք մեր քրիս-
տոնէութեան օրէնքը համարձակ եւ աներկիւղ պաշ-
տել, ոչ մին Հայի չհետեւէք դարձուցանել ձեր կը-
րակապաշտական կրօնը եւ ոչ մին Հայի իւր քրիս-
տոնէական հաւատը ուրանալու պատճառով չտաք
պատիւ եւ գահ: Երկրորդ՝ իմանաք ընտրել լաւը վա-
տից. պատուել եւ փառաւորել վաստակաւորներին
եւ իմաստուններին, եւ ոչ թէ անվաստակ եւ անար-
ժան մարդկանց: Երրորդ՝ թագաւորը թող իւր աչ-
քերով տեսանէ եւ իւր ականջներով լսէ իւրաքան-
չիւր մարդու լաւութիւնը կամ վատութիւնը եւ ոչ
թէ այլոց դատողութեամբ դատաստան առնէ»: Այդ
պայմանները Նիխոր գրեց թագաւորին եւ թագա-
ւորը ցանկացաւ տեսանել Վահանին, որ եւ այդ պատ-
ճառով գնաց նորա մօտ, եւ նա մեծ պատուով եւ մե-
ծարանքով ընդունեց Վահանին, գովեց նորա զարմա-
նալի քաջագործութիւնները եւ խոհեմութիւնը՝ նո-
րա առաջարկած պայմանները բոլորը կատարեց եւ
կարգեց իւրեան Վահանին Հայոց ազգի սպարապետ
եւ Մամիկոնէից Տէր: Նոյն ժամանակ նշանակեց Հա-
յաստանումը մարզպան Անդեկանին, որ գոլով շատ 484—485.

խելացի եւ արդարախոհ մարդ եւ ճանաչելով Վա-
հանի աշխարհահօգութիւնը եւ քաջութիւնը, այն-
քան գովեց նորան թագաւորի առաջեւ եւ ցոյց տը-
ւեց, թէ աւելորդ է բոլորովին պարսիկ մարզպան
Հայաստանումը, երբ այդ աշխարհը ունի Վահանի
նման մարդ, մինչեւ թագաւորը կարգեց Վ ա հ ա-
Վահ. Մամ. ն ի ն մարզպան Հայոց աշխարհումը: Նորա մահից
485—511. յետ նշանակուեցան Հայաստանումը մարզպաններ՝
511—515. Վահանի եղբայր Վ ա ր դ, Պարսից կաւատ թագաւորի
515—518. հրամանով, իսկ նորանից յետ Բ ո ւ ր դ ա ն պարսիկ,
518—548. յետոյ Մ ժ է ժ նախարարը՝ քաջութեամբ երեւելին,
548—552. եւ ապա Դ ե ն շ ա պ ո ւ հ պարսիկ՝ շատ անողորմ եւ
անամօթ մարդ, որ հետեւումէր կրակապաշտութիւնը
տարածել մեր աշխարհումը՝ մինչեւ ժամանակի կա-
թուղիկոսը Մովսէս երկրորդ, տեսանելով Հայաս-
տանի տառապանքը Դենշապուհի ձեռից, գրեց թուղթ
Խոսրով թագաւորին, ուր յիշելով Վաղարշ թագաւո-
րի տուած նամակը, որով խոստացել էր նա չնեղել
երբէք Հայոց՝ կրօնական պատճառով, խնդրեց թե-
թեւացնել նոցա խղճալի վիճակը: Խոսրով լսեց նորա
աղաչանքը եւ ուղարկեց Հայաստան այլ մարզպան՝
552—558. Վ շ ն ա ս Վ ա հ ր ա մ անունով, որին եւ պատուիրեց
չստիպել ոչ մին հայի դառնալ կրակապաշտութիւն:

Այդ Մովսէս երկրորդ կաթուղիկոսը նշանաւոր է
մեր ազգի մէջ, Հայոց տումարի նորոգութեամբ:
551 թուականումը, որ իւր կաթուղիկոսութեան ա-
ռաջին տարին էր, ժողով գումարեց Դուին քաղա-
քումը եւ միաբան քննութեամբ եպիսկոպոսների եւ
իմաստուն մարդկանց հետ՝ ուղղեց Հայոց տումարը:
Այնուհետեւ Հայք սկսան այն տումարով վարուել եւ
իւրեանց տարեհաշիւը համարել 552 թուից. այսինքն՝
552 տարին եղաւ մեր թուականի առաջին տարին:
Վասնորոյ եթէ կամենանք իմանալ, թէ այն
ինչ անցք՝ Հայոց թուականի ո՞ր տարումն էր, պէտք
է հանենք Քրիստոսի թուականից 551 տարի, մնացա-
ծը կլինի Հայոց տարեհաշիւ. զոր օրինակ այս ներկայ

տարին Քրիստոսի թուականն է 1863. հանիր այդ թը-
ւից 551, կմնայ 1312, եւ սա է այս տարի մեր թուա-
կանը:

Հայաստանի հանգստութիւնը կրօնական հանգա-
մանքներում չտեւեց երկար ժամանակ, որովհետեւ
Խոսրով թագաւորը ուղարկեց Հայաստան մարզպան
փոխանակ Վշնասի՝ Վարազդատին, եւ մին քանի Վարազդատ.
տարուց յետ փոխեց Վարազդատին եւ կարգեց մարզ- 558—564.
պան Սուրէնին, որ շատ նեղումէր Հայոց ազգին Սուրէն,
եւ հարկադրումէր երկրպագութիւն տալ արեգական 564—571.
եւ կրակի: Հայոց նախարարների մէջ երեւելի էր
այդ ժամանակ Վարդան Երկրորդ Մամիկոնեան. սո-
րա եղբօրը Մանուէլին սպանեց Սուրէն մարզպանը.
Վարդան շատ դառնացաւ այդ բանի վերայ եւ խոր-
հուրդ արեց միւս նախարարների հետ, որ դուրս
գան Պարսից իշխանութիւնից: Այդ դիտաւորութիւ-
նը հաստատած, ուղարկեց դեսպան Յուստինոս Յու-
նաց կայսեր մօտ առանձին թղթով, որով խնդրեց
նորանից օգնութիւն Պարսից ընդդէմ, խոստանալով
համանգամայն լինել նորան հպատակ: Յուստինոս
համաձայնեց նպաստաւոր լինել Հայոց, եւ Վարդան
նորա խոստմունքով քաջալերուած՝ արհամարհեց
Պարսից, սպանեց Սուրէն մարզպանին եւ իւր ձեռն Վարդան Բ.
առեց Հայոց աշխարհի կառավարութիւնը: Խոսրով Փոքր.
Պարսից թագաւորը ուղարկեց զօրք Հայոց վերայ. 571—578.
բայց պատերազմումը Հայք յաղթող դառնուեցան.
իսկ երբ Խոսրով կրկին անգամ բացեց սաստիկ պա-
տերազմ, Վարդան իւր ընտանիքի հետ փախաւ Կոս-
տանդնուպօլիս եւ այն տեղ անդադար խնդրումէր
կայսեր տալ օգնութիւն Հայաստանին, մինչեւ վեր-
ջապէս ստացաւ կայսրից օգնական զօրք, որոց հետ
միացրեց եւ Հայոց զօրքը եւ կռուեց Պարսից հետ:
Յաղթութիւնը լինումէր երբեմն Հայոց կողմը եւ եր-
բեմն Պարսից եւ նոյն ինքը պատերազմը աւարտուե-
ցաւ Պարսից եւ Յունաց հաշտութեամբ: Յոյնք մտա-
ծելով, թէ Պարսիկները չեն կարող երբէք ղրկուել

Մեծ Հայոց աշխարհի տիրապետութիւնից եւ թէ նոցա պատերազմը Յունաց հետ՝ միայն Հայաստանի համար է, թողեցին Հայոց եւ հաշտուեցան Պարսից հետ։ Այն ժամանակ Խոսրով ամենայն զօրութեամբ յարձակուեցաւ յանկարծ Մեծ Հայաստան եւ առանց աշխատութեան տիրապետեց նորան. կարգեց այն տեղ
Միհրան Ճիհրվղոն, 578—563. մարզպան Մ ի հ ր ա ն Ճ ի հ ր վ ղ ո ն ի ն, Վարդանի վըտարանջութիւնից եօթն տարի յետոյ եւ ապա գընաց Հայաստանի Յունաց բաժինը. բայց Տիբերիոս՝ Յուստինոսի փոխանորդը ուղարկեց նորան ընդդէմ Մաւրիտիոսին, որ եւ Մօրիկ է ասուում, եւ նա համարեա բոլոր Պարսից դուրս արեց Փոքր Հայաստանից։ Այս Մօրիկ հայ էր ազգով. փեսայացաւ Տիբերիոս կայսերը եւ նորա մահից յետ թագաւորեց Յունաստան։ Սա կարգեց Հայաստանի Յունաց բաժնումը դ ու ք ս Մուշեղ Մամիկոնեանին, որ Տարօնի իշխանն էր եւ Հայոց քաջ սպարապետ, Պարսից եւ Հայոց մէջ եղած պատերազմներումը նշանաւոր։ Խոսրով ուղարկեց զօրք Տարօնի գաւառը Հայաստանի, որ աւերեն քանդեն այն գաւառը եւ Մուշեղին շըղթայակապ բերեն իւր մօտ։ Մուշեղ արդէն ծերացած էր եւ իւր տեղ կարգել էր Տարօնի իշխան եւ ժառանգ բոլոր իւր ստացուածին՝ Գ ա յ լ Վ ա հ ա ն ի ն, որ քանիցս անգամ կռուեցաւ Պարսից հետ եւ մեծամեծ քաջութիւններ գործեց. խաբէութեամբ վեր առեց Պարսից Միհրան զօրագլխից չորս հազար մարդ, որ նորանցով իբր թէ վեր առնէ Հայաստանի ամուր քաղաքները եւ ձերբակալ առնէ Մուշեղին. բայց այդ չորս հազար զօրքը բերեց Հայաստան եւ բոլորին կոտորեց։ Յետոյ նախօրինակ խորամանկութեամբ սպանեց Միհրան եւ Վարշիր զօրագլուխներին եւ նոցա հետ եղած երկու հազար պարսիկներին։
Սմբատ Բագրատունի, 593—561. Սորա նման եւ սորա որդին Ս մ բ ա տ շատ քաջութիւններ գործեց Պարսից հետ պատերազմելու ժամանակը, սպանեց նոցա Վախթանկ սպարապետին եւ տիրապետումէր իւր երկրումը՝ որպէս մարզպան։ Նորա

մահից յետ Խոսրով Պարսից Թագաւորը Հայոց նա-
խարարների խնդրով նշանակեց մարզպան Հայաստա-
նումը Դաւիթ Սահառունուն, որ բաւական Դաւիթ
ժամանակ մեր աշխարհը կառավարելուց յետ, ըս- Սահառունի,
կըսաւ կասկածել Պարսից ազգից՝ զանազան մարդ- 601—625.
կանց գաղտնի չարախօսութեան պատճառով. վան-
որոյ թողեց իւր մարզպանութիւնը եւ գնաց Կոս-
տանդնուպօլիս: Նորա տեղ Խոսրով կարգեց մարզպան
Վարազտիրոց Բագրատունուն, Սմբատ Բագրա- Վարազտի-
տունու որդուն: Սորան Ատրպատական աշխարհի րոց,
մարզպանը՝ Ռոստոմ անունով պարսիկ՝ մտածեց ըս- 625—632.
պանանել, կամենալով ձեռք բերել եւ Հայոց աշխար-
հի մարզպանութիւնը: Վարազտիրոց իմացաւ նորա
դիտաւորութիւնը եւ փախաւ Յունաց Հերակլ կայսեր
մօտ. իսկ Ռոստոմ ոչ միայն իւր նպատակին չհասաւ,
այլ եւ զրկուեցաւ իւր սեփական իշխանութիւնից
այն պատճառով, որ այդ ժամանակ բոլոր Պարսից
թագաւորութիւնը խախտուեցաւ եւ ընկաւ Հագա-
րացոց կամ Արաբացոց իշխանութեան ներքոյ: Երբոր 637.
Պարսից տէրութիւնը այդպէս վրդոված էր եւ Վա-
րազտիրոց Հայաստանի մարզպանը հեռացած իւր
աշխարհից, եզր կաթուղիկոսը դեսպանի միջնորդու-
թեամբ խնդրեց Հերակլ կայսրից մին իշխան կար-
գել Հայաստանումը. եւ կայսրը ուղարկեց կիւրա-
պաղատ Դաւիթ Սահառունուն, որ յառաջագոյն Դաւիթ
գնացած էր Յունաստան, որպէս ասացինք վերեւումը: Սահառունի,
Բայց երեք տարի չանցաւ, երբ Հայոց նախարարները 632—635.
եւ զօրքը անարգեցին Դաւիթ Սահառունուն, մինչեւ Պարապ մի-
վերջապէս հալածեցին նորան իւրեանց աշխարհից. ջոց,
եւ ինքեանք շարունակումէին իւրեանց հակառակու- 635—636.
թիւնը, միմեանց պատուին նախանձուելով, մինը
միւսին հալածելով եւ այդպիսի անմիաբանութեան
պատճառով չէին կարողանում ընդդիմանալ այլազգի
թշնամիներին. մինչեւ որ Թէոդորոս՝ Ռշտուն- Թէոդորոս
եաց նախարարը, քաջ եւ արի մարդ, զօրք ժողո- Ռշտունի,
վեց, սկսաւ, ինչքան կարող էր, դիմակալ լինել 636—643.

*

թշնամիներին եւ իբրեւ մարզպան խաղաղացնել մեր
աշխարհը։ Այդ միջոց, երբոր Թէոդորոս Ռշտունին
գործ էր դնում ամենայն հնար եւ հետեւողութիւն
մեր ազգը հանգստացնելու համար, Հագարացիք
(Արաբացիք) մեծ բազմութեամբ յարձակուեցան Ա-
սորեստան եւ այն տեղից մինչեւ տասնութ հազար
637. հոգի սփռուեցան Հայաստան, Ապդռահման անունով
զօրավարի առաջնորդութեամբ, շատ աղէտալի կո-
տորած եւ քանդութիւն գործեցին զանազան գաւառ-
ներում եւ Թէոդորոս Ռշտունին՝ չստանալով օգնու-
թիւն Հայոց նախարարներից՝ չկարողացաւ փրկել
Հայաստանը այդ նոր թշուառութիւնից. վասնորոյ
հեռացաւ ամենայն գործից եւ բնակուեցաւ առան-
ձին տեղում։ Ներսէս երրորդ Շինողի միջնորդու-
թեամբ Յունաց կայսրը Կոստանդ՝ Հերակլի թոռը՝
[643—644. կարգեց Հայաստանում կիւրապաղատ Վ ա ր ա զ տ ի-
ր ո ց ի ն, որ յառաջ եղած էր մարզպան, եւ նորա
մահից յետ, որ հանգիստեցաւ շուտ ժամանակում,
644—654. նորա որդուն Ս մ բ ա տ ի ն. իսկ Թէոդորոս Ռշտունուն
զօրավար, որ եւ կտորեց բոլոր այլազգի զօրքը, որ
եկել էին այդ ժամանակ Կոգովիտ գաւառը. մինչեւ
չթողեց նոցանից ոչ մին մարդ Հայաստանի մէջ եւ
դորանով հանգստացրեց մեր աշխարհը փոքր ինչ
ժամանակ, ամենեքեան սկսան պարապել իւրեանց
քաղաքական գործով. ասումենք փոքր ինչ ժամանակ,
որովհետեւ կարճ միջոցից յետ կրկին ալէկոծուեցաւ
Հայաստանը եւ այդ ալէկոծութիւնը տեւեց համա-
րեա անընդհատ մինչեւ պատմութեան վերջը։

Հագարացիք կրկին անգամ եկան Հայաստան եւ
Արարատեան աշխարհումը մեծ կոտորած արեցին։
Սմբատ կիւրապաղատը եւ Թէոդորոս զօրավարը նա-
խարարների հետ միասին գնացին նոցա առաջը մե-
ծագին ընծաներով. ցոյց տուեցին նոցա հնազան-
դութիւն, խոստանալով հպատակ եւ հարկատու լինել
նոցա եւ հեռանալ Յունաց ազգից։ Այդ անցքը լսաւ
Կոստանդ կայսրը, շատ եւ շատ բարկացաւ եւ եկաւ

զօրքով Հայաստան: Նորա առաջը գնաց Ներսէս կա-
թուղիկոսը եպիսկոպոսների քահանաների եւ երե-
ւելի աշխարհական անձանց հետ եւ կարողացաւ խա-
ղաղացնել նորա բարկութիւնը մինչեւ այնքան, որ
կայսրը եկաւ Դուին եւ իջեւան արեց կաթուղիկոսա-
րանում: Լսեցին եւ Հագարացիք, թէ Հայք մտել
են միւսանգամ Յունաց իշխանութեան ներքոյ՝ դիմե-
ցին մեծ բազմութեամբ Հայաստան, տիրեցին բոլոր
երկրին. դաշն հաստատեցին Հայոց ազգի հետ, որ
ամենեւին հեռի լինի Յունաց հնազանդութիւնից. 653.
դրեցին ազգի վերայ մեծ հարկ եւ վերադարձան Դա-
մասկոս, տանելով իւրեանց հետ իբրեւ պատանդ-
մինչեւ 1775 հոգի՝ այր եւ կին: Նոցա հետ գնաց 654.
եւ Թէոդորոս Ռշտունին եւ մին տարուց յետ մեռաւ
Դամասկոսումը. բայց մարմինը բերուեցաւ Հայաստան:

Շուտով զգացին Հայք Հագարացոց հարկի ծանրու-
թիւնը եւ չկարողանալով տանել իւրեանց ծանրակիր
լուծը, ակամայ կամօք մտան կրկին Յունաց կայսեր
իշխանութեան ներքոյ եւ ստացան նորանից կիւրա-
պաղատութեան պատիւ Համազասպ Մամիկոն- Համ. Մամիկ.
եանի համար: Այդ փոփոխութեան լուրը դառնա- 654—665.
ցրեց Հագարացոց ամիրապետի սիրտը եւ հարկադը-
րեց նորան անձամբ գնալ Հայոց վերայ պատերազ-
մով, բայց նորա խորհուրդը խափանուեցաւ՝ Հագա-
րացոց իւրեանց մէջ նոր ծագած խռովութեամբ,
որի հետեւանքը եղաւ այն, որ նոցա իշխանը եւ բռ-
պարապետը Մաւիէ անունով յաղթող դառնուեցաւ
եւ եղաւ ամիրապետ: Եւ որովհետեւ այդ նոր ամի-
րապետը շատ խաղաղասէր մարդ էր, թեթեւացրել
էր իւրեան հպատակ այլազգիների հարկատուու-
թիւնը, եւ արդարութեամբ էր վարուում ամենեցուն
հետ, վասնորոյ Հայք միտք արեցին դուրս գալ Յու-
նաց հպատակութիւնից եւ մտանել Հագարացոց իշ-
խանութեան ներքոյ, մանաւանդ որ Յունաց հպա-
տակ եղած ժամանակը եւս՝ միշտ խռովութեան մէջ
էին լինում Քաղկեդոնի ժողովի պատճառով, այնպէս

որ մին երեւելի օգնութիւն երբէք չէին ստանում Յու-
նաց ազգից · վճռեցին Հայք իւրեանց գլխաւորութիւ-
նը եւ անձնատուր եղան ամիրապետին․ եւ յետոյ, երբ
փոքր միջոցի մէջ մեռաւ Համազասպ Մամիկոնեանը,
խնդրեցին նորանից կարգել Հայաստան պատրիկ կամ
հրամանատար իշխան Համազասպի եղբօրը՝ Գրի-
Գրիգոր Մա- գոր Մամիկոնեանին․ եւ ամիրապետը կատարեց
միկոնեան, նոցա խնդիրը։ Սորա իշխանութեան ժամանակը
659—683. յարձակուեցան Հայաստան Խազիրք եւ Գրիգոր Մա-
միկոնեան սաստիկ պատերազմեց նոցա հետ եւ այդ
683. պատերազմումը սպանուեցաւ։ Նորա մահից յետ
Միջոց պա- Հայաստանը մնաց անտէր երկու տարու չափ, թշնա-
րապոյ, միներից պաշարուած եւ անօգնական ուստեք, մին-
683—685. չեւ որ Աշոտ Բագրատունին՝ Բիւրատի որդին զօ-
Աշոտ Բագ- րացաւ, վանեց թշնամիներին եւ տիրապետեց ազ-
րատունի, գին իբրեւ պատրիկ․ կարգեց իւր եղբօրը Սմբատին
685—690. Հայոց զօրավար․ եւ խօսեց խաղաղութիւն Հագարա-
ցոց հետ, խոստանալով տալ նոցա հարկ։ Սակայն
այդ խաղաղութեան դաշնադրութիւնը Արաբացոց
հետ եղաւ նոր թշուառութեան առիթ Հայաստանի
համար Յունաց կողմից։ Յուստինիանոս երկրորդ կայս-
րը՝ Կոստանդինի որդին՝ տեսանելով, թէ Հայք հը-
պատակ են եղել Հագարացոց, ուղարկեց Հայաստան
սաստիկ զօրք, որ հրով եւ գերութեամբ աւերեցին
քսան եւ հինգ գաւառ եւ գերի վարեցին ութ հա-
զար տուն։ Այսպէս Յուստինիանոս տնակոխ արեց
Հայաստանը եւ ձգեց նորան Յունաց հարկատուութեան
ներքոյ․ յետոյ կարգեց Հայաստանումը կիւրապաղատ
Ներսէհ Ներսէհ Կամսարականին՝ Վահան Կամսարականի
Կամսարա- որդուն, հիւպատոսի եւ պատրիկի անունով։ Սոքա, այս-
կան, ինքն՝ Վահան եւ Ներսէհ Կամսարականները, հայր եւ որ-
690—693. դի, շատ ուսումնատենչ եւ ընթերցասէր անձինք էին,
միանգամայն եւ գիտնականներին յորդորող եւ հովա-
նաւոր, որ ծաղկեցնեն եւ պտղաբեր առնեն հայկական
լեզուի ուսումնառութիւնը, օգտակար մատեանների
շարադրութեամբ եւ կամ սուրբ գրքի մեկնութեամբ։

Վաղուց հասել էր Հագարացոց ամիրապետի ա-
կանջը, թէ Հայք կրկին մտել են Յունաց իշխանու-
թեան ներքոյ. այդ պատճառով ուղարկեց նա Հա-
յաստան զօրք Աբդլլայ ոստիկանի առաջնորդու-
թեամբ, բայց եւ խաղաղութեան ձեւով: Հայք ան-
միաբան գոլով միմեանց հետ, չէին կարող ընդդի-
մանալ ոստիկանին, վասնորոյ եւ ընդունեցին նորան
իբրեւ իւրեանց յատուկ իշխան: Աբդլլայ հաստա- Աբդլլայ
տեց իւր իշխանութեան աթոռը Դուին քաղաքումը հագարացի,
եւ սկսաւ քաղցրութեամբ վարուել յառաջագոյն ա- 693—695.
մենեցուն հետ. բայց փոքր ժամանակից յետ բռնեց
նախարարներին եւ կապեց. նոցա բոլոր ստացուածը
կողոպտեց. Սահակ կաթուղիկոսին եւ Սմբատ Բագ-
րատունուն Բիւրատեան՝ Հայոց սպարապետին շղթա-
յակապ ուղարկեց Դամասկոս՝ յետոյ բոլոր եկեղեցի-
ները Արարատեան աշխարհի բոլորովին աւերեց.
Ներսէհ կամսարականը փախաւ Տայք: Բայց Սմբատ 693.
Բագրատունին, նոյն տարի, երբ գերի վարուեցաւ,
փախաւ կրկին Հայաստան եւ տեսանելով Աբդլլայի
բռնակալութիւնը, ուղարկեց դեսպան Յուստինիանոսի
մօտ եւ խնդրեց նորանից օգնութիւն: Կայսրը ու-
ղարկեց զօրքով Ղեւոնդիոս իշխանին, որ եկաւ Դուին
եւ Սմբատի հետ միասին այրեց ոստիկանի եւ նորա
այլ մեծամեծների ապարանները, կոտորեց նոցա զօր-
քը եւ շատին գերի վարեց: Այդ Ղեւոնդիոս իշխա-
նը, երբոր վերադարձաւ Կոստանդնուպօլիս եւ Յու-
նաց մեծամեծների հետ միասին զրկեց թագաւորու-
թիւնից Յուստինիանոսին նորա անողորմ գործերի
համար եւ ինքն եղաւ կայսր, ընծայեց կիւրապաղա-
տութեան կոչումն եւ պատիւ Սմբատ Բագրա- 695—700.
տունուն:

ԳԼՈՒԽ Գ.

Հագարացոց ամիրապետը Մրուան կրկին անգամ
ուղարկեց բազմաթիւ զօրք Հայաստան եւ Սմբատ
երկնչելով նոր պատերազմից եւ նորա աղէտալի հե-
տեւանքներից. գրեց Դամասկոս Սահակ կաթուղիկո-
սին, որ դեռեւս գերութեան մէջ էր, եւ խնդրեց
նորանից, որ մին հաշտութեան հնարք գտանէ: Սա-
հակ կաթուղիկոսը այս թուղթը ստացած, խնդրեց
հրաման Մոհմատ Օգբայ Հագարացոց զօրավարից
գնալ նորան տեսութիւն, եւ ինչպէս ստացաւ այդ
հրամանը, դուրս եկաւ ճանապարհ, հասաւ Խառան
եւ այն տեղ սաստիկ հիւանդացաւ. եւ տեսանելով,
թէ մահը մօտեցել է, զօրացաւ հոգով եւ գրեց իւր
ձեռով աղերսագիր Մոհմատին արաբերէն, որով
խնդրումէր նորան խնայել Հայոց ազգին: Այդ թուղ-
թը կնքեց եւ հրամայեց իւր սարկաւագներին դնել
իւր մահից յետ իւր աջ ձեռի մէջ, որ Մոհմատ ին-
քը վեր առնէ նորա ձեռից այն նամակը եւ կարդայ:
Սահակ կաթուղիկոսը վախճանուեցաւ, եւ Մոհմատ
ինչպէս լսաւ նորա մահը, եկաւ նորա մօտ. երբոր
մերձեցաւ նորա մարմնին, տուեց նորան ողջոյն. եւ
անկենդան մարմինը իբրեւ կենդանի մարդ ձգեց ձե-
ռը եւ տուեց նորան այն թուղթը, որ բռնած ունէր:
Մոհմատ զարմացաւ, զարհուրեց եւ վեր առեց յար-
գանքով այն թուղթը նորա ձեռից, կարդաց եւ ա-
սաց նորան՝ «Այս խնդիրդ կատարուած համարիր,
պատուական մարդ Աստուծոյ»: Եւ յիրաւի կատարեց
նա կաթուղիկոսի խնդիրը. գրեց Հայոց նախարար-
ներին, թէ ներումէ նոցա յանցանքը եւ բոլոր անց-
քը մոռացման է տամ: Յետոյ հրամայեց տանել պա-
տուով Հայաստան Սահակի մարմինը Հագարացոց զօր-
Կաշմ, քի ուղեկցութեամբ, Կաշմ զօրավարի հետ, որ եւ
700—717. մնաց Հայաստան իբրեւ ոստիկան մինչեւ Օմարի ա-

միրապետութեան ժամանակը, որ ուղարկեց Հայաս-
տան կառավարիչ փոխանակ Նորա Վ ի լ թ կամ Վ է-
լ ի տ ոստիկանին, եւ այնուհետեւ մեր աշխարհը մը- 717—727.
նաց 150 տարու չափ Հագարացոց ոստիկանների կա-
ռավարութեան ներքոյ, որ շատ ժամանակ ամիրա-
պետի կամքին ընդդէմ մեծ տառապանք եւ նեղու-
թիւն էին հասուցանում մեր ազգին: Այս Վիլթ ոս-
տիկանին շուտով յետ կոչեց Օմար ամիրապետը եւ
նորա տեղ կարգեց ոստիկան Մ ա հ մ է տ անունով Մահմետ,
մին Հագարացի, որ շատ նեղումէր Հայոց եւ մանա- 727—732.
ւորապէս Դաւիթ կաթուղիկոսին: Կաթուղիկոսը տե-
սանելով, թէ ամենեւին հանգստութիւն չկայ ոստի-
կանի խստութիւնից ոչ Հայոց աշխարհին եւ ոչ իւր-
եան, ստիպուեցաւ աղաչել ամիրապետին դեսպանի
միջնորդութեամբ, որ այլ մարդ նշանակէ ոստիկան
Հայոց վերայ: Ամիրապետը համաձայնեց եւ կարգեց
ոստիկան Ա բ դ լ ա զ ի զ ի ն, որ շատ խնամքով եւ խա- Աբդլազիզ,
ղաղութեամբ կառավարեց մեր աշխարհը: Նորա մա- 732—742.
հից յետ նշանակուեցաւ ոստիկան Մ ր ո ւ ա ն: Սորա Մրուան,
ժամանակը Հայոց նախարարների մէջ նախապատիւը 742—743.
եւ անուանին էր Աշոտ Բագրատունի, որին նշանա- Աշոտ Բագ-
կեց Մրուան իշխանաց իշխան եւ պատրիկ երբոր րատունի,
ինքն եղաւ ամերապետ: Այս Աշոտ Վասակեան համա- 743—758.
րուումէ իբր արմատ Բագրատունի թագաւորների
Հայաստանումը: Սա ունէր երկու որդի՝ Սմբատ եւ
Վասակ. Սմբատի որդին էր Աշոտ քաջը, որին Թուր-
քերը մ ս ա կ ե ր էին կոչում, Աշոտի որդին էր Սմբատ
խոստովանող, իսկ այդ Սմբատի որդին էր դարձեալ
Աշոտ, որ եղաւ Բագրատունեաց ցեղի առաջին թա-
գաւորը:

Այդ ժամանակներում, Մրուան ամիրապետի ըս- 753.
պանութիւնից յետ, որ եղաւ Եգիպտոսի հետ պատե-
րազմելու միջոց, Հագարացոց իշխանապետների մէջ
ծագուեցաւ խռովութիւն, որով նոցանից ոմանք ըս-
կըսան անկախ տիրապետել զանազան երկրներում եւ
այդպիսի շփոթութեան պատճառով թագաւորու-

755. թեան աթոռը փոխադրուեցաւ Դամասկոսից Բաղդատ,
ուր առաջին ամիրապետն եղաւ Ալմանսուր։ Սա Բաղ-
դատը նորոգելու պատճառով մեծամեծ հարկեր դը-
րեց բոլոր իւրեան հպատակ եղած երկրների վերայ,
մանաւանդ Հայաստանի, ուր նշանակեց կառավարիչ
Եզիտ Ա., Եզիտ ոստիկանին, որ սկսաւ անօրինակ չարչարել
758—760. Հայոց եւ ամիրապետի հրամանով՝ հարկ պահանջել
մեռածների համար եւս, եկեղեցիների գլխից խաչե-
րը բռնալ եւ եկեղեցական սպասը վաճառել հրէա-
ների։ Հայոց նախարարները չկարողանալով տանել
այդչափ նեղութեան եւ տարապայման հարկապահան-
ջութեան, վճռեցին ապստամբուել ամիրապետից.
բայց այդ նոցա դիտաւորութեանը ընդդիմացաւ
Աշոտ պատրիկը Բագրատունի, որ յորդորումէր նո-
ցա համբերութեամբ տանել նեղութեան փոքր ինչ
ժամանակ։ Նորա խրատը եւ համոզմանքը վատ մեկ-
նեցին նորա թշնամիները, որոց մէջ առաւել սխե-
րիմ եւ մախացող էին Գրիգոր եւ Դաւիթ Մամի-
կոնեան իշխանները, որ այդ պատճառով կուրացու-
ցին Աշոտին։

Փոքր ժամանակ կառավարեց Հայաստանը Եզիտ
ոստիկանը. Ամիրապետի հրամանով գնաց Բաղդատ
եւ թողեց իւր տեղ հրամանատար եւ պատրիկ Հա-
յաստանումը Բագարատ Բագրատունու որդուն Սա-
Սահակ Բ, Սահակին։ Սորա իշխանութեան օրերում շատ ասպա-
Բագրատու- տակներ Պարսկաստանի կողմից յարձակուեցան Հա-
նի. յաստանի Վասպուրական աշխարհը՝ իւրեանց Սիւ-
760—766. լէյման անունով առաջնորդի հետ։ Նոցա առաջը թէ-
761. պէտ դուրս եկան եւ քաջութեամբ կռուեցին մինչեւ
ի մահ երկու եղբայր Սահակ եւ Համազասպ Վահան-
եանք՝ Արծրունի իշխաններ, սակայն թշնամիները
նենգութեամբ խաբելով նոցա երրորդ եղբօրը Գա-
Սիւլէյման, գիկին, մնացին յաղթող եւ Սիւլէյման եղաւ իշխան
766—769. Հայաստանումը մինչեւ իւր մահը, որից յետ կար-
Պէքիր, գուեցաւ ամիրապետից ոստիկան Պէքիր։ Սա ան-
969—778. չափ նեղումէր Հայոց, մինչեւ նոքա չկարողանալով

*համբերել իւրեանց տառապանքին, յարձակուեցան
իւրեանց նեղիչների վերայ, եւ նոցանից շատին ըս-
պանեցին, շատին փախուստ դարձրեցին: Պէքիր ոս-
տիկանը խնդրեց շուտով օգնական զօրք Միջագետ-
քի Մուսի Մուսահաբի իշխանից. եւ նա ուղարկեց
մեծ զօրք, որ եկան աւերեցին շատ երկիրներ, կոտո-
րեցին անթիւ մարդիկ, բռնեցին դաւաճանութեամբ
Սահակ Բագրատունի պատրիկին, եւ Մուսի իսկոյն
հրամայեց սպանանել նորան:*

ԳԼՈՒԽ Դ.

Ողջից առաւել չարաչէր մարդ էր Հասան ոստի- Հասան,
կան՝ Պէքիրի յաջորդը. բոլոր այլազգի ոստիկան- 778—781.
*ներից աւելի չարչարումէր եւ կեղեքումէր Հայոց,
կողոպտումէր եւ աւերումէր Հայաստանի երկիրները:
Դառնացել էին Հայք, դուրս էին եկել իւրեանց համ-
բերութիւնից, եւ ամենից առաւել խռոված էր հո-
գով Մուշեղ Մամիկոնէն, որ հաստատ դրեց իւր մըտ-
քումը ապստամբուել ոստիկանից, ժողովեց քաջ քաջ
մարդիկ Մամիկոնեան տոհմից եւ նոցա հետ միասին
յարձակուեցաւ ոստիկանի վերայ, նորա զօրքից շա-
տին կոտորեց եւ իւրեան ոստիկանին դուրս արեց
Դուին քաղաքից: Հայոց իշխանները յայտնապէս ար-
դէն ապստամբուեցան Հագարացոց իշխանութիւնից.
հաւաքուեցան մինչեւ հինգ հազար հոգի, ընտրեցին
իւրեանց առաջնորդ Մուշեղին, Սմբատին եւ Սա-* 781—786.
*մուէլին. եւ երբոր Հագարացիք մինչեւ երեսուն հա-
զար մարդ յարձակուեցան Հայաստան, սաստիկ կը-
ռուեցին նոցա հետ եւ այդ պատերազմումը Հագա-
րացիք յաղթող դառնուեցան եւ կոտորեցին Հայոց
ազգից մինչեւ երեք հազար մարդ՝ հանդերձ նոցա
զօրագլուխներով: Այդ յաղթութեամբ քաջալերուած՝
դիմեցին Հագարացիք Հայաստանի մէջ, աւերեցին
նորա երկիրները. Հայոց իշխանները տարակուսած՝
ոմանք ամրանում էին իւրեանց քաղաքներում եւ ո-*

մանք փախչումէին անմատոյց տեղեր: Եւ միայն Սըմբատ Բագրատունու որդիքը՝ Աշոտ մսակեր եւ Շապուհ կարողացան ժողովել քաջասիրտ մարդիկ, երկու եւ երեք անգամ կռուեցին թշնամիների հետ, ցրուեցին նոցա եւ ազատեցին իւրեանց աշխարհը:

Եզիտ Բ, Երբոր նաեւ ամիրապետ Հարոնը եւ ուղարկեց
786—798. Հայաստան Եզիտ ոստիկանին, սա եկաւ, նուաճեց Հայոց քաղցրութեամբ եւ սպառնալիքով եւ կրկին դարձրեց ամիրապետի իշխանութեան ներքոյ: Արծրունի իշխաններին, երեք եղբարցը, Համազասպին Սահակին եւ Մերուժանին հրաւիրեց պատճառանքով իւր մօտ եւ յայտնեց նոցա ամիրապետի հրամանը, թէ երկուքանից մինը պէտք է ընտրեն՝ կամ մահ եւ կամ ուրացութիւն իւրեանց կրօնից, եւ երբ նոքա պատասխանեցին, թէ անհնար է, որ նոքա ուրանան իւրեանց քրիստոնէութիւնը, հրամայեց ձգել նոցա բանտ, ուր Մերուժանը թողեց Քրիստոսի հաւատը, գնաց ամիրապետի մօտ եւ ստացաւ նորանից Վասպուրական աշխարհի իշխանութիւնը, իսկ Համազասպ եւ Սահակ արժանացան մարտիրոսական պսակի:

Եզիտ ոստիկանի տեղ կարգուեցաւ հրամանատար
798—818. Խուզիմայ, որ սիրով եւ քաղցրութեամբ էր վարւում Հայոց նախարարների հետ, եւ նորանից յետ
818—835. Հոլ, նմին նման խաղաղասէր: Իսկ երբ ամիրապետը յետ կոչեց այդ Հոլ ոստիկանին, Սմբատ սպարապետի եւ այլ Հայոց իշխանների խնդրով նշանակուեցաւ
Բագրատ, պատրիկ Բագարատ կամ Բագրատ Բագրատունի,
835—848. որ բնակւումէր եւ իշխումէր Սիմ լերին ([1]) կողմերումը: Սորա ժամանակը մին զօրաւոր եւ պատերազմասէր իշխան Պարսից ազգից Բաբան անունով, ապստամբուեցաւ Հագարացոց ամիրապետից, ժողովեց պատերազմող ընկերներ Պարսից եւ այլ ազգե-

---

([1]) Սիմ լեառը Աղձնեաց աշխարհումն է եւ մասն է Տորոս լերին, ձգւումէ Բզնունեաց գաւառից մինչեւ Կորդուաց աշխարհը:

րից եւ սկսաւ աւերել ամիրապետի իշխանութեան ներքոյ եղած զանազան քաղաքներ։ Մաւուն ամիրապետի հրամանով քաջն Մանուէլ Մամիկոնեան ([1]) գնաց զօրքով Բաքանին ընդդէմ եւ հալածական արեց նորան։ Բաքան դարձաւ Տարօնի կողմերը, անց կեցաւ Սիւնեաց աշխարհ եկաւ Գեղարքունիք եւ մըտածումէր արդէն նուաճել բոլոր Հայոց եւ հանել նոցա Հագարացոց հպատակութիւնից։ Մաքսամ Ապուճաֆար ամիրապետը, Մաւունի յաջորդը, ուղարկեց մեծ զօրք Հայաստան Աֆշին զօրավարի առաջնորդութեամբ Բաքանին ընդդէմ։ Այն ժամանակ եւ Սմբատ սպարապետը կազմեց առանձին գունդ Հայոց ազգից եւ եղաւ հզօր նիզակակից Աֆշինին։ Պատերազմումը յաղթուեցաւ Բաքան բռնաւորը. նորան բռնեց Սմբատի որդին Սահլ եւ տարաւ Աֆշինի առաջը։ Աֆշին շատ ուրախացաւ այդ յաղթութեանը, յետ դարձաւ ամիրապետի մօտ եւ պատմեց նորան Սմբատի եւ նորա որդու քաջութիւնը եւ հաւատարմութիւնը. բայց եւ շատ չարախօս եղաւ Բագրատ Բագրատունու վերայ, որպէս թէ չէր կամեցել նա օգնութիւն

([1]) Մանուէլ Մամիկոնեան Յունաց ծառայութեան մէջ հռչակաւոր էր եղել քաջութեամբ, բարեպաշտ կեանքով եւ երեւելի գործերով Լեւոն եւ Միքայէլ կայսերաց ժամանակը։ Թէոփիլոս կայսրը, որի կեանքը փրկել էր պատերազմումը Մանուէլ, համարումէր խրեան երախտապարտ նորա առաջեւ. նշանակել էր նորան արեւելեան զօրքի սպարապետ եւ միշտ մտածումէր առաւել փառքի եւ պատուի հասուցանել նորան։ Բայց յաչաղկոտ մարդկանց չարախօսութեամբ, իբր թէ Մանուէլ դիտաւորութիւն ունէր յափշտակելու Թէոփիլոսից թագաւորական աթոռը, կայսրը սկսաւ վատ աչքով նայել Մանուէլի վերայ եւ կամենումէր դաւաճանել նորան։ Մանուէլ իմացաւ թագաւորի խորհուրդը, ծածուկ դուրս եկաւ Կոստանդնուպօլսից եւ դիմեց Հագարացոց ամիրապետին (Մաւունին), որ մեծ ուրախութեամբ եւ պատուով ընդունեց նորան. յանձնեց գնալ իւր զօրքով թշնամիների վերայ (Բաքան բռնաւորի), որոց յաղթեց Մանուէլ եւ առաւել պատիւ ստացաւ ամիրապետից։ Բայց եւ շուտով թողեց ամիրապետին եւ վերադարձաւ Յունաստան՝ Թէոփիլոս կայսեր թախանձագին խնդրով։

տալ Հագարացոց զօրքին. այդ պատճառով ամիրապե-
տը սկսաւ ոխ պահել իւր սրտումը Բագարատի վերայ
եւ մտածումէր վնասել նորան: Մին քանի տարուց
յետ չարախօս մարդկանց ամբաստանութեամբ յան-
ցաւոր գտանուեցաւ Բագարատ արքունի գործերի
մէջ եւ ամիրապետը առիթ գտաւ ուղարկելու Հայաս-
Աբուսէք, տան Աբուսէթ ոստիկանին, որ նուաճէ նորան: Ե-
848—850. կաւ Աբուսէթ Տարօնի կողմերը եւ հրաւիրեց իւր
մօտ Բագարատին, որ չիմանալով նորա միտքը, գը-
նաց աներկիւղ նորա մօտ, եւ նա հրամայեց տանել
Բագարատին շղթայակապ ամիրապետի մօտ: Երբոր
Սիմ լերին բնակիչները (Սասունք) իմացան Բագարա-
տի վտարանդութիւնը, վառուեցան անհնարին բար-
կութեամբ. հաւաքուեցան, զէն առին իւրեանց ձեռք
եւ յանկարծ մեծ բազմութեամբ յարձակուեցան Ա-
բուսէթի վերայ եւ սպանեցին նորան. նորա զօրքը
ցրուեցաւ եւ փախաւ ամիրապետի մօտ, եւ նա տե-
Բուղայ, ղեկացած այդ անցքին ուղարկեց Բուղայ ոստիկանի
850—855. հետ անհամար զօրք, հրամայելով, որ բոլոր Հայոց
իշխաններին եւ երեւելի անձանց բռնեն եւ ուղար-
կեն շղթայակապ իւր մօտ. այլ ամենայն մարդու,
որ միանգամ կարող էր սուր վեր առնել իւր ձեռք,
սպանանեն առանց խնայելու. իսկ ով որ կթողնէ քը-
րիստոնէութիւնը, նորան բերեն կենդանի իւր մօտ,
միայն թէ գեղեցիկ լինի այն մարդը եւ քաջ, ապա
թէ ոչ՝ նորան եւս սպանանեն:

Ձայրացած հեղեղի նման եկաւ Բուղայ Հայաստան.
մտաւ Տարօնի գաւառը, կալեց Բագարատի երկու
որդոցը Աշոտին եւ Դաւթին եւ ուղարկեց ամիրա-
պետի մօտ: Յետոյ, որովհետեւ Սիմ լերին բնակիչ-
ներն էին սպանել Աբուսէթին, նոցա բոլորին կոտո-
րեց: Աշոտ Արծրունուն, որ տեսանելով Հայոց իշխան-
ների անմիաբանութիւնը, գնաց խոնարհութեամբ
Բուղայի մօտ, ուղարկեց նոյնպէս շղթայակապ ամիրա-
պետի մօտ: Սորանից յետ գնաց Վասպուրական աշ-
խարհ: Այն տեղ ով որ քաջ էր եւ բարետեսիլ, բըռ-

նեց եւ պահեց կապանքի մէջ. մնացելոց բոլորին, ո֊րոց չկար թիւ, հրամայեց սրախողխող սպանանել, մինչեւ դիակունքով լցուեցան ձորերը եւ արիւնով ներկուեցաւ երկիրը։ Յետոյ սկսաւ բռնադատել կապելոց, որ ուրանան քրիստոնէական հաւատը, եւ երբ նոքա չհամաձայնեցին, բոլորին դառնագոյն տանջանքով սպանեց։ Պատրաստուեցաւ յետոյ յառաջ գնալ զօրքով Արարատեան աշխարհ եւ շտապումէր հասանել Դուին մայրաքաղաք. վեր առեց իւր ճանապարհորդութեան առաջնորդ եւ իւր չարագործութիւններին ակամայ խորհրդակից Սմբատ Բագրատունուն, որ տեսանելով Հայաստանի անդարմանելի թշուառութիւնը եւ իմանալով, թէ չկայ ոչինչ հընար ընդդիմանալ ոստիկանին պատերազմով, գնացել էր նորա առաջ մեծամեծ ընծաներով հաշտարակաց օգտի համար։ Գնաց, հասաւ ոստիկանը Դուին քաղաք եւ թէ ինչ գործեցին այն տեղ եւ բոլոր Արարատեան գաւառներում նա եւ նորա զօրքը, չէ կարելի գրչով նկարագրել։ Բռնեցին ամենայն մարդու, որ կարող էր սուր առնուլ ձեռը՝ ոմանց հաւի նման խողխողեցին, ոմանց պարանակապ քարշեցին տարան ոստիկանի մօտ եւ նա հրամայեց ընտրել նոցա մէջ առոյգներին եւ քաջերին եւ կապել նոցա, իսկ տգեղներին եւ տկարներին սպանանել։ Մին քանի օրից յետ հրամայեց բերել իւր առաջը բոլոր կապելոցը եւ սկսաւ հարկադրել նոցա ուրանալ իւրեանց հաւատը. եւ երբ տեսաւ, թէ նոքա հաստատուն են քրիստոնէութեան մէջ եւ պատրաստ ընդունել մահ, զանազան զարհուրելի տանջանքներով չարչարեց նոցա, մինչեւ նոցա գեղեցկատեսիլ դէմքումը չմնաց մարդկային կերպարան եւ ոչ հասակներումը մարդկութեան ձեւ։ Այդ բաւական չերեւեցաւ անողորմ գազանին, այլ տեսանելով, թէ իւր անօգնական զոհերը ոչինչ են համարում տանջանքը, հրամայեց այրել նոցա, բայց ոչ միանգամայն, այլ սակաւ սակաւ եւ այդպէս նոքա ամենեքեան ստացան մարտի-

րոսական պսակը : Գնաց այն տեղից ոստիկանը Սիւնեաց աշխարհ եւ սփռեց իւր սապատակ զօրքը այդ աշխարհի զանազան գաւառներում. հրամայելով, որ ամենայն տեղ քաղաքները աւերեն եւ բնակիչներին սպանեն՝ միւս աշխարհների նման, իսկ իշխաններին բռնեն, մանաւանդ Վասակին եւ նորա եղբօրը Աշոտին : Սիւնեաց աշխարհի կոտորածը եթէ աւելի չըլինէր, պակաս չէր ամենեւին միւս աշխարհների հաւասարութեամբ : Նորա բնակիչները սկսան փախչել այլ եւ այլ աշխարհ. իսկ Վասակ, որ փոքր ինչ յապաղել էր, պաշարուեցաւ Բուղայի զօրքից. յետոյ մին հնարքով ազատուեցաւ եւ սկսաւ փախչել. Թըշնամիները պնդեցան նորա քամակից եւ նա տեսանելով, թէ ո՛չ փախչելու հնար կայ եւ ո՛չ թագչելու, յետ դարձաւ, հանեց իւր սուրը եւ վարազի նման յարձակուեցաւ միայնակ թշնամիների վերայ, կոտորեց ամենին ով կար նորա առաջումը եւ այդպէս ճանապարհ բացեց իւր համար, հասաւ նոցա զօրավարին, ձիու վերայից ցած ձգեց, եւ վազելով ընկած դիականց վերայ, անց կեցաւ, գնաց արեւելից կողմը Գարդմանաց երկիրը (1), դիմեց նորա իշխանին, որ սկիզբը ընդունեց պատուով, իսկ յետոյ դաւաճանութեամբ կապեց այդ արիաքաջ մարդուն եւ ուղարկեց Բուղայի մօտ, յուսալով պատիւ եւ օգուտ ստանալ նորանից, թէպէտ եւ շատ սխալուեցաւ իւր հաշուումը :

Այդ միջոց՝ ժամանակի կաթուղիկոսը Յովհաննէս շրջումէր Հայաստանի զանազան գաւառներում՝ տառապուած ժողովրդին մխիթարելով եւ քաջալերելով. իսկ հանգստութեան տեղը Գեղարքունեաց մէջ
854. էր Մաքենոցաց վանքումը (2), ուր եւ հիւանդացաւ
սրտի նեղութիւնից եւ մեռաւ : Սմբատ Բագրատու-

---

(1) Գարդման՝ Ուտի աշխարհի գաւառներից մինն է :

(2) Մաքենոց կամ Մաքենիս հռչակաւոր մենարան էր Գեղարքունի գաւառումը՝ Գառնոյ մօտ :

նին, որ շտապումէր Բուղայի մօտ՝ նորանից ստիպ-
մամբ հրաւիրուած լինելու պատճառով, առաջար-
կեց եպիսկոպոսներին ժողով գումարել Շիրակաւան
քաղաքումը, որ անկասկած տեղ էր նոր կաթուղի-
կոս ընտրելու համար, եւ ժողովը ընտրեց Զաքարիա-
յին, որին մի եւ նոյն օրումը ձեռնադրեցին, սար- 855.
կաւագ, քահանայ, եպիսկոպոս եւ կաթուղիկոս՝ ժա-
մանակի կարճութեան պատճառով։ Սորանից յետ
Սմբատ գնաց Բուղայի մօտ, որ ինչպէս տեղեկացաւ
Սմբատից, թէ Սարներսէհ իշխանը՝ Խաչենոյ տէրը,
թագնուել է նոյն Խաչենոյ ամրոցումը (1), գնաց
բռնեց նորան եւ սրով կոտորեց նորան եւ նորա բո-
լոր ազգատոհմը՝ հանդերձ ամենայն ընդդիմակաց-
ներով։ Այն տեղից գնաց Ուտի աշխարհ՝ Գարդմա-
նացոց գաւառը, բռնեց նորա իշխանին, որ եղել էր
Վասակի մատնիչը. այլ թէ որքան արիւնհեղութիւն
արեց այդ տեղ, Յովհաննէս կաթուղիկոսը չկարողա-
ցաւ գրել։ Այս բաներից յետ վեր առեց կապելոց
եւ տարաւ իւր հետ ամիրապետի մօտ Բաղտատ. իսկ
Հայաստանին վերակացու թողեց Դուլին քաղաքումը
մին պարսիկ Շեխի անունով։ Երբ Հայոց իշխանները Շեխի,
բերուեցան շղթայակապ ամիրապետի առաջը, նա 855—859.
հրամայեց կապել եւ Սմբատին. եւ ապա պահանջեց
ամենից ուրանալ քրիստոնէութիւնը եւ դառնալ հա-
գարացոց հաւատը, սպառնալով հակառակ դիպուա-
ծումը սաստիկ տանջանքով եւ չարաչար մահով կո-
րուսանել նոցա։ Նոցանից շատը՝ երկնչելով տանջան-
քից՝ թողեցին իսպառ քրիստոնէութիւնը. միւսները
արտաքուստ ուրացան Քրիստոսի կրօնը. մի միայն ե-
րեք անձինք մնացին անխախտ քրիստոնէական հա-
ւատումը, Ստեփաննոս Կոն, որ անհանդուրժելի տան-
ջանքով ընդունեց մահ Քրիստոսի անունի համար.
Գրիգոր Մամիկոնեան, որ հնարագիտութեամբ փա-

---

(1) Արցախ աշխարհումը։

խաւ բանտից Գաբեղենից գաւառը [1] եւ եօթն օրից մեռաւ այն տեղումը, որ կոչուումէր Գաղանածակք. եւ Սմբատ Բագրատունի, որ միշտ միօրինակ հաստատութեամբ հրաժարուումէր հագարացոց օրէնքը ընդունելուց։ Ամիրապետը իմանալով նորա անյողդողդ լինելը քրիստոնէութեան մէջ, հրամայեց դառըն տանջանքով կորուսանել նորան. եւ նա սկսաւ յիշել այն բոլոր իւր գործերը, որով օգնական էր լինում Բուղային նորա չարագործութիւնների մէջ. սկսաւ լալ եւ զղջալ Աստուծոյ առաջեւ բանտի եւ կապանքի մէջ, եւ այդպիսի զղջման ժամանակը, Աստուծոյ աղօթելով, աւանդեց իւր հոգին, եւ այդպատճառավ կոչուեցաւ Ս մ բ ա տ Խ ո ս տ ո վ ա ն ո ղ, որի Աշոտ որդուց սկիզբն առեց Բագրատունեաց թագաւորութիւնը։

---

[1] Արարատեան աշխարհումը։

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ.

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԳԱԳԻԿԻ ՄԱՀԸ:

ԳԼՈՒԽ Ա.

Նախընթաց պարբերութեան մէջ յիշած զանազան հարուածներից յետ, Հայաստանը մնաց իբրեւ անմարդաբնակ տեղի. շատ սակաւ էին մնացել իշխաններ եւ զօրաւոր մարդիկ. նոցա մէջ հազուագիւտ ծաղկի նման փայլումէր Սմբատ Խոստովանողի որդին Աշոտ, բարեպաշտ, իմաստուն եւ քաջ, ամենայն մարդկային կատարելութիւններով զարդարուած: Սա՛ իւր հօր Բաղտատ գերի վարուելուց յետ, սկսաւ հոգ եւ ջանք դնել Բագրատունեաց իշխանութիւնը (1) հաստատելու համար. եւ ունէր միջոցներ այդ նպատակին հասանելու, որովհետեւ կատարումէր Հայոց սպարապետութեան պաշտօն եւ Հագարացոց կողմից գեռեւս չէր եկած ոստիկան: Շատ մեծ ցաւ պատճառեց Աշոտի սրտին համբաւը, թէ Հայոց նախարարները ուրացել են Քրիստոսի հաւատը, այդ տրտմութեան մէջ կարողանում էր մի միայն մխիթարուել այն մտքով, թէ իւր հայրը, Սմբատ Խոստովանող, վախճանել էր քրիստոնէական սուրբ հաւատի խոստովանութեամբ: Սկսաւ նա այնուհետեւ

(1) Բագրատունեաց թագաւորութիւնը ստացաւ իւր անունը Աշոտ Բագրատունուց, որ եղաւ այդ իշխանութեան առաջին թագաւորը: Բագրատունեաց ցեղը սերուեցաւ Աբրահամից. նորա առաջին տոհմագլուխը եղաւ Շամբատ, որ՛ երբ Նաբուգոդոնոսոր առեց Երուսաղէմը, եկաւ Հայաստան Հայկեան Բ. Հայոց թագաւորի հետ եւ դարձաւ մեծ ազգ:

*

կատարել տալու Սուքիասի պաշտօն, քան թէ իշ-
խանի. ամենեցուն յորդորումէր հաստատուն մնալ
իւրեանց հաւատումը, խոհեմ եւ առաքինի լինել
իւրեանց գործերի եւ վարքի մէջ: Այսպիսի բարե-
լաւութեան լուրը հասաւ Մաքսամ ամիրապետի ա-
կանջը եւ քաղցրացրեց նորա սիրտը բոլոր Հայոց վե-
րայ: Կամելով մին բարձր պատիւ ընծայել Աշոտին,
ուղարկեց նա Հայաստան Ալի Արմէնի անունով ոստի-
կանը (1) եւ հրամայեց նորան կացուցանել Աշոտին իշ-
859. խանաց իշխան. այդ եղաւ 859 թուականին, Զաքա-
րիա կաթուղիկոսի ժամանակը: Այնուհետեւ ամիրա-
պետները թէպէտ երբեմն երբեմն ուղարկումէին Հա-
յաստան ոստիկաններ, բայց նոքա չէին ունենում
արդէն իւրեանց առաջին իշխանութիւնը, այլ լի-
նումէին լոկ վերակացու կամ տեսուչ:

Սկսաւ Աշոտ թագաւորավայել իշխանութեամբ
կառավարել մեր աշխարհը. զօրք ժողովեց, կարգ
եւ կանոն դրեց նոցա մէջ. իւր եղբօրը Աբասին նը-
շանակեց սպարապետ եւ ինքը լինումէր երբեմն Անի
քաղաքումը եւ երբեմն Շիրակում. Նորա իշխանու-
թեան առաջին տարիներումը, Հայոց նախարարնե-
րը, որոց գերի էր վարել Բուղայ եւ որ ուրացել էին
արտաքուստ իւրեանց քրիստոնէութիւնը, խնդրեցին
եւ ստացան նոր ամիրապետից հրաման, որ դառնան
իւրեանց աշխարհը. զղջացան իւրեանց ուրացու-
թեան վերայ եւ եղան կրկին հաստատուն եւ անխախտ
քրիստոնեայ: Ուրախ էր եւ Աշոտ նոցա դարձմանը,
ուրախ էր եւ բոլոր Հայաստան, մինչեւ ամենեքեան
մոռացել էին իւրեանց նախկին տառապանքը եւ չէին
յիշում ամենեւին, թէ Հայաստանը կրել է մին ժա-
մանակ թշուառութիւն. եւ այդ մեր աշխարհի ու-
րախութիւնը եւ վայելչութիւնը տեւեց Աշոտի բո-
լոր իշխանութեան օրերը:

---

(1) Այդ Ալի Արմէնը Հայոց ազգիցն էր դարձած:

Հայոց նախարարները եւ Գէորգ կաթուղիկոսը (Զաքարիայի յաջորդը) տեսանելով Աշոտի իմաստուն կառավարութիւնը, խորհուրդ արեցին թագաւորեցուցանել նորան ազգի վերայ. վասնորոյ իւրեանց ընդհանուր կամքը յայտնեցին ամիրապետին եւ խնդրեցին կատարել այդ նոցա ցանկութիւնը, խոստանալով հաստատուն մնալ միշտ հպատակութեան մէջ եւ անպակաս տանել արքունի հարկը: Ամիրապետը յօժարութեամբ ընդունեց նախարարների խնդիրը, մանաւանդ որ ինքն եւս լսել էր վաղուց Աշոտի արժանաւորութիւնը եւ միշտ ցանկանումէր առաւել եւ առաւել մեծացնել նորան. վասնորոյ ուղարկեց նորա համար արքայական թագ Ցիսէ ոստիկանի ձեռով Անի քաղաք, ուր Գէորգ կաթուղիկոսը տարաւ նորան մեծ հանդէսով եկեղեցի եւ օծեց թագաւոր Հայոց, 885 թուականին: Յունաց կայսրը Վասիլ, լսելով այդ անցքը, շատ ուրախացաւ, համարելով Աշոտ Ա. 885—890.
Աշոտին այդպիսի աստիճանի կատարելապէս արժանաւոր. եւ ինքն եւս ուղարկեց նորա համար արքայական թագ եւ ունէր յառաջադրութիւն եւս առաւել մեծարանք ցոյց տալ նորան, բայց մահը խափանեց նորա դիտաւորութիւնը. վասնորոյ նորա տեղ նորա որդին եւ յաջորդը Լեւոն իմաստասէր իւր առանձին սէրը եւ պատիւը բացատրեց Աշոտին անձամբ, երբ Աշոտ՝ իւր աշխարհը ուղղելուց եւ բարեկարգելուց յետ ճանապարհորդեց Փոքր Հայաստան, Սեբաստիա եւ յետոյ Կոստանդնուպօլիս, ուր կայսրը՝ պատերազմ ունենալով այն միջոց Բուլղարների հետ՝ խնդրեց Աշոտին լինել իւրեան նիզակակից եւ նա մեծ յօժարութեամբ թողեց այն տեղ Մեղրիկ իշխանին Հայոց զօրքի հետ եւ ինքը դարձաւ իւր աշխարհը: Ճանապարհումը, Շիրակ գաւառի մօտ, հիւանդացաւ եւ վախճանեցաւ. նորա մարմինը մեծահանդէս յուղարկաւորութեամբ տարան թագաւորանիստ քաղաքը Բագարան:

Աշոտ թագաւորի մահի համբաւը ինչպէս լսաւ

նորա որդին Սմբատ, որ այն ժամանակ Գուգարաց
աշխարհումն էր, եկաւ շուտով Երազգաւորս (Շիրա-
Սմբատ Ա. կաւան) եւ այն տեղ օծուեցաւ թագաւոր Գէորգ Կա-
890—914. թուղիկոսից՝ Հայոց իշխանների եւ Ատրներսէհ Վրաց
իշխանի ներկայութեամբ: Նոյն ժամանակ Սմբատի
հօրեղբայրը Աբաս, որ իւր եղբօր Աշոտի մահից յետ ու-
նէր դիտաւորութիւն իւրեան գրաւելու արքայական
իշխանութիւնը, հռչակեց իւրեան թագաւոր Հայոց:
Այդ հանգամանքից ծագուեցան մեծամեծ խռովու-
թիւններ եւ արիւնհեղութիւն. վասն զի բոլոր ազգը
բաժանուեցաւ երկու բաժին՝ մինը Սմբատի կողմը,
միւսը Աբասի. երկու կողմն եւս զօրք ժողովեցին,
քանիցս անգամ սաստիկ պատերազմեցին միմեանց
հետ, աւերեցին քաղաքներ. եւ թէպէտ Գէորգ կա-
թուղիկոսը ամենայն հնարքով հետեւում էր նոցա խա-
ղաղացնել եւ հաշտեցնել, բայց Աբասի խորամանկու-
թեամբ եւ խաբէութեամբ օր ըստ օրէ աւելանում էր
եւ զօրանում էր երկպառակութիւնը. մինչեւ որ Սըմ-
բատ վերջապէս կազմեց մեծ զօրք՝ թէ բոլոր իւր
տէրութեան մէջ հաւաքած եւ թէ այլ ազգերից
վարձած եւ պաշարեց Կարուց բերդը (1), ուր ամրա-
ցել էր Աբաս, որ տեսանելով, թէ չկայ արդէն ոչինչ
փրկութեան հնար, պատգամաւորի միջնորդութեամբ
հաշտութիւն խօսեց Սմբատի հետ եւ հնազանդուե-
ցաւ նորան: Սմբատ իբրեւ նշան իւր սրտի գոհու-
թեանը՝ Աբասին յաղթելու համար, հրամայեց շի-
նել Երազգաւորս քաղաքումը եկեղեցի Ամենափրկչի
անունով եւ նոյն Երազգաւորս քաղաքը նշանակեց իւր
թագաւորանիստ բնակութեան տեղը: Սորանից յետ
Սմբատ ուղարկեց դեսպան ամիրապետի եւ Լեւոն
Յունաց կայսեր մօտ. առաջինից խնդրեց իւր թա-
գաւորութեան հաստատութիւն եւ ստացաւ նորանից
Ափշին պարսիկ ամիրայի ձեռով արքայական թագ,

(1) Կարուց՝ ամուր դղեակ էր Վանանդ գաւառումը Արարատեան աշխարհի:

որ Ամենափրկչի Եկեղեցու մէջ օրհնեց կաթուղիկոսը եւ մեծ հանդէսով պսակեց Սմբատին. երկրորդին առաջարկեց բարեկամական դաշն հաստատել եւ ըստացաւ լիովին իւր ցանկութեան կատարումն. կայսրը ուրախութեամբ ընդունեց նորա առաջարկութիւնը եւ բարեկամական թղթով հաստատեց նորա հետ խաղաղութեան եւ սիրոյ դաշն, որպէս եւ իւր հայրը Վասիլ արարել էր Սմբատի հօր առաջին Աշոտի հետ:

ԳԼՈՒԽ Բ.

Ատրպատական աշխարհի ոստիկանը Աֆշին, որ բերեց ամիրապետից արքայական թագը Սմբատի համար, լսելով Սմբատի բարեյաջողութիւնը եւ Յունաց կայսեր հետ բարեկամութիւնը, շատ տխրումէր եւ կասկածումէր, թէ գուցէ Սմբատ առաւել ճոխանալով եւ զօրանալով վնաս հասուցանէ նորան կայսեր օգնականութեամբ: Այդ կասկածանքով այնքան մտատանջ էր լինում նա, մինչեւ հարկաւոր համարեց գալ զօրքով Հայաստան, աւերել բոլոր երկիրը եւ եթէ կարողանայ՝ բռնել եւս Սմբատին: Սմբատ երեսուն հազար ընտիր զօրքով դուրս եկաւ նորա առաջը եւ դեռեւս նորան չհասած, ուղարկեց դեսպան նորա մօտ եւ հարցրեց, թէ ինչ պատճառով ես գամ պատերազմ իմ վերայ. ո՞չ ապաքէն իմ բարեկամութիւնս կայսեր հետ ձեր օգուտն է, որովհետեւ Յունաց հետ բարեկամ լինելով՝ ես կարող եմ ձեր պիտոյքը անպակաս լցուցանել: Այդպիսի հեշտալուր խօսքերով եւ մանաւանդ իւր զօրքի շատութեամբ ստիպեց Աֆշինին խաղաղութիւն հաստատել եւ հեռանալ: Եւ թէպէտ հեռացաւ նա, բայց նախանձը եւ երկիւղը չէին տամ նորան հանգստութիւն. Սմբատի զօրութիւնը եւ յաջողութիւնը, որ տարածել էր իւր իշխանութիւնը ո՛չ միայն բոլոր

Հայաստան, այլ եւ օտար ազգերի վերայ, զոր օրինակ Վրաց եւ Աղուանից, ծակումէին Ափշինի աչքը, մինչեւ վերջապէս դրդեցին նորան կրկին անգամ գնալ պատերազմով Սմբատի վերայ եւ նուաճել նորան: Բայց յառաջ քան իւր գնալը, սուտ համբաւ հանեց, թէ հրաման ունի ամիրապետից պատերազմել այլ երկրներում եւ ոչ թէ Հայաստան, եւ այդպէս կարողացաւ խաբել Սմբատին, որ հաւատալով այն սուտ համբաւին, անհոգ նստած էր՝ երբ յանկարծ եկաւ Ափշին իւր զօրքով Նախիջեւան: Այժմ միայն իմացաւ Սմբատ Ափշինի նենգութիւնը, բայց յետի էր. չկարողացաւ զօրք ժողովել եւ դուրս գալ նորա առաջը, որպէս առաջին անգամը. վասնորոյ անճարացած գնաց ամրացաւ անառիկ տեղերում եւ հրովարտակ ուղարկեց ամենայն տեղ իւր տէրութեան մէջ, որ ամենքեան հաւաքուեն իւր մօտ զօրաժողով լինելու: Իսկ Գէորգ կաթուղիկոսը այդ միջոց գնաց Ափշինի առաջը եւ խնդրեց նորան, որ թողնէ իւր խորհուրդը եւ չներկէ արիւնով Հայաստանը: Ափշին իբր համաձայնելով կատարել կաթուղիկոսի խնդիրը, մեծ պատիւ ցոյց տուեց նորան արտաքուստ եւ դաւաճանութեամբ ուղարկեց նորան Սմբատի մօտ, որ հրաւիրէ նորան իւր մօտ: Կաթուղիկոսը չիմանալով նորա միտքը, գնաց Սմբատ թագաւորի մօտ եւ յորդորեց խաղաղութեամբ վերջացնել գործը: Բայց Սմբատ, հասկանալով պարսիկ ոստիկանի նենգութիւնը յանձն չառեց գնալ, եւ կաթուղիկոսը միամտութեամբ դարձաւ Ափշինի մօտ, որ տեսանելով, թէ չկարողացաւ խաբել Սմբատին, սրտի նեղութիւնից հրամայեց կապել կաթուղիկոսը երկաթի շղթաներով, որպէս թէ նորա խորհրդով չէ եկել Սմբատ. եւ յետոյ գնաց զօրքով Դուլս գիւղը ([1]), որ

([1]) Համարուումն Արագածոտնի մօտ. տես Տեղագրութիւն հին Հայաստանեայց, եր. 517.

այն տեղից պատերազմէ Սմբատի հետ: Երեք օրից յետ սկսաւ պատերազմը, ուր Հայք մեծ քաջութիւններ գործեցին. թշնամիներից շատին սպանեցին, շատին փախուստ դարձրեցին եւ այդպիսի հարուածներով հարկադրեցին Ափշինին հաշտութիւն խնդրել Սմբատից եւ աղաչել, որ առաջին ժամանակների պէս նորա ձեռով հասուցանէ ամիրապետին աշխարհի հարկը: Հեշտութեամբ համաձայնեց խաղաղասէր Սմբատը ոստիկանի առաջարկութիւններին, կատարեց բոլոր նորա խնդիրը եւ Ափշին բաւականութեամբ դարձաւ իւր աշխարհը. բայց Գէորգ կաթողիկոսին տարաւ իւր հետ շղթայակապ, եւ յետոյ պահանջումէր նորանից ոսկի եւ արծաթ՝ խոստանալով արձակել նորան այդ պայմանով. կաթողիկոսը յայտնեց այդ մասին Յոհան վարդապետին (որ է Յովհաննէս պատմաբան եւ յետոյ կաթողիկոս), եւ նա Սմբատի հրամանով ժողովեց Հայոց նախարարներից եւ իշխաններից ամիրապետի պահանջած դրամը եւ ուղարկեց ամիրապետին, որ այդ կաշառքով արձակեց Գէորգ կաթողիկոսին Հայաստան:

Այդ միջոց փոքր ինչ խաղաղ էր Հայաստանը եւ ուրախ. բայց շուտով վրդովեցին նորան Աշոտ Արծրունի, Աշոտ Սիսական եւ Գադիկ: Աշոտ Արծրունին, Վասպուրական աշխարհի իշխանը եւ Սմբատ թագաւորի քեռորդին, նախանձուելով իւր քեռու պատուին եւ իշխանութեանը, միտք արեց քակել իւր եւ Սմբատի մէջ եղած սիրոյ եւ բարեկամութեան դաշն: Այս դիտաւորութեամբ գնաց նա Ափշին ոստիկանի մօտ, բերեց նորան մեծ ընծաներ եւ խոստացաւ հնազանդութիւն, յուսալով մեծ պատուի՝ նաեւ թագաւորութեան հասանել. բայց Ափշին ոստիկանը միայն մեծարեց նորան սիրով եւ պատուով, եւ ոչինչ աւելի, այնպէս, որ Աշոտ Արծրունին զրկուեցաւ իւր մօրեղբօր բարեկամութիւնից եւ չհասաւ այն պատուին, որին սպասումէր ոստիկանից. վասնորոյ եւ դառնացաւ սրտով: Իսկ Սմբատ թագաւորը յոյս ու-

նէր, որ Աշոտ դարձ գայ. բայց նա ընտրեց մնալ առանց փառքի եւ շահի, միայն թէ չլինի Սմբատի իշխանութեան ներքոյ, եւ կորցրեց եւս ինչ որ ունէր. որովհետեւ նորա աները՝ Գագիկ Վասպուրական, զօրեղ եւ երեւելի մարդ, յանկարծ բռնեց նորան, կապեց եւ դրեց բանտ. գրաւեց նորա իշխանութիւնը եւ տիրապետեց Վասպուրական աշխարհը Սմբատ թագաւորի իշխանութեան ներքոյ, որ այդպատճառով լուռ մնաց Գագիկի առաջեւ: Նորան նըման եւ Աշոտ Սխտականը ապստամբուեցաւ Սմբատից եւ գնաց ընծաներով Աֆշինի մօտ, բայց նոյնպէս վերադարձաւ ունայնաձեռն եւ անհաս իւր նպատակին. սակայն որովհետեւ բարեպաշտ մարդ էր սա, շուտով զղջացաւ, դիմեց թագաւորին եւ խնդրեց նորանից թողութիւն, եւ թագաւորը սիրով ընդունեց նորա դարձը եւ վարուում էր նորա հետ իբրեւ իւր որդու հետ:

Այդ ժամանակներում Միջագետքի ոստիկանը Ահմատ ապստամբուեցաւ ամիրապետից եւ մեծ զօրքի բազմութեամբ եկաւ Աղձնեաց աշխարհ եւ նուաճեց բոլոր բնակիչներին. յետոյ գնաց Տարօնի սահմանները, կռուեց նորա իշխանի հետ, որ էր Գուրգէն՝ Դաւիթ Բագրատունու եղբօրորդին եւ սպանեց նորան. բայց երբ հետեւում էր տիրել Տարօնի գաւառներին, Դաւթի որդին Վաչան, որ Սմբատ թագաւորի Շապուհ եղբօր փեսան էր, քաջութեամբ ընդդիմացաւ Ահմատին եւ յայտնեց Սմբատին, որ գայ հասնէ իւրեան օգնութիւն: Սմբատ գումարեց ընտիր զօրք եւ գնաց հասաւ Տարօնի լերին մօտ՝ Հայոց նախարարներով հանդերձ եւ այն տեղ կանգնեց բանակով լերին արեւելեան կողմումը: Այդ միջոց դուրս եկաւ Աշոտ Արծրունու աները Գագիկ Վասպուրական, նենգամիտ եւ ուխտադրուժ անձն, որ մոռացաւ ամենայն օրէնք եւ խղճմտանք. ծածուկ դաշնակից եղաւ Ահմատի հետ եւ խոստացաւ մատնել նենգութեամբ Սմբատին եւ նորա զօրքը, յուսալով մեծ իշ-

խանութեան կամ թագաւորութեան եւս հասանել ։ Տեղեակ գոլով այն կողմերին եւ ճանապարհներին, մտերիմ մարդու նման խորհուրդ տուեց Սմբատին գնալ այն տեղից հարաւակողմը՝ Հողս գիւղաքաղաքի մօտ [1], ասելով, թէ այն յարմարաւոր տեղ է պատերազմելու համար. եւ Սմբատ, որ շատ գործերի մէջ փորձել էր նորա հաւատարմութիւնը եւ ոչինչ չար կարծիք չունէր նորա վերայ, հաւատաց նորա խօսքին եւ վեր առեց նորան ճանապարհի առաջնորդ ։ Իսկ Գագիկ, որ ձեռնհաս եղաւ հաւանեցնել Սմբատին իւր դաւաճանող խորհուրդը, յայտնեց Ահմատին ծածուկ, թէ այս ինչ ժամ գայ Թուղխ [2] գիւղը, որովհետեւ միտք ունէր այն տեղ տանել Հայոց զօրքը ։ Միւս օրը առաւօտեան ժամանակ տարեց Սըմբատի զօրքը մացառախիտ եւ ապառաժուտ տեղեր, ուր չկար ոչ ճանապարհի անցք եւ ոչ ջուր. վասնորոյ եւ զօրքը կրելով մեծամեծ դժուարութիւններ՝ բոլորովին ակարացան ։ Այդ տեղ, երբ թշնամիները յարձակուեցան նոցա վերայ, Սմբատ իւր զօրքով սաստիկ կոտորած արեց, մինչեւ զարմացան ինքեանք թշնամիները նորա զօրութեան վերայ եւ սկսան յետ դառնալ ։ Դժրամիտ Գագիկը՝ տեսանելով այդ անակնունելի քաջութիւնը, հնարեց նոր խորամանկութիւն, որ կարողանայ քակտել Հայոց զօրքը. սկսաւ բարձրաձայն հրամայել զօրքին, որ յետ դառնան եւ փախչեն, ասելով, թէ անհնար է թշնամիների հետ պատերազմել, որովհետեւ նոր զօրքի անհամար բազմութիւն գամէ՝ որպէս թէ նոցա քամակից. եւ որովհետեւ Հայոց զօրքը եւ նախարարները չգիտէին նորա անօրէն խորհուրդը եւ կարծումէին, թէ ճշմարիտ է նորա խօսքը, մանաւանդ որ ճանաչումէին

---

(1) Հողս գիւղաքաղաքը Բզնունեաց կողմերումն է՝ Տարօնի արեւելեան կողմից ։

(2) Թուղխ կամ Թուխ եւ կամ Թուղք՝ Աղձնեաց աշխարհի սահմանումն է, Թուխ գետի մօտ ։

նորան իբրեւ տեղեակ թշնամիների հնարքներին, վանորոյ թողան իւրեանց սկզբնաւորած յաղթութիւնը եւ փախան. Ահմատ դարձաւ իւր տեղը: Շուտ ստացաւ Գագիկ իւր արժանաւոր պատիժը. Աշոտ Արծրունին, ինչպէս իմացաւ նորա նենգուպատիր խորհուրդը, մին քանի անձանց հետ միաբանուած Ամատունեաց ցեղից, սպանեց նորան այն ուրախութեան հանդէսումը, որը որ նա կատարումէր Հայոց զօրքը յաղթութեամբ ցրուելու մասին: Գագիկ Վասպուրականի սպանութիւնից յետ, նորա փեսան Աշոտ Արծրունին, որ բանտումն էր, ազատուեցաւ կապանքից եւ ստացաւ Վասպուրական աշխարհի իշխանութիւնը իւր երկու եղբարց հետ՝ Գագիկի եւ Գուրգէնի, որ նշանաւոր են մեր պատմութեան մէջ այնչափ նենգամիտ չարագործութիւններով, որ մինչեւ կարելի է ասել, թէ Հայաստանի յետագայ տարաբաղդ վիճակը սկզբնաւորեցաւ սոցանից, որպէս կըտեսանենք յետոյ:

Ափշին ոստիկանը Ատրպատական աշխարհի, որ միշտ եւ անդադար սպասումէր պատեհ ժամի՝ Սըմբատի տէրութիւնը նուաճելու համար, ինչպէս լսաւ Հայոց զօրքի փախուստը եւ նախարարների դժրողութիւնը, յարմար ժամանակ համարեց կատարել այժմ իւր սրտի փափագը. ժողովեց բազմաթիւ զօրք եւ դիմեց Հայաստան սաստիկ հեղեղի նման, կամելով իբր թէ կլանել բոլոր Հայոց աշխարհը եւ թափել իւր բարկութիւնը եւ նախանձը Սմբատի վերայ: Յառաջագոյն եկաւ Վանանդ գաւառի մօտ եւ այն տեղ սկսաւ հետամուտ լինել Սմբատին. Սմբատ տեսանելով թէ Հայոց նախարարները չեն միաբանուում իւր հետ եւ զօրքի մեծ մասը ցրուած է, ուղարկեց իւր եւ իւր Մուշեղ որդու կնոջը, նոյնպէս մին քանի իշխանների տիկնանցը՝ արքունի գանձով հանդերձ Կարուց անառիկ ամրոցը եւ այն ամրոցին պահապան նշանակեց իւր արքունի տան հրամանատարին, որ կոչուումէր Հասան, եւ ինքը գնաց ամրացաւ Տայոց

աշխարհի մին բերդումը։ Ափշին տեսանելով, թէ չէ կարողանում ձեռք բերել թագաւորին, գնաց պաշարեց Կարուց ամրոցը, ուր Հասան նկատելով, թէ չկայ փրկութիւն պաշարուածներին, դեսպանի միջնորդութեամբ խոստացաւ Ափշինին տալ ամրոցը, միայն թէ նա երդման թուղթ տայ ոչինչ վնաս կամ մահ չհասուցանել պաշարուածներին. եւ երբոր Ափշին գրեց իւր երդումն, Հասան բացեց բերդի դուռը եւ Ափշին իւր զօրքով մտաւ ներս՝ հրամայելով իւր զօրքին ոչ ումն վնաս չտալ. Թագուհուն եւ այլ իշխանուհեաց պահեց իւր մօտ մեծ պատուով, իսկ ոմանց, որոց մէջ էր եւ Հասան, թոյլ տուեց գնալ իւրեանց թագաւորի մօտ. բայց ամրոցի բոլոր գանձը կողոպտեց եւ տարաւ իւր հետ Դուին։ Սմբատ ուղարկեց նորա մօտ դեսպան եւ յիշեց, թէ որպէս ինքը գթութեամբ վարուեցաւ նորա հետ երկու անգամ. իսկ Ափշին՝ ցուցանելով իւրեան Սմբատին ամենայն գործումը մեղապարտ, պահանջեց նորանից պատանդ նորա երէց որդուն Աշոտին, նորա Սահակ եղբօրորդուն Սմբատին եւ կրտսեր եղբօր Շապուհի դստերը կնութեան։ Այդ պահանջմունքը թէպէտ շատ անհաճոյ եւ ապօրինի երեւեցան Սմբատին, բայց տեսանելով, թէ նախարարները միաբան չեն ոչ իւր հետ եւ ոչ իւրեանց մէջ, եւ չեն կամենում ձեռնատու լինել նորան թշնամիներին ընդդէմ. հարկադրուած կատարեց Ափշինի անտեղի պահանջմունքը, որ այն պատանդները առացած՝ գնաց, հեռացաւ իւր աշխարհը։

ԳԼՈՒԽ Գ.

902 Թուականում կարգուեցաւ Հագարացոց ամիրապետ Մաթէզաթ, որ Աֆշինի մահից յետ նշանակեց ոստիկան Ատրպատական աշխարհումը նորա Իւսուֆ կամ Յուսուփ եղբօրը: Յուսուփ շատ քաղցրաբարոյ մարդ էր արտաքուստ, բայց ներքուստ զրկուած էր բոլորովին մարդասիրական զգացմունքներից: Երբոր Սմբատ թագաւորը տեղեկացաւ նորա իսկական բնաւորութեանը, հաստատ դրեց մտքումը չունենալ ամենեւին նորա հետ ոչ սիրոյ եւ ոչ հակառակութեան մին գործ, մանաւանդ որ փորձել էր արդէն նորա Աֆշին եղբօրը եւ գտել էր նորա բարեկամութեան մէջ մի միայն դաւաճանութիւն. վասնորոյ նախարարների խորհրդակցութեամբ, ուղարկեց դեսպան ամիրապետի մօտ առանձին թղթով եւ երեւելի պարգեւներով եւ խնդրեց նորանից, որ նա անմիջապէս ինքը իշխէ իւր վերայ եւ ոչ թէ ոստիկանների ձեռով: Թէպէտ ոստիկանները արդէն չէին իշխում այդ ժամանակ Հայաստանի վերայ, սակայն աշխարհի հարկը նոքա էին առանում եւ ապա հասուցանում էին ամիրապետին, եւ այդ պատճառով շատ ժամանակ ամիրապետի կամքին ընդդէմ մեծ չարութիւններ եւ վնասներ էին գործում Հայոց հետ, իբր իշխանութիւն ունենալով նոցա վերայ: Ամիրապետը կատարեց Սմբատի խնդիրը եւ ուղարկեց եւս նորա համար արքայական թագ, մեծագին սուր, գեղեցիկ երիվարներ եւ այլ զանազան ընծաներ: Այդ բանով շատ ուրախացաւ Սմբատ եւ սկսաւ մեծ հոգատարութեամբ եւ խնամքով կառավարել իւր աշխարհը: Իսկ Յուսուփ ինչպէս լսաւ, թէ Սմբատ ազատել է իւրեան ոստիկանի իշխանութիւնից, շատ դառնացաւ եւ ամենայն ջանացողութեամբ հետեւումէր կրկին դարձուցանել Հայոց աշխարհը իւր վերատեսչու-

թեան ներքոյ, որպէս էր իւր եղբօր Աշոտի ժամանակը։ Այս մասին առանձին գրով խնդրեց ամիրապետին. բայց երբ ամիրապետը չկատարեց նորա խնդիրը, այնուհետեւ սկսաւ կռուել Սմբատի հետ, զօրք ժողովեց, գնաց Փայտակարան, անց կեցաւ Ուտի աշխարհը եւ եկաւ մինչեւ Տաշրաց կողմերը (1)։ Սմբատ թագաւորը նոյնպէս հաւաքեց զօրք եւ գնաց Տաշրատափի կողմերը եւ սկսաւ պահպանել ճանապարհների անցքը։ Յուսուփ դիմեց Շիրակ գաւառ եւ այն տեղից Դուին քաղաք. նորան հետամուտ եղաւ Սմբատ, բայց չհասաւ, վասնորոյ եկաւ Արուճ (2) քաղաքագիւղը եւ այն տեղ կազմումէր իւր զօրքը։ Այդ միջոց Յուսուփ ոստիկանը ուղարկեց Սմբատի մօտ իւր քարտուղարներից մինին, ազգով Ասորի եւ քրիստոնեայ, եւ խնդրեց խաղաղութիւն հաստատել իւրեանց մէջ, ասելով՝ թէ արքունական հարկի հատուցման ձեւը թողնումէ նորա կամքին. այսինքն՝ Հայոց աշխարհի հարկը՝ եթէ Սմբատ նորա ձեռով կհասուցանէ ամիրապետին կամ ոչ՝ մի եւ նոյն է, միայն թէ սէր եւ միաբանութիւն հաստատուի նոցա մէջ եւ չլինի կասկածանք որ եւ իցէ ապագայ չարամտութեան մասին երկու կողմից։ Սմբատ համաձայնեց այդ առաջարկութեանը եւ յետոյ նոքա երկուսը երդմամբ հաստատեցին անքակտելի բարեկամութիւն իւրեանց մէջ, ընծայեցին միմեանց մեծագին պարգեւներ եւ Յուսուփ հեռացաւ Հայոց աշխարհից։

Սորանից յետ, Եգերացոց թագաւորը Կոստանդին, որ Ատրներսէհ Վրաց թագաւորի փեսան էր, ամբարտաւանացած դիմեց յանկարծ զօրքով Սմբատի տէրութեան սահմանները, Կովկասի լերին կողմերը եւ

---

(1) Տաշիրք կամ Տաշիր, որ նոյն է Տաշրատափ բառի հետ, Գուգարք աշխարհի գաւառներից մինն է։

(2) Արուճ աւանը Արարատեան աշխարհի Արագածոտն գաւառումըն է։

Գուգարաց աշխարհը, այն տեղից մինչեւ Ալանաց դուռը՝ (1) բոլոր տեղերը նուաճելու դիտաւորութեամբ: Նորա աները Ատրներսեհ թէպէտ եւ գրեց նորան, որ թողնէ իւր ընդունայն միտքը եւ արշաւանքը, բայց նա ականջ չդրեց ամենեւին. վասնորոյ մեր Սմբատ թագաւորը եւ Ատրներսեհ գնացին նորա վերայ զօրքով: Կոստանդին չկարողանալով ընդդիմանալ նոցա, խնդրեց Սմբատից հաշտութիւն, եւ սա ուղարկեց նորա մօտ Ատրներսեհին մին քանի նախարարների հետ խաղաղութիւն հաստատելու համար: Երբոր Կոստանդին եւ Ատրներսեհ միմեանց յանդիման եղան, Հայոց նախարարները Ատրներսեհի հրամանով, յանկարծ բռնեցին եւ կապեցին Կոստանդինին եւ ուղարկեցին Սմբատ թագաւորի մօտ, որ հըրամայեց տանել նորան Անի ամրոցը եւ այն տեղ պատուով եւ հանգստութեամբ պահել: Եգերացիք խռովեցան այդ մասին եւ ընտրեցին իւրեանց թագաւոր մին այլ անձն, որ առաւել չարաբարոյ եւ բռնաւոր էր, քան թէ Կոստանդին: Այդ պատճառով Սմբատ հրամայեց հանել Կոստանդինին ամրոցից եւ թոյլ տալ գնալ իւր աշխարհը առաջին արքայական պատուով, եւ այդ գործումը նորա միտքն այն էր, որ Եգերացոց նորընտիր թագաւորը չմնայ իւր աթոռումը եւ համանգամայն շնորհ ցոյց տայ իւր սրտակից բարեկամին Ատրներսեհին: Բայց այդ բարեկամութեան նշանը մեծ թշնամութիւն դարձաւ Սմբատի համար. որովհետեւ Ատրներսեհ կարծեց, թէ Սմբատ այն նպատակով է արձակել Կոստանդինին, որ նա գնայ իւր աշխարհը եւ յարուցանէ պատերազմ Ատրներսեհի հետ, մանաւանդ որ Սմբատ յառաջագոյն չէր յայտնել Ատրներսեհին, թէ ցանկա-

(1) Ալանաց դուռն էր կոչւում այն կիրճը, որ Հայաստանի հիւսիսակողմում է Ալանաց սահմաններում, ուր Կովկաս լերին բազուկը մերձենում է Կասպից ծովի եզրին: Այդ տեղ է Դարբանդ քաղաքը ծովի վերայ:

նումէ ազատել Կոստանդինին։ Սմբատ շատ զարմացաւ Ատրներսեհի անբաւականութեան վերայ, եւ թէպէտ ինքը ցոյց էր տամ նորան առաւել եւս սէր եւ բարեկամութիւն, քան թէ առաջ, բայց նա չէր թողնում իւր սրտի ոխը, որը որ յետոյ յայտնապէս ցոյց տուեց, որպէս կտեսանենք յետագայ անցքերում։

Յուսուփ ոստիկանը օրէ օր զօրանալով եւ փարթամանալով մոռացաւ իւր ամիրապետին եւ ապստամբուեցաւ նորանից։ Ամիրապետը հրամայեց մեծ զօրք ժողովել եւ գնալ նուաճել Յուսուփին. գրեց եւ մեր Սմբատ թագաւորին, որ նա եւս զօրաժողով լինի եւ դուրս գայ Յուսուփի վերայ, խոստանալով այն բոլոր տարին՝ ներկայ պատերազմի պատճառով հարկ չպահանջել Հայոց աշխարհից։ Սմբատ այդ հրամանը ստացած՝ ընկաւ մեծ տարակուսանքի մէջ, ամիրապետի կամքին ընդդիմանալ չէր կարող, իսկ Յուսուփի հետ պատերազմել համարումէր խղճմտանքի եւ նոր հաստատած դաշնադրութեանը հակառակ։ Բարեկամաբար գրեց Յուսուփին, որ խոնարհի ամիրապետին, որպէս առաջ, եւ չլինի պատճառ մեծամեծ խռովութիւնների եւ պատերազմի իսկ. այդ գրութեան պատասխանը դեռեւս չստացած, Սմբատ կրկնեց իւր թուղթը դեսպանի ձեռով եւ միւսանգամ խնդրեց նոյն բանի մասին։ Յուսուփ թէպէտ լաւ հասկանումէր, թէ Սմբատ ճըշմարիտ բարեկամութեամբ է խօսում այդ բանը, բայց նորա չարասէր հոգին զարթեցրեց նորա սըրտումը նոր ատելութիւն Սմբատին ընդդէմ. եւ որովհետեւ այդ միջոց երկիւղ ունէր ամիրապետից եւ համանգամայն Սմբատից, այդ պատճառով ծածուկ պահեց իւր նախանձը եւ քաղցրախօս նենգամտութեամբ գրեց նորան պատասխան եւ խոստացաւ կատարել նոցա ցանկութիւնը, որպէս եւ կատարեց իսկ ակամայ կամքով. որովհետեւ իմանալով, թէ չէ կարող ամենեւին ընդդիմանալ ամիրապետի զօրութեանը, խոնարհեց նորան, հաստատեց նորա հետ հաշտութիւն եւ մնաց կրկին իւր իշխանութեան մէջ։

Յետոյ սկսաւ գործ դնել իր միքենաները. գրգռեց ամիրապետին՝ Սմբատին ընդդէմ, մինչեւ նա խստութեամբ պահանջեց Սմբատից արքունի հարկը, որը որ ինքը իր հաճութեամբ թողացուցել էր այն տարի, եւ այն՝ կրկնակի. նոյն պահանջմունքը յայտնեց Սմբատին եւ Յուսուփ, սպառնալով մեծ չարիք հասուցանել նորան, եթէ ժամանակին չվճարէ արքունական պարտքը: Եւ Սմբատ, որովհետեւ նախարարների մէջ եղած անմիաբանութեան պատճառով չէր կարող հակառակել Յուսուփի խրոխտանքին, վասնորոյ միտք արեց շուտով արքունի հարկը վճարել: Այդ նպատակով հրաման գրեց բոլոր Հայաստան, որ ամենայն հարկատու անձն հինգերորդէ արջառը, ոչխարը եւ ձին, այսինքն՝ հնգից մինը տայ թագաւորին՝ ամիրապետին հասանելի հարկը լրացնելու համար: Հայոց նախարարները թէպէտ եւ կատարեցին թագաւորի հրամանը, բայց շատ ծանր համարելով այդ կարգադրութիւնը, բարկացան նորա վերայ: Նոցա մէջ պատուաւորը եւ երեւելին էր այդ ժամանակ Հասան Հաւնունի, որին մնացած իշխանները լսումէին ամենայն բանումը: Դժբաղդաբար գրեց սա իր մտքումը չարաչար խորհուրդ թագաւորին սպանանելու եւ կարողացաւ հաւանեցնել այդ միտքը տասնեւհինգ նախարարի՝ Հաւնունեաց եւ Վանանդացոց տոհմից, որ ընդունեցին այն սպանութեան խորհուրդը եւ յայտնեցին Վրաց թագաւորին Ատրներսէհին, խոստանալով միանգամայն, եթէ միաբանուի նա նոցա հետ այն յառաջադրութեան մէջ, նորան ընտրել Հայոց թագաւոր Սմբատի տեղ: Եւ որովհետեւ Ատրներսէհ, որպէս վերեւումը յիշեցինք, թշնամական ոխ ունէր Սմբատի հետ, վասնորոյ միաբանուեցաւ այն չարախոհ գլխաւորութեան հետ եւ ողջից առաւել չարագործ հանդիսացաւ իր բարերարին ընդդէմ: Ընտրեցին կատարող իւրեանց չարախոհութեանը Հասանի աներոջը Հաւնունուն, եւ մին քանի օգնականներով ուղարկեցին նորան Տաշրաց

սահմանները, ուր գտանուում էր այն ժամանակ Սըմբատ իւր զօրքով։ Գնաց Հաւնունին Թագաւորի մօտ եւ սպասում էր յարմարաւոր ժամանակի, որ հեշտութեամբ կատարէ իւր գործը. իսկ Ատրներսէհ եւ Հասան կարծելով, թէ Հաւնունին անտարակոյս կատարել է արդէն սպանութիւնը, վեր առեցին իւրեանց զօրքը, գնացին Շիրակ գաւառ եւ տուեցին Անի քաղաքը Ատրներսէհին, որ յետոյ գնաց Երազգաւորս, մօտ Թագաւորի ապարանը եւ ժամէ ժամ սպասում էր Սմբատի մահուան համբաւաբերներին։ Բայց այդ միջոց մին քանի զօրականներ Հասանի զօրքից, որ չէին կամենում ամենեւին այն սպանութիւնը, փախան ծածուկ նորա մօտից, գնացին Տաշիր եւ յայտնեցին Թագաւորին նախարարների միաբանութեան խորհուրդը Ատրներսէհի եւ Հասանի հետ։ Այդ բանը ինչպէս իմացաւ Հաւնունին, որ դեռեւս չէր գտել սպանութեան համար յաջող դիպուած, փախաւ եւ անհետ եղաւ։ Թագաւորը բազմաթիւ զօրքով դիմեց Շիրակ գաւառը. Ատրներսէհ եւ Հասան զարհուրեցին. կողոպտեցին Անի քաղաքը եւ փախան ամուր տեղեր Տայոց աշխարհ։ Այդ դաւաճանութեան համբաւը տարածուեցաւ բոլոր Հայաստան, եւ ամենայն մարդ, ամենայն կողմից եկաւ ինքնայօժար Սմբատի մօտ, որ առնու վրէժ թշնամիներից։ Սըմբատ Թագաւորը տեսանելով իւր հպատակների հաւատարմութիւնը, գնաց նոցա հետ Ատրներսէհի տէրութիւնը եւ ոտնակոխ արեց նորա երկիրը. եւ թէպէտ Ատրներսէհ դուրս եկաւ զօրքով Սմբատի առաջ, բայց Հայոց զօրքը զարմանալի քաջութեամբ անտանելի հարուածներ գործեց թշնամիների մէջ՝ այնպէս, որ Ատրներսէհ եւ նորա մեծամեծները տեսանելով թէ կորչումեն խոպառ սուրից եւ չկայ փախըստեան հնարք, սկսան աղաղակել եւ ողորմութիւն խնդրել. բայց Հայոց զօրքի բարկութիւնը չէր դադարում, այլ ընդհակառակն՝ առաւել սաստկանում էր, մինչեւ ինքը Սմբատ Թագաւորը սկսաւ բար-

*

հրաձայն աղաչել իւր զօրքին, որ նահանջեն իւրեանց սուրը եւ չկորուսանեն անմեղին յանցաւորի հետ, եւ յետոյ պահանջեց թշնամիներից տալ իւր ձեռքը ապստամբներին: Ատրներսեհ խոնարհեց, եկաւ ինքնին թագաւորի մօտ, խոստովանուեցաւ իւր ապերախտութիւնը եւ խնդրեց թողութիւն: Խաղաղասէր Սմբատը իսկոյն հաշտուեցաւ նորա հետ. առեց պատանդ նորա երեք որդուն եւ իւրեան Ատրներսեհին արձակեց. իսկ ապստամբուած նախարարներին կուրացրեց, եւ այդպէս կրկին հաստատեց իւր թագաւորութիւնը:

ԳԼՈՒԽ Դ.

Սմբատի իշխանութիւնը նոր ամրացել էր, Հայաստանը նոր անդորրացել էր, երբոր մին անակնունելի հանգամանքով թագաւորութիւնը թշուառացաւ եւ նորա հետ բոլոր Հայոց աշխարհը աւերուեցաւ, ամայացաւ եւ թշնամիներից ոտնակոխ եղաւ: Այդ թշուառութեան առիթը հանդիսացաւ Գագիկ Արծրունին, Սմբատ թագաւորի քեռորդին, առաջին Աշոտի թոռը, Վասպուրականի նախարարը եւ հաւատարիմ իշխանը թագաւորի առաջեւ: Սա խնդրեց թագաւորից տալ իւրեան Նախջեւան քաղաքը, որ հայրենի ժառանգութեամբ նորան էր պատշաճում: Սմբատ թագաւորը չկամեցաւ կատարել այդ խնդիրը, որովհետեւ իւր ձեռագրով շնորհել էր Նախջեւանը Սիսակեանց Սմբատին, որ նոյն իսկ Գագիկի քեռայրն էր. բայց ցանկալով եւս շահել եւ Գագիկի սիրտը, խոստացաւ տալ նորան մին այլ քաղաք, որը որ նա կկամենայ ինքը: Սակայն Գագիկ շատ նեղացաւ այդ բանի վերայ, սկսաւ դաւաճանութեամբ վարուել թագաւորի հետ եւ մոռացաւ ամենայն իրաւունք եւ խղճմտանք. գնաց մեծագին ընծաներով Յուսուփ ոստիկանի մօտ եւ ամբաստանութիւն արեց

իւր թագաւորի վերայ այն գրկանքի մասին. եւ որովհետեւ ոստիկանը սպասումէր այդպիսի մին առթի, ուրախութեամբ ընդունեց Գագիկին, տուեց նորան արքայական թագ եւ զգեստ, եւ կոչեց նորան Հայոց թագաւոր, կամենալով այդպէս Հայոց թագաւորութիւնը քակտել եւ Հայաստանը բաժանել երկու առանձին տէրութիւն, որ կարողանայ երկուքանչիւրը ջոկ ջոկ հեշտութեամբ նուաճել, թէպէտ եւ ծածուկ էր պահում այդ խորհուրդը՝ մինչեւ տեսանէ երկու թագաւորութեան մաքառումն միմեանց հետ։

Ընդունեց Գագիկ կեղծուպատիր թագաւորութիւնը եւ եկաւ Վասպուրական աշխարհ, ձգեց իւր կողմը շատ մարդիկ, նա եւս քանի քանի նախարարներ եւ նստաւ ինքնիշխան թագաւոր Սմբատին հակառակ: Այնուհետեւ ծագուեցան Հայաստան խռովութիւն եւ աղմուկ. երկու կողմը սկսան կռուել միմեանց հետ. բացուեցաւ ողբալի կորստեան դուռը, որ միայն Աստուծոյ զօրութիւնը կարող էր փակել՝ Յովհաննէս կաթուղիկոսի ասելով։

Երբ Գագիկի արարքը լսան Սմբատ եւ այն նախարարները, որ միաբան էին նորա հետ, ուրիշ հնարք չկարողացան գտանել, եթէ ոչ ուղարկել Յովհաննէս կաթուղիկոսին ընծաներով Յուսուփի մօտ, եւ խոստանալով կատարել բոլոր նորա կամեցողութիւնը, ամոքել այդ ձեւով նորա սիրտը. այլ ճանապարհով չկար Հայաստանի համար փրկութեան հնար, որովհետեւ նորա թշուառութիւնը բղխումէր ընտանեկան թշնամութիւնից։ Գնաց կաթուղիկոսը ոստիկանի մօտ եւ խոնարհ աղաչանքով խնդրեց հաշտութիւն Սմբատի հետ եւ խաղաղութիւն մեր աշխարհի համար։ Ոստիկանը յառաջագոյն պատուով ընդունեց կաթուղիկոսին եւ ցոյց տուեց իւր հաշտուելու յօժարութիւնը Հայոց աշխարհի հետ. բայց մին քանի օրից յետ հրամայեց կապել կաթուղիկոսին եւ դնել բանտ՝ այն պատճառելով, թէ իբր դաւաճանութեամբ է եկել նա իւր մօտ։ Երբ կաթուղիկոսը բանտումն էր,

եկաւ ոստիկանի մօտ Գագիկի եղբայրը Գուրգէն եւ
խնդրեց՝ շուտով օգնութիւն հասուցանել նոցա Սըմ-
բատին ընդդէմ. յետոյ՝ ոստիկանի պահանջմամբ՝
եկաւ եւ ինքը Գագիկ, բերեց աշխարհի հարկը ու-
րիշ զանազան ընծաներով, ցոյց տուեց իւրեան ա-
ռատ եւ հաւատարիմ եւ խնդրեց ոստիկանին շտա-
պել Հայոց աշխարհը, որ կարողանան վանել այն տե-
ղից Սմբատին, քանի որ նա պատրաստուած չէ դեռ-
եւս. չգիտէր ողորմելին, թէ իւրեան եւս կվանեն.
չգիտէր, թէ այն բոցը՝ որ բորբոքումէր նա այլոց
ընդդէմ, պէտք էր իւրեան եւս այրէր:

Յուսուփ պատուիրեց Գագիկին եւ Գուրգէնին գը-
նալ իւրեանց աշխարհը եւ պարապել պատերազմի
պատրաստութեամբ, ասելով՝ թէ ինքը եւս կգայ
Հայաստան գարնան ժամանակը: Երբոր գարունը հա-
սաւ, Յուսուփ, անթիւ զօրքի բազմութեամբ եկաւ
Հայաստան՝ Նախջեւան քաղաք եւ բերեց իւր հետ շըղ-
թայակապ Յովհաննէս կաթուղիկոսին: Յառաջագոյն
կոչեց իւր մօտ Գագիկին եւ Գուրգէնին եւ յետոյ
նոցա առաջնորդութեամբ գնաց զօրքով հեղեղի նը-
ման Սիւնեաց աշխարհ, ուր թէպէտ Գրիգոր Սու-
փան նախարար Սիւնի եւ նորա Սահակ եւ Վասակ
եղբայրները զօրք ժողովեցին եւ արիական քաջու-
թեամբ պատերազմեցին Յուսուփի հետ եւ այնքան
ահ ու դող ձգեցին նորա զօրքի սիրտը, մինչեւ յետ
էին դառնում նոքա արդէն, բայց որովհետեւ Աս-
տուած անտես էր արարել նոցա իբր ի պատիժ նո-
ցա անմիաբանութեանը իւրեանց թագաւորի հետ,
վասնորոյ չկարողացան երկար ընդդիմանալ թշնամի-
ներին եւ փախան, թագնուան քարանձաւների ծոր-
ծորների մէջ: Այն ժամանակ սկսաւ Յուսուփ իւր
ասպատակութիւնը եւ աւերմունքը Հայաստանում.
909. զատկի շաբաթը 909 թ. ոտնակոխ արեց Սիւնեաց
աշխարհը. ում որ գտաւ միանգամ ամուր քաղաքնե-
րից դուրս, բոլորին կոտորեց, եւ այլոց գերի վա-
րեց: Յետոյ գնաց Դուին եւ այն տեղից պատգամ

ուղարկեց Սմբատին, թէ կհաստատէ նորա հետ խաղաղութիւն, եթէ տարեկան հարկը հատուցանէ նորան: Սմբատ թէև չէր հաւատում նորա խօսքին, բայց մտածելով թէ նորա պահանջմունքը չկատարելը մեղադրանքի պատճառ կլինի իւր համար ազգի առաջև, որ կարող էր ասել, թէ թագաւորը այն հարկը չվճարելով առաւել ևս բորբոքեց ոստիկանի բարկութիւնը, ուղարկեց շուտով վաթսուն հազար դահեկան և ցոյց տուեց իւր անձը պատրաստ և յօժարամիտ ոստիկանի հաճոյքը կատարելու համար: Բայց Յուսուփ ինչպէս ստացաւ Սմբատի ուղարկած արծաթը, խկոյն գնաց նորա վերայ զօրքով և նա անճարացած փախաւ Կղարջաց գաւառի (¹) ձորերը: Ոստիկանը տեսանելով, թէ չկարողացաւ բռնել Սմբատին, յարձակուեցաւ այլ քաղաքների վերայ և աւերեց բոլոր Գուգարաց աշխարհը և յետոյ գնաց Դուին ձմեռելու: Իմանալով նորա հեռանալը, Սմբատ դուրս եկաւ և ինքը Գուգարաց աշխարհից և գնաց իւր Երազգաւորս մայրաքաղաքը: Աշոտ սպարապետը՝ թագաւորի եղբօրորդին գնաց Յուսուփի մօտ ընծաներով, անձնատուր եղաւ նորան և խոստացաւ հաւատարիմ ծառայութիւն, կարծելով, թէ այդ ձևով կարող էր փոքր ի շատէ կակղացնել նորա սիրտը իւր տան և ազգի վերայ. բայց սխալուեցաւ. որովհետև ոստիկանը տեսանումէր, թէ Հայոց երևելի մեծամեծները բոլորը դիմումեն իւր մօտ, և դորանով առաւել ևս հաստատումէր իւր մտքումը գրաւել բոլոր Հայաստանը:

Առաջիկայ ձմեռը ոստիկանը անցուցանումէր Դուին քաղաքումը. նորա զօրքի ռոճիկը պակասումէր. այդ պատճառով սկսաւ նա շատ բան պահանջել նախարար-

(¹) Կղարջք կամ Կաղարջք՝ Գուգարաց աշխարհի գաւառներից մինն էր, ուր կային ամրախիտ անմատչելի տեղեր Վրաց սահմանների մօտ:

ներից եւ կեղեքել նոցա. նոյն իսկ Յովհաննէս կաթուղիկոսին զանազան տանջանքով եւ դանահարութեամբ ստիպումէր տալ ոսկի եւ արծաթ: Այդ պահանջմունքը առիթ առեց իւր համար կաթուղիկոսը եւ խնդրեց ոստիկանից ազատութիւն, ասելով, եթէ ազատուի բանտից՝ կարող է շատ բան ժողովել եւ բերել նորա համար: Կաթուղիկոսի միտքը հաւանելի թուեցաւ ոստիկանին եւ նա արձակեց նորան՝ սակայն բանտից միայն, իսկ կապանքից՝ ոչ, որ չփախչի: Կաթուղիկոսը յիրաւի ժողովեց եւ ուղարկեց ոստիկանի համար ոսկի եւ արծաթ՝ որքան կարող էր. իսկ յետոյ գտաւ յարմար միջոց եւ փախաւ Աղուանից երկիրը եւ ապա Գուգարաց կողմը:

Բոլոր այն ձմեռը Յուսուփ պարապած էր միայն խորհրդածութեամբ Գագիկի եւ այլ Հայոց նախարարների հետ, թէ որպէս բռնեն Սմբատին. եւ որովհետեւ նախարարները գիտէին, թէ անհնար է նորան ձեռք բերել, միտք արեցին նորա զօրքի սիրտը որսալ խաբէութեամբ, կամ այն մարդկանց, որ ձեռնտու են լինում նորան. եւ որովհետեւ յայտնի էր նոցա, թէ Սեւորդիքը (¹), հզօր եւ անյաղթելի մարդիկ, օգնական են Սմբատին, վասնորոյ դաւաճանութեամբ եւ ընծաներով գրաւեցին նոցա միտքը եւ պայման դրեցին նոցա հետ այնպիսի նենգամիտ խորհրդով, որ նոքա գնան Սմբատին օգնութիւն, բայց պատերազմի ժամանակը յանկարծ դառնան նոցա կողմը եւ կամ հեռանան փախչեն իւրեանց երկիրը: Սմբատ թագաւորը, որ Երազգաւորս էր ու մտածումէր, թէ իւր փախստեամբ առաւել վտահութիւն էր տամ Յուսուփին եւ Գագիկին, հաստատեց միտքումը պատերազմ տալ նոցա. վասնորոյ հաւաքեց՝ որքան կարողացաւ՝ զօրք. վեր առեց իւր

(¹) Սեւորդիքը՝ Հայոց առանձին տոհմ էին Ուտի աշխարհումը, որ իւրեանց Սեւ կոչուած պապի անունով՝ կոչուումէին Սեւորդիք:

հետ եւ Սեւորդւոցը, չիմանալով սոցա ծածուկ միաբանութիւնը Գագիկի հետ: Նոյն բանը մտածումէին եւ առնումէին Յուսուփ եւ Գագիկ, այսինքն' պատրաստում էին տալ պատերազմ:

Ձմեռը անցանելուց յետ, գարնան օրերում, դուրս եկաւ Յուսուփ Դուին քաղաքից իւր պատրաստած զօրքով եւ դիմեց Նիգ գաւառ: Սմբատ բաժանեց իւր զօրքը երկու գունդ եւ յանձնելով նոցա իւր երկու որդւոցը Աշոտին եւ Մուշեղին, ուղարկեց Յուսուփի առաջը: Երբ երկու կողմը մօտեցան միմեանց, Աշոտ եւ Մուշեղ սաստիկ յարձակուեցան թշնամիների վերայ, անպարտելի քաջութեամբ պատառեցին նոցա բանակի թանձրութիւնը, նոցանից անթիւ մարդիկ կոտորեցին Յուսուփի եւ Գագիկի աչքերի առաջեւ, մինչեւ նոյն իսկ թշնամիները զարմացած եւ շուարած մնացին եւ ինքը Յուսուփ ափշեցաւ եւ կարծեց, թէ բոլոր իւր զօրքը պէտք է այդ տեղ ջնջուի: Այն րոպէին, երբ հարուածը այդպէս սաստկացած էր Հայոց կողմից, սեւախորհուրդ Սեւորդիքը յանկարծ թողեցին պատերազմը եւ փախան իւրեանց աշխարհ. փախաւ անճարացած եւ Աշոտ, որի կողմումն էին Սեւորդիքը, սակայն ճեղքելով թշնամիների շրջափակ բազմութիւնը: Իսկ Մուշեղ, որ նոյնպէս չորս կողմից պաշարուեցաւ թշնամիներից, կրկին արիացաւ, ցոյց տուեց անակնունելի քաջութիւն, սարսեցրեց եւ զարմացրեց ամենին. բայց որովհետեւ միայնակ էր եւ չկար հնար այնչափ բազմութիւնը վանելու խայառ, վասնորոյ մտածեց դուրս գալ պատերազմից եւ իւր եղբօր նման պատառելով թշնամիների մին կողմը' հետեւումէր ազատել իւր անձը, բայց չկարողացաւ, որովհետեւ անօրէն Սեւորդիքը, որոց մին քանիսը դարան էին մտել, յանկարծ յարձակուեցան նորա վերայ, բռնեցին եւ տարեցին կապանքով Յուսուփի առաջը: Յուսուփ ինչպէս տեսաւ Մուշեղին շղթայակապ, մխիթարուեցաւ, զուարթացաւ եւ իւր ամենայն հարուածները մոռա-

ցած՝ մեծ ուրախութիւն արեց զօրքի հետ եւ քաջալերեց նոցա՝ ասելով, թէ այսուհետեւ նոքա համարձակ պէտք է գնան Հայաստանի ամենայն երկիրները, որովհետեւ Սմբատի զօրութեան մեծ սիւնը կործանուեցաւ արդէն: Ասեց եւ կատարեց Յուսուփ իւր խօսքը. սփռեց բոլոր Հայաստան իւր եւ Գագիկի զօրքը: Աւազակները կրակի նման տարածուեցան եւ այրեցին Հայաստանի գիւղերը, տուները եւ անպարիսպ քաղաքները. այրեցին, քանդեցին եւ կողոպտեցին եկեղեցիները. ամենայն մարդու, թէ աղքատ եւ թէ մեծատուն, թէ եկեղեցական եւ թէ աշխարհական, թէ կին եւ թէ այրամարդ, կամ գերի վարեցին եւ կամ սպանեցին: Մի միայն ազատուեցան նոքա, որ անմատոյց բերդերում կամ քաղաքներում ամրացած էին. բայց որովհետեւ այդ տեղերը եւս ոչ ամենեւին ազատ էին վտանգից, վասնորոյ շատ մարդիկ փախան քարերի եւ ձորերի մէջ, ուր ուտեստի պակասութիւնից խոտերով եւ արմատներով էին կերակրուում եւ վայրենի կենդանիների նման քնում էին գետնի վերայ. նոցանից շատը փափկասուն եւ իշխանազուն գոլով՝ չէին կարողանում տանել այն տառապանքը եւ նեղութիւնը, վասնորոյ հիւանդանում էին եւ մեռանում, մանաւանդ մանուկները եւ օրիորդները, եւ նոցա հետ շատ յղի կանայք, որ գերեզման էին լինում իւրեանց զաւակներին:

Հայաստանի այդպիսի թշուառութիւնը եւ տառապանքը եւ նորա անյոյս դրութիւնը տեսանելով, շատ նախարարներ կամակար գնացին Յուսուփի մօտ եւ անձնատուր եղան նորան. նոցա մէջ երեւելի էին գեղեցկատեսիլ Վասակը՝ Աշոտ Սխակի որդին եւ չքնաղադեղ Սմբատը՝ Թագաւորի Սահակ եղբօր որդին. սոքա ամենեքեան փոխանակ Սմբատի կողմումը լինելու եւ նորա հետ միասին թշնամիների հետ պատերազմելու, յարեցան Գագիկին եւ Յուսուփին եւ եղան նոցա գործակից եւ օգնական. եւ այդ պա-

ճառով փոխանակ բարութեան՝ չարիք ստացան նոցանից, որոց ապաստան եղան. որովհետեւ ոստիկականը, որ վաղուց դրել էր մտքումը բոլոր Հայոց նախարարներին կորուսանել, սուտ զրպարտանք դնելով նոցա վերայ, սկսաւ ոմանց ծածուկ խեղդամահ առնել, ոմանց յայտնի սպանանել, այլոց գանակոծ եւ սովամահ կորուսանել: Նոցա մէջ նշանաւորներն էին Գրիգոր Սիւնի՝ Սուփան ասածը՝ Թագաւորի քեռորդին. Մուշեղ՝ Թագաւորի որդին եւ Սմբատ՝ Թագաւորի եղբօրորդին: Այդ զարհուրելի անցքերին ականատես էին Գագիկ բռնաւորը եւ նորա եղբայրը Գուրգէն, բայց չէին զգաստանում ամենեւին, չէին մտածում իւրեանց հայրենիքը որ եւ իցէ հնարով ազատել, այլ ընդ հակառակն խորհրդակից էին լինում ոստիկանին, թէ ինչ ձեւով կարողանան որսալ Սմբատ Թագաւորին եւ աւելի եւս աւերել Հայոց աշխարհը: Ամենայն մարդկային գութը կորուսած, ուրախութիւն էին առնում սոքա ոստիկանի հետ այն գերիների վերայ, որոց անդադար բերում էին Հայոց աշխարհից, մանաւանդ մեծատունների որդոց, կանանց կամ հարսանց, որ գալէին բոկոտն եւ բացագլուխ եւ ուղղակի դնումէին բանտ, ուր նոցանից շատը մեռանումէր: Մի միայն Սիսական Աշոտի որդին Վասակ գիշերային ժամանակ փախաւ բանտից՝ սուրը ձեռումը, պահապաններին միջակտուր ձգեց գետին, անց կեցաւ քաղաքի փողոցները՝ կոտրելով ամենայն ընդդիմակաց մարդու եւ այդպէս ազատուեցաւ: Յուսուփ բարկացած Վասակի փախուստի վերայ, իսկոյն սպանեց մին քանի նախարարների եւ մտածումէր շուտով կորուսանել նաեւ Գագիկին, միայն սպասումէր, որ նորա միջնորդութեամբ բռնէ յառաջագոյն Սմբատ Թագաւորին, ապա թէ կատարէ այդ վճիռը:

ԳԼՈՒԽ Ե.

Յուսուփի անօրէն խորհրդակցութիւնը Գագիկի եւ այլ չարամիտ նախարարների հետ վճռեց վերջապէս, որ նախարարները գնան զօրքով Գագիկի առաջնորդութեան ներքոյ Վաղարշակերտ ամրոցը առնելու, եւ յետոյ ինքը ոստիկանը գնայ նոյնպէս այն տեղ եւ նոցա հետ միասին կատարէ Գագիկի թագադրութեան հանդէսը, ուր եւ իւրաքանչիւր նախարար պէտք էր ստանար մեծամեծ իշխանութիւն: Դեռեւս խաբուած էին Հայոց իշխանները Յուսուփի դաւաճանական եւ խաբեբայ մտքերով. վեր առեցին զօրք եւ գնացին պաշարեցին Վաղարշակերտը. քաղաքի բնակիչները սկսան կռուել, եւ արհամարհելով նոցա սպառնալիքը՝ կոտորեցին նոցանից անհամար մարդիկ նետերով եւ պարսաքարերով. Գագիկ եւ նորա հետ եղած նախարարները յետ դարձան ամօթով Յուսուփի մօտ:

Շատ ուշ սկսան հասկանալ Գագիկ եւ Գուրգէն, թէ նոցա պատճառով կորչումէ Հայոց աշխարհը, թէ ոստիկանը մտադիր է դաւաճանութեամբ սպանանել նոցա եւս. վասնորոյ զղջացան իւրեանց գործերի վերայ, զղջացան մանաւանդ, որ այնչափ չարութեան առաջնորդ եղան ոստիկանի կամքով: Վերջապէս ստոյգ իմացան, թէ եւ շատ յետի, թէ ոստիկանի մտքումը չկայ ամենեւին հաստատել Գագիկին թագաւոր, այլ բառնալ բոլոր Հայաստանի իշխանութիւնը, կործանել այդ աշխարհը եւ սպանանել իւրեան իսկ Գագիկին: Այնուհետեւ հաստատ դրեցին իւրեանց մտքումը փախստեամբ ազատել իւրեանց գլուխը. բայց այդ մտադրութիւնը չկատարուեցաւ այն ժամանակի զանազան ձախողակի հանգամանքներով, որով պաշարուած էին նոքա չորս կողմից՝ սակայն ճշմարիտ խոստովանութեամբ յայտնեցին ծածկաբար Սմբատ թագաւորին, որ այդ միջոց Երասխա-

ձոր ամրոցումն էր (¹)։ Սմբատ թէպէտ շատ ուրա-
խացաւ նոցա զղջմանը եւ դարձին, բայց ոչինչ օ-
գուտ չհամարեց այդ բանը իւր աշխարհի շինութեան
համար, որովհետեւ Հայաստանը արդէն աւերուած
էր բոլորովին եւ ամայացած՝ օտարների բօցը եւ ըն-
տանիների ատելութիւնը բորբոքել էին եւ այրել նո-
րա բնակիչներին։ Բայց որովհետեւ իսպառ յուսա-
հատուած չէր աշխարհի փրկութեան մասին, վասն-
որոյ ուղարկեց դեսպան ամիրապետի մօտ եւ խնդրեց
նորանից օգնութիւն Յուսուփի ձեռից. բայց ամիրա-
պետը զբաղուած գոլով այն միջոց զանազան խռո-
վութիւններով Եգիպտացոց կողմից, չկարողացաւ
օգնութիւն հասուցանել Սմբատին. այդ պատճառով
Սմբատ խնդրեց նպաստ Յունաց Լեւոն կայսրից, որ
թէպէտ մեծ յօժարութեամբ պատրաստուեցաւ օգ-
նութեան ձեռն տալ նորան, բայց մահը խափանեց 914.
նորա ցանկութիւնը. իսկ նորա յաջորդը՝ Կոստան-
դին Պերփեռուժէն եօթնամեայ մանուկ էր եւ Յու-
նաց տէրութիւնը կառավարումէր նորա հօրեղբայրը
Աղէքսանդր, որ պարապած էր Յունաստանի ներքին
շփոթութիւններով, վասնորոյ չէր կարող օգնական
լինել Սմբատին։ Հայոց իշխաններից եւ նախարար-
ներից ամենեւին չկար նոյնպէս օգնութեան յոյս,
որովհետեւ նոցանից շատը անձնատուր եղան ոստի-
կանին եւ սպանուեցան, շատը չկամենալով Սմբատի
իշխանութեան ներքոյ լինել, թողեցին նորան եւ
հեռացան. ոմանք ահից եւ երկիւղից փախան եւ
թագնուեցան անծանօթ տեղերում. այլք՝ անմիաբա-
նութեան պատճառով մնացին հաստատուն ատելու-
թեան մէջ եւ իսպառ օտարացան, եւ այսպէս թէ մեր-
ձաւոր եւ թէ հեռաւոր անձինք այս կամ այն պատ-
ճառով ամենեւին հեռացան նորանից։ Այս հանգա-

(¹) Նոյն է Արշարունիք ասած այժմու գաւառի հետ, Արարատեան աշխարհումը, Երասխ գետի մօտ. եւ այդ պատճառով կոչւումէր առաջ Երասխաձոր։

մանքները տեսանելով, եւ համանգամայն Հայաստանի քանդումը ոստիկանի եւ նորա ասպատակների կողմից, Սմբատ իսպառ յուսահատուեցաւ, մարդկային հնարներից զրկուեցաւ, եւ մի միայն Աստուծոյ նախախնամութեան վերայ դրեց իւր յոյսը, նորա տեսչութեանը յանձնեց Հայաստանի փրկութիւնը, եւ ինքը դուրս եկաւ սակաւ զօրքով եւ գնաց Կապոյտ բերդը (1) եւ այն տեղ ամրացաւ: Իսկ նորա որդին Աշոտ թէպէտ եւ ցոյց էր տամ քաջութիւններ տեղ տեղ, բայց այն փոքր եւ չնչին օգնութիւն էր Սմբատին եւ Հայոց աշխարհին, որովհետեւ ընտանի թշնամիների բազմութիւնը անհամար էր եւ անդադար կործանումէր Հայաստանի վերջին զօրութիւնը:

Տեսաւ ոստիկանը, թէ Սմբատ թագաւորը տկարացաւ իսպառ, թէ Հայոց աշխարհը նուաճուեցաւ եւ ոչ ոք չէ կարող ընդդիմանալ նորան, միտք արեց բոլորովին տիրապետել Հայաստանը, բայց կասկածումէր, թէ գուցէ չկարողանայ հաստատուն իշխանութիւն ունենալ Հայաստանի վրայ՝ քանի որ կենդանի էր Սմբատ, վասնորոյ գործ էր դնում ամենայն հնար, որ բռնէ նորան. խոստանումէր Գագիկին շատ բան ստութեամբ եւ նենգամիտ խաբէութեամբ. հետեւենք, ասումէր, վերջացնել միայն Սմբատի կեանքը, եւ դու կարողանաս անկասկած թագաւորել: Իսկ Գագիկ, թէպէտ այնուհետեւ հաւատ չէր ընծայում նորան, բայց արտաքուստ ցոյց էր տամ, թէ ամենեւին չկասկածելով նորա խոստմունքի մասին, հետեւումէ ձեռք բերել Սմբատին: Գարունը ինչպէս եկաւ, Յուսուփ ժողովեց իւր եւ Հայոց զօրքը, որ Գագիկի հետ միաբանուած նորա մօտ էր, գնաց Սմբատի վրայ եւ պաշարեց Կապուտ ամրոցը, ուր թագ-

(1) Կապոյտ կամ Կապուտ բերդը համարումէ նոյն՝ Արտագերս կամ Արտագերից ամրոցի հետ. Արշարունի գաւառումն (որ առաջ կոչուումէր Երասխաձոր) Արարատեան աշխարհի:

նուած էր Սմբատ սակաւաթիւ զօրքով։ Նորա զօրքը սկսաւ նետեր եւ քարեր ձգել պարսպի վրայ. բայց ամրոցի բնակիչները չշփոթուեցան ամենեւին. սկսան նոյնպէս հարուածել ընդդիմակացներին եւ այնքան յաջողակ գտանուեցան, որ թշնամիների դիակները բարձրացան իբրեւ մին բլուր ամրոցի առաջեւ։ Յուսուփ տեսանելով, թէ իւր զօրքը անխընայ կոտորուումեն, յառաջ վանեց Հայոց զօրքը. «Տեսնո՞ւմ էք», ասումէր նոցա «ի՛նչքան քաջ են Հայերը. դուք եւս ցո՛յց տուէք այժմ ձեր քաջութիւնը»։ Այն միջոց, բերդի մէջ եղած նետաձիգ եւ պարսաւոր զօրականները սկսան չարաչար հարուածներով կոտորել նոր ընդդիմամարտներին. զարհուրելի տեսարան, ուր Հայը սպանումէր Հայի՛ ազգի անմիաբանութեան պատճառով։ Սմբատ տեսանելով իւր ազգի կոտորածը, դադարեցրեց պատերազմը. «Ի՞մ համար է, ասեց, այդ կռիւը, իմ համար է այդ թշուառութիւնը. չեմ կամենում. թո՛ղ ես միայն մեռանեմ, քան թէ այդքան ժողովուրդ»։ Այդպէս հոգալով աւելի ազգի փրկութիւնը, քան թէ իւր ազատութիւնը անցաւոր կեանքի համար, վճռեց իւր անձը դնել նորա վերայ. առաջարկեց ոստիկանին երդմամբ խոստանալ չհասուցանել մահ, իւրեան եւ իւր հետ եղած մարդկանց, եւ այդ խոստումն նորանից ստացած, ցած եկաւ ամրոցից եւ գնաց նորա մօտ. ոստիկանը ընդունեց նորան պատուով, որ ցոյց տայ, թէ իւր երդումն հաւատարմութեամբ է պահում. բայց ներքուստ մտածումէր բառնալ շուտով նորա կեանքը. եւ միայն նորա կարծիքը, թէ Սմբատ շատ գանձ պէտք է ունենայ թագուցած, հարկադրումէր նորան շողոքորթ բարեկամութեամբ վարուել նորա հետ, մինչեւ տեղականայ թէ ինչ տեղ է նորա գանձը։ Սակայն Սմբատ, որ շատ բանումը փորձել էր Յուսուփի նենգութիւնը, ամենեւին չէր հաւատում նորան սրտով, նա եւս կասկածումէր, որ չիցէ թէ յանկարծ հրամայէ իւրեան կապել կամ սպանանել. վան-

որոյ մին պատճառանքով հեռացաւ նորանից եւ գնաց Շիրակ գաւառ: Նորան նման եւ Գագիկը, կասկածելով իւր կեանքի վերայ, ընտրեց դիպուկ ժամ, հեծեց իւր երիվարը եւ յանկարծակի փախաւ Գուրգէն եղբօր հետ Վասպուրական աշխարհ: Յուսուփ հրամայեց կապել մնացած նախարարներին, յետոյ մին հնարագիտութեամբ հրաւիրեց իւր մօտ Սմբատին եւ նորա հետ միասին գնաց Դուին քաղաք, ճանապարհումը կապեց նորան երկաթի շղթաներով եւ տարաւ Դուին, դրեց նորան խաւարչտին բանտ, ուր նա մնաց մինչեւ միւս գարուն առանց անկողնի եւ առանց բաւականացուցիչ կերակրի, որովհետեւ միայն հաց եւ ջուր էին տամ նորան, որ կարողանան այդ ձեւով խախտել նորան քրիստոնէական հաւատից:

914. Մին տարուց յետ Յուսուփ ոստիկանը գնաց զօրքով Երնջակ [1] ամրոցի վերայ. տարաւ իւր հետ եւ Սմբատին ծանր շղթաներով կապած ամրոցը, ուր թագնուած էին մեծամեծների կանայք եւ ազատազգի անձինք (Սխակեանց Սմբատի մայրը եւ քոյրը, Սմբատ թագաւորի եղբօր Սահակի կինը եւ այլք) պաշարեց Յուսուփ, բայց չկարողացաւ առնել, վասնորոյ իւր բարկութեան մաղձը թափեց Սմբատի վերայ եւ սկսաւ դառն տանջանքով նորան չարչարել: Յառաջագոյն հրամայեց բերել նորան բերդի մէջ եղած Հայոց աչքերի առաջեւ. ծեծել եւ ծաղր առնել. յետոյ ժամէ ժամ զանազան տանջանքներով նորան չարչարել, որ թողնէ իւր քրիստոնէութիւնը, բայց եւ զգուշանալ, որ շուտով չմեռանի· Դորանից յետ պակսեցրեց նորա կերակուրը եւ ըմպելին. թէպէտ նա ինքը զրկումէր իւրեան կերակրից, որ առաւել սաստկացնէ իւր չարչարանքը, որովհետեւ տեսանելով, թէ այդչափ անողորմ են մարդիկ, իւր փրկչին միայն նուիրեց բոլոր կեանքը եւ խնդրու-

[1] Երնջակ ամրոցը Գողթան գաւառումն էր Վասպուրական աշխարհի:

մէր միշտ նորան տալ իւրեան համբերութիւն, որ կարողանայ տանել տանջանքին եւ չթուլանայ քրիստոնէական հաւատում: Աստուածային տեսչութեամբ պատահեցաւ այն տեղ մին քահանայ, որ ծպտեալ աշխարհական հագուստով՝ գտաւ դիպուկ ժամ եւ խոստովանեցրեց, հաղորդեց նորան սուրբ խորհրդին, եւ Սմբատի սիրտը լցուաւ ուրախութեամբ մինչեւ մոռացաւ իւր տանջանքը: Շատ եւ երկարատեւ չարչարանքներից յետ, անօրէն ոստիկանը հրամայեց տալ երանելուն վերջին եւ մահացու տանջանքը՝ խեղդելով նորան հրապարակի մէջ: Հաւաքուեցան դահիճները նորա վերայ, վեր առեցին նորա թաշկինակը, կոխեցին բերանը եւ փայտներով մղեցին ներս փողը, որ արգելեն նորա շնչառութիւնը. յետոյ ձգեցին գելարան կղակի վերայ եւ պընդացրեցին չուանով պարանոցի հետ. դրեցին ծանր ծանր բեռներ գլխի վերայ. յետոյ սկսան տալ սարսափելի տանջանք ծածուկ անդամներին, եւ վերջապէս, երբ շունչը դեռ եւս հատած չէր՝ կտրեցին սրով նորա գլուխը: Կատարուեցաւ ոստիկանի ցանկութիւնը. Նա հրամայեց տանել Սմբատի մարմինը Դուին քաղաք եւ մին բարձր տեղում կախել ամենայն մարդու տեսութեան համար: Սմբատին այդպիսի չարաչար մահով սպանելուց յետ՝ Յուսուփի զօրքը սաստկացրեցին պատերազմը ամրոցին ընդդէմ, բայց ոչինչ չկարողացան անել. յետոյ մին նենգամիտ հնարով յանկարծ մտան գիշերը քաղաք, յարձակուեցան տուներ, կողոպտեցին բոլոր բնակիչներին, շատին կոտորեցին, գեղեցիկներին եւ առոյգներին՝ որպէս եւ մեծատունների կանանցը գերի վարեցին եւ գնացին Դուին: Յուսուփ տիրապետեց Հայաստանի մեծ մասը, կարգեց պահապան զօրք Պարսից ազգից եւ ինքը բազմաթիւ գերիներով դարձաւ գնաց իւր Ատրպատական աշխարհը:

ԳԼՈՒԽ Զ.

Սմբատի որդին Աշոտ լսել էր միայն իւր հօր անձնատուր լինելը Յուսուփին, բայց ինչպէս իմացաւ, որ Յուսուփ կալանաւորել է նորան շղթաներով եւ յետոյ դառնաղէտ տանջանքներով սպանել է, շուարուեցաւ տրտմութիւնից, առիւծացաւ իւր սրտումը եւ հաստատ յառաջադրութիւն դրեց մտքումը չըմեռանել առանց վրէժխնդրութեան, կամ մեռանել՝ մեռուցանելով անողորմ թշնամիներին: Այդ նպատակով ժողովեց Հայոց ազգից մինչեւ 6 հազար մարդ զօրեղ եւ անպարտելի, քաջ եւ ամեհի, միակամ եւ համամիտ, որոց մէջ էր եւ իւր հարազատ եղբայրը Աբաս. սկսաւ տարածել իւր բարկութեան բազուկը թշնամիների վերայ. անշէջ կրակի նման վառուումէր եւ ցոլանում իւր հօր սպանողներին ընդդէմ, կամ անենք՝ պողովատիկի պէս անպարտելի զօրութեամբ խորտակումէր եւ փշրումէր իւր ընդդիմակացներին, եւ այդ պատճառով կոչուեցաւ Աշոտ երկաթ: Ուղջից առաջ դիմեց, յարձակուեցաւ կայծակի նման Բագրեւանդ գաւառ եւ այն տեղ կոտորեց բոլոր Յուսուփի թողած զօրքը. նոցա մէջ պատուականներին հրամայեց քերթել կամ մորթազերծ անել, նոցա մաշկերը տիկ ձեւացնել եւ կախել պարիսպների վերայ. յետոյ արծուի նման դիմեց Շիրակ գաւառ եւ նոյնպէս կոտորեց այն տեղի պահապան զօրքը: Այսպէս անց կեցաւ իւր հօր տէրութեան ամենայն գաւառները, ամենայն տեղ սպանեց թշնամիներին, ազատեց նոցա ձեռից Հայոց քաղաքները եւ ամրոցները, դրեց ամենայն տեղում պահապան եւ վերակացու Հայոց ազգից, եւ այդպիսի քաջագործութիւններով այնչափ ահ ու դող ձգեց թշնամիների սիրտը, մինչեւ ինքը Յուսուփ սկսաւ կասկածել, թէ գուցէ Աշոտ յարձակուի իւր աշխարհը եւս: Աշոտի արիասիրտ գործերով քաջալերութիւն ստացան եւ Գագիկ (բռնաւոր թագաւորը) եւ նորա եղբայրը Գուր-

գէն, որ շատ տեղ երեւելի հարուածներ հասուցին Յուսուփի զօրքին, մանաւանդ Կորդուաց կողմերում եւ Ատրպատականի սահմաններում եւ հալածեցին ամենայն մարդու, որին միանգամ ճանաչում էին իբրեւ Յուսուփի խորհրդակից: Իսկ Աշոտի ձեռը չէր դադարում դեռ եւս սպանութիւնից. նա գնաց, նուաճեց Գուգարաց աշխարհը եւ կրկին յանձնեց երկու եղբարց Գնթունեաց Վասակին եւ Աշոտին, որոց դեռեւս ինքը Սմբատ կարգել էր այն երկրին վերակացու. հնազանդեցրեց եւ Ուտի աշխարհը. յետոյ գընաց Վրաց քաղաքը Տփխիս, ուր կային նոյնպէս Յուսուփի զօրքը. նոցա բոլորին կոտորեց եւ միայն երեւելիներին շղթայակապ ձգեց բանտ, այն նպատակով, որ կարողանայ նոցա փոխանակելով ազատել հայազգի գերիներին Յուսուփի ձեռից, եւ յետոյ դարձաւ Տաշրաց դաւառ: Այդ տեղ լսաւ, թէ շատ թշնամի զօրք թագնուած են Աղստեւի (1) ամուր տեղերում, վեր առեց երկու հարիւր մարդ, յանկարծ դիմեց նոցա վերայ եւ բոլորին կոտորեց այնպէս, որ չմնաց նոցանից եւ ոչ մին մարդ: Սորանից յետ գնաց Ափխազաց Գուրգէն իշխանի մօտ, իւր սիրելի բարեկամի, խորհուրդ արեց նորա հետ իւր աշխարհի շինութեան եւ բարեկարգութեան մասին եւ ապա վերադարձաւ Արշարունեաց կողմերը:

Հայոց ազգը, Ափխազաց իշխանը Գուրգէն՝ եւ Վը-
րաց Ատրներսէհ թագաւորը տեսանելով Աշոտի այդ-
չափ եւ այդպիսի քաջութիւնները, միաբան միա-
խորհուրդ թագաւորեցուցին նորան իւր հօր Սմբա- Աշոտ Բ
տի տեղ՝ նորա մահուան յաջորդ տարին, եւ Աշոտ Երկաթ,
առաւել զօրացաւ եւ սկսաւ իւր հօր նման խաղաղու- 915—928.
թեամբ եւ խնամատարութեամբ կառավարել իւր
աշխարհը:

---

(1) Աղստեւ՝ Գուգարաց աշխարհի գաւառներից մինն է, որ ունի շատ տեղ ամուր խորաձորներ, ուր Աշոտ թագաւորը կոտորեց բոլոր այն տեղ թագնուած Հագարացոց:

Բայց երբ Հայաստանը այդ ձեւով խաղաղուեցաւ փոքր ինչ՝ ազատուելով թշնամիների արշաւանքից եւ սրածութիւնից, շատ նախարարներ եւ իշխաններ, նոյն նման եւ ռամիկ ժողովուրդը, սկսան միմեանց հետ կռուել, մինչեւ ազգականը մաքառումէր ազգականի հետ, եւ եղբայր եղբօր ընդդէմ։ Ամենից առաջ երկպառակութեան սկիզբը դրեց Գագիկ բռնաւորը, նոյն Գագիկը, որ Նախջեւան քաղաքի համար այնքան չարութեան պատճառ եղաւ Հայաստանումը եւ համարեա բոլոր իւր հայրենիքը քանդեց մին քաղաքի համար, այժմ գնաց պաշարեց այդ քաղաքը եւ շատ հարուածներ տուեց նորա բնակիչներին, որովհետեւ նորա քրոջ մարդը Սմբատ Սիւնեան, որին Սմբատ թագաւորը ընծայել էր այն քաղաքը, այդ միջոց Արցախ աշխարհումն էր, եւ ինչպէս լսաւ նա Գագիկի արարքը, վառուեցաւ բարկութեամբ, հաւաքեց բոլոր Սիւնեանց եւ գնաց նոցա հետ Վասպուրական աշխարհ, որ պատշաճումէր Գագիկին, եւ աւերեց, կողոպտեց այդ երկիրը։ Սա բաւական պատճառ էր, որ երկաքանչիւր կողմը՝ Սիւնեանք եւ Արծրունիք՝ միմեանց հետ պատերազմէին եւ թափէին միմեանց արիւնը։ Այսպէս եւ միւս նախարարները՝ թէ միմեանց եւ թէ թագաւորին նախանձուելով եւ հակառակելով, վեր կեցան միմեանց վերայ, քանդեցին՝ աւերեցին միմեանց կալուածները, կողոպտեցին ինչ որ գտան։ Նոյն նման եւ ծառաները եւ ռամիկ ժողովուրդը համարեա առ հասարակ ապստամբուեցան իւրեանց կալուածատէրներից եւ մեծամեծներից, նոցանից շատին սպանեցին եւ ինքները տիրեցին նոցա տեղ։ Ահա մեր աշխարհի դրութիւնը՝ նորա խաղաղութեան ժամանակը, որ շուտով վերջացաւ եւ եկան կրկին նեղութեան օրերը։ Յովհաննէս կաթուղիկոսը չկարողացաւ տկանատես մնալ այդչափ խռովութիւններին, այլ թողեց իւր աշխարհը եւ գնաց բնակուեցաւ Վրաց կողմերումը՝ Ատրներսէհ թագաւորի հովանաւորութեան ներքոյ։

Յուսուփ, որի սիրտը դառնացած էր Աշոտի քաջագործութիւններով եւ միայն վախենալով նորա զօրութիւնից չէր համարձակւում դուրս գալ նորա առաջը, այժմ ինչպէս տեսաւ Հայոց իշխանների անմիաբանութիւնը եւ կռիւը միմեանց հետ, յարմար եւ յաջող ժամանակ համարեց գնալ եւ նուաճել Հայաստանը։ Այն ժամանակ, երբոր Հայոց իշխանները կոտորում էին միմեանց, եկան Հայաստան Յուսուփի զօրքը Պարսից կուսակալների հետ եւ թէ ինչ արեցին նոքա Հայաստանումը՝ անպատմելի բան է. ոմանց սպանեցին, ոմանց ձեռերը կապած գերի վարեցին. գերիների մէջ պառաւներին կապեցին միմեանց հետ եւ միասին միջակտուր արեցին սրով, անդի երեխաներին իւրեանց մայրերի գրկից յափշտակեցին եւ սպանեցին. յղի կանայք, իւրեանց ծանրութեան մասին, ստնակոխ եղած մեռան. շատը քաղցած մեռանում էր եւ մեռանելուց առաջ անօրէն սպասաւորները զանազան տանջանք էին տամ նոցա, որ կարողանան քրիստոնէական հաւատից դարձուցանել. ոմանց կենդանի թաղում էին, ոմանց ծանր բեռների տակ ճմլում էին. այլոց խեղդում էին կամ թէ սրով կուրծքից մինչեւ ցած ճեղքում էին եւ կամ գլխի վայր ծառից կախում էին։

Այդ դառը եւ սարսափելի հարուածների ժամանակը, որ եղաւ Յուսուփի եւ Պարսից կուսակալների զօրքից, մեր աշխարհի դրացի կամ մօտակայ ազգերը, Եգերացիք, Կովկասու լերին մօտ եղած հիւսիսաբնակ ազգերը, Յոյնք, նոյնպէս Գուգարացի եւ Ուտէացի Հայք, տեսանելով, թէ թշնամիների կրակը այրում էր եւ լափում էր մեր աշխարհը, սկսան կասկածել, թէ գուցէ այն կրակը տարածուի եւ հասանէ իւրեանց եւս, վանորոյ հրդեհ շիջուցանողների նման, որ սովորաբար քանդումեն մերձակայ տուները, որ կրակը յառաջ չգնայ, ողջով առ հասարակ յարձակուեցան Հայաստանի այն գաւառների վերայ, որ մօտ էին նոցա սահմաններին, սկսան քան-

դել ինչ որ գտան, գերի վարել՝ ում որ հանդիպե-
ցին եւ սպանանել՝ ով որ ընդդիմանումէր. մնացած
քանդութիւնը եւ աւերածը լրացրեցին ինքեանք
Հայերը, որ արտաքին թշնամիներին թողած՝ անդա-
դար կռուումէին միմեանց հետ:

Այսչափ թշուառութիւններից յետ, Հայաստանը
կրեց նոր այլատեսակ աղէտներ. եկաւ կործանական
918. սովը եւ յայտնուեցան մարդակեր գազաններ: Սովը
այնքան սաստկացաւ, որ ոչ ոք չէր գտանում ուտե-
լու բան: Հարուստները բոլոր իւրեանց ստացուածը
վաճառեցին սակաւ սակաւ մին հացի նկանակ գտանե-
լու համար. իսկ աղքատները կերակրուումէին խո-
տով դաշտերի մէջ, ուր շատ ժամանակ վնասակար
խոտ ուտելով մեռանումէին: Երբոր ամենեքեան աղ-
քատացան առ հասարակ եւ չէին կարողանում գտա-
նել նաեւս խոտ կամ բանջար, սկսան ուտել ճճիներ
եւ որդներ. եւ երբ որդները եւս պակասեցան, տարա-
կուսանքը պատեց բոլորին. մարդիկ գործեցին անօ-
րինակ բաներ: Ոմանք փոքր ինչ կերակրի համար
վաճառեցին իւրեանց որդոց օտարներին եւ թշնամի-
ներին, եւ եթէ այս հնարը եւս չէին գտանում,
դուրս էին գնում հրապարակ մերկանդամ եւ կիսա-
մեռ, աղաչելով անցաւորներին տալ իւրեանց հացի
փշրանք, եւ այդ ձեւով շատերը աւանդումէին իւր-
եանց հոգին: Երբոր սովը առաւել եւս սաստկացաւ,
մին քանի կանայք մորթումէին իւրեանց զաւակնե-
րին գաղտնի նման եւ ուտումէին նոցա մարմինը, որ-
պէս եւ շատ մարդ թագուն սպանումէր իւր մեր-
ձաւոր բարեկամին եւ կերակրուումէր նորա մար-
մնով, որովհետեւ չմնաց ուտելու բան եւ ոչինչ, ոչ
էշ եւ ոչ ձի, ոչ կատու եւ ոչ մուկը:

Բաւական չէին իբրեւ թէ Հայաստանին այդչափ
տառապանքը, նորա թշնամիները յաւելցնումէին
իւրեանց կողմից նորա տանջանքը. թէպէտ նոցանից
շատը փախել էին արդէն սովի պատճառով, բայց
Յուսուփ ոստիկանը Դուին էր իւր զօրքով, եւ երբ

ուտեստը պակասեց, սփռեց նա իւր զօրքը Հայաստանի քաղաքները կերակուր գտանելու համար։ Եկան ապստամբները ուտեստ պահանջելու այն մարդկանցից, որ ինքեանք կարօտ գոլով մին կտոր հացի՝ մեռանումէին սովամահ. եւ որովհետեւ չէին ստանում նոցանից ոչինչ, վասնորոյ զանազան տանջանքներով սպանումէին նոցա։ Այսքան անթիւ հարուածների պատճառով, թէ մեռածների եւ թէ սպանածների դիակունքը մնում էին քաղաքներում, գիւղերում եւ դաշտերում անթաղ, եւ լինում էին կերակուր գայլերի եւ այլ գազանների, որ այնուհետեւ սովորութիւն շինեցին իւրեանց համար գալ մտանել միշտ քաղաքներ եւ կենդանի մարդկանց եւս գիշատել եւ ուտել, վասնորոյ ամենայն մարդ ամրանումէր իւր տան մէջ եւ չէր վստահանում դուրս գալ։

ԳԼՈՒԽ Է.

Հայաստան երբոր սով էր, Յուսուփ, ինչպէս վերեւումը ասացինք՝ Դուինի քաղաքումն էր եւ նորա մօտ էին մին քանի Հայոց նախարարներ, որոց մէջ էր եւ Հայոց սպարապետը Աշոտ. Թագաւորի հօրեղբօր որդին, այն ժամանակից, երբ անձնատուր էին եղել Յուսուփին եւ չէին կարողանում ազատուել։ Երբոր սովը եւ գազանների յափշտակութիւնը դադարեցին, Յուսուփ կրկին սփռեց իւր ապստամբ զօրքը Հայաստանի բոլոր երկիրները. ինքը առանձին զօրքով գնաց Գագիկ բռնաւորի վերայ՝ իւր բարկութիւնը թափելու։ Գագիկ ժողովեց Վասպուրական աշխարհի բնակիչներին եւ տարաւ Մոկաց եւ Կորդուաց սարերի ծործորների մէջ՝ ապահովութեան համար, իսկ ինքը՝ իւր Գուրգէն եղբօր հետ ստացինուած արիասիրտ ընկերներով՝ սկսաւ պահել ճանապարհների անցքը։ Աշոտ թագաւորը իւր կողմից յանկարծ յարձակուումէր փոքրաթիւ զօրքով

ապառաժների վերայ, տամէր նոցա զգալի հարուածներ եւ յետ էր դառնում, որովհետեւ փոքր զօրքով չէր կարող օրինաւոր ճակատ յօրինել, վասնորոյ ապառաժի նման մաքառումէր ապառաժների հետ: Նորա օրինակով եւ Դաւիթ բանակը իւր ընկերներով անակնկալ ժամերում կայծակի պէս փայլատակումէր Յուսուփի զօրքի վերայ, կոտորումէր նոցա կամ ցրուումէր: Բայց որքան քաջագործութիւն էին առնում սոքա, այնքան առաւել կատաղումէին եւ զօրանում նոցա թշնամիները, հետ զհետէ բազմացնելով իւրեանց զօրքը եւ շարունակելով իւրեանց յարձակմունքը Հայաստան: Միւս կողմից իշխանների անմիաբանութիւնը իւրեանց մէջ՝ լրացնումէր մեր աշխարհի վերջին թշուառութիւնը, որ այսպիսի եւ այսչափ այլատեսակ հարուածներով կրկին աւերուեցաւ, քանդուեցաւ եւ համարեա անապատի նմանեցաւ: Ցաւալին այն էր, որ բոլոր անբաղդութեան պատճառը ոչ թէ քաջ եւ արի մարդկանց պակասութիւնն էր, այլ սիրոյ եւ միաբանութեան նուազութիւնը:

Հայաստանի դառնաղէտ անցքը լսաւ Յունաց կայսրը Կոստանդին Պերփերուժէն (ծիրանածին), որ դեռ եւս տասնեւեօթն տարեկան էր եւ աթոռակից իւր աներոջը Ռոմանոսին, եւ շատ ցաւեցաւ, մինչեւ յանձնեց Նիկողայոս պատրիարգին գրել թուղթ Յովհաննէս կաթուղիկոսին, որ այն ժամանակ Վրաց աշխարհումն էր. պատրիարգը կատարելով կայսեր հրամանը, գրեց կաթուղիկոսին նամակ, ուր Հայաստանի զանազան թշուառութիւններին ցաւակից լինելով, յորդորումէր կաթուղիկոսին հետեւել խաղաղացնել Հայոց իշխաններին, որ փոխանակ միմեանց հետ կռուելու՝ պատերազմեն ընդհանուր թշնամիների հետ, յաւելցնելով, թէ այն ժամանակ եւ կայսրը կուղարկէ օգնական զօրք, որ Հայոց հետ միասին պաշտպանեն նոցա աշխարհը: Այս թուղթը ինչպէս ստացաւ Յովհաննէս կաթուղիկոսը, քաջալերուեցաւ

փոքր ինչ եւ սկսաւ քարոզել Հայոց իշխաններին եւ
նախարարներին սէր եւ միաբանութիւն միմեանց հետ
եւ ընդհանուր պաշտպանութիւն իւրեանց հայրենի-
քի, բայց ոչինչ չշահուեցաւ. վասնորոյ հարկադիր
եղաւ գրել կայսերը եւ կայսերակցին, եւ Հայաստանի 920.
թշուառութիւնը նկարագրելով՝ խնդրել նոցանից
օգնութիւն Հայոց աշխարհին: Կայսրը Կոստանդին
Պերփիւռոժէն, կաթուղիկոսի թուղթը կարդալուց
յետ, շատ ցաւեցաւ Հայոց վիճակի վերայ եւ ուղար-
կեց Հայաստան Թէոդորոս Վասիլիոս անունով իշխա-
նին, որ հրաւիրէ Կոստանդնուպօլիս Աշոտ թագաւո-
րին եւ Յովհաննէս կաթուղիկոսին: Աշոտ թագաւո-
րը գնաց Կոստանդնուպօլիս եւ մեծ պատուով ընդու-
նուեցաւ. իսկ Յովհաննէս կաթուղիկոսը չգնաց, թէ-
պէտ եւ խոստացել էր. նորա գնալը ակամայ կամ-
քով խափանուեցաւ. ինքը բերումէ պատճառ, իբր
թէ տկարամիտ մարդիկ կարող էին կարծել նորան
Քաղկեդոնականների կողմը հակամիտուած:

Գագիկ բռնաւորը տեսանելով, թէ իւր աշխարհը
խաղաղ աւերուումէ եւ թէ ճանապարհների անցքը
միայն պահպանելով ոչինչ օգուտ չէ յառաջանում,
ժողովեց քաջասիրտ մարդիկ եւ սկսաւ Յուսուփի
զօրքին զանազան տեղերում հարուածներ տալ: Յու-
սուփ զայրացած հետեւումէր թափել նորա վերայ
իւր բարկութիւնը, բայց չէր կարողանում, որովհե-
տեւ նորա զօրքը օր ըստ օրէ կոտորուումէին եւ պա-
կասում. վասնորոյ վարանման մէջ մնացած՝ չգիտէր
ինչ գործէր. եւ երբ ստուգիւ իմացաւ, թէ Աշոտ
գնացել է կայսեր մօտ, եւս առաւել վախեցաւ, մը-
տածելով, թէ Աշոտ կգայ զօրքով եւ կյարձակուի
նորա վերայ: Այս եղաւ պատճառ, որ Յուսուփ թո-
ղեց Հայաստանը ու գնաց Ատրպատական աշխարհ՝
նորա օրինակով եւ այլ Պարսից նախարարները իւր-
եանց զօրքի հետ միասին փախեցին մեր աշխարհից.
եւ թէպէտ տեղ տեղ մնացին սակաւ ինչ սպատակ-
ներ, բայց եւ նոքա մեր նախարարների հետեւողու-

թեամբ եւ հարուածներով իսպառ կորան. Հայաստա-
նը հանդարտացաւ. շատ իշխաններ, փախել էին Հա-
յաստանից, վերադարձան կրկին իւրեանց հայրենի-
քը՝ երկրագործները եւ արուեստաւորները սկսան
վերստին պարապել իւրեանց գործով, եւ ամենքեան
առ հասարակ Հայաստանի նորոգութեամբ:

Բայց Յուսուփ, որ վերադարձել էր Ատրպատա-
կան աշխարհ, մտածելով, թէ Հայոց թագաւորը Ա-
շոտ կտիրապետէ բոլոր Հայաստանը, սկսաւ միւսան-
գամ խռովութիւն եւ երկպառակութիւն ձգել մեր
աշխարհը: Այս նպատակով թագ դրեց Աշոտ սպա-
րապետի գլուխը եւ արքայական պատուով ուղար-
921. կեց նորան Հայաստան՝ նոյն տարի, երբ Աշոտ թա-
գաւորը վերադարձաւ Յունաստանից իւր աշխարհը:
Այնուհետեւ եղան երեք թագաւոր. Աշոտ Սմբա-
տեան հարազատ թագաւոր Շիրակ գաւառումը,
Աշոտ Շապուհեան՝ նորա հօրեղբօր որդին Դուին
քաղաքում, եւ Գագիկ Արծրունի՝ Վասպուրական
աշխարհումը. երկու վերջինը բռնաւոր թագաւոր-
ներ: Բայց Գագիկ իշխումէր միայն իւր աշխարհու-
մը եւ Աշոտ թագաւորի հետ բարեկամութեամբ էր
վարուում. իսկ Աշոտ բռնաւորը երբոր իմացաւ,
թէ Աշոտ թագաւորը վեր է առել պատերազմով
Կողբ (1) գիւղաքաղաքը, որի բնակիչները ապստամ-
բուել էին նորանից, սկսաւ պատերազմել թագաւորի
հետ. այնուհետեւ երկու հօրեղբօր որդի, իբրեւ օտա-
րածին թշնամիներ, սկսան կռուել միմեանց հետ.
պատերազմը շատ մեծացաւ, որովհետեւ բոլոր Հա-
յոց նախարարները որոշուել էին երկու բաժին՝ մինը
այս, միւսը այն Աշոտի կողմը, իւրաքանչիւրը պաշտ-
պանելով իւր սիրելի թագաւորին, մինչեւ վերջա-
պէս Յովհաննէս կաթուղիկոսը մեծ դժուարութեամբ
եւ աշխատանքով կարողացաւ խաղաղացնել եւ հաշ-
տեցնել երկու թագաւորին:

---

(1) Արարատեան աշխարհումն է:

Հաշտութիւնից յետ Աշոտ Թագաւորը գնաց զօրքով Գուգարաց երկիր, որ իւրեանց Վասակ եւ Աշոտ Գնթունի վերակացուների հետ միասին ապստամբուել էին նորանից։ Վասակ եւ Աշոտ երկու եղբայր ամրացան Շամշուլտէ բերդումը (1)։ Աշոտ Թագաւորը երկար ժամանակ ոչինչ չկարողանալով առնել ամրացելոց, ուղարկեց իւր զօրքը մօտակայ գաւառներ ուտեստ բերելու, եւ ինքը երկու հարիւր մարդով գնաց դադարեց Սակուրէթ ամրոցումը (2)։ Վասակ եւ Աշոտ Գնթունիք տեսանելով, թէ Թագաւորը ցըրուել է իւր զօրքը եւ ինքը միայնակ է Սակուրէթ ամրոցումը, հաւաքեցին մինչեւ չորս հազար մարդ եւ յանկարծ յարձակուեցան Աշոտի վերայ։ Աշոտ յառաջագոյն շուարուեցաւ եւ չգիտէր ինչ անէր. իսկ յետոյ քաջալերուեցաւ եւ քաջալերեց իւր հետ եղած զօրականներին. եւ երբ թշնամիները պաշարեցին նորան չորս կողմից հաստակառոյց պարսպի նըման, խաչակնքեց երեսը, մտաւ նոցա մէջ իւր սակաւաթիւ ընկերներով եւ մին րոպէումը ճեղքեց թշնամիների շրջափակ բազմութիւնը, ոմանց սպանեց, ոմանց փախուստ դարձրեց, ոմանց ձերբակալ արեց եւ այդպէս նուաճեց կրկին Գուգարաց աշխարհը։

Նոյն միջոցումը, երբ Աշոտ պարապած էր այդ պատերազմով, համանուն Աշոտ բռնաւորը, որ նոր հաշտուած էր նորա հետ, խաղաղութեան պայմանին ընդդէմ՝ գրաւեց Վաղարշապատի չորս կողմումը եղած Թագաւորի աւանները եւ ագարակները, եւ իմանալով՝ թէ Աշոտ կպատերազմէ նորա հետ այդ գործի համար, պատրաստեց զօրք։ Աշոտ Թագաւո-

(1) Շամշուղէ ամրոցը Գուգարաց աշխարհումն էր, Վրաց սահմաններին մօտ։

(2) Նոյնպէս Գուգարաց աշխարհումն էր։

րը՛ չնայելով ձմեռային ժամանակին, գնաց Վաղաւեր (1) գիւղի մօտ, ուր անկասկած նստած էր Աշոտ բռնաւորը եւ յանկարծ առաւօտեան ժամանակը դիմեց նորա վերայ, կոտորեց նորա զօրքը, Աշոտին փախուստ դարձրեց եւ ինքը գնաց Վաղարշապատ: Յովհաննէս կաթուղիկոսը մեղադրական խօսքերով յանդիմանեց երկու Աշոտին եւս նոցա թշնամական գործերի մասին միմեանց հետ, եւ յետոյ շատ աղաչանքով յորդորեց երկուսին հաշտուել. նոքա թէպէտ եւ արտաքուստ ցոյց տուեցին փոքր ինչ ժամանակ հաշտութեան նշան, բայց ներքուստ թշնամութեամբ էին միմեանց հետ, մինչեւ սուղ միջոցում սկսան կրկին պատերազմել. վարձեցին զօրք օտար ազգերից, քանդեցին, աւերեցին իւրեանց սեփական աշխարհը եւ լցրեցին Հայաստանը խռովութեամբ եւ աղմուկներով. շատ նախարարների եւ Յովհաննէս կաթուղիկոսի ջանքը եւ աշխատանքը խաղաղութիւն ձգել նոցա մէջ՝ մնացին անօգուտ:

Այդ միջոց Աշոտ թագաւորը ամուսնացաւ Գարդմանացոց (2) Սահակ Սեւադայ անունով երեւելի իշխանի դստեր հետ, եւ Յուսուփ ոստիկանը ուղարկեց նորա համար արքայական թագ եւ այլ զանազան ընծաներ այն նպատակով, որ դորանով կարողանայ որսալ նորա սիրտը, որովհետեւ միտք ունէր ապստամբուել ամիրապետից: Շուտով գնաց Աշոտ պատերազմ Աշոտ բռնաւորի վերայ՝ չլսելով ամենեւին կաթուղիկոսի խնդիրը եւ յորդորանքը թողնել այդ անօգուտ եւ ազգավնաս կռիւները, եւ այդ անգամ յաղթուեցաւ թէ իւր անհոգութեան եւ թէ Յուսուփի զօրքի դաւաճանութեան պատճառով, եւ թէպէտ

(1) Արարատեան աշխարհի Բասէն գաւառում:

(2) Այսպէս էին կոչուում Գարդմանի բնակիչները, որ Ուտի աշխարհի գաւառներից մինն էր:

գնաց, վեր առեց նոր զօրք Ափխազաց Գուրգէն իշխանից եւ կրկին պատրաստուեցաւ պատերազմ, բայց կաթուղիկոսի նոր միջնորդութիւնը եւ աղաչանքը կարողացան այդ անգամ համոզել նորան հաստատել խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Ը.

Ուտէացոց աշխարհի՝ Աշոտից կարգուած Մովսէս վերակացուն ապստամբուեցաւ այդ միջոց Աշոտի իշխանութիւնից. նորան նուաճեց Աշոտ, զրկեց կառավարչութիւնից, կուրացրեց եւ նորա տեղ վերակացու կարգեց այն տեղ Ամրամ անունով մին մարդ, որ իւր ուժեղութեան պատճառով կոչուումէր Ցլիկ: Երբոր Աշոտ զբաղուած էր այդ գործով Ուտէացոց կողմերում, նորա եղբայրը Աբաս, որին շատ սիրումէր Աշոտ, նախանձուելով նորա փառքին եւ քաջագործութիւններին, զանազան չարախօսութիւններով իւր կողմը ձգեց իւր աներոջը՝ Ափխազաց իշխանին Գուրգենին եւ նորա հետ միասին խորհուրդ արեց սպանանել Աշոտին. Աշոտ իմացաւ նոցա խորհուրդը, դիմեց զօրքով Ափխազաց երկիրը եւ աւերեց նորան. յետոյ երկու կողմից եւս երկար տեւումէր կռիւը, մինչեւ Վասակ Սիւնի, Աշոտի հօրաքեռ որդին մէջ մտաւ եւ դադարեցրեց նոցա յարձակմունքը, թէպէտ եւ ատելութիւնը մնաց. եւ Վասակի միջնորդութիւնը եղաւ իւր համար վտանգի պատճառ, որովհետեւ Աշոտ՝ ոմանց չարախօսութեամբ՝ կարծեց, թէ Վասակ խաղաղացրեց նոցա կռիւը այն նպատակով, որ բարեկամ գոլով Գուրգենին եւ Աբասին՝ կամենումէր իբր թէ տալ նոցա ժամանակ պատրաստուելու, վասնորոյ բռնեց Աշոտին եւ նստացրեց բանտ՝ Կայենոյ ամրոցը (1): Այդ գործը վիրաւորեց

(1) Կայան, Կայիւն կամ Կայէն բերդը Գուգարաց աշխարհումն էր՝ Ձորափոր գաւառումը:

Աշոտի աներաշխ Սահակ Սեւադայի սիրտը, որի շատ սիրելի բարեկամ էր Վասակ Սիւնի, մինչեւ կամեցաւ նա վրէժխնդիր լինել նորա անմեղ դատապարտութեանը պատերազմով. բաղդաւորապէս մի քանի նախարարներ համոզիչ խօսքերով եւ յանդիմանութեամբ կարողացան խաղաղութիւն հաստատել նոցա մէջ:

Մաքթէտիր ամիրապետը լսաւ Յուսուփի անողորմ արարքը Հայաստանի հետ, շատ զայրացաւ նորա վերայ, մանաւանդ երբոր տեղեկացաւ, թէ Աշոտ մտել է կայսեր իշխանութեան ներքոյ՝ միայն Յուսուփի բռնութիւնից ազատուելու համար: Յետոյ իմանալով, թէ Գագիկ Արծրունին ինքնիշխան կառավարում է իւր Վասպուրական երկիրը՝ անկախ կայսեր իշխանութիւնից, ուղարկեց նորա համար արքայական թագ եւ այլ զանազան պարգեւներ: Յուսուփին շատ ընդդէմ թուեցաւ այդ կարգադրութիւնը, որովհետեւ ունէր անշէջ ատելութիւն եւ նախանձ դէպ ի Գագիկը: Ապաւինելով իւր զօրութեանը, ծածուկ ապստամբուեցաւ ամիրապետից եւ մտածեց ինքնագլուխ տիրապետել արեւելեան կողմերը՝ իւրեան սեփականելով արքունական հարկը: Գագիկ հասկացաւ Յուսուփի միտքը եւ յայտնեց ամիրապետին, որ ուղարկեց անհամար զօրք նորան նուաճելու. Նորան բռնեցին եւ երկաթի կապանքով տարան ամիրապետի առաջը եւ ձգեցին բանտ: Նորա տեղ ամիրապետը նշանակեց Ատրպատականի ոստիկան Բուբուք իշխանին, որ մեծ սէր եւ բարեկամութիւն ցոյց տուեց Աշոտին եւ կոչեց նորան Շահնշահ, այսինքն՝ արքայից արքայ. որովհետեւ Աշոտ վեհագոյն էր քան թէ միւս Հայոց թագաւորները, այսինքն՝ քան թէ Գագիկ եւ միւս Աշոտը, եւ կամ Վրաց եւ Աղուանից, Սիւնեաց եւ Եգերացոց թագաւորները: Իսկ Գագիկ թագաւորին, որի հետ թշնամի էր նա՝ դեռեւս Յուսուփի ժամանակից, պատերազմով հարկադրեց լինել իւրեան եւ ամիրապետին հնազանդ:

Այդ ժամանակներում զանազան շփոթութիւններ 922.
էին յառաջացել Հագարացոց տէրութեան մէջ. շատ ազգեր, զոր օրինակ Եգիպտացիք, Սկիւթացիք եւ Պարսիկք ապստամբուել էին ամիրապետից եւ յարուցել էին պատերազմներ նորա վերայ: Եւ որովհետեւ Յուսուփ ոստիկանը խորամանկ եւ զօրեղ մարդ էր, համանգամայն տեղեակ արեւելեան կողմերին, վասնորոյ ամիրապետը արձակելով նորան կապանքից՝ կրկին հաստատեց առաջին իշխանութեան մէջ եւ ուղարկեց բազմաթիւ զօրքով Ատրպատական աշխարհ, որ զսպէ եւ նուաճէ պարսիկ ապստամբներին: Իսկ նա փոխանակ ապստամբներին նուաճելու, սկսաւ իւր վրէժը առնուլ Արծրունի Գագիկից, եւ այս մտքով անց կեցաւ Ասորոց Միջագետքը, եկաւ Կորդուաց կողմերը եւ մտադիր էր գնալ Վասպուրական աշխարհ: Գագիկ Արծրունին իմացաւ նորա միտքը հաւաքեց Վասպուրական աշխարհի բոլոր բնակիչներին եւ տարաւ բնակեցրեց Արարատեան աշխարհի Ծաղկոտն լերին ծործորներում. Նոյնպէս եւ Անձեւացեաց նախարարը Ատոմ՝ տարաւ Անձեւացի բնակիչներին զանազան ամուր լերանց ձորերի մէջ: Յուսուփ տեսանելով, թէ այդ երկու երկիրը՝ Վասպուրական եւ Անձեւացեաց՝ բոլորովին դատարկ են մնացել, պահանջեց եւ առացաւ Գագիկից եւ Ատոմից երկաքանչիւր աշխարհի հարկը, եւ գընաց Պարսկաստան. Հայաստանումը թողեց վերակացու Նըսր անունով մին Պարսիկ, որ ընտրեց իւր համար բնակութեան տեղ Նախիջեւան քաղաքը:

Նոր էր դեռ եւս եկած Նըսր Նախիջեւան, երբ Սիսակեանց Սմբատի եղբայրը Բաբկէն գնաց ընծաներով նորա մօտ ու չարախօսելով իւր եղբօր Սահակի վերայ, իբր թէ նա զրկում է իւրեան հայրենի ժառանգութիւնից, աղաչում էր վերակացուին տալ իւրեան օգնութիւնը, որ կարողանայ առանալ ոչ միայն իւր սեփական հայրենի ժառանգութիւնը, այլ եւ Սահակի կալուածները: Նըսր շատ ուրախացաւ երկու եղ-

բարց խռովութեանը եւ արտաքուստ խոստացաւ կատարել Բաբկենի կամքը՝ բայց սրտով ցանկանումէր, որ միւս եղբայրը եւս գայ իւր մօտ, որովհետեւ միտք ունէր բռնել եւ կապել երկուսին եւս, եւ իւրեան դրաւել նոցա ստացուածը: Սատապատիր խօսքերով հրաւիրեց իւր մօտ Սահակին, որ չիմանալով նորա դաւաճանութիւնը՝ գնաց նորա մօտ, եւ նա տարաւ երկու եղբարցը Դուին եւ այն տեղ շղթայակապ ձրգեց բանտ: Յետոյ հետեւումէր բռնել Յովհաննէս կաթուղիկոսին, որ այն ժամանակ գոլով Այրի վանքումը [1], ինչպէս իմացաւ ոստիկանի խորհուրդը, գնաց բնակուեցաւ Սեւանայ վանքումը [2] եւ յետոյ այն տեղի կրօնաւորների խորհրդակցութեամբ առաւել ապահովութեան համար Բիւրական ամրոցումը [3], որ տեղից յայտնեց ոստիկանին թղթով, թէ կգնայ Դուին՝ իւր կաթուղիկոսարանը, եթէ նա երդմամբ հաւատացնէ ոչինչ վնաս չհասուցանել իւր անձին, խոստանալով միանգամայն միշտ մեծարել նորան պարտուպատշաճ ընծաներով: Դժուար չէր պարսիկ ոստիկանին տալ այդպիսի երդումն եւ շուտով պատառել երդմնաթուղթը գործով: Նա ուղարկեց Այրի վանք իւր զօրքը, որ զանազան տանջանքներով չարչարեցին այն տեղի միաբանոց՝ պահանջելով նոցանից իբր թագուցած գանձը, յափշտակեցին եկեղեցու բոլոր զարդը եւ այրեցին փայտակերտ շինուածները: Յետոյ ոստիկանի հրամանով դիմեցին Բիւրական ամրոցի վերայ՝ կաթուղիկոսին բռնելու համար. բայց նա յառաջագոյն իմանալով զօրքի

(1) Այրի վանքը՝ Սիւնեաց աշխարհի Գեղարքունի գաւառումն էր:

(2) Սեւանայ վանքը՝ իւր համանուն Սեւան կղզիումն էր, Գեղամի ծովի վերայ Սիւնեաց աշխարհումը:

(3) Բիւրական ամրոցի գաւառը չեն նշանակում ոչ Յովհաննէս կաթուղիկոսը եւ ոչ այլք. բայց նորա պատմելով այդ ամրոցիկը նորա սեփական կալուածն էր, ուր կային եւ ներանոս բնակիչներ հողագործ, եւ հարկ էին տամ կաթուղիկոսին:

դալուստը, շտապով դուրս եկաւ ամրոցից եւ գնաց Բագարան՝ Աշոտ բռնաւորի մօտ։ Ամրոցի բնակիչները չկարողացան փախչել եւ մնացին այն տեղ Հայոց փոքրաթիւ զօրականների հետ, որ եկել էին կաթուղիկոսին եւ ժողովրդին պաշտպանելու, եւ երբ թշնամիները պաշարեցին ամրոցը, նոքա բոլորեքեան հաղորդուեցան Քրիստոսի մարմնոյ եւ արեանը, եւ յետոյ մեծ քաջութեամբ սկսան կռուել. եւ միայն այն ժամանակ թուլացան եւ շփոթուեցան իսկ, երբ անբաղդաբար ամրոցի զօրականներից մինը, խղճմտանքը եւ հաւատը բոլորովին կորուսած, ծածուկ մատնեց ամրոցը թշնամիների ձեռքը, որ այդ հնարքով մտան ներս, սպանեցին մինչեւ երկու հարիւր մարդ, կողոպտեցին՝ ինչ որ գտան, կանանց եւ մանկանց գերի վարեցին, սպանելոց գլուխները վեր առեցին իւրեանց հետ գնացին ոստիկանի մօտ. իսկ այն զօրականը, որ մատնեց ամրոցը թշնամիներին, փոխանակ վարձատրութեան՝ արժանի եղաւ պատուհասի, որովհետեւ ոստիկանը դատելով, որ եթէ նա հաւատարիմ չեղաւ իւրայնոց, ապա եւս առաւել դաւաճանող կլինի օտարներին, հրամայեց սպանանել նորան։

Աշոտ Երկրորդ Հայոց թագաւորը լսելով Հայաստանի անցքը եւ տեսանելով, թէ ոչ ոք օգնական չէ լինում նորան, այլ ամենեքեան կամ փախչումեն իւրեանց աշխարհից եւ կամ կռուումեն միմեանց հետ, եւ ինքը Հայաստան աշխարհը ամայացած է բոլորովին թշնամիների արշաւանքից, մտածեց գնալ ամբանալ մին առանձին տեղում եւ այս նպատակով հեռացաւ Սեւան կղզի։

Այդ ժամանակ Նըսր վերակացուն՝ Յուսուփ ոստիկանի հրամանով գնաց Ատրպատական աշխարհ (1) եւ

(1) Գարաւոնացոց կամ Խեւացոց նուաճելու համար, որ բնակուած էին Ատրպատականի սահմաններին մօտ եւ ապստամբուել էին այդ ժամանակ։

թողեց Դուինն քաղաքումը վերակացու իւր իշխաններից մինին՝ Բշըր անունով։ Այդ նոր վերակացուն լսելով, թէ Աշոտ Գեղամի կողմերումն է, ժողովեց զօրք եւ գնաց նորան նուաճելու։ Իսկ արիասիրտ Աշոտ Երկաթը՝ ոչինչ համարելով թշնամիների բազմութիւնը, պատրաստեց տասն նաւ եւ եօթանասուն սպառազինուած աղեղնաւոր մարդիկ, եւ առաջնորդելով նոցա ինքը՝ վարեց այն նաւերը ծովամարտիկ ընթացքով թշնամիների առաջը, եւ այդպէս արձանացաւ այն մարդկանց յանդիման, որ խնդրում էին նորա անձը։ Բազմաթիւ թշնամիները զարմացան Աշոտի եւ նորա հետ եղած սակաւաթիւ մարդկանց վստահութեան վերայ. մանաւանդ երբ նոքա սկսան լարել իւրեանց աղեղները եւ աջողաձեռն նետաձգութեամբ ոմանց կուրացրեցին, ոմանց խոցեցին մինչեւ ի մահ եւ ամենին առ հասարակ տապալեցին ծովեզրի վերայ, եւ այդպէս խայտառակաբար փախուստ դարձրեցին Բշըր վերակացուին։ Իսկ Նըսր ոստիկանը՝ որ գնացած էր Ատրպատական աշխարհ, դարձաւ կրկին Դուին, գրաւեց իւրեան կաթուղիկոսարանը եւ նշանակեց նորան իւր ծառաների բնակարան։ Այդ յափշտակութեանց յետ Յովհաննէս կաթուղիկոսը հեռացաւ Վասպուրական աշխարհ՝ Գագիկ Արծրունի թագաւորի մօտ, ուր թէպէտ հանգստացաւ փոքր ինչ մարմնով, բայց հոգով դառնանումէր եւ տառապումէր՝ նայելով իւր աշխարհի աւերմանը։ Սրտի թախծութիւնից, որպէս եւ Հայոց Աշոտ եւ Գագիկ թագաւորների յորդորանքով սկսաւ նկարագրել բոլոր իւր ժամանակի թշուառական աղէտալի անցքերը եւ դորանով լրացնել Հայոց ազգի պատմութիւնը, որ վաղուց սկսել էր։ Դորանից յետ փոքր ժամանակ եւս կեցաւ ցաւալի կեանքով եւ յետոյ
925. վախճանուեցաւ։

Նոյն միջոցում վախճանուեցաւ եւ Հայոց թագաւորը Աշոտ Երկրորդ, եւ որովհետեւ չթողեց որդի իւրեան ժառանգ, վասնորոյ նորա եղբայրը Աբաս

նախարարների հաւանութեամբ ընտրուեցաւ Հայոց 928—951
թագաւոր։ Սէր եւ խոնարհութիւն ցոյց տալով նրա վերակացուին, հաստատեց նորա հետ բարեկամութիւն, յետ ստացաւ կաթուղիկոսարանը (1) եւ այդձեւով հանգստացրեց Հայաստան աշխարհը, մինչեւ շատ մարդիկ Հայոց ազգից, թէ աշխարհական եւ թէ կրօնաւոր, որ Հայաստանի զանազան խռովութիւնների պատճառով թողել էին իւրեանց հայրենիքը եւ փախել էին այլ եւ այլ օտար աշխարհ, լըսելով այժմեան Հայաստանի անդորրութիւնը, կրկին վերադարձան իւրեանց հայրենիքը եւ նորոգեցին իւրեանց բնակութիւնը, եկեղեցիները եւ վանքերը, որ աւերուած եւ քանդուած էին թշնամիներից։ Կային եւս շատ կրօնաւորներ Հայոց ազգից Եգերացոց աշխարհումը բնակուած՝ ոչ իբրեւ փախստեայ, այլ իբրեւ այն երկրի հին բնակիչներ, որ Յոյների՝ կողմից քաղկեդոնական պատճառով յարուցած հալածանքից փախչելով եւ լսելով Հայաստանի խաղաղ դրութիւնը, եկան Հայաստան եւ շինեցին վանորայք։ Նոցա մէջ ողջից առաջ մին Յովհաննէս վանական շինեց Արշարունեաց կամ Երասխաձոր գաւառումը վանք, որ կոչուեցաւ Կամրջաց ձոր կամ Կամրջաձոր (2)։ Այդ ժամանակներին է վերաբերում եւ Նարեկայ վանքի շինութիւնը, որ նշանաւոր էր բազմաթիւ ճգնազգեաց գիտնական կրօնաւորներով, որոց մէջ առաւել հռչակաւոր էին Անանիա վարդապետ՝ փիլիսոփայ հզօր կոչուած, որ գրեց առանձին գիրք

---

(1) Թէպէտ եւ Հայոց կաթուղիկոսները չէին բնակւում արդէն Դուին, այլ Աղթամար՝ Ստեփանոս երկրորդ կաթուղիկոսի ժամանակից, որ Յովհաննէս կաթուղիկոսի յաջորդն էր, եւ նորա մահից յետ փոխադրեց հայրապետական աթոռը Աղթամար։

(2) Այդ վանքումը Յովհաննէսի մահից յետ վանահայր եղաւ Պօղիկարպոս, նորանից յետ Սամուէլ, որ կոչուեցաւ Կամրջաձորեցի, երաժիշտ եւ իմաստակ, եւ գրեց Տ օ ն ա պ ա տ ճ ա ռ ասած գիրքը, ուր խօսումէ տօների եւ եկեղեցական պաշտամունքների խորհրդի վերայ։

Թոնդրակեցոց ([1]) *աղանդին ընդդէմ. եւ առաւել եւս սուրբ Գրիգոր Նարեկացի, քաջ հռետոր եւ քնարերգական բանաստեղծ, որ թողեց մեզ աղօթից գիրք զարմանալի ոճով եւ բարձրաթռիչ մտքերով գրուած:*

Ինքն եւս Աբաս թագաւորը հիմնեց Կարս քաղա-
937. *քումը հոյակապ Կաթուղիկէ Եկեղեցի: Այդ միջոց Վրաց թագաւորը Բէր* ([2]) *յանկարծ դիմեց զօրքով Հայաստան եւ բանակուեցաւ Կուր գետի եզրումը հիւսիսային կողմից: Աբաս թագաւորը դեսպանի միջնորդութեամբ հարցրեց նորանից այդ անակնկալ յարձակման պատճառը. իսկ նա արհամարհելով նորա հարցմունքը՝ պատասխանեց, թէ «Եկել եմ Վրրաց օրհնութեամբ օրհնել տալու նորաշէն կաթուղիկէ Եկեղեցիդ, եւ չեմ կամենում, որ օրհնես դորան Հայոց կանոններով»: Աբաս միւսանգամ ուղարկեց նորա մօտ դեսպան եւ առաջարկեց հեռանալ այն տեղից եւ չլինել պատճառ ի զուր կոտորածի երկու կողմից. եւ երբ նա չկատարեց նորա առաջարկութիւնը, այն ժամանակ Աբաս յառաջ տարեց իւր զօրքը Կուր գետի մօտ. Գէորգ իշխանին առանձին զօրականներով ուղարկեց գետի միւս կողմը, ուր նա մեծ խռովութիւն եւ շփոթ ձգեց թշնամիների մէջ, եւ ինքը Աբաս այս կողմից իւր հետ եղած մարդիկով սկսաւ նետաձիգ լինել, եւ այդ ձեւով հարկադրեց թշնամիներին փախուստ դառնալ: Եւ թէպէտ միւս օրը Վրացոց թագաւորը Բէր կրկին հաւաքեց եւ կարգադրեց իւր զօրքը, եւ տեսանելով, թէ Հայերը յաղթութեամբ ուրախացած՝ անհոգ նստած են, անց կեցաւ Կուր գետը եւ յարձակուեցաւ Հայոց բանակի վերայ, բայց Աբաս թագաւորը՝ սուրը ձեռին՝ մտաւ իւր զօրքով թշնամիների*

([1]) Աւելորդ չէ պատմել աշակերտներին Թոնդրակեցոց աղանդի զինչութիւնը, նորա սկիզբը, շարունակութիւնը եւ վերջանալը:

([2]) Այն Վրացոց կամ Ափխազաց, որ կային Սարմատացոց սահմանների մօտ:

մէջ եւ այնչափ քաջութիւն գործեց, մինչեւ Բէր իւր զօրքով դարձաւ յետ, եւ գետը անցանելու ժամանակը՝ Հայերը նոցանից շատին ջրի մէջ խեղդեցին, շատին սրով սպանեցին, իւրեան Բէրին բռնեցին եւ ձեռները կապած տարեցին նորաշէն կաթուղիկէ Եկեղեցի, ուր Աբաս ասեց նորան՝ «Ահա այս է Աստուծոյ տաճարը, որ դու կամենում էիր օրհնել. տես այժմ սորա գեղեցկութիւնը, որովհետեւ շուտով ոչինչ չես կարող տեսանել». եւ յետոյ հրամայեց նորան կուրացնել:

Թէպէտ Հայաստանի քաղաքական դրութիւնը խաղաղուած էր այդ ժամանակ, բայց նորա կրօնական
վիճակը դղրդուեցաւ խռովութիւններով, որոց պատ- 943.
ճառը եղան Յոյնք, հալածանք յարուցանելով Հայաստանի յունական բաժնի մէջ եղած Հայերի վերայ՝ Քաղկեդոնի ժողովի պատճառով: Յոյնք սկսան այդ ժամանակ առաւել խստութեամբ վարուել Հայոց հետ, անարգել եւ նզովել նոցա եւ նոցա Եկեղեցին, պախարակել նոցա եկեղեցական խորհուրդները իբրեւ անվաւեր, եւ եթէ Հայերից ոմանք հարկադրուած ընդունում էին Քաղկեդոնի ժողովը, նոցանից պահանջում էին փոխել եւ ծէսերը, ընդունել յունական արարողութիւնները եւս. եւ եթէ մին քանի մարդ եւ այդ յանձն էր առնում, այնպիսիներին կրկին անգամ մկրտում էին եւ կամ նոր դրոշմում էին դանեա. իսկ եթէ քահանայ էր լինում նա, նորան միւս անգամ ձեռնադրում էին: Այսպիսի հալածանք եւ նեղութիւններ ստիպեցին շատ Հայերի թողնել իւրեանց բնակութիւնը յունական բաժնումը եւ գնալ Մեծ Հայաստան՝ Շիրակայ եւ Փոքր Վանանդի [կողմերը. եւ որովհետեւ նոցանից շատը մկրտուած էր արպայութեան ժամանակը Յունաց Եկեղեցու կանոններով, վասնորոյ Անանիա կաթուղիկոսը հրամայեց կըրկին մկրտել նոցա, մանաւանդ որ Յոյնք ինքեանք ցոյց էին տուել այդ կրկնամկրտութեան օրինակը. այդ բանով աւելի զօրացաւ եւ աւելի խոր արմատա-

ցաւ Յունաց եւ Հայոց մէջ եղած ատելութիւնը, որով մին քանի մարդ առաւել վառուած, գրեցին նա եւս Ջատագովութիւն կրկին մկրտութեանը եւ շատերին եղան գայթակղութեան առիթ: Յոյնք եւ Հայք նզովում էին միմեանց եւ մինը միւսի անունը առանց նախատական անուան չէր յիշում ամենեւին. եւ եթէ պատահում էին մարդիկ, որ խրատում էին թողնել այդ ատելութիւնը դէպ ի միւս քրիստոնեայ ազգը, այնպիսիներին արհամարհում էին եւ կոչում էին ծայթ, այսինքն թերահաւատ:

ԳԼՈՒԽ Թ.

Այդ ատելութեան ժամանակը Յունաց եւ Հայոց
մէջ հաւատական մասին, պատահեցաւ Քրիստոսի
անձեռագործ պատկերի կամ սուրբ դաստառակի փո-
944. խադրութիւնը Եդեսիա քաղաքից Կոստանդնուպոլիս:
Ի՞նչ կարող էին անել Հայք, եթէ մին կողմից Յու-
նաց կայսրը, միւս կողմից Եդեսիայի այլազգի իշխա-
նը հարկադրում էին տալ օտարին քրիստոնէական եւ
պատմական՝ դարերով անկորուստ պահպանուած ազ-
գապարծանք յիշատակարանը՝ Յունաց կայսեր սըր-
տումը յանկարծօրէն զարթնած ջերմեռանդութիւնը
կատարելու համար: Տկար մարդը միշտ մեղաւոր է
զօրեղի առաջեւ, եւ այդ անգամ շատ ճշմարտուեցաւ
առածը Հայոց մասին: Ռոմանոս կայսրը՝ Լակապէն
ասած, Կոստանդին Պերփիւռուժենի աները եւ աթո-
ռակիցը, փափագելով ձեռք բերել Քրիստոսի դաս-
տառակը եւ նորա գրած թուղթը Հայոց Աբգար թա-
գաւորին, դեսպանի միջնորդութեամբ առաջարկեց
Եդեսիայի բնակիչներին շնորհել խրեան այն դաս-
տառակը եւ նամակը, նմանապէս խնդրեց քաղաքի
Սիւլէյման այլազգի իշխանին համոզել ժողովրդեանը
կատարել իւր փափագը, խոստանալով այդ մասին
տասն հազար դահեկան: Եդեսացիք ամենեւին չյօ-
ժարացան այդ բանին, նա եւս լսել անգամ չկամե-

ցան՝ փոխանակել արծաթի հետ Փրկչի կենդանագիրը. եւ որչափ կայսրը յաւելցնումէր իւր խոստումունքը եւ ողոքանքը, այնչափ առաւել ընդդիմանում էին նոքա նորա կամքին: Կայսրը ուղարկեց մեծ զօրք եւ պաշարեց Եդեսիա քաղաքը. Սիւլէյման իշխանը հարկադիր եղաւ յայտնել կայսերը, թէ կկատարէր նորա ցանկութիւնը, եթէ նա բաց ի յիշած խոստմունքից տայ գրաւոր երդումն չպատերազմել երբէք չորս քաղաքի հետ՝ Եդեսիայի, Խառանի, Սրուճի եւ Սամուսատի. կայսրը ուրախութեամբ ընդունեց այդ պայմանը, տուեց երդման թուղթը եւ խոստացած դրամը, յետ կոչեց իւր զօրքը, եւ ուղարկեց Եդեսիա Սամուսատի Աբրամ եպիսկոպոսին, որ այն ժամանակ Կոստանդնուպոլիս էր, վեր առնել եւ բերել Քրիստոսի դաստառակը եւ թուղթը: Եդեսիայի բընակիչները թէպէտ եւ դղրդուեցան, բայց քաղաքի իշխանը՝ ոմանց քաղցրութեամբ եւ ոմանց սպառնալիքով հանդարտեցրեց, եւ Աբրամ եպիսկոպոսը մին քանի այլ եպիսկոպոսներով հանդերձ առեց Փրկչի պատկերը եւ թուղթը եւ բերեց Կոստանդնուպոլիս (1): Աբգարի թուղթը Քրիստոսին գրած եւ Քրիստոսինը՝ Աբգարին, թարգմանուեցան, նոցա փոխադրութիւնից յետ, Յունաց եւ Արաբացոց լեզու: Նա ժամանակից յետ, 1325 թուականին, երբ Յունաց կայսերաց շփոթութեան պատճառով աւար եղան շատ գանձեր, նոցա հետ անհետացաւ եւ Քրիստոսի թուղթը Աբգարին գրած, եւ թէ ինչ եղաւ յետոյ՝ յայտնի չէ. իսկ սուրբ դաստառակը Կոստանդնուպոլսից փոխադրուեցաւ Հռոմ:

Հայոց թագաւորը Աբաս վախճանուեցաւ եւ թողեց երկու որդի՝ Աշոտ եւ Մուշեղ: Թշնամիները ինչ- 951.

---

(1) Յետ ժամանակաց Քրիստոսի թուղթը տարուաւ կրկին Եդեսիա. եւ երբ Յոյնք առեցին այդ քաղաքը այլազգիների ձեռից Ռոմանոս երրորդ կայսեր ժամանակը, 1030 թ. միւսանգամ բերուեցաւ Կոստանդնուպոլիս:

պէս լսան Աբասի մահը, յարձակուեցան Հայաստանի զանազան երկիրները եւ շատ չարիք գործեցին։ Բայց Աբասի անդրանիկ որդին Աշոտ զօրացաւ իւր համանուն հօրեղբօր նման, ժողովեց քաջ եւ ահաւոր մարդիկ մինչեւ երկու հազար եւ նոցա հետ միասին սկսաւ շրջել Հայաստանի այլ եւ այլ երկիրները. ուր որ լսումէր ապստամբների արշաւանքը, սաստկութեամբ հասանումէր նոցա վերայ, կոտորումէր եւ վանումէր բոլորին, եւ այդպիսի արիասրտութեամբ մեծ ահ ձգեց թշնամիների սիրտը։ Հայք լսելով Աշոտի քաջութեան համբաւը, այլ եւ այլ կողմերից եկան հաւաքուեցան նորա մօտ եւ յաւելցրեցին նորա զօրականների թիւը, այնպէս, որ Աշոտի բոլոր զօրքը եղաւ այդ ժամանակ մինչեւ 80 հազար մարդ, եւ նորանով մեծ քաջութիւններ եւ երեւելի յաղթութիւններ գործեց նա եւ զարմացրեց ամենեցուն։

Աշոտ Գ․ Ողորմած, 951—977.

Հայոց ազգը տեսանելով Աշոտի արիասրտութիւնը, Անանիա կաթուղիկոսի խորհրդակցութեամբ, ընտրեց նորան իւր թագաւոր, որ օծուեցաւ Անի քաղաքումը, ուր եւ հաստատուեցաւ այնուհետեւ թագաւորութեան աթոռը։

Համտուն անունով մին ամիրայ, որ առաջ ամիրապետի սպարապետն էր եւ յետոյ նորանից ապստամբուած բռնացել էր ինքնագլուխ Ազձնեաց աշխարհումը, լսելով Աշոտի զօրանալը եւ թագաւորելը, պահանջեց նորանից ծանր հարկ սաստիկ հրամանով. եւ երբ Աշոտ մերժեց նորա պահանջմունքը, եկաւ զօրքով Աշոտի վերայ, որ հարկադիր եղաւ դուրս գալ նորա առաջը, յաղթեց նորա զօրքը եւ իւրեան Համտունին սպանեց։ Այդ յաղթութեան համար ամիրապետը ուղարկեց Աշոտին զանազան պարգեւներ եւ թագ, եւ կոչեց նորան Հայոց թագաւոր (Շահի Արմէն), որ եւ իւր բարեգործութիւնների պատճառով կոչուումէ եւս՝ Ողորմած։

Երբոր այդ ձեւով Աշոտի թագաւորութիւնը հաստատուեցաւ, ամրացրեց նա իւր աշխարհի ամենայն

տեղերը, շինեց Անի քաղաքի ներքին պարիսպը, հիմնեց եկեղեցիներ եւ ամրոցներ։ Նորան նման եւ նորա կինը՝ Խոսրովանոյշ թագուհին նշանաւոր է մեր ազգի մէջ զանազան բարեգործութիւններով, աղքատներին եւ հիւանդներին հովանաւորութեամբ, խոնարհ վարքով, եկեղեցիների եւ վանքերի շինութեամբ (1). մին խօսքով՝ եղաւ Հայոց ազգի համար ողորմասիրտ գթառատ մայր եւ արժանաւոր թագուհի։

Աշոտ Երրորդ Ողորմած վախճանուեցաւ Վասիլ եւ Կոստանդին Յունաց կայսերաց թագաւորութեան երկրորդ տարին (977), եւ երեք տարուց յետ սրբակրօն թագուհին Խոսրովանոյշ։ Նոցանից մնացին երեք որդի՝ Սմբատ, Գագիկ եւ Գուրգէն, որոց մէջ Սըմբատ, որ անդրանիկն էր, իւր հօր մահից յետ նստաւ նոյն օրը թագաւոր Անի քաղաքումը, եւ կոչուեցաւ Տիեզերակալ։ Սա ցանկալով թողնել իւր յիշատակը տէրութեան մէջ, շինեց Անի քաղաքի չորս կողմումը բարձր եւ անխախտելի պարիսպ եւ պատեց պարիսպը խոր եւ լայնատարած խրամով. քաղաքի մէջ հիմնեց շատ եկեղեցիներ եւ հիմն ձգեց շինելու Կաթուղիկէ եկեղեցի՝ Տրդատ հայազգի երեւելի ճարտարապետի ձեռով, բայց չկարողացաւ աւարտել այդ եկեղեցին իւր մահուան պատճառով։ Այդպիսի շինութիւններով Անի քաղաքը սկսաւ մեծանալ, բնակիչները բազմացան, հետ զհետէ շինուեցան տուներ եւ ապարաններ, որ եղան թուով մինչեւ հարիւր հազար, իսկ եկեղեցիները՝ հազար եւ մին, մինչեւ սովորութիւն եղաւ ռամիկների մէջ երդում ուտել Անի քաղաքի հազար մին եկեղեցով (2)։

Սմբատ Բ Տիեզերակալ, 977—989.

(1) Նոցա մէջ յայտնի են երկու երեւելի վանք՝ Սանահին եւ Հաղբատ գիւղերումը շինած, Ուտի աշխարհումը, գաւառը անծանօթ։

(2) Տես Ստորագրութիւն հին Հայաստանեայց, ի Վենետիկ, 1822. եր. 420, Անի։

Սմբատ Տիեզերակալի մահից յետ թագաւորեց
Գագիկ Ա., Հայաստանում, նորա եղբայրը Գագիկ, Ողորմած Ա-
989—1020. շոտի միջին որդին: Դեռ եւս չէր կատարել Գագիկ
իւր թագադրութեան հանդէսը, երբ մին կին Անի
քաղաքումը սկսաւ պատմել ամենեցուն իւր երազը,
իբր թէ Սմբատ թագաւորը երեւել է նորան եւ ա-
սել է, թէ նա մեռած չէ, այլ կենդանի է գերեզ-
մանում: Այդ համբաւը, չնայելով նորա ստութեա-
նը, դղրդեց բոլոր քաղաքը եւ այնքան շփոթութիւն
եւ աղմուկ յարուցրեց ժողովրդի եւ զօրքի մէջ, որ
Գագիկ թագաւորը ստիպուեցաւ, ժողովրդի միտքը
խաղաղացնելու համար, հրամայել հանել գերեզմա-
նից Սմբատ թագաւորի դին եւ ցոյց տալ բնակիչնե-
րին. եւ երբ այդ հրամանը կատարեցին, այն ժամա-
նակ միայն վերջացաւ քաղաքի խռովութիւնը:

Գագիկ թագաւորը շինեց Անի քաղաքումը Եկեղե-
ցի Գրիգոր Լուսաւորչի անունով. որպէս եւ նորա
կինը՝ բարեպաշտ եւ աղօթասէր թագուհին Կատրա-
միդէ լրացրեց եւ զարդարեց մեծ վայելչութեամբ
Սմբատ թագաւորի սկզբնաւորած կաթուղիկէ Եկեղե-
ցին նոյն քաղաքում:

Թագաւորի եղբօր Գուրգէնի որդին Դաւիթ, որ
իւր հօր մահից յետ տիրապետումէր Տաշրաց կողմե-
րումը, ապստամբուեցաւ թագաւորից եւ իւր ան-
հնազանդութեամբ ստիպեց Գագիկին զօրաժողով լի-
նել եւ գնալ աւերել Տաշիր գաւառը Դաւթի իշխա-
նութեան տեղին: Թէպէտ եւ Դաւիթ մին եւ երկու
անգամ պատրաստուեցաւ պատերազմ, սակայն խռո-
վութիւնը չտեւեց երկար. Սարգիս կաթուղիկոսի
միջնորդութեամբ հաստատուեցաւ նոցա մէջ խաղա-
ղութիւն, եւ Դաւիթ խոստացաւ հնազանդել Գագի-
կին իբրեւ իւր հօրը:

Գագիկ թագաւորը վախճանելով ծերութեան հա-
սակում, յանձնեց աշխարհի կառավարութիւնը իւր
Յովհաննէս, երէց որդուն Յովհաննէսին, որ կոչուումէր եւս
1020—1039. Սմբատ: Սա թէպէտ հանճարեղ մարդ էր, բայց

պատերազմական գործերին անհմուտ. ընդ հակառակն սորա եղբայրը Աշոտ շատ զօրաւոր եւ անպարտելի. վասնորոյ եւ արհամարհեց իւր եղբօրը եւ կամեցաւ ինքը թագաւորել նորա տեղ։ Այդ բանը ինչպէս իմացաւ Վրաց եւ Ափխազաց թագաւորը Գորգի, դեսպանի ձեռով ուղարկեց Յովհաննէսի համար արքայական թագ եւ յայտնեց, թէ միայն Յովհաննէսին է ճանաչում Հայոց թագաւոր։ Աշոտ զայրացաւ, զօրք ժողովեց, վեր առեց եւս Սենեքերիմ Վասպուրականի թագաւորից այլ օգնական զօրք, եւ գնաց Շիրակ գաւառ Անի քաղաքի վերայ: Պատերազմումը թէպէտ Աշոտ յաղթող գտանուեցաւ առաջին անգամ, բայց դեռ եւս չէր աւարտուած վէճը երկու եղբօր մէջ, երբ Պետրոս կաթուղիկոսը՝ Գետադարձ մականուանած եւ Հայոց նախարարները՝ Գորգի Վրաց թագաւորի հետ միասին հաշտութիւն խօսեցին երկու կողմի մէջ եւ դրեցին այնպիսի պայման, որ Յովհաննէս լինի իշխող Անի քաղաքում եւ Շիրակ գաւառում, իսկ Աշոտ՝ իբրեւ երկրորդ թագաւոր, իշխէ այլ աշխարհներին եւ Յովհաննէսի մահից յետ լինի ամենայն Հայոց թագաւոր։ Թէպէտ այդպիսի պայմանադրութեամբ հանդարտուեցան երկու եղբայր, բայց նախարարները չէին թողնում նոցա հանգիստ, եւ անդադար խռովութեան առիթ էին լինում նոցա մէջ։ Նոցանից ոմանք, որ Աշոտի կողմումն էին, կարողացան գրգռել Գորգի Վրաց թագաւորին՝ Յովհաննէսին ընդդէմ, մինչեւ նա ուղարկեց յիրաւի զօրք եւ յայտնեց պատերազմ Յովհաննէսին։ Պատուիրած էին զօրքին հետեւել առանց կռուի բռնել Յովհաննէսին մին հնարքով. վասնորոյ երբ պատահեցաւ նորան գնալ իւր ձմերոցը, Վրաց զօրականները յանկարծ հասան նորա վերայ, բռնեցին եւ տարան Վրաց աշխարհ, ուր Գորգի նստացրեց նորան բանտ եւ յետոյ զանազան պայմաններով (նորանից վեր առեց երեք բերդ) արձակեց։ Աշոտ իւր կողմից, տեսանելով, թէ քանի կենդանի է իւր

եղբայրը Յովհաննէս, նախարարները չեն միաբանում ոչ իւր եւ ոչ նորա հետ, վճռեց իւր մըտքումը կորուսանել Յովհաննէսին իբր աշխարհը խաղաղացնելու համար: Այս նպատակով ձեւացաւ հիւանդ, հրաւիրեց իւր եղբօրը տեսութիւն իւր մօտ եւ դրեց որոգայթ իւր մահճի մօտ, պատուիրելով Ապիրատ անունով իւր սիրելի եւ հաւատարիմ իշխանին, որ երբ Յովհաննէս կընկնէ այն որոգայթը, բռնէ, կապէ նորան եւ տանէ մին տեղ՝ սպանէ: Միամտութեամբ գնաց Յովհաննէս իւր հիւանդ կարծեցած եղբօրը տեսութիւն եւ երբ մօտեցաւ նորա մահճակալին, ընկաւ այն պատրաստած որոգայթը եւ սկսաւ բարձր ձայնով խնդրել Աշոտին ազատել նորան կամ գոնեա խնայել նորա կեանքը. Ապիրատ իշխանը կապեց Յովհաննէսին Աշոտի առաջեւ եւ տարաւ իբր սպանելու, որպէս պատուիրած էր նորան Աշոտ. բայց փոխանակ սպանելու, նստացրեց կրկին նորա թագաւորական աթոռը Անի քաղաքում: Աշոտ շատ զայրացաւ, բայց որովհետեւ ոչինչ չկարողացաւ անել, թողեց ամօթից Հայաստանը եւ գնաց Կոստանդնուպօլիս Վասիլ կայսեր մօտ, որի օգնութեամբ յետոյ վերադարձաւ կրկին Հայաստան, հնազանդեցրեց շատ նախարարների, առեց շատ գաւառ եւ բերդ, ճանաչելով սակայն Յովհաննէսին իբրեւ նախագահ թագաւոր:

1021. Յովհաննէս Սմբատ թագաւորի տիրակալութեան երկրորդ տարին յարձակուեցան անհամար բազմութեամբ Հայաստանի Վասպուրական աշխարհումը, ուր իշխումէր այն ժամանակ Սենեքերիմ, Սկիւթացի թաթարները. եւ թէպէտ նոցա առաջը դուրս եկան Հայոց զօրքը Շապուհ սպարապետի առաջնորդութեամբ եւ նոցանից շատերին կոտորեցին սրով, բայց ոչ սակաւ մարդիկ սպանուեցան եւ Հայոց ազգից. մանաւանդ որ Հայոց վերայ մեծ ներգործութիւն ունեցաւ Թաթարների ահաւոր տեսիլը, որովհետեւ նոքա ամենեքեան հերարձակ էին կանանց նը-

ման եւ նոցա աղեղները մեծ եւ լայնակամար, որ-
պիսի երբէք չէին տեսած դեռ եւս Հայք: Հայոց զօր-
քը դարձան Ոստան քաղաք ([1]) եւ պատմեցին Սենե-
քերիմին պատերազմի անցքը, շատ մարդկանց կո-
տորածը եւ թշնամիների կերպարանքը եւ բոլոր որ-
պիսութիւնը: Սենեքերիմ տրտմեցաւ. մին քանի օր
տխուր նստած էր անընդհատ մտածմունքի մէջ. դո-
լով ընթերցասէր մարդ եւ մարգարէական գրուած-
ների մեկնութեամբ եւ քննութեամբ պարապող, մա-
նաւանդ եւս յիշելով մեծն Ներսէսի կանխասացու-
թիւնը, ժողովեց իւր մօտ իւր որդոցը եւ բոլոր ազ-
գականներին, յայտնեց նոցա իւր հաստատուն դի-
տաւորութիւնը տալ Վասպուրական աշխարհը Յունաց
Վասիլ կայսերը եւ նորա փոխարէն ստանալ Սեբաս-
տիա ([2]) քաղաքը եւ այն տեղ հանգստութեամբ ան-
ցուցանել իւր կեանքը. որովհետեւ աներկբայ կար-
ծումէր, թէ հասել է արդէն Հայաստանի իշխանու-
թեան վախճանը: Այդ իւր միտքը յիրաւի յայտնեց
կայսերը, որ սիրով ընդունեց Սենեքերիմի առա-
ջարկութիւնը, ստացաւ նոցանից Վասպուրական աշ-
խարհը եւ տուեց նորան Սեբաստիա քաղաքը. եւ
Սենեքերիմ հաւաքեց իւր որդոցը, իւր բոլոր ազ-
գականներին, նա եւս շատ մարդ ռամիկ ժողովըր-
դից՝ համարեա Վասպուրական աշխարհի չորրորդ-
մասը, գնաց, կոչեց նոցա հետ Սեբաստիա եւ բնա-
կուեցաւ այն տեղ: Սկիւթացի թաթարները հեռա-
ցան Վասպուրական աշխարհից եւ գնացին տիրապե-
տեցին այլ զանազան երկիրներ. նոցա մէջ առաւել
երեւելին եւ գլխաւոր Տուղրիլ Բէկ գնաց բազմու-
թեամբ Նախջեւան, այն տեղից Դուին եւ Նիգ գա-
ւառը եւ սփռեց այն երկիրներում իւր ասպատակու-

([1]) Վասպուրական աշխարհի Ռշտունեաց գաւառումը՝ Բզնու-
նեաց ծովի մօտ:

([2]) Ռամկօրէն՝ Սեւաստ, Առաջին Հայոց հռչակաւոր մայրաքա-
ղաք:

թիւնը․ եկեղեցիները այրեց եւ ստիպեց բնակիչնե-
րին ուրանալ քրիստոնէութիւնը։ Բայց Նիգ գաւա-
ռումն էր այն ժամանակ Վասակ Պահլաւունին՝ Հայոց
սպարապետը, Գրիգոր Մագիստրոսի հայրը։ Սա տե-
սանելով Տուղրիլ Բէկի բռնակալութիւնը թէ Հայոց
աշխարհի եւ թէ քրիստոնէութեան վերայ, հրաման
հրատարակեց ամենայն տեղ, թէ ով որ կամենումէ
պատերազմել քրիստոնէական հաւատի համար, թող
գայ նորա ետեւից։ Ժամանակը կարճ էր եւ Վասա-
կին չէր ներում երկար սպասել, վաղորդոյ վեր ա-
ռեց նա իւր հետ միայն հինգ հարիւր մարդ, որ
արդէն պատրաստ էին եւ գնաց Տուղրիլի առաջը։
Սկիւթացոց մէջից մին յաղթանդամ եւ զօրաւոր
մարդ ձայն տուեց Հայոց զօրավարին եւ կոչեց իւր
առաջը։ Դուրս եկաւ Վասակ, որպէս Դաւիթ Գողիա-
թին յանդիման, խփեց սրով նորա սաղաւարտին եւ
գլխի կէսը ձգեց վայր։ Սկիւթացիք կատաղած գա-
զանների նման դիմեցին Հայոց վերայ, որ կարողա-
ցան այնքան քաջութեամբ կռուել բազմաթիւ թշ-
նամիների հետ, մինչեւ երկու կողմը հաւասար զօ-
րութեամբ բաժնուեցան միմեանցից։ Այսպէս խոր-
տակեց Վասակ Պահլաւունի Սկիւթացոց զօրութիւնը
եւ երբ յետ դարձաւ պատերազմից եւ սկսաւ աղօ-
թել եւ գոհութիւն մատուցանել Աստուծոյ իւր յաղ-
թութեան համար, թշնամիներից՝ մինը որ թագ-
նուած էր այն տեղ, յանկարծ քարակոծ արեց նորա
գլուխը, եւ նա մեռաւ՝ Աստուած փառաբանելով եւ
այդ պատճառով կոչուեցաւ Վասակ Նահատակ։

Վրաց եւ Ափխազաց թագաւորը Գորգի ապստամ-
բուեցաւ Յունաց իշխանութիւնից․ նորան ձեռնտու
էր այդ գործումը եւ խորհրդակից մեր Յովհաննէս
թագաւորը․ Վասիլ կայսրը հարկադրուած գնաց նո-
րա վերայ պատերազմով եւ նուաճեց նորան։ Հայոց
թագաւորը, տեսանելով, թէ Վրաց թագաւորը յաղ-
թուեցաւ, սկսաւ կասկածել, թէ մի գուցէ կայսրը
գայ եւ իւր վերայ․ եւ երբ այդպիսի վարանման

մէջ էր նա, համբաւ եկաւ, թէ Վասիլ կայսրը գամէ զօրքով Հայոց աշխարհ, թէպէտ նա ոչ թէ Հայաստան, այլ Խաղտիք էր գնում. բայց եւ այնպէս՝ Յովհաննէս թագաւորը երկնչելով հրատարակուած համբաւից, մտածեց ընծայել կայսերը Անի քաղաքը իւր գաւառով հանդերձ, որ լինի այդ ձեւով հանդիստ թէ Յունաց եւ թէ այլ օտար ազգերի կողմից, մանաւանդ որ ինքը անզաւակ էր։ Այդ իւր հաստատ յառաջադրութիւնը յայտնեց կայսեր թղթով, որը որ ուղարկեց Պետրոս կաթուղիկոսի ձեռով Խաղտեաց աշխարհ, ուր այն ժամանակ գտնուումէր կայսրը, եւ պէտք էր մնար բոլոր առաջիկայ ձմեռը։ Կայսրը ուրախութեամբ ընդունեց առաջարկութիւնը. մեծ սէր եւ պատիւ ցոյց տուեց Պետրոս կաթուղիկոսին եւ պահեց նորան իւր մօտ առ ժամանակ ինչ։ Ջրօրհնէքի տօնի օրը խնդրեց նորան օրհնել ջուրը գետի վերայ Հայոց ծիսով. օրհնութեան ժամանակը, երբոր Հայրապետը խաչախնքեց գետի ջուրը կենաց փայտով, իսկոյն ջրի ընթացքը կանգնեց. ամենեքեան տեսան այդ սքանչելիքը եւ զարմացան. Վասիլ կայսրը շատ մեծարեց եւ յետոյ արձակեց Հայրապետին, որ այդ յիշած պատճառով կոչուեցաւ Գետադարձ։

ԳԼՈՒԽ Ժ.

1028. Յունաց կայսրը Կոստանդին՝ Վասլի եղբայրը՝ իւր մահից առաջ հրամայեց գտնել եւ կոչել իւր մօտ մին հաւատարիմ մարդ Կոստանդնուպոլիս եղած Հայերից։ Գնացին, գտան մին քահանայ Կիրակոս անունով, որ Հայոց կաթուղիկոսարանի հիւրատեան էր եւ եկած էր այդ ժամանակ Կոստանդնուպոլիս մին գործի համար. սորան կոչեցին կայսեր մօտ, եւ կայսրը տուեց այդ Կիրակոս քահանային Յովհաննէս թագաւորի ձեռագիրը, որով ընծայել էր նա Վասիլ կայսեր Անի քաղաքը բոլոր գաւառով հանդերձ, եւ

ասեց նորան՝ «Տա՛ր այդ գիրը եւ տո՛ւր քո թագա-
ւորիդ, եւ ասա՛ ինձանից, թէ որովհետեւ հասել է
ինձ մահուան ժամը, վասնորոյ յետ եմ դարձուցա-
նում նորա թուղթը եւ ցանկանումեմ, որ նա տայ
իւր թագաւորութիւնը իւր որդուն կամ ազգին»:
Կիրակոս քահանան վեր առեց այն թուղթը, թաք-
ցրեց իւր մօտ եւ լուռ մնաց: Կոստանդին կայսրը
վախճանուեցաւ եւ նորա տեղ ընտրուեցաւ կայսր
նորա փեսան Ռոմանոս երրորդ, որ թագաւորեց մի-
այն հինգ տարի եւ կէս. Նորան խեղդեցին սպասա-
ւորները բաղանիսումը, եւ այդ սպանութեան խոր-
հրդին կամակից էր Զոյեա թագուհին Միքայէլ
Պափլագոնացի իշխանի հետ միասին, որ նոյն օրը
1034. նստաւ կայսր եւ ամուսնացաւ թագուհու հետ: Այդ
Միքայէլ կայսերը վաճառեց Կիրակոս երէցը Յովհան-
նէս թագաւորի ձեռագիրը, որ ստացել էր Կոստան-
դին կայսրից, յայտնի բան է բաւականացուցիչ գնով:

Ինքը Յովհաննէս թագաւորը վախճանուեցաւ 1039
թուականին, որպէս եւ նորա եղբայրը Աշոտ: Նորա
Միջոց մահից յետ Հայաստանը մնաց առանց թագաւորի,
պարապոյ, որովհետեւ նորանից չէր մնացել որդի, եւ թէպէտ
1039—1042. նորա եղբօր Աշոտի որդին Գագիկ պէտք էր լինէր
թագաւորութեան ժառանգ, բայց ոչ ոք դեռ եւս
հոգ չէր տանում նորան թագաւոր կարգելու: Այդ
միջոցում Միքայէլ կայսրը ինչպէս լսաւ Յովհաննէս
թագաւորի մահը, յարմար ժամանակ համարեց սե-
փականել իւրեան Անի քաղաքը՝ իբրեւ իւր ժառան-
գութիւնը, իւր ձեռումը ունեցած պարգեւաթղթի
զօրութեամբ. վասնորոյ ուղարկեց Հայաստան դես-
պան եւ պահանջեց քաղաքը, եւ երբ Հայերը չհա-
մաձայնեցին կատարել նորա պահանջողութիւնը, ու-
ղարկեց մեծ զօրք Հայաստան, որ եկան պաշարեցին
Անի քաղաքը: Այս տեղ պատմութիւնը պատկերա-
ցնումէ մեզ Վեստ Սարգիս նախարարի սեւաթոյր կեր-
պարանքը; նորա սեւախորհուրդ ազգասպան դաւա-
ճանութիւնը, որ բոլորովին ուրացած ազգ եւ հայ-

բենիք, մոռացած ամենայն մարդկային խիղճ եւ զգայութիւն, հանդիսացաւ Բագրատունեաց տէրութեան կործանման առիթը: Անի քաղաքի պաշարման ժամանակը, Հայերից ծածուկ ձեռնտու եղաւ այդ Վեստ Սարգիսը Յունաց, եւ թէպէտ ոչինչ չկարողացաւ առնել այդ միջոց, որովհետեւ երբ յունական զօրքը պարապած էին քաղաքի պաշարման գործիների պատրաստութեամբ, Հայոց զօրքը անակնկալ ժամու մէջ յանկարծ յարձակուեցան նոցա վերայ եւ այնպիսի քաջութեամբ ցիրեւցան արեցին նոցա, որ մինչեւ Հայոց սպարապետը Վահրամ խնդրումէր իւր զօրքից նահանջել իւրեանց սուրը այն ահագին կոտորածից, բայց Վեստ Սարգիս նախարարը Սիւնի շարունակեց իւր չարայոյլ ազգադաւաճանութիւնը ամենայն հնարքով եւ խորամանկութեամբ, մինչեւ կարողացաւ վերջապէս տեսանել եւ խնդալ, թէ Բագրատունեաց իշխանութիւնը բարձուած է արդէն եւ նորա վերջին թագաւորը բանտարկուած Յունաստանում եւ յետոյ թափառական իւր տարագրութեան մէջ:

Վեստ Սարգիսը գրաւեց շատ մարդկանց սիրտը եւ հետեւումէր թագաւորել Հայոց վերայ, բայց Վահրամ սպարապետը եւ Գրիգոր Մագիստրոսը յորդորեցին միւս երեւելի Հայոց, եւ նոցա հետ միասին հաւաքուեցան ծածուկ Պետրոս կաթուղիկոսի մօտ եւ խորհուրդ արեցին, որ կացուցանեն Հայոց թագաւոր՝ Յովհաննէս թագաւորի Աշոտ եղբօրորդուն Գագիկին, որ այն ժամանակ տասնվեց տարեկան էր եւ
փախել էր Սարգսի բռնութիւնից. Գագիկին բե- Գագիկ Բ,
րեցին հնարքով Անի քաղաք եւ այն տեղ օծեցին թա- 1042—1045.
գաւոր ազգի վերայ: Գագիկ Բ մանկութեան հասակից վարժուած էր հելլենական դպրութեան եւ աստուածային գրոց մէջ. անձամբ գեղեցիկ էր եւ վայելչատեսակ, հոգով բարեպաշտ եւ վեհանձն, վարքով խոհեմ եւ առաքինի, մինչեւ կարելի էր յուսալ, որ Հայաստանը նորա կառավարութեան ներքոյ

խաղաղանայ եւ զօրանայ. բայց որովհետեւ միաբանութեան ոգին բարձուած էր մեր ազգէն, վասնորոյ փոխանակ սպասելի բարեմասնութեան՝ մեր աշխարհի քաղաքական դրութիւնը ունեցաւ շատ ցաւալի վախճան։

Վեստ Սարգիսը ինչպէս տեսաւ, թէ Գագիկին թագաւոր են ընտրել, ժողովեց իւր համախոհներին, մտաւ նոցա հետ Անի քաղաքի ներքնաբերդը եւ այն տեղ ամրացաւ։ Գագիկ միայնակ գնաց նորա մօտ աներկիւղ եւ իւր իմաստուն եւ ողոքական խօսքերով համոզեց նորան հեռանալ այն ամրոցից. իսկ յետոյ, երբ Սարգիս կրկին անգամ սկսաւ գործնել իւր չարութիւնը, Գագիկ բռնեց նորան եւ գրբեց բանտ, թէպէտ եւ խնայելով նորան՝ արձակեց շուտով բանտարկութիւնից եւ հաւատ ընծայելով նորա կեղծաւորական խոնարհութեանը՝ կարգեց նորան իւր խորհրդակից եւ բարեկամ, չկասկածելով ամենեւին, թէ այդ Վեստ Սարգիսը պէտք է լինի իւր կորստեան պատճառը. ընդ հակառակն իբր հանդարտած այդ կողմից՝ սկսաւ շրջել իւր տէրութեան մէջ, կարգ դնել ամենայն տեղ եւ տիրապետել այն քաղաքները եւ գաւառները, որ յափշտակել էին Ցոյնք Վեստ Սարգսի ձեռնտուութեամբ։

Մոնոմախոս կայսրը գտաւ իւր դիւանումը Յովհաննէս Հայոց թագաւորի նամակը, որով նա խոստացել էր Յունաց՝ Անի քաղաքը. վասնորոյ ուղարկեց պատգամ Գագիկ թագաւորի մօտ եւ պահանջեց Անի քաղաքը, որ նորա հօրեղբօր գրած պայմանով պատշաճումէր Յունաց։ Գագիկ սիրով ու պատուով ընդունեց Մոնոմախոսի պատգամը, խոստովանեց իւրեան կայսեր հպատակ, բայց իւր հայրենի ժառանգութիւնը յանձն չառեց տալ օտարի. Մոնոմախոս կրկնեց իւր պահանջմունքը խստութեամբ, եւ երբ Գագիկ վճռաբար հրաժարուեցաւ կայսեր կամեցողութիւնը կատարելուց, ուղարկեց Հայաստան զօրք, որ բռնութեամբ առնուն Անի քաղաքը։ Գագիկ վառուե-

ցաւ բարկութեամբ, վեր առեց իւր զօրքը եւ գնաց Յունաց առաջը. պատերազմը աւարտուեցաւ Գագիկի գեղափայլ յաղթութեամբ, որ վանեց իւր աշխարհից կայսեր զօրքը խայտառակաբար:

Յաղթութիւնից յետ Գագիկ սկսաւ հասկանալ, թէ ամենայն չարեաց պատճառը Սարգիսն է, որ գրգռումէ Յունաց իւր ընդդէմ· եւ թէպէտ այդ մտքով բռնեց նորան եւ կամենումէր խեղդամահ անել, բայց նենգամիտ Սարգիսը կարողացաւ արդարացնել իւրեան, հաւատացնելով թագաւորին, թէ նա Յունաց հետ ոչինչ յարաբերութիւն, ոչինչ գործ չէ ունեցել եւ չունի եւ թէ ամենայն չարութեան պատճառը Գրիգոր մագիստրոսն է (1), եւ այդ ամբաստանութիւնը հաստատեց շատ նախարարների վկայութեամբ, որ իւր մտերիմ բարեկամներն էին. մինչեւ Գագիկ հաւատալով նորա չարախօսութեանը՝ թշնամացաւ Գրիգոր մագիստրոսի հետ եւ սկսաւ ամենայն զօրութեամբ հալածել նորան, մինչեւ նա հարկադիր եղաւ իւր ապահովութեան համար փախչել քաղաքից քաղաք, Արարատեան աշխարհից Տարօնի գաւառ եւ վերջապէս Կոստանդնուպօլիս: Դորանով չբաւականացաւ Վեստ Սարգիսը, այլ եւ մեծ թշնամութիւն ձգեց Գագիկի եւ Պետրոս կաթուղի-

(1) Գրիգոր մագիստրոսը՝ Հայոց երեւելի սպարապետի Վասակի որդին էր եւ Գրիգորիոս Պահլաւունի հռչակաւոր իշխանի թոռը, սուրբ Սահակ Պարթեւի դստեր զարմից, ուրեմն եւ Գրիգոր Լուսաւորչի տոհմից: Իւր տղայական հասակում վարժուել էր Կոստանդնուպօլիս հելլենական դպրութեան եւ աստուածային գրոց ուսումնառութեան մէջ. եւ եղել էր իմաստուն, բարեպաշտ եւ մեծագործ անձն, եւ յետոյ հաւատարիմ ծառայութեամբ Յունաստանումը ստացել էր Կոստանդին Մոնոմախոս կայսրից մագիստրոսութեան կոչումն եւ պատիւ, որ զօրավարների կարգումը մեծ իշխանութեան անուն էր: Գագիկ թագաւորը, լսելով Գրիգոր մագիստրոսի մերձաւոր եւ սիրելի լինելը կայսեր, առաւել եւս հիմնուեցաւ իւր մտքումը Վեստ Սարգսի չարախօսութեան վերայ, թէ նա խորհրդակից է Յունաց իւրեան ընդդէմ: Սորա որդին էր Վահրամ Պահլաւունի, որ եղաւ կաթուղիկոս եւ կոչուեցաւ Գրիգոր Վկայասէր մեծն:

կոսի մէջ, երկուսի հետ եւս վարուելով իբրեւ հաւատարիմ բարեկամ, երկուսի եւս առաջեւ ձեւանալով բարեպաշտ եւ ազգասէր, մինչեւ կարողացաւ ատելի առնել նոցա միմեանց. նոյն ծածուկ թշնամութիւնը ցանեց թագաւորի եւ նախարարների սըրտումը միմեանց ընդդէմ, որով եւ դրեց սկիզբն Բագրատունեաց թագաւորութեան կործանման:

Կոստանդին Մոնոմախոս տեղեկացաւ Վեստ Սարգսի ազգադաւութեամբ, թէ Հայոց նախարարները անմիաբան են եւ թշնամացած իւրեանց թագաւորի հետ, վասնորոյ եւ դիպողագոյն ժամ համարեց իւրեան գրաւել Անի քաղաքը: Այդ նպատակով գրեց թուղթ Վեստ Սարգսին եւ մի քանի նորա հետ համախոհ նախարարների Գագիկից թագուն, եւ խոստանալով նոցա մեծամեծ պարգեւներ, առաջարկեց, որ նոքա հետեւեն համոզել Գագիկին տալ Յունաց Անի քաղաքը: Նախարարները գլխաւորապէս Վեստ Սարգսի խորհրդով համաձայնեցին իւրեանց մէջ ոչ միայն Անի քաղաքը, այլ եւ իւրեան Գագիկին մատնել Յունաց. գրեցին նամակ Մոնոմախոս կայսեր եւ խորհուրդ տուեցին նորան սիրոյ եւ հաշտութեան ձեւով հրաւիրել Գագիկին Կոստանդնուպօլիս եւ այն տեղ արգելած պահել, մինչեւ որ առնու նորանից Անի քաղաքը, յաւելցնելով, թէ իւրեանք պատրաստ են ծառայել եւ օգնական լինել կայսեր ամենայն բանում: Մոնոմախոս կայսրը շատ ուրախացաւ այդպիսի յայտարարութեամբ եւ դրեց մտքումը գրաւել ոչ միայն Անի քաղաքը, այլ եւ բոլոր Հայաստանը եւ բառնալ իսպառ Հայոց թագաւորութիւնը: Այդ յառաջադրութիւնը սրտումը ծածկած, բարեկամական ձեւով գիր գրեց Գագիկին եւ հրաւիրեց նորան իւր մօտ. Գագիկ յանձն չառեց գնալ, կասկածելով՝ թէ գուցէ կայսրը վրէժխնդիր լինի այն յաղթութեան համար, որով նա հարուածել էր Յունաց. կայսրը կրկին անգամ գրեց եւ խնդրեց նորան գալ Կոստանդնուպօլիս, խոստանալով յետ տալ Անի քա-

ղաքի թուղթը եւ այդ իւր խոստումն հաստատեց երդմամբ, բայց եւ այնպէս Գագիկ չհամաձայնեց գնալ, մանաւանդ որ Վահրամ Պահլաւունին եւ այլ մին քանի մտերիմ նախարարներ ծածուկ յորդորում էին նորան չգնալ: Իսկ միւս նախարարները, որոց մէջ գլխաւորն էր Վեստ Սարգիս, ստիպում էին նորան գնալ, յառաջ բերելով, թէ գուցէ թագաւորի հրաժարումն նոր խռովութիւն պատճառէ Յունաց եւ Հայոց մէջ, եւ թէ թագաւորը պէտք չէ ունենայ այդ տեղ կասկածանք, թէ նոքա, այսինքն նախարարները պատրաստ են պաշտպանել նորան եւ նորա աշխարհը. եւ այդ իւրեանց խօսքը հաստատեցին երդմամբ, որը որ գրեցին թղթի վերայ Քրիստոսի արիւնով եւ տուեցին կաթուղիկոսի ձեռը:

Այդ համաձայնքից յետ Գագիկ թագաւորը վճռեց գնալ Կոստանդնուպօլիս, ուր կայսրը եւ բոլոր յունական մեծամեծները յառաջագոյն սիրով եւ պատւով ընդունեցին նորան. բայց մին քանի օրից յետ կայսրը խօսք բացեց Գագիկի հետ Անի քաղաքի մասին եւ հաստատելով իւր իրաւունքը Յովհաննէս թագաւորի գրաւոր պայմանադրութեամբ, պահանջեց Գագիկից այն քաղաքը, եւ երբ որ Գագիկ յանձն չառեց կատարել կայսեր ցանկութիւնը, կայսրը արգելեց նորան բանտում: Հայաստան ինչպէս լսուեցաւ, թէ Գագիկ արգելուած պահուած է Կոստանդնուպօլիս, մեծ խռովութիւն ծագուեցաւ ազգի եւ մանաւանդ նախարարների մէջ. ոմանք, որ ծածուկ դաշնադիր էին կայսեր հետ, ստիպում էին այլոց՝ տալ Անի քաղաքը կայսերը, միւսները յանձն չէին առնում այդ բանը, մանաւանդ որ վախենում էին ստել իւրեանց ահաւոր երդմանը: Այդ միջոց նենգաւոր Սարգիսը խորամանկ եւ կեղծապատիր խօսքերով կարողացաւ գրաւել բարեպաշտ իշխաններին եւ կաթուղիկոսի սիրտը, մինչեւ նոքա թղթով յայտնեցին կայսերը, թէ պատրաստ են տալ նորան Անի քաղաքը եւ բոլոր գաւառը. իսկ Վեստ Սարգիսը եւ

այլ մին քանի նախարարներ, կաթուղիկոսից ծածուկ, ուղարկեցին եւս կայսեր մօտ Անի քաղաքի եւ թագաւորական ապարանի բանալիքը։ Կայսրը կոչեց իւր մօտ Գագիկին, դրեց նորա առաջեւ նախարարների թուղթը եւ քաղաքի բանալիքը եւ հարցրեց, թէ ինչ ունի ասելու այժմ։ Գագիկ ցաւագին սրտով պատասխանեց՝ «Աստուած թող դատէ ինձ եւ իմ դաւաճանողներիս. եւ եթէ նոքա տուեցին, մի թէ դու կարող ես իրաւամբ եւ արդարութեամբ առնուլ. Անի քաղաքի տէրը նախարարները չեն, այլ ես՝ նոցա հետ միասին, թող որ ո՛չ ամենայն նախարար համաձայն է այդ բանին. իմ հօրեղբայրս՝ Յովհաննէս թագաւորը՝ չունէր իրաւունք խոստանալու ձեզ. Անի քաղաքը բոլոր ազգինն է եւ ո՛չ թէ միայն թագաւորինը. այսպէս եւ ո՛չ նախարարները առանց թագաւորի կարող էին անել այդ»։ Կայսրը ոչինչ համարելով Գագիկի իրաւացի խօսքերը, ստիպումէր նորան հրաժարուել թագաւորութիւնից եւ տալ Անի քաղաքը եւ բոլոր իւր աշխարհը։ Գագիկ թագաւորը տեսանելով թէ ոչինչ հնար չկայ ազատելու կայսեր ձեռից ո՛չ իւր աշխարհը եւ ո՛չ իւր անձը, անճարացած, կամայ ակամայ համաձայնեց ընծայել կայսերը թղթով Անի քաղաքը եւ բոլոր իւր աշխարհը. եւ դորա փոխարէն ստացաւ կայսրից ընծայ մին քանի կալուածներ Կապադովկիայի կողմերումը, Պիզու քաղաքը եւ մին մեծ պալատ Կոստանդնուպօլսումը։ Այնուհետեւ մնաց Գագիկ Յունաստան իբրեւ մանաւոր անձն պանդխտութեան մէջ, երերուած եւ տատանուած քսաներկու տարեկան հասակում։

Մոնոմախոս կայսրը՝ Գագիկ թագաւորի գրաւոր հաւանութիւնը ստացած, ուղարկեց զօրք Հայաստան Նիկողայոս զօրավարի հետ, որ գնան տիրապետեն Անի քաղաքը։ Բայց քաղաքի Ապիրատ վերակացուն եւ Հայոց զօրքը, ինչպէս իմացան յունական զօրքի գալուստը եւ նպատակը, բանին անտեղեակ լինելով, չկամեցան տալ քաղաքը։ Յոյնք արհամարհելով Հա-

յոյց ընդդիմութիւնը, մանաւանդ թէ բարկանալով նոցա վերայ, սկսան պատերազմել, որ բռնութեամբ առնուն քաղաքը. այս տեղ Հայք միաբանուեցան, սաստիկ յարձակուեցան յունական զօրքի վերայ եւ հալածեցին նոցա այն սահմաններից։ Եւ մի միայն յետոյ, երբ կատարելապէս տեղեկացան Հայք, թէ յիրաւի Գագիկ թագաւորը թղթով համաձայնել է տալ Յունաց Անի քաղաքը, թէ ինքը Գագիկ յետ վերադառնալու չէ, թէ այդ բաները եղել են Վեստ Սարգսի ու միւս մին քանի նախարարների դաւաճանութեամբ եւ թէ չկայ ոչ մին կողմից յոյս վերականգնելու Հայոց թագաւորութիւնը, ամենեքեան սկսան լալ եւ ողբալ. հաւաքուեցան գնացին թագաւորների գերեզմանների վերայ եւ բարձրաձայն լաց ու կոծ արեցին Բագրատունեաց իշխանութեան եւ առ հասարակ Հայոց թագաւորութեան կորստեան մասին. յետոյ անճարացած գրեցին իւրեանց հնազանդութիւնը կայսերը՝ եւ նա ուղարկեց առանձին կառավարիչ, որ եկաւ եւ տիրապետեց Անի քաղաքը եւ բոլոր Շիրակ գաւառը։ 1047.

ԳԼՈՒԽ ԺԱ.

Գագիկ թագաւորը մնաց փոքր ինչ ժամանակ Կոստանդնուպօլիս եւ յետոյ գնաց Պիզու քաղաք, որ ստացել էր Կոստանդին Մոնոմախոսից՝ իւր բոլոր տէրութեան փոխարէն, եւ այն տեղ շինեց վանք, ուր գնումէր միշտ եւ լաց էր լինում Հայոց ազգի վերայ։ Յոյնք, որ գրաւել էին Հայոց տէրութիւնը, հեռացումէին արդէն բառնալ Անի քաղաքից եւ կաթուղիկոսութեան աթոռը։ Այս նպատակով Անի քաղաքի վերակացուն Կամենաս՝ սկսաւ յառաջագոյն արհամարհանքով վարուել Պետրոս կաթուղիկոսի հետ եւ յետոյ կայսեր հրամանով ուղարկեց նորան Կոստանդնուպօլիս, ուր թէպէտ ընդունեցին նորան պատշաճաւոր պատուով, բայց արգելած պահեցին այն տեղ երեք տարու չափ։

1047. Այդ միջոց նոր թշուառութիւն կրեց Հայաստանը Պարսից կողմից. նոցա թագաւորը Տուղրիլ Բէկ ուղարկեց մեր աշխարհ մինչեւ հարիւր հազար զօրք, որ հրով, սրով եւ գերութեամբ աւերեց մօտ քսան եւ չորս գաւառ եւ ապայետ դարձաւ: Այդ նեղութեան ժամանակը, Յոյնք որ գրաւել էին Հայոց աշխարհը, ամենեւին ցոյց չտուեցին Հայաստանին օգնութիւն, թէպէտ կային այն տեղ յունական զօրքից մինչեւ վաթսուն հազար մարդ. ընդ հակառակն առաւել նեղումէին Հայոց թէ քաղաքական եւ թէ կրօնական յարակցութեամբ: Կոստանդին Մոնոմախոս կայսրը, որ սպասումէր մին առիթ, որով կարողանայ վնաս հասուցանել Հայոց եւ եթէ հնար լինէր՝ ջընջել բոլորովին աշխարհի երեսից Հայի անունը, աւերեց պատերազմով Պաղին գաւառը Չորրորդ Հայոց, որ միայն էր մնացել հանգիստ այդ ժամանակ եւ նորա բնակիչները վայելումէին խաղաղութիւն՝ Հայաստանի ընդհանուր թշուառութեան մէջ. կայսրը կարծեց իւր համար յարմարաւոր առիթ այսպիսի նոր վնասաբերութեան Հայաստանին մին քանի բանսարկու անձաց չարախօսութիւնը. իբր թէ Պաղինի իշխանները մտածում են ապստամբուել նորանից. այդ բաւական էր, որ կայսրը տարագրէր այն իշխաններին հեռաւոր կղզիներ առանց քննութեան, ոչ թէ այն պատճառով, որ յանցաւոր էին նոքա, այլ որովհետեւ ցանկանումէր մին մին բառնալ Հայոց իշխաններին: Նորա օրինակով եւ բոլոր յունական ազգը ամենայն դիպուածում, ուր միանգամ ձեռնհաս էր լինում, անպատիւ եւ ոտնակոխ էր անում Հայոց, աւերումէր, կողոպտումէր Հայոց քաղաքները եւ աւանները, վանորոյ եւ անհաւատ թշնամիները առաւել համարձակ դիմումէին Հայաստանի գաւառները, եւ քանդումէին մեր անտէր աշխարհը սրով եւ գերութեամբ: Յետագայ կայսրներից, Կոստանդին Տուկիծ (Իսահակ Կոմնենոսի յաջորդը) պահանջումէր Հայոց ազգից ընդունել հռոմութիւն. հրաւիրեց

իւր մօտ Հայոց իշխաններին (Սենեքերիմի որդոցը Ատոմին եւ Աբուսահլին եւ այլոց), եւ սկսաւ հարկադրել նոցա ընդունել յունական կրօնը, որ յետոյ նոցանով մնացած ազգին եւս հաւանեցնէ. առաջարկեց նոյն բանը եւ Գագիկ գահընկեց թագաւորին, որ այն ժամանակ Կոստանդնուպօլիս էր. եւ թէպէտ կայսրը չհասաւ իւր նպատակին, բայց նորա գործի հետեւանքը այն եղաւ, որ Յոյնք, տեսանելով, թէ իւրեանց կայսրը, իշխանները եւ առաջնորդները թշնամի են Հայոց, սկսան առաւել համարձակ արհամարհել Հայոց, նախատական խօսքերով վշտեցուցանել նոցա սիրտը եւ համարել նոցա ամենայն ազգից անարգ, նաեւս անհաւատներից, մինչեւ այնքան, որ եթէ մին օտարական Հայ անցանումէր նոցա քաղաքներից, զանազան թշնամանքով եւ հայհոյանքով գանակոծ էին անում եւ արտաքսում։

Այսպիսի էին Հայաստանի յարաբերութիւնները Յունաստանի հետ քաղաքական եւ կրօնական հանգամանքներում, երբ Անի քաղաքը ստացաւ նոր եւ ահագին հարուած Պարսից կողմից, հարուած վերջին եւ կործանական։ Նոցա թագաւորը Ալփասլան, կամ որպէս Պարսիկք կոչումէին՝ Ալիֆ Հասան ([1]), Տուղրիլի եղբայրը, մեծ կոտորած արեց Գուգարաց եւ Աղուանից կողմերումը եւ յետոյ անհամար զօրքով դիմեց Հայաստանի Արարատեան աշխարհը, փոթորկի նման թափեց իւր բարկութիւնը մնացած ազգի վերայ, ներկեց բոլոր երկիրը արիւնով եւ կրակի նման այրեց, լիզեց ամենայն տեղ, ուր անցանումէր, եւ յետոյ գնաց պաշարեց Անի քաղաքը։ Անի շինած էր Ախուրեան գետի վերայ, ամրացած էր անմատոյց պարսպով, որ շինել էր Սմբատ երկրորդ Տիեզերակալը։ Երբ Յոյնք գրաւեցին այդ քաղաքը (1046 թ.), թողեցին նորան անտէրունչ, Հայոց զօրքին եւ իշ-

([1]) Կամ՝ Ասլօլան։

խաններին փոքր փոքր հեռացրեցին այն տեղից եւ ցրուեցին այլ եւ այլ տեղ, որ նոքա չկարողանան ապստամբուել: Կարգումէին վերակացու՝ միայն քաղաքի հարկը հաւաքելու համար եւ քան տարու չափ, որքան ժամանակ նոցա իշխանութեան ներքոյ էր Անի մինչեւ Ալփասլանի պաշարելը, ամենեւին հոգ չէին տանում քաղաքի պահպանութեանը կամ պաշտպանութեանը: Ալփասլան զարմացաւ քաղաքի բարձրութեան եւ ամրութեան վերայ, մինչեւ յոյս չունէր բռնութեամբ առնուլ եւ տիրել նորան: Բայց եւ այնպէս մին մեծ եւ զարհուրելի բաբան հրամայեց կանգնել քաղաքի առաջեւ, որով սկսան Պարսիկք այնքան սաստիկ բաղխել պարիսպը, որ վերջապէս նորա մին կողմը վտանգուեցաւ: Այն ժամանակ Թըշնամիները եւ քաղաքացիները սկսան բարձրաձայն աղաղակել, նոքա ուրախութիւնից եւ սոքա երկիւղից, որովհետեւ երկուսը եւս կարծեցին, թէ այն պարսպի խորտակած կողմից կարող են ներս մտնել Թշնամիները: Բայց երբ Պարսից զօրքը յառաջ դիմեց քաջութեամբ եւ կամենումէր մտանել քաղաք, չկարողացաւ հասանել իւր նպատակին, որովհետեւ նեղ էր անցքը եւ փլատակները չէին թողնում մուտ ունենալ. մանաւանդ որ քաղաքի զօրքը, տեսանելով Թըշնամիների դժուարութիւնը, սկսան քաջութեամբ պատերազմել եւ կոտորեցին ոչ սակաւ մարդ: Ալփասլան յուսահատուած դառնումէր արդէն յետ; երբ քաղաքի Թուլասիրտ կառավարիչները (Բագրատ հայ եւ Գրիգոր վրացի), երկիւղով պաշարուած եւ նոյնպէս յուսահատուած՝ կարծեցին, թէ Պարսիկք կրկին անգամ պէտք է սաստկացնեն պատերազմը ուրիշ մեքենաներով. վասնորոյ շտապելով գնացին մտան քաղաքի ներքնաբերդը եւ այն տեղ ամրացան իւրեանց զօրքով: Քաղաքի բնակիչները տեսանելով, թէ իւրեանց քաղաքապետները փախան ներքնաբերդը, կարծեցին, թէ Պարսիկք իսկոյն պէտք է գան ներս, վասնորոյ ամենեքեան սկսան բարձր ձայնով լաց լինել եւ

կոծել, եւ քաղաքի միւս կողմից փախչել դուրս։
Պարսկական զօրքը, որ արդէն անյոյս հեռանումէր
քաղաքից, տեսաւ յանկարծ քաղաքացիների փախուս-
տը եւ զարմացաւ, որովհետեւ չգիտէր նոցա փախըս-
տեան պատճառը. իսկ յետոյ, երբ բանին տեղեկա-
ցաւ, կրկին վերադարձաւ, մտաւ քաղաք առանց ար-
գելման, եւ այն տեղ պէտք էր տեսանել, թէ ինչ ա-
ղէտ կամ ինչ տարակուսանք պատեցին մնացած ժո-
ղովրդին. մարդկային լեզուն չէ կարող պատմել, գը-
րիչը չէ կարող նկարագրել այն անտանելի հարուա-
ծը, որին ենթարկուեցաւ մեր ազգը այդ տեղ եւ
այդ ժամանակ։ Պարսից զօրքը կատաղաբար դիմեց,
գազանաբար յարձակուեցաւ բնակիչների վերայ, ան-
խնայ կոտորեց սրով, խոտի նման հնձեց այնչափ
բազմութիւնը, նոցա դիակունքը որայի նման դիզեց
միմեանց վերայ, քաղաքի տարածութիւնը ծայրէ
ծայր լցրեց սպանած մարդիկով, Ախուրեան գետը
փոխեց արիւնի գոյն։ Այդպէս Ալփասլան քանդեց եւ
աւերեց բազմամարդ եւ մեծաշէն Անի մայրաքաղաքը,
որի մնացած բնակիչներին, որ կարողացան կենդանի
մնալ, գերի վարեց Պարսկաստան։

Այդ աղէտալի հանգամանքից յետ, Գագիկ իշխա-
նը՝ Աբասի որդին, որ իբրեւ թագաւոր բնակուումէր
Կարս քաղաքում (¹), մտածելով, թէ չէ կարող այ-
սուհետեւ հանգստութիւն գտանել Հայաստան աշխար-
հումը, ընծայեց իւր կալուածը (Կարս քաղաքը եւ
բոլոր Վանանդ գաւառը) Կոստանդին Տուկիծ կայսերը
եւ ստացաւ նորանից Ծամնդաւ գղեակը (²). վանա-
րայ թողեց Հայաստանը եւ գնաց բնակուեցաւ Յունաս-
տան։ Նորա գնալուց յետ Հայաստանը մնաց առանց
իշխանի եւ առանց զօրքի եւ զրկուեցաւ բոլորովին ա-
մենայն վայելչութիւնից եւ զարդից։

(¹) Արարատեան աշխարհի Վանանդ գաւառումը։
(²) Փոքր Հայաստանումը։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Հազիւ թէ անցել էր մին տարի եւ Հայոց ազգը նոր սկսել էր փոքր ինչ շունչ առնուլ թշնամիների հարուածներից, մխիթարուելով Գրիգոր Վկայասէրի հոգելից գրուածներով, երբ այլ եւ այլ Պարսից իշխաններ մինը միւսից յետ յարձակուեցան Հայաստանի զանազան երկիրները եւ նոր կոտորած, նոր հըրդեհներ արեցին մեր ազգի մէջ: Այսպիսի էին Օշէն, Գոմըշդեկան եւ Խրուճ: Օշէն դիմեց ասպատակ զօրքով Եփրատացոց կողմերը ([1]), մանաւանդ Սեաւ ([2]) լերին սահմանները՝ Խարամանիա, ուր բնակուած էին շատ Հայ. վանքերը այրեց, կրօնաւորներին սպանեց, մնացած ժողովրդին գերի վարեց եւ յետ դարձաւ: Նոյն կոտորածը, նոյն չարիքը գործեց Գոմըշդեկան Չորրորդ Հայաստանում: Խըրուճ, որ ապստամբուած էր Ալփասլանից, դիմեց բազմաթիւ զօրքով Հայաստանի սահմանները, յետոյ Սեբաստիայի կողմերը, աւերեց շատ տեղ եւ մեծ նեղութիւն եւ տառապանք պատճառեց Հայոց:

Ալփասլանից յետ թագաւորեց Պարսից վերայ Մելիքշահ, որ շատ խաղաղասէր եւ քաղցրաբարոյ մարդ էր եւ ամենեցուն հետ վարուում էր սիրով, մանաւանդ Հայոց: Այդ ժամանակը յարմար համարեց իւր համար Գագիկ Աշոտեան, որ իւր թագաւորութիւնից զրկուած բնակուում էր Պիզու քաղաքում, Հայոց նախարարների հետ միասին դիմել Մելիքշահին, որ նո-

---

([1]) Եփրատացիք էին կոչուում Փոքր Հայոց բնակիչները՝ Եփրատ գետի մօտ, Կելիկիայի եւ Միջագետքի մէջ:

([2]) Սեաւ լեառը Փոքր Հայոց գաւառն էր Եփրատացոց կողմերում:

րա սիրտը դրաւելով գուցէ կարողանայ կրկին տիրապետ լինել իւր հայրենի աշխարհին, որի վերայ անդադար մտածումէր: Բայց նախարարներից ոչ մինը չեղաւ նորան կամակից այդ խորհրդի մէջ՝ նորա մտերիմ բարեկամները եւս յորդորում էին նորան թողնել իսպառ այդ մտադրութիւնը, ասելով, թէ «Այդ բանը եթէ յայտնուի Յունաց, նոքա կկորուսանեն մեզ բոլորեցունց եւ այնուհետեւ չենք կարող ունենալ հանգըստութիւն ոչ մեր եւ ո՛չ սոցա աշխարհումը»: Գագիկ տեսանելով, թէ իւր ազգից չկայ ամենեւին յոյս, հեծումէր եւ աշխարումէր հոգով, եւ տխուր սրտով շըրջումէր թափառական մին քանի մերձաւոր անձանց հետ Յունաստանի զանազան կողմերում: Վերջապէս տաղտկացած այն մահաբեր ատելութիւնից, որ վաղուց ունէին Յոյնք դէպ ի Հայոց ազգը եւ որ օր ըստ օրէ յաւելանումէր եւ զօրանում նոցա մէջ, վճռեց գնալ Կապադովկացոց կողմերը, ուր մտածումէր անդադար դուրս գալ, հեռանալ բոլորովին Յունաց մէջից եւ գնալ Պարսկաստան Մելիքշահ թագաւորի մօտ, յուսալով՝ նորա ձեռնտուութեամբ տիրել վերստին Հայաստան աշխարհին եւ ստանալ կրկին իւր թագաւորական աթոռը: Բայց մինչ այսպիսի մտքերով դեգերումէր այն տեղ, տեսանելով եւ լսելով Յունաց անվերջ ատելութիւնը Հայոց ազգի հետ, տաղտկացաւ եւ դառնացաւ հոգով, եւ իւր բարկութիւնը թափեց վերջապէս Կեսարիայի Մարկոս մետրապօլտի վերայ, որ անհնարին ատելութեամբ բոլոր Հայոց շուն էր կոչում, եւ իւր տան մէջ ունէր մին մեծ շուն, որի անունը, Հայի անունը նախատելու համար, դրել էր Արմէն: Գագիկ երբոր լսաւ այդ բանը, կորցրեց համբերութիւնը, գնաց գիտութեամբ Կեսարիա՝ իբր մին հարկաւոր գործի համար, եւ այն տեղ իջեւան արեց մետրապօլտի տանը՝ իւր ծառաների հետ միասին, որ ծածուկ զինուած էին: Մարկոս մետրապօլիտը թէպէտ եւ ատումէր Գագիկին, բայց ամօթից հարկադրուած՝ կամայ եւ ակամայ ընդունեց նորան մեծարանքով իւր

տունը: Մին օր, խնջոյքի մէջ, Գագիկ ասեց մետրապօլտին՝ «Լսած եմ, որ դու մին մեծ եւ զօրեղ շուն ունես, կարելի է մեզ տեսանել նորան». մետրապօլիտը Հասկացաւ նորա միտքը եւ փոխեց խօսքը. իսկ Գագիկ սկսաւ ստիպմամբ պահանջել ցոյց տալ այն շունին. մետրապօլիտը հարկադրուած հրամայեց իւր ծառաներին կոչել շունին. եւ նոքա որովհետեւ չէին համարձակւում Գագիկի ներկայութեանը կոչել նորան Արմէն անունով, վասնորոյ շունը չէր գամ: Գագիկ գիտութեամբ հարցրեց՝ «Մի՞թէ այդ շունը անուն չունի». իսկ նոքա այլ ինչ բան էին պատճառում. եւ երբ Գագիկ սկսաւ հարկադրել, կոչեցին շունին անունով՝ Ա՛րմէն, Ա՛րմէն, եւ շունը իսկոյն եկաւ այն սենեակը, ուր բոլորեքեան նստած էին: Գագիկ հարցրեց Մարկոսին, թէ Արմէն է այդ շունի անունը. եւ նա համարձակ պատասխանեց. «Այո, դեռեւս տըղայ է, վասնորոյ Արմէն ենք կոչում դորան»: Այդ խօսքը եւս աւելի բորբոքեց Գագիկի սիրտը, վասնորոյ նա ծիծաղելով ասեց. «Պէտք է այժմ տեսանենք, թէ ով է տղայ, Արմէնը՝ թէ հայրը». եւ իսկոյն հըրամայեց իւր ծառաներին կատարել յառաջագոյն պատրաստած խորհուրդը: Գագիկի ծառաները քցեցին այն շունին մին մեծ պարկի մէջ, եւ յետոյ բռնեցին կապեցին մետրապօլտին, քցեցին նոյն պարկի մէջ եւ կապեցին պարկի բերանը. յետոյ սկսան սաստիկ ծեծել շունին, բայց մետրապօլտին ոչ. երբ հարուածը սաստկացաւ, շունը կատաղաւ եւ սկսաւ այնչափ կծանել եւ խածատել մետրապօլտին՝ մինչեւ խեղդեց նորան պարկի մէջումը, ուր Գագիկ թողեց նորան սպանած եւ ինքը հեռացաւ կեսարիայի կողմերից: Այդ գործի համբաւը տարածուեցաւ Յունաց մէջ եւ աւելի եւս գրգռեց նոցա ատելութիւնը Հայոց ընդդէմ. ամենայն տեղ կարգեցին նոքա լրտես, որ եթէ գտանեն Գագիկին, բռնեն եւ սպանեն նորան չարաչար: Պատահեցաւ, որ Գագիկ գնումէր Գամիրք. ճանապարհումը, Արծխաս դաշտումը, երբ որ մօտեցաւ

Կիզիստրա ամրոցին, ցանկացաւ հանգստանալ պարսպի մօտ. վեր առեց իւր հետ միայն երեք մարդ, որոց մինն էր իւր ազգական Ռուբէնը, հզօր երիտասարդ։ Ամրոցի իշխանները, երկու եղբայր յոյն (Մանտալէի որդիքը), ինչպէս տեսան Գագիկի գալը, յիսուն զինուորուած մարդով յարձակուեցան նորա վերայ, բռնեցին տարան ամրոցի մէջ եւ զանազան տանջանքով սպանեցին. նորա հետ եղած երեք անձինքը փախան։ Այսպէս Գագիկի մահով բարձուեցաւ իսպառ 1079.
Բագրատունեաց իշխանութիւնը Հայաստանից։

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ.

Ա. ՌՈՒԲԷՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԼԵՒՈՆ Զ։

Հայոց թագաւորութիւնը, որ վերջացաւ Բագրատունեաց ցեղումը, կրկին շառաւիղեցաւ նոցա արմատից եւ փոքր փոքր զօրանալով մեծացաւ, եւ եղաւ, կարելի է ասել, առաւել փառաւոր քան թէ Բագրատունեացը: Այդ նոր իշխանութիւնը կոչուեցաւ Ռուբինեանց՝ Ռուբէնի անունով, որ առաջինն էր այդ իշխանութեան եւ ծագումէր Բագրատունեաց ցեղից, որովհետեւ վերջին Գագիկի ազգականն էր։ Հայաստանը հասել էր այդ ժամանակ վերջին տկարութեան. Նախընթաց պարբէրութեան մէջ յիշած թշուառութիւնները, որպիսի էին՝ այլասեռ թշնամիների սրածութիւնը, Հայոց նախարարների երկպառակութիւնը եւ մանաւանդ ազգային անմխաբանութեան ոգին, աւերել էին խպառ նորա բոլոր գաւառները եւ քաղաքները, անապատ էին դարձուցել մեր գեղեցիկ, բազմահարուստ եւ մարդաշատ աշխարհը, սպառել էին նորա զօրութիւնը։ Վասնորոյ անհնար մին բան էր, որ թագաւորութիւնը կարողանար նորոգուել աւերակների մէջ եւ այնպիսի երկրումը, որ շրջակայ թշնամիների համար սովորական յարձակմունքների տեղն էր. Թագաւորական իշխանութիւնը կարող էր արմատանալ այլ տեղումը, հին փլատակներից եւ ծանօթ թշնամիներից հեռի. եւ ահա այդ պատճառով Ռուբինեանք զօրացան եւ աճեցին Կիւլիկեցոց աշխարհումը, որ սահմանակից էր Փոքր Հայաստանին, Յունաց երկրումը։

ԳԼՈՒԽ Ա.

ՌՈՒԲԷՆ ԱՌԱՋԻՆ, 1080—1095.

Ռուբէն՝ Գագիկ երկրորդ կամ վերջին Բագրատունի Թագաւորի ազգականը, հզօր եւ իշխանաւոր մարդ, այն ժամանակ, երբ որ Գագիկին բռնեցին Մանտալի Յոյն իշխանի որդիքը եւ տարան Կիզիստռ ամրոցը, երկու մարդու եւ իւր Կոստանդին որդու հետ փախաւ Կիլիկիա (1)։ Այն տեղ կային շատ Հայք, եւ Ռուբէն ժողովեց նոցանից քաջերին, գնաց նոցա հետ եւ առեց Յունաց Կիզիստռ ամրոցը, յետոյ տիրեց եւ գղեակին, որ կոչւումէր Բարձր բերդ (2)։ Բայց երբ լսաւ, թէ Յոյնք սպանել են Գագիկին, շատ տրտմեցաւ եւ վախեցաւ մնալ այն տեղերում. վեր առեց իւր քաջ ընկերներին, գնաց Տօրոս լերին անտառիկ շրջակայքը եւ բնակուեցաւ Գոռոմողոլ գեղումը։ Եւ որովհետեւ այն ժամանակ շատ Հայք ժողովուած էին Տօրոս լերանց մէջ՝ իբրեւ մին ապահով տեղում, եւ նոցա հետ կային շատ կրօնաւորներ, նոյնպէս եւ Գրիգոր Վկայասէր Մեծն, վասնորոյ Ռուբէն նոցա բոլորի սիրտը գրաւեց, քաջալերեց եւ յորդորեց ամենեցուն արիանալ, քանիցս անգամ պատերազմեց այն տեղ բնակուած Յունաց հետ, որոց վերջապէս հալածեց իսպառ այն կողմերից եւ ինքը եղաւ ինքնագլուխ իշխան, տիրապետեց այն սահմաններին եւ պայազատեց իւր ազգը, որչափ այն տեղ կային Հայք։

Արեւելեան Հայք այդ ժամանակ օտար իշխանութեան ներքոյ էին, ոմանք Պարսից, եւ ոմանք Սկիւթացւոց, որպէս եւ արեւմտեան Հայոց մեծ մասը հպատակ էր Յունաց։ Արեւելեան Հայք չունէին հոգեւոր գլուխ, որովհետեւ ինչպէս ասացինք, Գրի-

---

(1) Կիլիկիան այլազգական բառով կոչւումէ՝ Խարամանիա ։

(2) Կիլիկիայի քաղաքներից մինը ։

գոր Վկայասէրը Կիլիկիայումն էր այդ ժամանակ, վասնորոյ գրով խնդրեցին նորան որ կամ ինքը վերադառնայ իւր աթոռը՝ Անի քաղաք, կամ հրաման տայ ձեռնադրել կաթուղիկոս Բարսեղ եպիսկոպոսին՝ իւր քեռորդուն։ Գրիգոր Վկայասէրը համաձայնեց նոցա երկրորդ առաջարկութեանը եւ գրեց նոցա, որ իւր հաւանութեամբ խնդրեն Աղուանից կաթուղիկոսին (Ստեփանոսին) ձեռնադրել Բարսեղին։

Պարսից թագաւորը Մելիք Շահ՝ Ալփասլանի որդին, խաղաղասէր եւ քաղցրաբարոյ անձն, որ սիրումէր քրիստոնեայ ազգերին եւ առաւել եւս Հայոց, շատ զօրացել էր այդ ժամանակ։ Սա ինչպէս տեսաւ, թէ Հայոց աշխարհը, որ երբեմն Պարսից բաժինն էր, ընկել էր Յունաց իշխանութեան ներքոյ, դիմեց անհամար զօրքով Մեծ Հայաստան եւ շատ երկիրներ առեց Յունաց ձեռից առանց մեծ կոտորածի։ գրաւեց իւրեան Անի քաղաքը, Եդեսիան, Գանձակը, յետոյ Անտիոք եւ այլն։ Բայց երբ Մելիք Շահը տիրապետեց Հայաստանին, նորա գործակալները նեղում էին Հայոց ծանր հարկապահանջութեամբ. մինչեւ Բարսեղ կաթուղիկոսը հարկադիր եղաւ գնալ Պարսկաստան, խնդրել Մելիք Շահից թեթեւացնել աշխարհի հարկը եւ ստացաւ նորանից իւր խնդրի կատարումն։

ԿՈՍՏԱՆԴԻՆ. 1095—1100.

Ռուբէն՝ Տորոս լերին կողմերումը 15 տարի պայազատելուց յետ վախճանուեցաւ, եւ նորա տեղ իշխող եղաւ նորա որդին Կոստանդին։ Սա զանազան պատերազմներով շատ Յոյն նուաճեց իւր իշխանութեան ներքոյ, առեց նոցանից Վահկայ ամրոցը (1), եւ այն տեղ փոխադրեց իւր իշխանութեան աթոռը։ Նորա քաջութեան գործերումը ձեռնտու նիզակակից էին

(1) Վահկայ ամրոցը՝ ամուր եւ անուանի բերդ էր Կիլիկիայումը Տորոս լերին մօտ։

Հայոց երկու երեւելի իշխաններ՝ Բազունի եւ Օշին,
որ Տարսոնի տէրն էր։

Այդ Կոստանդինը Հայոց իշխանապետի տիրապե- 1095.
տութեան առաջին տարին նշանաւոր է Խաչակիր
զօրքի սկզբնաւորութեամբ, որի նպատակն էր ազա-
տել Երուսաղէմը եւ Քրիստոսի գերեզմանը անհա-
ւատների ձեռից։ Խաչակիր զօրքի դրօշակի տակ հա-
ւաքուեցան այլ եւ այլ քրիստոնեայ ազգեր, Իտալա-
ցիք, Գաղղիացիք, Սպանիացիք, Գերմանացիք եւ
այլք. նոքա ամենեքին մինչեւ վեց հարիւր հազար
հետեւակ զօրքով եւ հարիւր հազար հեծելազօրով
գնացին հասան Բիւթանիա գաւառը (1), պատերազ-
մեցին Նիկիոյ հետ (2), առեցին այդ քաղաքը եւ ըն-
ծայեցին Յունաց Ալէքս Կոմնենոս կայսերը։ Այն տե-
ղից երբ որ պէտք էր գնային Անտիոք եւ կամենում
էին կարճ ճանապարհով անցանել, միտք արեցին Տա-
րոս լերին մօտով գնալ, վասնորոյ ուղարկեցին դես-
պան մեր Կոստանդին իշխանապետի մօտ եւ խնդրե-
ցին, որ թոյլ տայ նոցա անցանել այն կողմերով եւ
ուղարկէ մին առանձին զօրքի գունդ, որ տեղեակ լի-
նելով թէ շրջակայ տեղերին եւ թէ այլազգիների
բնաւորութեանը, հեշտ ճանապարհով առաջնորդէ
նոցա։ Կոստանդին բարեպաշտ իշխանապետը ոչ մի-
այն կատարեց նոցա խնդրածը, այլ եւ՝ երբ խաչա-
կիր զօրքի ուտեստը պակասեցաւ Անտիոք քաղաքը
պաշարելու ժամանակը, ուղարկեց նոցա համար այն-
քան կերակուր, որ բաւական եղաւ բոլոր բազմու-
թեանը երկար միջոց։ Լատինացիք Անտիոք քաղաքը
առնելուց յետ, չմոռացան Կոստանդինի բարերարու-
թիւնը. ուղարկեցին նորա համար այլ եւ այլ ընծա-
ներ եւ կոչեցին նորան իւրեանց ազգի Մարկիզ կամ
Սպետ։ Գրիգոր երեքտասաներորդ Հռոմի պապը,

---

(1) Բիւթանիա՝ Փոքր Ասիայումն էր. այժմ կոչւումէ՝ Պօլի, սեւ ծովի մօտ։

(2) Նիկիա, ռամկօրէն Իզնիկ, Բիւթանիայի մայրաքաղաքն էր։

*

այն՝ որ նորոգեց Հռոմայեցւոց տումարը, մեծ գովեստով յիշատակում է այդ Հայոց բարեգործութիւնը, ասելով՝ թէ «Ոչ մին ազգ ցոյց չտուեց իւրեան այնպէս յօժարամիտ օգնականութեան, որպէս Հայք, որ զօրքով, ձիերով, զէնքով եւ թոշակով ձեռնտու եւ զօրավիգն եղաւ խաչակիր քրիստոնէից այն մեծ եւ հարկաւոր պատերազմումը»։ Խաչակիրների յետագայ ընթացքը եւ գործը պատշաճումեն ընդհանուր պատմութեան։

ԹՈՐՈՍ ԱՌԱՋԻՆ. 1100—1123.

Կոստանդին թողեց երկու որդի՝ Թորոս եւ Լեւոն, որոց առաջինը, յաջորդեց իւր հօր իշխանութիւնը. հանդիսացաւ քաջ եւ անուանի. յաղթութեամբ պատերազմեց Սկիւթացւոց եւ Յունաց հետ. առեց զանազան քաղաքներ եւ աւաններ, որոց մէջ առաւել նշանաւոր էր Անարզաբա քաղաքը, ուր եւ շինեց Թորոս եկեղեցի, որ կոչուեցաւ՝ սուրբ Զօրավարք. առ հասարակ տիրապետեց Կիլիկիայ մեծագոյն մասին մինչեւ Միջերկրական ծովը, եւ այդ-չափ յաղթութիւնների եւ իւր իշխանութիւնը ընդարձակելու պատճառով՝ Թորոս իշխանապետի անունը շատ հռչակաւոր եղաւ Յունաց եւ Լատինացւոց մէջ, մինչեւ նոքա կոչումէին նորան Կիլիկիայ Տէր, եւ Կիլիկիան՝ Թորոսի երկիր։

ԼԵՒՈՆ ԱՌԱՋԻՆ. 1123—1138.

Առաջին Թորոսի մահից յետ Կիլիկիայ իշխանը եղաւ նորա եղբայրը Լեւոն Ա, որովհետեւ Թորոսի միակ որդին Կոստանդին դեռ եւս իւր հօր կենդանութեան ժամանակը մեռել էր, կամ որպէս ոմանք ասումեն՝ դեղով սպանուած էր, եւ սպանութեան կասկածանքը ձգումեն Լեւոնի բարեկամների վերայ, որ Թորոսի եւ Լեւոնի խռովութեան ժամանակը իբր թէ սպանել էին Թորոսի որդուն Կոստանդինին, որ Լեւոն կարողանայ ժառանգել Թորոսի իշխանութիւնը։

Լեւոն առեց Մամեստիա քաղաքը եւ այլ զանազան
քաղաքներ, հասաւ մինչեւ Տարսոն եւ այդպիսի գոր-
ծերով հռչակուեցաւ նորա անունը Յունաց մէջ, որ
կոչումէին նորան Սեբաստոս, եւ պատուելի եղաւ Լա-
տինացոց առաջեւ, որոց մէջ վարուում էր բարեկա-
մաբար։

Եւ որովհետեւ Լեւոն այդպէս զօրանումէր օրէ օր
եւ արդէն նուաճել էր քանի քանի քաղաք Իսաւրիա-
յի կողմերումը, Յունաց կայսրը Յովհաննէս՝ Ալեքս
Կոմնենոսի որդին՝ նախանձուելով Լեւոնի յաջողու-
թեանը, ցանկանումէր խոնարհեցընել նորան, եւ
այդ խորհուրդը կատարելու համար՝ ուղարկեց զօրք
Կիլիկիա։ Լեւոն լսելով կայսեր մեծապատրաստ ար-
շաւանքը, չհամարձակուեցաւ դուրս գալ նորա ա-
ռաջը, որովհետեւ նորա նիզակակիցները շատ հաշտ
չէին նորա հետ. վասնորոյ գնաց ու ամրացաւ ան-
մատոյց լերանց մէջ իւր գերդաստանի հետ միասին։
Այդ պատճառով կայսրը առանց դժուարութեան ա-
ռեց Մամեստիան, Տարսոնը եւ Ադանա, եւ ուղար-
կեց մեծ գունդ Անարզաբա քաղաքի վերայ, որի հայ
բնակիչները թէպէտ երեւելի հարուածներ ու վնաս-
ներ տուեցին կայսեր, բայց վերջապէս կայսրը ա-
ռեց քաղաքը։ Զօրքի այն մասը, որ ուղարկել էր կայս-
րը Լեւոնի վերայ, գտել էր Լեւոնին մին նեղ հովտի
մէջ եւ միայն պաշարել էր նորան քանի օր, չհամար-
ձակուելով գնալ նորա վերայ. բայց երբ պաշարումն
երկարացաւ, Լեւոն վախենալով սովամահ լինելուց՝
անձնատուր եղաւ, եւ այն ժամանակ տարեցին նա-
րան կայսեր մօտ, որ՝ երբոր տիրապետեց Լեւոնի 1137.
բոլոր աշխարհը, տարաւ նորան իւր հետ Կոստանդ-
նուպօլիս եւ նստացրեց բանտ։ Յետոյ թէպէտ Լեւոնի
բարեկամների միջնորդութեամբ արձակեց նորան
բանտից, բայց Լեւոն բնակուումէր արգելուած Յու-
նաստանի մայրաքաղաքումը՝ իւր Թորոս եւ Ռուբէն
որդոց հետ, իսկ վերջապէս կրկին բանտարկուեցաւ
եւ մեռաւ բանտումը։

ՄԻՋՈՑ ՊԱՐԱՊՈՅ 6 ՏԱՐԻ, ԱՅՍԻՆՔՆ՝ 1138—1144.

ԹՈՐՈՍ ԵՐԿՐՈՐԴ. 1144—1168.

Երբ Յովհաննէս կայսեր մահից յետ թագաւորեց Յունաստան Մանուէլ առաջին Կոմնենոս. որ Հայոց գրքերում կոչւումէ Կեռ Մանուէլ (կամ Կիռ Մանիլ), Լեւոնի որդին Թորոսը փախաւ ծածուկ Կիլիկիա Տորոս լերանց մէջ. եւ որովհետեւ այն կողմերում բնակուած բազմաթիւ Հայք մեծ նեղութիւն էին կրում Յունաց ձեռից եւ ցանկանում էին գտանել իւրեանց առաջին ազատութիւնը, վասնորոյ ուրախութեամբ ընդունեցին Թորոսին, հաւաքուեցան, զօրք կազմեցին, եւ կամովին հպատակ եղան Թորոսին, որ նոցա ձեռնտուութեամբ կրկին յետ առեց Յունաց ձեռից Անարզաբա, Ատանա եւ Սիս քաղաքները, Առիւծ բերդը եւ այլն. եւ այդպէս Թորոս Բ զօրացաւ, իւր հօր եւ Վահրամ եղբօր մահուան վրէժը առնելու համար՝ հալածեց Յունաց Կիլիկիայի սահմաններից եւ կոտորեց նոցա զօրքը։

1144. *Նոյն տարի, երբ Թորոս քաջութեամբ յետ բերեց իւր հայրենի ժառանգութիւնը եւ տիրացաւ Կիլիկիայումը, այլ տեսարան էր Միջագետքի մէջ։ Եդեսիա քաղաքը (Ուռհայ), որ այդ ժամանակներում Լատինացւոց իշխանութեան ներքոյ էր, ընկաւ կըրկին անհաւատների ձեռքը։ Բերիայի (¹) ամիրան Զանգի, տեսանելով թէ Լատինացիք անհոգ նստած են եւ քաղաքը չունի բաւական պատրաստութիւն պատերազմելու համար, վարձեց զօրք Արաբացոց եւ Պարսից ազգից, անակնկալ ժամումը գնաց պաշարեց Եդեսիան, եւ թէպէտ երկարեց պաշարումն, բայց վերջապէս առեց քաղաքը, մտաւ ներս, բնակիչներին անխնայ կոտորեց սրով եւ մնացելոց գերի վարեց։ Եդեսիայի առումն, որ եղաւ Գրիգոր Պահլաւունու կաթուղիկոսութեան ժամանակը, նկարա-*

(¹) Բերիա՝ Ասորոց մայրաքաղաքն էր. այժմ կոչւումէ՝ Հալէպ։

գրում է նորա եղբայրը Ներսէս Շնորհալին գեղեցիկ բանահիւսութեամբ, որ կոչւում է «Ողբ Եդեսիոյ»:

Թորոսի քաջութեան համբաւը այնքան նախանձ եւ բարկութիւն բորբոքեց Կիռ Մանուէլ կայսեր սրտումը, մինչեւ յորդորեց նա Իկոնիոնի ([1]) Մաղսուտ կոչուած ամիրային գնալ Թորոսի վերայ պատերազմով, եւ Մաղսուտ՝ որ ինքը եւս յառաջուց յօժար էր այդ բանին, յարձակուեցաւ Կիլիկիա: Բայց երբ տեսաւ Թորոս իշխանապետի վստահութիւնը եւ աներկիւղ պատրաստութիւնը դէպ ի պատերազմ, սկսաւ կասկածել պատերազմի յաջողութեան վերայ եւ յետոյ խնդրեց Թորոսից խաղաղութիւն հաստատել իւրեանց մէջ: Կայսրը ինչպէս լսաւ Մաղսուտի յետ դառնալը, ինքը ուղարկեց մեծ զօրք Կիլիկիա՝ Տորոս լերանց մօտ. ու Թորոս իւր քաջասիրտ զօրքի հետ միասին կոտորեց Յունաց զօրքի մեծ մասը եւ մնացելոց գերի վարեց, մանաւանդ Յունաց իշխաններին, որոց յետոյ Յոյնք մեծ գնով յետ առեցին: Կայսրը հարկադիր եղաւ հաշտութիւն խօսել Թորոսի հետ ու այդ միջոց Թորոս ընծայեց կայսերը Անարզաբա քաղաքը, որը որ յետոյ կրկին յետ առեց այն պատճառով, որ կայսեր խնդրովնիզակակից էր եղել նորան՝ Սկիւթացոց ընդդէմ ու զարմացրել էր կայսրը իւր քաջութեամբ, բայց պատերազմից յետ սոյդ տեղեկացել էր, թէ Յոյնք սովորական նախանձով մտածումեն դաւաճանել իւրեան. վասնորոյ Թորոս կրկին գրաւեց Անարզաբա եւ Մամեստիա քաղաքները: Այդ հանգամանքը ստիպեց կայսերը միւսանգամ ուղարկել զօրք Կիլիկիա եւ խընդրել իւրեան օգնութիւն Օշին ([2]) հայ իշխանից, որ յիրաւի միացաւ Յունաց զօրքի հետ եւ նոցա հետ միասին գնաց պաշարեց Մամեստիա քաղաքը, ուր այն

([1]) Իկոնիոն Լիկայոնիայի մայրաքաղաքն էր, որ Փոքր Ասիայի միջերկրեայ գաւառներից մինն է:

([2]) Օշին՝ Լամբրոն քաղաքի Տէրն էր, առաջին Օշինի թոռը եւ Ներսէս Լամբրոնացու հայրը:

ժամանակ գտանուում էր Թորոս իշխանապետը։ Մին գիշեր երբ յորդ անձրեւ էր գամ, Թորոս ընտրեց իւր համար դիպող ժամ, բացեց քաղաքի դռները, յանկարծ դիմեց զօրքով Յունաց վերայ, նոցանից շատերին կոտորեց եւ ամենի սիրտը մեծ ահ ու դող ձգեց. շատերին եւս գերի վարեց, մանաւանդ Յունաց մին քանի երեւելի իշխաններին, նոյնպէս եւ Օշին իշխանին, որոց յետոյ առաջին ձեւով վաճառեց մեծ փողով, եւս առաւել ծանր գնով արձակեց Օշինին, կամելով այդ գործով նախատել նորան, թէ չէր պէտք նորան իւր ազգին ընդդէմ պատերազմել։ Յետ այսորիկ Թորոս եւս առաւել զօրացաւ, առեց Տարսոնը Յունաց ձեռից, տիրապետեց Կիլիկիայի արեւմտեան կողմերը մինչեւ Իսաւրիա, սաստանեցրեց Յունաց զօրութիւնը ու զարմացրեց Լատինացոց ազգերին։

Թորոս Բ իշխանապետի եղբայրը Ստեփանէ շատ մարդկանց յորդորանքով եւ բանսարկութեամբ բաժանուեցաւ նորանից եւ եղաւ ինքնագլուխ. ժողովեց սրիկայ մարդիկ եւ նոցա հետ միասին դիմեց Սեաւլեառը, որ այն ժամանակ Սկիւթացոց իշխանութեան ներքոյ էր եւ տիրապետեց այդ տեղը։ Քեսոն (1) եւ Պեհեստին քաղաքների բնակիչները, որ շատ նեղութիւն էին կրում Սկիւթացոց եւ Յունաց ձեռից, լսելով Ստեփանէի քաջագործութիւնները, խընդրեցին նորան գալ ազատել նոցա սարկական դրութիւնից. եւ Ստեփանէ թէպէտեւ գնաց, բայց ոչինչ չկարողացաւ առնել. մանաւանդ թէ չարաչար մահուամբ զրկուեցաւ կեանքից. որովհետեւ այն կողմերից յետ դառնալու ժամանակը, Յոյնք, որ թաքնուած էին ճանապարհումը, յանկարծ դիմեցին նորա վերայ, բռնեցին, ձեռները կապեցին եւ ձգեցին նորան եռացեալ ջրով լիք կաթսայի մէջ, եւ այդպէս չարատանջ սպանեցին։ Թորոս իշխանապետը եւ

---

(1) Քեսոն եւ Պեհեստին Փոքր Հայաստանում քաղաքներ էին, Եփրատ գետին եւ Ռապանայ քաղաքին մօտ։

նորա եղբայրը Մլեհ, երբոր լսան իւրեանց եղբօր չարաչար կորուստը, փառուեցան վրէժխնդրութեամբ եւ սկսան հետամուտ լինել Յունաց ամենայն հնարաւոր դիպուածում. յարձակուեցան նոցա այլ եւ այլ երկիրները, աւերեցին շատ աւան եւ գիւղ, խլեցին նոցանից ոչ սակաւ նաւեր, անց կեցան գնացին Կիպրոս կղզին եւ տիրապետեցին այն տեղ շատ հողեր, բռնեցին շատ Յոյն, կտրեցին նոցա ունչերը եւ ականջները եւ նոցանից շատերին ուղարկեցին Կոստանդնուպօլիս: Այս անցքը ինչպէս լսաւ Կեռ Մանուէլ կայսրը, մանաւանդ թէ տեսաւ իսկ իւր աչքերով այն ուղարկած ընչատներին, երկու անգամ ուղարկեց Թորոսի վերայ զօրք. առաջին անգամ Անդրոնիկոս զօրավարի առաջնորդութեան ներքոյ, որ կարողացաւ միայն ազատել իւր անձը ոսկով եւ Բաղդին Երուսաղէմի թագաւորի միջնորդութեամբ, երկրորդ անգամ Սելեւկիայի Ալեքս իշխանի հետ, որ յանկարծ դիմեց բազմաթիւ զօրքով Թորոսի վերայ, եւ ինքը կայսրը նոյնպէս գնումէր նորա քամակից լերանց վերայով. իսկ Թորոս, որովհետեւ անպատրաստ էր ամենեւին, հեռացաւ եւ սկսաւ շրջել այս տեղ այն տեղ: Կայսրը գնաց Կիլիկիա եւ կարողացաւ վեր առնել միայն մին քանի բերդեր, այնպէս, որ նորա յառաջագրած պատերազմը աւարտուեցաւ հաշտութեամբ, որը որ սակայն Թորոս առաջարկեց Երուսաղէմի Բաղդին թագաւորի եւ այլ լատինացի իշխանների միջնորդութեամբ՝ խոստանալով յետ դարձնել Անարզաբա եւ Մամեստիա: Հաշտութիւնից յետ կայսրը տեսութիւն արեց Թորոսի հետ, շատ սիրեց նորան, կոչեց նորան Պանսեբաստոս (1), եւ այնուհետեւ միշտ բարեկամ մնաց նորա հետ:

---

(1) Պանսեբաստոս յունական բառ է, եւ նշանակումէ՝ ամենապատուելի:

Թորոս իշխանապետի եւ Օշին Լամբրոնի իշխանի մէջ մեծ խռովութիւն էր ծագել այդ ժամանակ, մինչեւ պատերազմ եւ արիւնհեղութիւն իսկ յառաջացան այդ հանգամանքից: Թորոս ստիպում էր Օշինին՝ իւրեան հնազանդել եւ չլինել Յունաց հարկատու. իսկ Օշին լաւ համարելով լինել Յունաց հպատակ. խրատում էր իւր կողմից Թորոսին չլինել ինքնիշխան, այլ մտանել յունական իշխանութեան ներքոյ. վասն զի Թորոս թէպէտ հաշտ էր այդ ժամանակ Յունաց հետ, բայց հարկատու չէր նոցա: Այդ խռովութիւնը վերջացրեց Ներսէս Շնորհալին, որ իւր եղբօր Գրիգոր կաթուղիկոսի յորդորանքով գնաց Թորոսի եւ Օշինի մօտ եւ համոզելով նոցա իմաստուն եւ ազդու խօսքերով, կարողացաւ հաստատել նոցա մէջ կատարեալ խաղաղութիւն եւ սէր՝ նաեւս խնամութիւն իսկ, որովհետեւ Թորոս իշխանը տուեց իւր դստերը կնութեան Օշինի որդուն Հեթումին հաշտութիւնից յետ: Օշին իշխանը ցանկացաւ տանել իւր հետ Ներսէս Շնորհալուն՝ Լամբրոն, գնալու ժամանակը պատահեց նոցա մտանել Մամեստիա քաղաք, ուր Ներսէս Շնորհալին տեսութիւն արեց Կեռ Մանուէլ կայսեր փեսայի՝ Ալեքսի հետ՝ որ զարմանալով Շնորհալու խոհեմ խօսակցութեան եւ իմաստութեան վերայ, խընդրեց գրել թղթի վերայ իւր բոլոր խօսածները, եւ նա իմաստուն վարդապետութեամբ գրեց եւ տուեց նորան Հայոց ազգի ուղղափառ դաւանութիւնը (1):

ԹՈՎՄԱՍ. 1168—1169. ՄԼԵՀ. 1169—1174.

Հազիւ թէ անցել էին երկու տարի Թորոսի եւ Օշնի մէջ եղած հաշտութիւնից՝ երբ Թորոս Բ վախճանուեցաւ եւ թողեց մին մանկահասակ որդի, որին իւր մահից առաջ յանձնել էր իւր աներոջը Թովմաս իշխանին: Նորա մահից յետ, այդ Թովմաս ինքը պայա-

---

(1) Այդ բանի յետագայ հանգամանքները պատշաճումն եկեղեցական պատմութեան:

զատեց Կիլիկիայում, եւ այն մին տարի միայն. որովհետեւ Թորոսի եղբայրը Մլեհ, որ Բերիայումն էր այդ միջոց, ինչպէս լսաւ իւր եղբօր մահը, Բերիայի ամիրայի զօրքով (1), եկաւ Թորսի երկիրը, իբրեւ նորա տէրութեան օրինաւոր ժառանգ: Հայոց իշխանները մտածելով, թէ հնար չկայ ընդդիմանալ Նուրիդինի զօրութեանը, ընդունեցին Մլեհին իւրեանց իշխան. եւ Թովմաս, կասկածելով, թէ մի գուցէ վնաս հասնի իւր կեանքին, փախաւ Անտիոք, ուր եւ առաջ բնակւումէր իբրեւ դեսպան: Նորա փախուստից յետ ամբարիշտ մարդիկ սպանեցին Թորոսի մանկահասակ որդուն եւ ոմանք կարծումեն, թէ այդ սպանութիւնը եղաւ Մլեհի խորհրդով: Սակայն եւ ինքը Մլեհ չկարողացաւ վայելել իւր իշխանութիւնը երկար միջոց, որովհետեւ պարապեց այնքան անարգ եւ աղտեղի գործերով, մինչեւ զօրքը, նորա վարքից տաղտկացած, սպանեցին նորան:

ՌՈՒԲԷՆ ԵՐԿՐՈՐԴ. 1174—1185.

Մլեհի սպանութիւնից յետ՝ Հայոց իշխանները եւ զօրքը միաբան ընտրեցին իւրեանց վերայ իշխան Ստեփանէի որդուն Ռուբենին (2): Այս Ռուբէն Բ շատ բարեբարոյ մարդ գոլով՝ քաղցրութեամբ էր վարւում ազգի հետ, վանորոյ եւ սիրելի էր ամենեցուն: Մանուէլ Յունաց կայսեր մահից յետ, երբ Յունաց եւ Հայոց մէջ կրկին յառաջացաւ ազգային թշնամութիւն, Ռուբէն գնաց Տարսոնի վերայ, որ յունական իշխանութեան ներքոյ էր եւ առեց այդ քաղաքը, եւ դորանով բորբոքեց Լամբրոնի տէրոջ Հեթումի (3) բարկութիւնը, որ հաւատարիմ գոլով Յունաց ծառայութեան մէջ, կարգուած էր Տարսոնի

(1) Ամիրան էր Նուրիդին՝ Զանգիի որդին:

(2) Ստեփանէ՝ Թորոսի եւ Մլեհի եղբայրն էր:

(3) Հեթում՝ Ներսէս Լամբրոնացու եղբայրն էր. յունական ծառայութեան մէջ ստացել էր Ս ե բ ա ս տ ո ս պատուանուն, որ նշանակում է գերապատիւ, շքեղ կամ մեծափառ:

կողմերումը վերակացու, եւ նախատինք էր համարում իւրեան Ռուբենի տիրապետութիւնը այն կողմերումը։ Խռովութիւնը մեծացաւ եւ Ռուբէն պաշարեց Լամբրոնի բերդը, ուր ամրացած էր Հեթում, եւ պահանջեց նորանից տալ իւրեան այն դղեակը եւ հնազանդել։ Հեթում անճարացած խնդրեց թղթով օգնութիւն Անտիոքի կոմսից Պեմունդից, եւ նա չըկարողանալով բռնութեամբ ընդդիմանալ Ռուբենին, հրաւիրեց նորան դաւաճանութեամբ մին տեղ, հացկերոյթ պատրաստեց եւ ընծայքի ժամանակը ձերբակալ արեց նորան քցեց բանտ։ Ռուբենի եղբայրը Լեւոն, արի եւ քաջ մարդ, ինչպէս լաւ այդ անցքը, վառուեցաւ բարկութեամբ եւ կամելով վրէժխնդիր լինել կոմսին, կասկածումէր ուղղակի գնալ նորա վերայ, որ մի գուցէ կոմսը սպանանէ Ռուբենին, վասնորոյ գնաց պաշարեց զօրքով Լամբրոն դղեակը եւ հարկադրեց Հեթումին հաշտութիւն խօսել, եւ յետոյ նորա միջնորդութեամբ ազատեց իւր Ռուբէն եղբօրը անվնաս։ Բայց այդ ձախողակի հանգամանքը եղաւ նոր բարեկամութեան առիթ Հայոց եւ Լատինացւոց մէջ, որովհետեւ Ռուբէն տուեց իւր դստերը կնութեան Պալդուինին՝ Պեմունդի որդուն։

Ի՞նչ էր լինում այդ ժամանակ մեծ Հայաստանումը։ Վրաց տէրութիւնը զօրացած էր եւ անուանի Գորգէ կամ Գէորգի Թագաւորի եւ նորա դստեր Թամարի օրերումը։ Գորգէ, Դեմիտրի որդին եւ Դաւթի եղբայրը, բազմաթիւ զօրքով գնաց Հայաստանի Շիրակ գաւառը, պաշարեց եւ առեց Անի քաղաքը Պարսից ձեռից, ձերբակալ արեց քաղաքի այլազգի վերակացուին եւ տարաւ Վրաստան, նորա տեղ կարգեց վերակացու Իւանէին, իւր սպարապետին։ Պարսիկք թէպէտ եկան եւ պաշարեցին Անի քաղաքը եւ Իւանէ վերակացուն անճարացած կամենումէր արդէն տալ նոցա քաղաքը, բայց հայ բնակիչները յանձն չառեցին եւ Պարսիկք ամօթով յետ դարձան։ Սակայն Անի քաղաքը լինումէր այնուհետեւ երբեմն Վրաց եւ

երբեմն Պարսից տիրապետութեան ներքոյ, մինչեւ Գորգէի դստեր՝ Թամար թագուհու ժամանակը, որի երեւելի սպարապետները՝ երկու եղբայր Զաքարէ եւ Իւանէ, քաջասիրտ եւ զօրաւոր մարդիկ, դիմեցին Պարսից վերայ, յաղթեցին նոցա եւ առեցին նոցա ձեռից Հայաստանի զանազան երկիրները, որպէս էին՝ Սիւնեաց աշխարհը եւ Գեղարքունին, Շիրակ գաւառը իւր քաղաքներով, յետոյ երեւելի քաղաքները՝ Դուին եւ այլն. Հարկատու կացուցին Հայոց շատ իշխաններին, եւ այդպէս իւրեանց արութեան համբաւը եւ իւրեանց թագուհու Թամարայի անունը հռչակեցին բոլոր աշխարհում։

ԼԵՒՈՆ ԵՐԿՐՈՐԴ. 1185—1219.

Ռուբէն Բ մեծ իշխանը իւր մահից առաջ հրաժարուեցաւ աշխարհից եւ եղաւ կրօնաւոր. իսկ աշխարհի կառավարութիւնը յանձնեց իւր եղբօրը Լեւոնին։ Լեւոն Բ Կիլիկիայի ամենայն իշխաններից առաւել զօրացաւ, ընդարձակեց տէրութեան սահմանները, նշանակեց իւր իշխանութեան աթոռը առժամանակ Տարսոնումը եւ յետոյ Սիս։ Յաղթեց եւ հալածական արեց Իկոնիայի ամիրային (1), որ մեծ զօրքով եկել էր Լեւոնի վերայ եւ կամենումէր նուաճել նորան՝ միայն նախանձուելով նորա քաջագործութիւններին։ Առեց Իսաւրիան, տիրակալեց շատ տեղեր Ասորոց սահմաններում, պաշարեց Կեսարիան Պաղեստինի եւ միայն քաղաքի իշխանի խնդրով եւ գանձով համաձայնեց հաստատել հաշտութիւն։ Շինեց շատ բերդեր Կիլիկիայումը, հիմնեց հիւանդանոց, ուր տանումէր խնամք տկար մարդկանց, եւ գոլով ըստ ամենայնի բարեպաշտ եւ կրօնասէր, առատաձեռն եւ խնամատար, արի եւ քաջ, կարողացաւ այդպիսի բարեմասնութիւններով հասանել ար-

(1) Նորա անունն էր՝ Ռուստում։

քայական գաւազանի եւ վերականգնել Հայոց թագաւորութիւնը:

Երբ խաչակիր զօրքերը միւսանգամ գումարուեցան եւ գնացին Պաղեստին ծովով եւ ցամաքով, Հռոմի պապը Կղեմէս Գ գրեց ընտանեբար թուղթ մեր Լեւոն մեծ իշխանին եւ Գրիգոր Դ կաթուղիկոսին [1], որ նոքա յորդորեն Հայոց նպաստամատոյց լինել Խաչակիր զօրքերին՝ ով ինչով կարող էր, զէնքով, փողով եւ կամ անձամբ: Ալեմանաց կամ Հռոմայեցոց կայսրը Փրիդերիկոս Ա., Բարբարուսա մականուանած, որ իւր կրտսեր որդու Կոնրադոսի հետ միասին մասնակից եղաւ այդ երկրորդ Խաչակիր ընթացքին դէպ ի Արեւելք՝ Երուսաղէմը ազատելու համար, երբ որ հասաւ Իկոնիա, ուղարկեց դեսպան Լեւոն իշխանապետի եւ Գրիգոր կաթուղիկոսի մօտ եւ խնդրեց նոյնպէս օգնութիւն նոցանից: Լեւոն մեծ իշխանը ուղարկեց կայսեր զօրքի համար շատ բաւական ուտելիք եւ ըմպելիք, որովհետեւ նոցա մէջ այնչափ պակասել էր ուտեստի պաշարը, մինչեւ շատ մարդիկ ուտում էին իւրեանց ձիերը, եւ ինքը՝ կաթուղիկոսի հետ՝ գնաց նորա առաջը: Երբ կայսրը ստացաւ այդ օգնութիւնը եւ Լեւոնի թուղթը, շատ մխիթարուեցաւ, մինչեւ ուրախութիւնից լաց եղաւ: Պէտք է ասել, թէ Լատինացիք առ հասարակ մեծ նեղութիւն եւ տառապանք էին կրում ամենայն կողմից, թէ սովից, թէ Յունաց նենգութիւնից եւ թէ անհաւատների արշաւանքից, եւ միայն Հայոց էին ճանաչում հաւատարիմ օգնական խաչակիր զօրքերին: Զգալով Հայոց ազգի իսկապէս քրիստոնէական յարակցութիւնը, կայսրը բացատրեց կաթուղիկոսին առանձին թղթով իւր շնորհակալութիւնը, յաւելցընելով, թէ մտադիր է բնակուել Հայոց սահմաններում հինգ տարու չափ, մինչեւ կարողանայ հաստատութեամբ

---

(1) Գրիգոր՝ Տղայ մականուանած, Ներսէս Շնորհալու յաջորդը եւ նորա եղբօր Վասիլի որդին:

իշխել Պաղեստինին եւ թէ այդ միջոց մեծաշուք
հանդէսով կկարգէ Լեւոնին թագաւոր Հայոց վերայ։
Երբ Փրիդերիկոս կայսրը հասաւ Իսաւրիա եւ մօտե-
ցաւ Սելեւկիա քաղաքին, Լեւոն իշխանապետը եւ
Գրիգոր կաթուղիկոսը Ներսէս Լամբրոնացու հետ
շտապեցին գնալ նորա առաջը, այլ դեռ եւս չհասած
կայսեր տեսութեանը, լսան, որ նա դժբաղդաբար
խեղդուել է Սելեւկիայի Գիտնոս գետի մէջ. վասնո-
րոյ կարողացան տեսութիւն առնել միայն նորա Կոն-
րադոս որդու հետ, եւ ցոյց տուեցին նորան պատիւ
եւ սիրալիր հօր մահուան մասին։ Կոնրադոս թէ-
պէտ եւ ցանկանումէր կատարել իւր հօր խոստումն 1198.
եւ թագ դնել հանդէսով Լեւոնի գլուխը, բայց որով-
հետեւ սգաւոր էր եւ մանաւանդ շտապումէր գնալ
կատարել խաչակիր զօրքի ընդհանուր յառաջատրու-
թիւնը, այդ միջոց չյաջողուեցաւ Լեւոնի թագա-
դրութիւնը, այլ եղաւ մին քանի տարուց յետ Կոն-
րադոսի երէց եղբօր՝ Ալեմանաց կամ Գերմանացոց
կայսեր Հենրիկոս վեցերորդի հաճութեամբ, երբ
Լեւոն իշխանապետը, որ կոչուումէր Պարոն, եւ եր-
բեմն եւս արքայ. ցանկալով օծուել Հայոց թագա-
ւոր, բայց եւ կամենալով ընծայել իւր թագադրու-
թեանը առաւել հաստատութիւն եւ վաւերական
կերպ, խնդրեց Հռոմի Կելեստիանոս պապից արքա-
յական թագ եւ օրհնութիւն, եւ նոյն խնդիրը ա-
ռաջարկեց Հենրիկոս վեցերորդ կայսերը, որի հայրը
Փրիդերիկոս առաջին խոստացել էր արդէն, որպէս
վերեւումը յիշեցինք, թագաւոր կացուցանել Լեւո-
նին Հայոց վերայ։ Կելեստիանոս պապը՝ Լեւոնի նամա-
կը ստացած, շատ ուրախութեամբ յօժարացաւ կա-
տարել նորա խնդիրը. բայց որովհետեւ Հենրիկոս
կայսրը Սիկիլիայումն էր այդ միջոց, վասնորոյ ու-
ղարկեց նորա մօտ Լեւոնի թուղթը, եւ երբ ստացաւ
նորա հաւանութիւնը, կազմեց, նորա հրամանով, մին
փառաւոր արքայական թագ, օրհնեց եւ ուղարկեց
Լեւոնին, որի համար եւ կայսրը ուղարկեց առան-

ձին ախծանշան դրօշակ՝ Լեւոն անունին համեմատ՝ որ նա կրէ այնուհետեւ ախծի նշանը իւր առաջեւ ([1])։ Կայսեր եւ պապի ընծաները առացած, Լեւոն եւ Գրիգոր կաթուղիկոսը հրաւիրեցին թղթով արեւելեան եւ արեւմտեան կողմերի Հայոց եպիսկոպոսներին, վարդապետներին եւ երեւելի իշխաններին, եւս եւ շատ Յոյնք եւ Լատինացի՝ Լեւոնի թագադրութեան հանդէսը, ուր ներկայ գտանուեցաւ եւ Ներսէս Լամբրոնացին. եղաւ մեծ ժողով Տարսոն քաղաքումը եւ փառաւոր հանդէսով Գրիգոր կաթուղիկոսը ([2]) օծեց Լեւոնին ամենայն Հայոց թագաւոր,
1198. մեր ազգային Ոսկէ թուականումը։ Յունաց կայսրը Ալեքս Անկեղոս կասկածելով Լեւոնից, ինքը եւս ուղարկեց նորա համար թագ ականակապ։ Սորանից յետ Լեւոն թագաւորը սկսաւ խնամել եւ զարդարել իւր աշխարհը այլ եւ այլ բարեկարգութիւններով, եկեղեցիների շինութեամբ, որոց մէջ երեւելի էր կաթուղիկէ եկեղեցին էջմիածնի անունով Սիս քաղաքումը, եւ վանքերի հիմնարկութեամբ, որոց մէջ նշանաւոր էր Ակներ վանքը։ Երբ պարապած էր Լեւոն այդպիսի բարեպաշտ գործերով, մեռաւ նորա կինը, եւ նա կամելով միւսանգամ ամուսնանալ, առեց իւրեան կնութեան Կիպրոսի Գուիդոն թագաւորի քրոջը, եւ նորանից ունեցաւ դուստր Զապէլ անունով, որ կոչուումէ երբեմն եւս Եղիսաբէթ, եւ որ յետ ժամանակաց ամուսնացաւ Անտիոքի կոմսի որդու Փիլիպպոսի հետ եւ յետոյ՝ հեթումի։

Այդ հանգամանքներից յետ, Լեւոն երկու նշանաւոր յաղթութիւն արեց. նախ յաղթեց եւ հալածական արեց Իկոնիոնի Քայքայուզ ամիրային, որ կասկածելով, թէ մի գուցէ Լեւոնի զօրութիւնը առաւել մե-

---

([1]) Մինչեւ այդ ժամանակ Հայոց թագաւորները կրումէին արծուէ նշան։

([2]) Գրիգոր վեցերորդ՝ Ապիրատ ասածը, Ներսէս Շնորհալու եղբօր Շահանի որդին։

ծանոյ, անհամար զօրքով եկել էր յանկարծ Կիլիկիա եւ առել էր արդէն Բերասնք ասած դղեակը. երկրորդ սաստիկ հարուածեց Նուրեդդինին՝ Բերիայի ամիրային ([1]), որ նոյնպէս նախանձուելով Լեւոնի փառաւոր անուանը, բազմաթիւ զօրքով եկել էր Կիլիկիայի սահմանները եւ կամենում էր բոլորովին կործանել Լեւոնի տէրութիւնը. բայց հազիւ թէ կարողացաւ փախստեամբ ազատել իւր անձը:

Այդ օրերումը մեռաւ Անտիոքի կոմսը Պալդին, Պեմունդի որդին, որի կինը Լեւոնի եղբօր Ռուբէնի դուստրն էր՝ անունը Ալիսա: Որովհետեւ Պեմունդ խոստացած էր նշանակել իւր որդուն Պալդինին իշխանութեան ժառանգ, վասն որոյ մահից հետ կարգեց իւրեան յաջորդ սորա որդուն (իւր թոռնին) Ռուբենին. եւ այդ կարգադրութեան զօրութեամբ Պեմունդի մահից հետ Անտիոքումը կարգուեցաւ կոմս եւ իշխան Ռուբէն: Բայց որովհետեւ Անտիոքի իշխանութեան վերայ նոյն իրաւունքը ունէր Տրապոլսի ([2]) իշխանը ձիւան՝ Պալդինի եղբայրը, վասնորոյ նա պատերազմ բացեց Ռուբենի հետ, վանեց նորա այն տեղից, կարգեց Անտիոքումը այլ ան իշխան եւ ինքը դարձաւ Տարապոլիս. Ռուբէն փախաւ Լեւոնի մօտ, որ թէպէտ հեշտ կարող էր առնուլ Անտիոքը, բայց խնայելով քրիստոնէից, որոց հետ պէտք էր գործ դնէր սուր, բաւական համարեց թուղթ գրել Իննոկենտիոս պապին, եւ յայտնել ներկայ դիպուածի բոլոր անցքը՝ խնդրել, որ նա ինքը դատաստան առնէ այդ բանի վերայ եւ տայ Ռուբենին քաղաքի իշխանութիւնը: Պապը յանձնեց գործի քննութիւնը Պետրոս կարդինալին, որ առաւել սաստկացրեց խռովու-

---

([1]) Սա յետ ժամանակաց եղաւ Տաճկաստանի թագաւոր եւ կոչուեցաւ Սուլթան Սիւլէյման:

([2]) Տրապօլիսը երկու է, մինը Ասորոց քաղաք էր Փիւնիկեցոց ծովեզրումը, միւսը՝ բարբարոսաց աշխարհումը Աֆրիկէ. այս տեղ առաջինի վերայ է խօսքը:

թիւնը՝ ծածուկ պաշտպանելով Տրապօլսի կողմը, եւ այդպիսի արարքով յարուցրեց Լատինացոց՝ Հայոց ընդդէմ: Լեւոնի ծանր թուեցաւ կարդինալի անարգար եւ խորամանկ գործը, վասնորոյ ստիպուեցաւ նա հալածել իւր աշխարհից բոլոր Լատինացոց, մանաւանդ կղերիկոսներին եւ եպիսկոպոսներին իսկ, եւ շատ լատին իշխաններին, որ չէին կարողանում խլրտուել Լեւոնի առաջեւ եւ կախել նորա բարկութիւնը: Լատինացիք ամենայն կողմից անճարացած հարկադիր եղան յայտնել այդ հանգամանքները Իննոկենտիոս պապին եւ Գերմանացոց կայսերը՝ Օթոն չորրորդին, որոց հարկաւոր համարեց գրել եւ Լեւոն իւր կողմից եւ բացայայտել, թէ խռովութեան պատճառը մի միայն Պետրոս կարդինալն է: Պապը եւ կայսրը գրեցին Անտիոքի եպիսկոպոսին, որ հեռուէ խաղաղութիւն հաստատել այդ բանումը, եւ նա հաճեցրեց Անտիոքացոց ընդունել Ռուբենին իւրեանց իշխան եւ յայտնեց նոցա համաձայնութիւնը Լեւոնին, որ վեր առեց իւր հետ Ռուբենին, տարեց Անտիոք: մեծ հանդէսով մտաւ քաղաք եւ բնակիչները երդմամբ հաստատեցին իւրեանց հնազանդութիւնը Ռուբենին, եւ Լեւոն պսակեց նորան թագով, որ ուղարկել էր Օթոն կայսրը: Այսպէս մեր Լեւոն թագաւորը օր ըստ օրէ զօրանալով, երեւելի եւ փառաւոր եղաւ բոլոր Կիլիկիայումը, Իսաւրիայի եւ Եփրատացոց սահմաններում եւ Չորրորդ Հայաստանում: Սա չունէր արու զաւակ, վասնորոյ նշանակեց իւրեան յաջորդ իւր միակ դստերը Զապելին, որ այդ ժամանակ տասնվեց տարեկան էր:

ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՀԻ, 1219—1220.

Երկրորդ Լեւոնի մահից հետ Յովհաննէս կաթուղիկոսը, Աստան եւ Կոստանդին իշխանները, միւս Հայոց մեծամեծների հաւանութեամբ, գրեցին արքայական թագը նորա դստեր Զապելի գլուխը եւ կոչեցին նորան Հայոց թագուհի. իսկ թագաւորութեան

կուսակիցներն էին Սսոյն եւ Կոստանդին: Զապէլ թագուհին զարդարուած էր տաքնասէր կեանքով. խստակրօն ճգնաւորի նման միշտ աղօթքով պարապած, մեծ խնամք եւ մարդասիրութիւն էր ցոյց տամ հիւանդներին, գնում էր անձամբ նոցա տեսութիւն, ծառայում էր նոցա աղախնու նման, եւ եթէ չքաւոր էին լինում այն մարդիկը, նոցա ձեռքը լցնում էր փողով՝ հարկաւոր պիտոյք կատարելու համար. իսկ եթէ ումանց չէր կարողանում ինքը հասանել օգնութիւն, այլ մարդ էր ուղարկում իւր տեղ: Նորա բերանից երբէք դուրս չէր գալ անպիտան խօսք. անյարմար կամ անտեղի ծիծաղ երբէք չէր երեւում նորա դէմքի վերայ. մին բանով, Զապէլ ամենայն բարոյական կատարելութեան հայելի էր եւ զարդարանք եղաւ մեր ազգի արժանաւոր թագուհի: Սորա ընտրութեան մասին վէճ բացեց Անտիոքի իշխանը Ռուբէն, որ Լեւոնի եղբօր թոռը լինելով, երեւակայում էր, թէ ունի առաւել իրաւունք ժառանգելու Ռուբինեանց աթոռը: Այս մտքով զօրաժողով եղաւ եւ գնաց Կիլիկիա, առեց յառաջագոյն Տարսոն քաղաքը, դիմեց յետոյ Մամեստիայի վերայ, բայց դեռ եւս չէր առել այդ քաղաքը, երբ Կոստանդին իշխանը Լեւոնի զօրքով յարձակուեցաւ նորա վերայ, վանեց նորան մինչեւ Տարսոն, յետոյ բռնեց եւ դրեց բանտ, ուր եւ մեռաւ նա. իսկ Անտիոքումը կարգուեցաւ իշխան Ռուբինեանց ազգականներից մինը:

ՓԻԼԻՊՊՈՍ. 1220—1222.

(պարապ միջոց 1222—1224).

Կոստանդին իշխանը եւ Հոգաբարձուն՝ Զապէլ թագուհու հաճութեամբ հրաւիրեց Սիս քաղաք Անտիոքի նորընտիր կոմսի որդուն Փիլիպպոսի, որ մօրով հայ էր եւ հօրով լատինացի, եւ մեծահանդէս փառքով պսակեց նորա հետ Զապէլ թագուհուն: Փիլիպպոսից երդումն առեցին Հայոց ծէսերը չփոխել եւ մին ձեւով անիրաւութիւն չառնել ազգին, եւ ապա

կոչեցին նորան Հայոց թագաւոր։ Դժբաղդաբար երկու տարուց յետ Փիլիպպոս սկսաւ վարուել իւր երդմանը ընդդէմ, բարձեց իւր սէրը եւ գութը Հայոց ազգից եւ դարձրեց Լատինացոց կողմը. Նաեւ արքունական պալատի զարդը ուղարկեց Անտիոք։ Այդքանին չկարողացան համբերել Հայք. բռնեցին նորան ճանապարհում Անտիոք գնալու ժամանակը եւ փակեցին Բարձրբերդի դղեակի մէջ, ուր նա փոքր ժամանակից յետ մեռաւ սրտի արտմութիւնից։ Զապէլ թագուհին, որի համար շատ արտմալի էր այդ անցքը, կամեցաւ հրաժարուել աշխարհից եւ առանձնանալ մին վանքումը. բայց Հայոց իշխանները թոյլ չտուեցին, մանաւանդ Կոստանդին, որ շատ եւ շատ յորդորումէր նորան ամուսնանալ իւր որդու Հեթումի հետ, եւ նորոգել Ռուբինեանց իշխանութիւնը։ Զապէլ, թէպէտեւ ակամայ կամքով, համաձայնեց վերջապէս այդ առաջարկութեանը եւ ամուսնացաւ Հեթումի (¹)
1224. հետ, որին մեծ հանդէսով օծեցին թագաւոր 1224 թուականին։

ՀԵԹՈՒՄ ԱՌԱՋԻՆ, 1224—1269.

Հեթում թագաւորը իւր հօր՝ Կոստանդին իշխանի օգնականութեամբ եւ զօրեղ ձեռնտուութեամբ զարդարեց Կիլիկիան նորանոր բարեկարգութիւններով. խաղաղութիւն հաստատեց շրջակայ ազգերի եւ ամիրաների հետ. կարգեց իւր աշխարհում պահապաններ եւ հոգատարներ. բերեց զանազան երկիրներից հանճարաւոր արուեստաւորներ. շինեց բեռնաբարձ նաւեր, որոշելով առանձին նաւահանգիստներ վաճառների համար։ Այդպիսի բարեկարգութիւնների համբաւը տարածուեցաւ հեռաւոր տեղերում Հայոց մէջ եւ նոցանից շատերը եկան եւ բնակուեցան Կիլիկիա, մանաւանդ այնպիսի Հայք, որ Թաթարների

(¹) Հեթում թագաւորը Արշակունեաց ցեղիցն էր եւ խնամացած էր Ռուբինեանց տան հետ, որ Բագրատունեաց տոհմիցն էին շառաւիղած։

*կողմից այդ միջոց եղած արշաւանքից հալածուած,
որոնում էին իւրեանց համար ուր եւ իցէ անվրդով
ապաստանարան ։ Զգօնամտութիւն եւ քաղցրաբարոյ-
ութիւն, ամենեցուն հետ սէր եւ կենցաղավարու-
թիւն, եւ արքայավայել առատաձեռնութիւն՝ Հե-
թում թագաւորի անձնական արժանաւորութիւննե-
րըն էին ։*

*Սորա թագաւորութեան օրերումը երեւեցան Հա-
յաստան Թաթարները կամ Մողոլները, երբ զօրացել
էր նոցա մեծ թագաւորը Չինկիզխան, եւ առաւել
եւս նորա մահից յետ ։ Թաթարները յանկարծ սըփ-* 1238.
*ռուեցան Վրաց, Աղուանից եւ Հայոց աշխարհները,
մարախի նման ծածկեցին դաշտերը եւ սարերը, եւ
ծովի նման ողողեցին եւ ապականեցին մեր աշխարհը ։
Հայաստանի քաղաքները՝ Գանձակ, Արցախ, Անի,
Կարս, Սիւնեաց աշխարհը բոլոր, ստնակոխ եղան ամե-
նեւին. նոքա այրեցին քաղաքները, բնակիչներին կո-
տորեցին, շատերին վարեցին, աշխարհի վերայ կա-
ռավարիչ դրեցին իւրեանց նախարարներից մինին՝
Ղարաբուղա անունով եւ յետ դարձան իւրեանց բնա-
կութեան տեղը Մուղանի դաշտը (1) ։*

Չորս տարուց յետ Թաթարները յարձակուեցան 1242.
*Կարին գաւառ, որ Իկոնիոնի ամիրայի իշխանութեան
ներքոյ էր, առեցին Թէոդոսուպօլիս, կոտորեցին բը-
նակիչներին, յափշտակեցին նոցա գոյքը, այրեցին
քաղաքը եւ դարձան յետ ։ Թէպէտ Իկոնիոնի ամի-
րան (Խիաթատին) զօրք ժողովեց եւ կամեցաւ պա-
տերազմել նոցա հետ, բայց նոքա անակնկալ ժամու-
մը յարձակուեցան նորա վերայ եւ արեան հեղեղով
ծածկեցին նորա զօրքը ։ Յետոյ գնացին Թաթարները
պաշարեցին Կեսարիան Կապադովկացոց, առեցին քա-
ղաքը, բնակիչներին կոտորեցին, տուները այրեցին*

---

(1) Մուղանի դաշտը կոչուումէ եւս Դարանդաշտ կամ Դարանադաշտ, նահանգը անյայտ. Տես Ստորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ինճիճեանի. Վենետիկ, 1822, երես 517։

եւ գրաւեցին Սեբաստիայի կողմերը, որի բնակիչնե-
րը անձնատուր, եղան նոցա կամակար. յետոյ խա-
բէութեամբ մտան Երզնկայ քաղաք, ուր նոյն անո-
ղորմ ձեւով կոտորեցին, աւերեցին, այրեցին ամե-
նայն ինչ, որպէս այլ քաղաքներում, վերջապէս
նուաճեցին այլ բազում քաղաքներ՝ մինչեւ համարեա
բոլոր Հայաստանը :

Հեթում թագաւորը տեսանելով, թէ Թաթարնե-
րը յաղթեցին ու Իկոնիոնի ամիրային եւ թէ փոքր փո-
քըր յառաջ են ընթանում եւ մօտենում են իւր իշ-
խանութեան սահմաններին՝ Կիլիկիա, միտք արեց
խաղաղութեան դաշն հաստատել նոցա հետ եւ հնա-
զանդել նոցա : Այդ նպատակով ուղարկեց դեսպան
Թաթարների Բաչու իշխանին. որ այն ժամանակ
Խաչէնի (¹) սահմաններումն էր, դեսպանը յանդիման
եղաւ նորան մեծագին ընծաներով եւ յայտնեց Հե-
թումի հնազանդութիւնը. Բաչու շատ հաւանեցաւ
եւ ուրախացաւ այդ հպատակութեանը, ընդունեց
պարգեւները եւ գրեց խաղաղութեան եւ սիրոյ դա-
շըն Հեթում թագաւորի հետ, եւ ինքը գնաց Միջա-
գետք, առեց Եդեսիան, Մծբինը եւ այլ քաղաքներ :
Այդ խաղաղութեան պայմանը Հեթում նորոգեց Հո-
քաթա կամ Թախաթա մեծ խանի մահից յետ նորա
Գիւուգ անունով յաջորդի հետ. իսկ սորա մահից յետ,
երբ Թաթարստան ընտրուեցաւ Մանգու (Չինկիզխանի
որդին, որովհետեւ եւ Գիւուգ մեռաւ անորդի), Հե-
1252. թում ցանկացաւ եւ նորա հետ հաստատել հաշտու-
թիւն, եւ այդ նպատակով գրեց թուղթ Բաթու խա-
նին, որ տիրապետում էր Ասիայի եւ Եւրոպայի հիւ-
սիսային կողմերումը եւ ստացաւ պատասխան, որով
հրաւիրումէր նա Հեթում թագաւորին գալ իւր մօտ
եւ ապա գնալ Մանգու խանի մօտ : Բայց որովհետեւ
այդ միջոց Հեթում մեծ սուգի մէջ էր իւր կնոջ Զա-
պէլ թագուհու մահուան պատճառով եւ կասկածու-

(¹) Խաչէն կամ Խաչենք գաւառ, Արցախ աշխարհումն էր :

մէր թողնել իւր աշխարհը, թէ մի գուցէ թշնամիները զարթնեն, վասնորոյ մնաց փոքր ժամանակ եւ մտածումէր թէ ինչ անէ ։ Յետոյ, ինչպէս լսաւ, թէ Մանգու խանի հարկապանջները եկել են արդէն Հայոց եւ Վրաց աշխարհ եւ սաստիկ նեղումն նոցա, դուրս եկաւ ճանապարհ եւ գնաց Բաթու խանի մօտ, որ ունէր իւր բանակը Խազանի սահմաններում Էթիլ (Վոլգա) գետի ափի վերայ ։ Բաթու խանը եւ նորա որդին Սարդախ՝ պատուով ընդունեցին Հեթում թագաւորին եւ ապա ճանապարհեցին նորան մեծ Թաթարաց աշխարհը Մանգու խանի մօտ, որ գրեց Հեթումի հետ մըշտընջենաւոր խաղաղութեան յեակար, խոստանալով լինել նորան ամենայն բանումը օգնական, միայն թէ նա եւ նորա յաջորդները Թաթարաց թագաւորին լինեն հնազանդ եւ հաւատարիմ. բաց ի սորանից տուեց նորան առանձին թուղթ Եկեղեցիների ազատութեան եւ հարկերի թեթեւութեան մասին, եւ Հեթում դարձաւ Կիլիկիա ։ Այսպէս բարեկամութիւն հաստատելով Թաթարաց խաների հետ, մեր Հեթում թագաւորը պահպանումէր իւր աշխարհը խաղաղ եւ անդորր, եւ ինքը գոլով հանգիստ եւ ապահով՝ օգնումէր եւս Լատինացոց խաչակիր զօրքին, Կլեմէս չորրորդ պապի խնդրով, որ մեծ նեղութիւն եւ տառապանք էին կրում Հագարացոց, Եգիպտացոց եւ Ասիացոց կողմից ։ Սակայն եւ ինքը Հեթում չմնաց անվտանգ Եգիպտացոց կողմից. Նոցա թագաւորը Փնտուխտար կամ Ալֆի Ցընտախտար իմանալով, թէ Հեթում Հայոց թագաւորը բարեկամ է Թաթարաց հետ, եւ թէ նոցա օգնութեամբ է առել մին քանի քաղաքներ, որ առաջ Եգիպտոսի ամիրայի իշխանութեան ներքոյ էն եղած, յետ պահանջեց Հեթումից այն քաղաքները եւ երբ Հեթում հրաժարուեցաւ նորա պահանջմունքը կատարելուց, Փնտուխտար ուղարկեց նորա վերայ զօրք, երբ որ Հեթում անհոգ եւ անպատրաստ էր ամենեւին ։ Տեսանելով թշնամիների յանկարծակի արշաւանքը Հեթում բաժանեց իւր զօր-

քը երկու գունդ եւ յանձնեց նոցա իւր երկու որդո-
ցը Լեւոնին եւ Թորոսին, ինքը շտապելով գնաց Թա-
թարաց մօտ օգնութիւն խնդրելու: Թշնամիները
յարձակուեցան Հայոց վերայ եւ այնքան սաստիկ հա-
րուածներ տուեցին նոցա, մինչեւ արքայորդիքը եւս,
թէպէտ եւ մեծամեծ քաջութիւններ ցոյց տուեցին
այդ տեղ, իւրեանց զօրքի տկարութեան պատճա-
ռով փախցուեցան, Թորոս սպանուեցաւ, Լեւոն ձեր-
բակալ եղաւ: Եգիպտացոց զօրքը տիրուեցան բոլոր
Կիլիկիա, հուրի եւ սուրի մատնեցին շատ քաղաք-
ներ եւ նոցա բնակիչներին, եւ միայն ամուր բերդե-
րը չկարողացան առնուլ. տակայն արքայանիստ քա-
ղաքը Սիս տկարացաւ եւ մատնուեցաւ թշնամիներին,
որ կողոպտեցին նորա հարստութիւնը եւ արքունի
գանձը, այրեցին Հեթումի շինած մեծ տաճարը, գե-
րի վարեցին մինչեւ քառասուն հազար մարդ եւ գը-
նացին Եգիպտոս: Հեթում վերադարձաւ իւր աշխար-
հը Թաթարների զօրքով. բայց արդէն յետի էր. տե-
ղեկացաւ բոլոր անցքերին, շատ տրտմեցաւ եւ սուգ
արեց իւր որդոց եւ բազմաթիւ գերիների վերայ,
բայց չյուսահատուեցաւ, սկսաւ մխիթարել եւ քա-
ջալերել այլոց. խոնարհութեամբ եւ աղաչանքով
գրեց թուղթ Եգիպտոսի ամիրային, ուղարկեց զա-
նազան մեծագին ընծաներ եւ խնդրեց նորանից իւր
որդուն Լեւոնին: Ամիրան պատասխանեց, թէ Հե-
թում բարեկամ գոլով Թաթարներին՝ եթէ կխնդրէ
նոցանից, որ յետ դարձուցանեն նորա ազգականին
(Սղուր անունով), որ գերի էր Թաթարների մօտ,
այն ժամանակ ինքը եւս կարձակէ նորա որդուն Լե-
ւոնին: Հեթում խնդրեց այդ մասին Ապաղա խանին
(Հուլաւի որդուն), որ նորա բարեկամն էր եւ բնա-
կուում էր Դավրէժ, եւ նա արձակեց Սղուրին, որին
Հեթում հասցրեց Եգիպտոսի ամիրային եւ ձեռք
բերեց փոխանակի իւր որդուն Լեւոնին: Շատ եւ շատ
1269. ուրախացաւ Հեթում իւր որդու տեսութեամբ, եւ
նոյն տարի Ցակոբ կաթուղիկոսի եւ բոլոր Հայոց իշ-

խաների ներկայութեամբ բազմեցրեց նորան թագաւորական աթոռը, յանձնեց նորան բոլոր իւր տէրութիւնը, եւ ինքը հրաժարելով աշխարհի զբաղմունքից՝ եղաւ ճգնաւոր Դրազարկ վանքումը՝ Մակար անունով, եւ այն տեղ մի քանի ամսից յետ վախճանուեցաւ:

ԼԵՒՈՆ ԵՐՐՈՐԴ, 1269—1289.

Հազիւ թէ երեք ամսից յետ կարողացաւ Լեւոն փոքր ինչ թեթեւանալ իւր անպայման տրտմութիւնից, որ ձգել էր նորան իւր հօր վախճանը. ըստանալով Եգիպտոսի ամիրայից եւ Թաթարի խանից մխիթարական թուղթ, նոյնպէս եւ Հայոց ազգից, յանձն առեց այնուհետեւ թագաւորութեան պաշտօնը եւ Յակոբ կաթուղիկոսի ձեռով օծուեցաւ թագաւոր Տարսոն քաղաքումը, ուր եւ նշանակեց թագաւորութեան աթոռը: Սկսաւ այնուհետեւ վայելչացնել իւր պալատը, նորոգել այն քաղաքները, որ թշնամիների արշաւանքից աւերուած էին, մանաւանդ Սիս մայրաքաղաքը. յաւելացրեց զօրքի ռոճիկը, շինեց հիւանդանոցներ եւ հիւրանոցներ, վերանորոգեց եւ վանքերը ոչ միայն Կիլիկիայումը, այլեւ արեւելեան կողմերումը, այսինքն՝ մեծ Հայաստանումը, եւ կարգեց այն տեղ դպրոցներ, մանաւանդ Մեծ Քար ասած վանքումը: Նշանաւոր բան է, որ Լեւոն Գ հրամայեց օրինակել համարեա բոլոր նախնեաց շարադրած եւ թարգմանած գրքերը եւ ուղարկեց այն օրինակները զանազան վանքեր: Լեւոնի անձնական յատկութիւններն էին երկայնմտութիւն, պարկեշտութիւն եւ ժուժկալութիւն. դէմքը քաղցրահայեաց եւ զուարթերես. ողորմածութեամբ առաւել գերազանց քան թէ իւր նախնիքը: Նորա նման եւ նորա բարեպաշտուհի կողակիցը՝ Աննա թագուհին՝ նշանաւոր էր մեր ազգի մէջ մշտատեւ օգնութեամբ աղքատներին եւ պաշտպանութեամբ որբերին եւ այրի կանանց:

Փոքր ժամանակ խաղաղ էր Կիլիկիան, և շուտով
պաշարեցին նորան զանազան խռովութիւններ. Հա-
յոց իշխանները (մանաւանդ Թագաւորի ազգական-
ները) ունենալով տեսութիւն Լևոնի հետ՝ սկսան
նիւթել չարիք նորան ընդդէմ և մտածումէին բառ-
նալ նորա իշխանութիւնը: Լևոն իմացաւ նոցա
խորհուրդը. մին մին բռնեց նոցա հնարքով, վեր ա-
ռեց նոցանից ամրոցները և իւրեանց արձակեց. այդ
պատճառով իշխանները սկսան յայտնապէս դաւա-
ճանել նորան. գնացին Եգիպտոսի Փնտուխտար ամի-
րայի մօտ և գրգռեցին նորան այն միաբանութեան
դաշին ընդդէմ, որը որ հաստատել էր նա Հեթումի
և Լևոնի հետ: Ամիրան ժողովեց իւր զօրքը, վեր
1274. առեց Հայոց իշխաններին իւրեան օգնական և դի-
մեց յանկարծակի Լևոնի վերայ Կիլիկիա, երբ Հայք
անհոգ նստած էին: Լևոն կասկածելով իշխանների
և իւր զօրքի նենգութիւնից, չվստահացաւ դուրս
գալ ամիրայի առաջը, վասնորոյ գնաց ամրացաւ
անմատոյց տեղերում: Այդ պատճառով ամիրայի զօ-
րականները մտան անարգել նորա աշխարհը: կոտո-
րեցին՝ ում գտան և այրեցին ամենայն շինութիւն
բաց ի պարսպաւոր քաղաքներից և բերդերից, որ
միայն իւրեանց ամրութեան պատճառով ազատուե-
ցան նոցա ձեռից: Ցետոյ դիմեցին Սիս քաղաքի վե-
րայ, բայց երկար ժամանակ պատերազմելուց յետ
չկարողացան առնուլ. վասնորոյ յարձակուեցան Տար-
սոնի վերայ և իմանալով, թէ այդ տեղ է Թագա-
ւորի գանձը, թափեցին իւրեանց ամենայն զօրու-
թիւնը այդ քաղաքի վերայ, առեցին նորան, կողոպ-
տեցին նորա եկեղեցիները, և արքունի պալատը,
քանդեցին երևելի ապարանները, դուրս եկան և
գնացին իւրեանց աշխարհը՝ գերի տանելով իւրեանց
հետ անթիւ մարդիկ: Անհնարին տխրութիւն պաշա-
րեց Լևոնի սիրտը, երբ տեսաւ նա իւր աշխարհի
աւերածը. և մինչ այսպիսի տրտմութեան և տա-
րակուսանքի մէջ էր, լսաւ նոր գայժ, թէ ամիրան

դեռեւս Եգիպտոս չհասած՝ նոր զօրք է ժողովել եւ
գամ է կրկին Կիլիկիա: Այդ անգամ Լեւոն, որովհե-
տեւ տեսաւ, թէ թաքչելով բանը յառաջ չէ գնում,
հաւաքեց իւր զօրքը, քաջալերեց նոցա, բաժանեց
վեց գունդ, որոց մինը ինքը վեր առեց եւ անց կե-
ցաւ թագուն ճանապարհով Եգիպտացոց զօրքի քա-
մակը, միւսը՝ թեւով պակասաւոր՝ յանձնեց Սմբատ
սպարապետին եւ հրամայեց գնալ թշնամիների ա-
ռաջը. մնացած չորս գնդին պատուիրեց դարանա-
մուտ լինել շրջակայ տեղերում: Երբ Եգիպտացիք 1275.
մտան Կիլիկիայի սահմանը, նոցա առաջը դուրս ե-
կաւ Սմբատ իւր գնդով. թշնամիները կարծելով,
թէ միայն այդ է Հայոց զօրքը, վստահ սրտով յար-
ձակուեցան նոցա վերայ. բայց իսկոյն Հայոց դարա-
նակալ զօրքը, վերայ հասան չորս կողմից եւ ինքը
Լեւոն քամակից, փակեցին Եգիպտացոց շուրջանակի
եւ կոտորեցին նոցա այնչափ, մինչեւ դիակունքը
խափանումէին մնացածների փախուստը. ամիրան
հարկադրուած հաշտութիւն խնդրեց Լեւոնից: Նոյն
տարի Լիկայոնիայի ամիրան երեք անգամ յարձա-
կուեցաւ Կիլիկիա, եւ իւրաքանչիւր անգամ սաստիկ
հարուած ստացաւ Լեւոնից եւ յետ դարձաւ եւ միայն
Սկեւռայ վանքը կարողացաւ այրել Լամբրոնի մօտ:

Լեւոնի յաղթութիւնների համբաւով շատ ուրախացաւ Թաթարի մեծ իշխանը Աբաղա եւ ուղարկեց նորա համար պարգեւ՝ զէն եւ սուր. իսկ Գամիրք եւ Լիկայոնիա բնակուած այլազգիները, որ Թաթարների իշխանութեան ներքոյ էին, նախանձուելով Լեւոնի փառքին եւ քաջագործութեանը, չարախօս եղան նորա վերայ Թաթարների առաջեւ եւ շատ ստահնար զրպարտութիւններ գրեցին Աբաղային, որից դեռեւ պատասխան չստացած՝ ծածուկ միաբանուեցան Եգիպտացոց հետ, մտածումէին ապստամբուել Թաթարներից եւ կոտորել նոցա վերակացուներին եւ զօրքին, որ իւրեանց աշխարհումը նշանակուած էին: Նոցա խորհուրդը իմացաւ Լեւոն, գտաւ նոցա թըղ-

թերը եւ յայտնեց Թաթարներին, որ այդպէս ստոյ-գը տեղեկանալով՝ կոտորեցին այն այլազգիներից շատերին եւ համանգամայն յայտնի իմացան, թէ սուտ էր նոցա ամբաստանութիւնը Հայոց վերայ. վասնորոյ Սպաղա կրկին անգամ ուղարկեց Լեւոնին զանազան ընծաներ եւ նորոգեց այն սիրոյ եւ խաղաղութեան պայմանները, որ հաստատած ունէր նորա հետ. եւ Լեւոն գնաց անձամբ Սպաղայի մօտ եւ շատ պատուեցաւ նորանից: Բայց մինչ նա նորա մօտ էր, այլազգիները Լիկայոնիայի սահմաններից յարձակուեցան Կիլիկիա. Լեւոն վերադարձաւ իւր աշխարհը, ժողովեց զօրք եւ գնաց Լիկայոնիա, աւերեց այլ եւ այլ տեղեր, շատ մարդկանց կոտորեց, շատերին գերի վարեց եւ մեծ յաղթութեամբ յետ դարձաւ: Այնուհետեւ շրջակայ թշնամի ազգերը՝ երկնչելով Լեւոնի զօրութիւնից, հաստատեցին նորա հետ խաղաղութիւն. նոցա նման եւ հայազգի իշխանները սիրով եւ խաղաղութեամբ էին նորա հետ, որոց մէջ էր եւ Կոստանդին Լամբրոնացու որդին Օշին, որին որ Լեւոն թագաւորը կարգել էր Սկեւռայ բերդի իշխան եւ ընծայել էր մ ա ր ա ջ ա խ տ ի կ ո չ ո ւ մ ն (1):

(1) Մարաջախտ, (maréchal,) այլ եւ այլ իշխանութեան պատուանուն էր. այս եւ ուրիշ զանազան իշխանութեան պատուանուններ, արեւմըտեան ազգերից առած, սկսան գործ ածել Կիլիկիայումը մեր Հայոց թագաւորները Լեւոն Բ թագաւորից սկսած, երբ Հայք լատինական եւ գերմանական խաչակիր զօրքերի հետ ունեցան մերձաւոր յարակցութիւն եւ յետոյ եւրոպական ազգերի հետ շարունակ յարաբերութիւններ: Լեւոն երրորդի ժամանակում առաւել յաճախուեցան այդպիսի եւրոպական իշխանութիւնների կոչմունք. զոր օրինակ ս ի ր, seigneur (տէր, իշխան, թագաւորական պատուանուն). շ ե ւ ա լ ե ր, chevalier, (ասպետ), լ է ճ, légat (պապի դեսպան), պ ա ր ո ն (baron), գ ո ն դ է ս տ ա պ լ (connétable), բ ա յ լ, baile (արքունի դատաւոր կամ իշխանաց իշխան), եւ այլն. Տես այդ մասին՝ Essai historique et critique sur la constitution sociale et politque de l'Arménie sous les rois de la dynastie roupénienne, par Victor Langlois, St.-Petersbourg, 1860.

ՀԵԹՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ, 1289—1293.

Երրորդ Լեւոնի մահից յետ թագաւորեց Կիլիկիա
նորա անդրանիկ որդին Հեթում երկրորդ, հեզ եւ
բարեպաշտ մարդ, աղօթասէր եւ ընթերցասէր, այն-
պէս, որ նորա առաջին զբօսանքն էր գրոց՝ եւ մա-
նաւանդ աստուածաշնչի ընթերցանութիւնը. այդ-
բանը ինքն եւս վկայում է իւր սեփական ոտանաւոր
բանահիւսութեան մէջ, որ գրեց աստուածաշնչի
վերջումը՝ իբրեւ նորա յիշատակարանը՝ ՉԽԴ Հայոց
թուականում:

Նորա իշխանութեան ժամանակը օր ըստ օրէ բազ-
մանում էին յարձակմունք Կիլիկիայի վերայ Եգիպտա-
ցոց կողմից: Եգիպտոսի ամիրան Ֆնտուխտար մեծ
զօրք ուղարկեց Ասորոց եւ Կիլիկեցոց վերայ իւր Մե- 1290.
լիք Աշրաֆ անունով որդու հետ, որ առեց Տրապօլիս
եւ Աքքա քաղաքները եւ տիրեց բոլոր այն կողմերին:
Հեթում գնաց իւր զօրքով Կիլիկիայի սահմանները
պաշտպանելու եւ խնդրեց օգնութիւն Թաթարի Ար-
ղու խանից, (որ այն ժամանակ Ատրպատական աշ-
խարհումն էր), եւ Նիկողայոս չորրորդ պապից: Խանը
չկարողացաւ հասուցանել նորան օգնութիւն, որով-
հետեւ զբաղուած էր այդ ժամանակ ուրիշ պատե-
րազմներով. իսկ պապը գրեց ընդհանրական թուղթ
բոլոր քրիստոնէից ձեռնտու լինել Հեթումին: Այդ-
միջոց Աշրաֆ լսելով իւր հօր մահը, դարձաւ Եգիպ-
տոս, նստաւ նորա իշխանութեան աթոռը եւ միւս
տարի բազմաթիւ զօրքով գնաց Պաղեստին եւ այն
տեղից Եփրատացոց կողմերը, պաշարեց Հռոմկլայի
եօթնպարսպեան անառիկ դղեակը, եւ թէպէտ մեծ
դժուարութեամբ, բայց վերջապէս առեց այդ քա- 1293.
ղաքը, մտաւ ներս, այրեց եկեղեցիները եւ տունե-
րը, կոտորեց բնակիչներին եւ նոցանից ոմանց, ո-
րոց մէջ համարւում է եւ Ստեփանոս կաթողիկո-
սը, գերի վարեց Եգիպտոս, ուր շտապելով գնաց նա

այն պատճառով, որ լսել էր, թէ թշնամիները յարձակուել են իւր աշխարհը, այսինքն քրիստոնեայ ազգեր, որ Նիկողայոս պապի առաջարկութեամբ գնացել էին Եգիպտոս եւ պաշարել էին Ալեքսանդրիա քաղաքը. Աշրաֆ թէպէտ եւ վանեց այն քրիստոնեայ ազգերին, բայց չկարողացաւ միւսանգամ գալ Կիլիկիա:

ԹՈՐՈՍ ԵՐՐՈՐԴ, 1293—1295.

Հեթում Բ ձանձրանալով աշխարհի հոգստարութիւնից եւ սիրելով անցուցանել իւր կեանքը աղօթից եւ ընթերցանութեան մէջ, նշանակեց իւրեան գահակից իւր եղբօրը Թորոսին, որ համանուն թագաւորների կարգումը երրորդն էր, ինքը առանձնացաւ մին վանքումը, փոխեց իւր անունը եւ կոչուեցաւ Յովհաննէս: Սակայն Հայոց իշխանները դեռեւս թագաւորի տեղ էին միշտ համարում նորան. ամենայն դժուար գործերում նորան էին դիմում դեռեւս, մինչ զի ինքը Թորոս, որ կարգուած էր իշխանութեան աթոռումը, լսումէր նորան յօժարակամ: Այս ձեւով տէրութիւնը կառավարուեցաւ երկու տարի եւ յետոյ Թորոս նմանապէս ցանկացաւ հրաժարուել թագաւորութիւնից եւ կրկին յետ դարձնել Հեթումին. բայց այդ դիտաւորութիւնը դեռեւս չէր կատարուել, երբ Կիպրոս լատին թագաւորից (1) եկաւ դեսպան Հեթումի եւ Թորոսի մօտ, նոցա Զաբլուն կամ Զապլի քրոջը իւր թագաւորի եղբօր Ամաւրիկոսին (2) կնութեան խնդրելու. եւ երբ նոքա յօժարեցան այդ առաջարկութեանը, Ամաւրիկոս փեսայացուն եկաւ Սիս քաղաք, մեծաշուք հանդէսով պսակուեցաւ Զաբլունի հետ եւ տարաւ նորան Կիպրոս կղզին: Զաբլուն ունեցաւ երեք որդի՝ Հենրիկ, Յովհաննէս եւ Գուիդոն, որոց երկու

(1) Հենրիկոսից:

(2) Տիւրոսի լատին կոմսի:

վերջինը թագաւորեցին յետոյ Կիլիկիայումը։ Սորա-
նից յետ Թորոս՝ Հայոց իշխանների հետ միասին՝
շատ խնդրեց եւ հասկացրեց Հեթումին, որ կրկին
ընդունի թագաւորական աթոռը եւ նա ակամայ
կամքով համաձայնեց, եւ այդ ժամանակ ցանկալով 1296.
գնալ տեսութիւն իւր միւս քրոջը Մարիամին, որ Յու-
նաց կայսեր Անդրոնիկոսի՝ Միքայէլ որդու կինն էր,
վեր առեց իւր հետ Թորոս եղբօրը յանձնեց աշխար-
հի կառավարութիւնը միւս եղբօրը Սմբատին եւ դը-
նաց Յունաստան։

ՍՄԲԱՏ (բռնաւոր թագաւոր), 1296—1298.

Սմբատ, որ շատ զօրեղ եւ ամբարտաւան մարդ
էր, մտածեց եւ գործ դրեց մեծ չարութիւն. երբ
Հեթում եւ Թորոս դեռեւս յետ դարձած չէին, սա
իւր կողմը գրաւեց կրտսեր եղբարց սիրտը՝ Կոստան-
դինի, Օշինի եւ Ալենախի, եւ այլ Հայոց իշխանների,
կամեցաւ ինքը թագաւորել, եւ սրբալով եւս Գրիգոր
կաթուղիկոսի միտքը՝ օծուեցաւ նորանից Հայոց թա- 1296.
թաւոր Սիս քաղաքումը։ Յետոյ իւր իշխանութեան
մէջ ապահով լինելու համար, ուղարկեց մեծամեծ
ընծաներ Թաթարի խանին (Ղազանին), եւ խնդրեց
հաստատել իւր թագաւորութիւնը, խանը կատարեց
նորա խնդիրը։ Նոյն առաջարկութիւնը արեց Հռո-
մի պապին (Վոնիփակիոս ութերորդին) եւ նոյնօրի-
նակ ստացաւ հաւանութիւն։ Երբ Հեթում եւ Թորոս
վերադարձան իւրեանց աշխարհը, Սմբատ դուրս ե-
կաւ նոցա առաջը զօրքով եւ արտաքսեց Կիլիկիայից։
Նոքա հարկադրուած փախան Կիպրոս, ուր չգտանե-
լով օգնութիւն Լատինացոց ազգից, գնացին միւսան-
գամ Կոստանդնուպօլիս։ Կայսրը չկամենալով պատե-
րազմի դուռը բացել, հրաժարուեց նոցա խնդիրը
կատարելուց եւ միայն տուեց նոցա բաւական փող,
որ նորանով գտանեն օգնութիւն օտար ազգերից։
Այն ժամանակ միտք արեցին նոքա գնալ Թաթարի
խանի մօտ. իսկ Սմբատ բռնաւորը ինչպէս իմացաւ

նոցա դիտաւորութիւնը, գնաց զօրքով նոցա վերայ, երկուսին եւս ձերբակալ արեց եւ տարեց Բարձրբերդ՝ նստացրեց բանտ. մին քանի օրից յետ՝ Թորոսին ըսպանեց, իսկ Հեթումի աչքերը հանեց:

ԿՈՍՏԱՆԴԻՆ (Հեթումի եղբայրը), 1298—1300.

Այդ անողորմ եւ չարաչար գործի վերայ շատ դառնացաւ միւս եղբօր Կոստանդինի սիրտը, որ այդ պատճառով միաբանեցրեց Հայոց պարոններին, ժողովեց քաջ քաջ մարդիկ եւ գնաց Սմբատի վերայ, յաղթեց նորան, բռնեց եւ դրեց բանտ եւ ինքը Կոստանդին եղաւ թագաւոր երկու տարու չափ:

ՀԵԹՈՒՄ Բ (երրորդ անգամ), 1300—1305.

Պատմումեն, թէ փոքր ժամանակից յետ՝ Հեթումի աչքերը բացուեցան սքանչելի կերպով, եւ ամենքեան ուրախացած՝ կրկին թագաւոր կարգեցին նորան, թէպէտեւ ընդդէմ նորա սեփական ցանկութեանը: Այդ հանգամանքը շատ անհաճոյ թուեցաւ Կոստանդինին, որ թագաւորումէր այն ժամանակ. վասնորոյ մեծ աղմուկ եւ վրդովմունք յարուցրեց Հայոց մէջ. կամենումէր հանել Սմբատին բանտից եւ նորա հետ միասին պատերազմել Հեթումին ընդդէմ: Բայց Հեթում հնարքով ձերբակալ արեց Կոստանդինին եւ Սմբատին, եւ ուղարկեց Կոստանդնուպօլիս, ուր կայսրն պահեց նոցա բանտումը մինչեւ նոցա մահը:

Սորանից յետ Հեթում թագաւորը յաղթեց Դամասկոսի ամիրային Սուսամիշին, որ Եգիպտացոց զօրքով եկել էր Կիլիկիա, բռնեց Սուսամիշին եւ ուղարկեց Թաթարի Ղազան խանի մօտ ընծայ. համանգամայն յայտնեց խանին իւր աշխարհի անցքը եւ կրկին հաստատեց իւր նախկին բարեկամութիւնը նորա հետ: Այդ յաղթութեան համբաւը ինչպէս լսաւ Եգիպտոսի մեծ ամիրան Սուլտան Լաչին (սուլտան

Լաչինի, Նասըր Հուսամատինի), աւելի քան հարիւր հազար զօրքով եկաւ Հայոց վերայ. բայց Հեթում՝ Ղազան խանի օգնութեամբ յաղթեց Լաչին սուլտանին, որ փախաւ Բաղդատ։

Ղազան խանը հաստատուն բարեկամութիւն ունենալով Հեթումի հետ, մեծ սէր եւ օգնութիւն էր ցոյց տամ Հայոց. բայց նորա մահից յետ՝ նորա եղբայրը եւ յաջորդը Ղարբանտա խանը, խստաբարոյ մարդ գոլով, առ հասարակ քրիստոնէից թշնամի, վասն որոյ եւ Հայոց, ծանր հարկեր էր դնում նոցա վերայ. եւ եթէ մինը հարկը չէր տամ, հրամայումէր մին աչքը հանել, որովհետեւ ինքը եւս մին աչքով կոյր էր։ Թաթարների օգնութիւնը պակասելու պատճառով, Եգիպտացիք եւ Լիկայոնացիք երեք անգամ յարձակուեցան Կիլիկիա, մեծ քանդութիւն եւ աւերած գործեցին եւ շատ քաղաք այրեցին (Ատանա, Տարսոն, եւ այլն)։ Սակայն Հեթում զօրացաւ, կարողացաւ հալածել թշնամիներին, ահ ու դող ձգեց նոցա սիրտը, մինչեւ ինքը Եգիպտոսի ամիրան հարկագիր եղաւ հաշտութիւն խօսել նորա հետ։

ԼԵՒՈՆ ՉՈՐՐՈՐԴ, 1305—1308.

Աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորը Հեթում Բ, ցանկանալով միւսանգամ առանձնանալ վանքումը եւ թեթեւանալ կառավարութեան զբաղմունքից, դեռեւս իւր կենդանութեան ժամանակը թագ կապեց իւր եղբօր Թորոսի որդու Լեւոնի գլուխը, որովհետեւ անզաւակ էր ինքը, եւ օծել տուեց նորան Գրիգոր կաթուղիկոսի ձեռամբ Սիս քաղաքումը։ Այնուհետեւ Լեւոն կոչուումէր Հայոց թագաւոր, իսկ Հեթում թագաւորահայր եւ աւագ պարոն. եւ թէպէտ Հեթում ապրումէր վանքումը, սակայն հարկաւոր գործերի մէջ լինումէր միշտ Լեւոնին խորհրդատու եւ խրատիչ, այնպէս, որ քաղաքական եւ ծանր հանգամանքներում նոքա ներգործումէին երկուսը միասին. քանիցս անգամ դուրս եկան Սարակինոս-

ների արշաւանքին ընդդէմ եւ յաղթեցին նոցա, դըրեցին թուղթ Կղեմէս Ե Հռոմի քահանայապետին, խնդրելով նորանից օգնութիւն թշնամիներին ընդդէմ:

Յանկարծ մին եկեղեցական խնդիր ոչ միայն արգելք եղաւ Լեւոնի քաղաքական պարապմունքներին, այլ եւ նորա եւ Հեթումի կորստեան պատճառը: Գրիգոր կաթուղիկոսը Անաւարզեցի, տեսանելով Կիլիկիայի խաղաղ դրութիւնը, պատեհ ժամանակ համարեց առաջարկել ազգին իւր խորհուրդը, որ վաղուց յղացած ունէր մտքումը՝ Հայոց Եկեղեցու ծէսերի մէջ փոփոխութիւն անելու մասին: Հաւանեցրեց իւր միտքը Հեթումին եւ Լեւոնին, եւ նոցա համաձայնութեամբ գրեց հրաւիրական թուղթ արեւելեան կողմերումը եղած Հայոց եպիսկոպոսներին. բայց մինչոր յոյս ունէր կատար հասուցանել այդ խորհուրդը, մահը խափանեց նորա յառաջադրութիւնը, եւ այն ժամանակ Լեւոն թագաւորը՝ Հեթում թագաւորահօր խորհըրդակցութեամբ գրեց հրաման Հայոց եպիսկոպոսներին եւ վարդապետներին, թէ գան, հաւաքուեն Սիս քաղաք Գրիգոր կաթուղիկոսի առաջարկութիւնը քննելու համար: Եկան Հայոց եպիսկոպոսները մինչեւ քառասունըմին մարդ, եւ այլ եկեղեցականներ եւ իշխաններ. կարդացին հանգուցեալ կաթուղիկոսի դաւանութեան թուղթը, որ ինն առանձին գլխով խօսումէր լատինական, յունական եւ մեր հայկական եկեղեցիներու մէջ եղած տարաձայնութիւնները բառնալու համար: ժողովը ընդունեց այն դաւանութիւնը, բայց երբ արձակուեցաւ, իւրաքանչիւր եպիսկոպոս կամ վարդապետ գնաց իւր գաւառը, եւ նոցանից ոմանք սկսան յայտնի գործ դնել ժողովի դաւանութիւնը, ժողովրդի մէջ ծագուեցան աղմուկ եւ խռովութիւն. հաստատուած կանոնները խափանուեցան եւ միայն Սիս քաղաքումն էին կատարուում, իսկ մնացած Հայք ամենեւին չէին ընդունում եւ յայտնի թշնամացած էին այդ մասին Լե-

նոն թագաւորի, Հեթում թագաւոր հօր եւ Կոստանդին Նորընոր կաթուղիկոսի հետ: Անհլութիւնը այնքան սաստկացաւ, մինչեւ ոմանք գնացին Պիլարղու Թաթարի իշխանի մօտ, որ Ղարբանտա խանի հրամանովը բնակւում էր Կիլիկիայումը հազար մարդով՝ երկրի պահպանութեան համար. չարալեզու խօսքերով շարժեցին նորա սիրտը Լեւոնի եւ Հեթումի ընդդէմ: Պիլարղու, որ ինքն իսկ ունէր յառաջուց ծածուկ թշնամութիւն մեր թագաւորի եւ թագաւորահօր հետ, դաւաճանօրէն հրաւիրեց երկուսին Անարզաբա քաղաք, որպէս թէ մին խորհուրդ հարցանելու համար: Լեւոն եւ Հեթում, չիմանալով Պիլարղուի միտքը, գնացին նորա մօտ քառասուն հայոց իշխանների հետ, որոց մէջ էր եւ Օշին սպարապետը. Թաթարի իշխանը կեղծաւպատիր յարգանքով ընդունեց նոցա սկիզբը, իսկ յետոյ սպանեց նոցա ամենեցուն եւ իսկոյն ջանք դրեց յափշտակել Կիլիկիան. բայց սխալուեցաւ:

ՕՇԻՆ, 1308—1320.

Լեւոնի եւ Հեթումի դաւաճանօրէն սպանութեան լուրը ինչպէս հասաւ Օշինի ականջը, որ Հեթումի կրտսեր եղբայրն էր, ժողովեց Սիս քաղաքումը մնացած իշխաններին եւ արքունի զօրքը, նոցա հետ գիմեց Պիլարղուի վերայ եւ վանեց նորան Կիլիկիայից: Դորանից յետ կամենալով խաղաղացնել ներքին խռովութիւնները, հրամայեց կրկին անգամ ժողով քննել իւր նախորդի օրերում ծագած եկեղեցական խնդիրները: Ժողովը գումարուեցաւ Ատանա, կարդաց եւ 1316.
քննեց Սիս քաղաքի մէջ եղած ժողովի սահմանադրութիւնները, Գրիգոր Անաւարզեցու թուղթը, ընդունեց եւ ստորագրութեամբ հաստատեց այն կանոնները, բայց ոչինչ գործ չածուեցան նոր սահմանադրութիւնները, ժողովուրդը խռովեցաւ, եւ Օշին տեսանելով, թէ հնար չկայ այն փոփոխութիւնը հաստատել հայոց ազգի մէջ, թողեց այդ գործը եւ դիտաւորութիւնը:

*

1317. Նոյն ժամանակներում մեռաւ Օշինի կինը՝ Աննա թագուհին եւ թողեց մին որդի՝ Լեւոն, եւ Օշին առեց կին Լատինացոց ազգից Յովհաննային, որ ծնած էր թագաւորական զարմից Սիկիլիայումը։ Այդ հանգամանքը աւելի ընտելացրեց Օշինին Լատինացոց հետ, եւ նա Յովհաննա թագուհու հետ միասին ուղարկեց դեսպաններ Յովհաննէս ԻԲ Հռոմի քահանայապետի մօտ (1) եւ խնդրեց նորան յորդորել քրիստոնեայ թագաւորներին զօրանալ, գալ արեւելեան կողմը եւ վանել հաւատի ընդհանուր թշնամիներին Պաղեստինացոց եւ Ասորոց երկրներից, խոստանալով իւր կողմից օգնական լինել նոցա զօրքով եւ պաշարով։ Պապը, որ արդէն տեսանումէր, թէ Սարակինոսները բոլոր համարեա ասիական քրիստոնեաներին նուաճել են, եւ միայն Կիլիկիան եւ Կիպրոսն են մնացել ազատ նոցա տիրապետութիւնից, շատ ուրախացաւ Օշինի առաջարկութեանը, գրեց այդ մասին Գաղղիայի Փիլիպպոս թագաւորին (2), եւ նա խոստացաւ գալ այն կողմեր մեծ զօրքով, բայց որովհետեւ արեւմտեան երկրներում կային այդ միջոց խռովութիւններ, վասնորոյ խափանուեցաւ նորա դիտաւորութիւնը։ Եւ թէպէտ նոյն խնդիրը Օշին ինքը գրեց ուղղակի Գաղղիայի Փիլիպպոս թագաւորին, Սիկիլիայի Ռոպերդ թագաւորին եւ Տարենտի Փիլիպպոս իշխանին, այլ նոքա չկարողացան գալ, եւ պապը նոցա տեղ գրեց Օշինին պատասխան, թէ քրիստոնեայ թագաւորները զբաղուած են արեւմտեան կողմերումը կռիւներով եւ թէ ուղարկումէ Օշինի համար օգնական զօրքի գունդ։ Եւ մինչդեռ օգնութիւն էր սպասում Օշին Լատինական ազգերից, յարձակուեցան Կիլիկիա Եգիպտոսի եւ Բաղդատի ամիրայի Սուլտան Նասրի զօրքը եւ Օշին՝ Աստուած ապաւինելով՝ հա-

(1) Դեսպանների գլխաւորն էր Յակոբ՝ Կապանի եպիսկոպոսը։

(2) Փիլիպպոս հինգերորդ՝ չորորդ Փիլիպպոսի որդին, որ թագաւորեց Գաղղիա 1316—1322.

ւաքեց իւր կրօնքի զօրականներին եւ կարողացաւ փոքրը զօրութեամբ յաղթող լինել բազմաթիւ թշնամիներին։

Այդ օրերում եղաւ ահագին գետնաշարժութիւն մեծ Հայաստանի զանազան գաւառներում, Արարատ, Սիւնիք եւ առաւել Անի քաղաքում, որի բնակիչները փախան այլ եւ այլ օտար երկիրներ, ոմանք Պարսկաստան, այլք Թաթարների երկիրը՝ Աշտարխանի մօտ, ուր որոշեալ հանգստութիւն չէին գտանում, վասնորոյ գնացին ոմանք Ղրիմ՝ Թէոդոսիա քաղաք (Քէֆէ). շատերը դիմեցին Լեհաստան, այլք՝ Ցաքշան (Վալախիա, եւրոպական Տաճկաստան), եւ բնակութեան այն աշխարհներում որդոց որդի մինչեւ այսօր։

ԼԵՒՈՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ, 1320—1342.

Օշինի մահից յետ, նորա տան հազարապետը՝ համանուն Օշին պայլ, մեծ հանդէսով օծել տուեց Սիս քաղաքումը՝ Հայոց թագաւոր՝ Լեւոն Հինգերորդին, 1320. որ տասնամեայ մանուկ էր այդ ժամանակ (կամ ըստ ոմանց երկոտասանամեայ), պսակեց նորան իւր դստեր հետ, եւ ինքը ամուսնացաւ նորա մօրը հետ, այսինքն՝ Յովհաննա թագուհու, վասնորոյ համարուեցաւ իբրեւ թագաւորահայր, մանաւանդ որ նշանակուած էր Օշին թագաւորից տէրութեան հոգաբարձու. եւ կոչուեցաւ Իսաւրիայի եւ Կիլիկիայի պարոն։ Օշին պայլ հոգաբարձուի գործերը ընդդէմ թուեցան հանգուցեալ Օշին թագաւորի լատին ազգականներին, որ այդ պատճառով գրգռեցին Հայոց իշխաններին՝ նորան ընդդէմ. նոցա հետ միախորհուրդ եղաւ եւ Լեւոն թագաւորի հօրաքոյրը Զաբլուն, որ Տիւրոսի լատին կոմսի Ամաւրիկոսի կինն էր եւ մնացել էր այրի երեք որդով։ Խռովութիւնը մեծացաւ. Օշին պայլ դիմեց զօրքով Տիւրոսի վրայ, ձերբակալ արեց Զաբլունին եւ նորա անդրանիկ որդուն Հենրիկոսին, բերեց նոցա Սիս եւ բանտարկեց

մինչեւ նորա մահը. երկու կրտսեր որդիքը՝ Յովհաննէս եւ Գուիդոն փախան իւրեանց Հենրիկոս հօրեղբօր մօտ, որ Կիպրոսի թագաւորն էր։

Հագարացոց ամիրան Մելիք Սուլթան Նասըր, որի իշխանութեան ներքոյ էր Եգիպտոս եւ Բաղդատ, ինչպէս լսաւ Հայոց թագաւորի մահը եւ Կիլիկիայի ներքին շփոթութիւնը, յարմար ժամանակ համարեց ուղարկել մեծ զօրք այն աշխարհը նուաճելու, որ կարողանայ այդ ձեւով քրիստոնէութիւնը ջնջել բոլորովին Ասիայում. բայց Օշին պայլի եղբայրը Կոստանդին սպարապետ վանեց նորա եւ փախուստ դարձրեց։ Այն ժամանակ Նասըր Սուլթանը վարձեց օգնական զօրք Լիկայոնացոց եւ ուրիշ ազգերից, եւ կրկին անգամ միաբանուած թշնամիները եկան Կիլիկիա, պաշարեցին ծովով եւ ցամաքով Այաս (1) քաղաքը, առեցին, քանդեցին նորա ամրոցը, շատ մարդիկ կոտորեցին, տարածուեցան Կիլիկիայում, վեր առեցին բազմաթիւ գերիներ եւ դարձան իւ-
1330. րեանց աշխարհ։

Լեւոն թագաւորը, որ դեռեւս մանուկ էր, շատ վախեցաւ այդ արշաւանքից եւ ստիպումէր իւր աներոջը Օշինին օգնութիւն խնդրել արեւմտեան թագաւորներից իւր աշխարհի համար. վասնորոյ նորա երկուսը ուղարկեցին աղանչանքով դեսպաններ Յովհաննէս քսաներորդ երկրորդ պապի մօտ, որ գրեց այդ մասին յորդորանքի թուղթ Գաղղիայի Կարոլոս չորրորդ (2) թագաւորին, բայց նա զանազան պատճառներ բերելով, որոց մինն էր զօրքի համար պաշարի պատրաստութեան դժուարութիւնը այնչափ հեռաւոր տեղեր գնալու ժամանակ, յանձն չառեց կատարել պապի առաջարկութիւնը, թէպէտ եւ գրուած էր ինքը խաչակիր զօրքի համարումը։ Իսկ

(1) Այաս, այժմ Լայազ կամ Փայազ, Հայոց քաղաք էր Կիլիկիայումը՝ Մամեստիայի հարաւային կողմից, ծովի մօտ։

(2) Թագաւորեց 1322—1328.

Նասըր Սուլթանը, տեսանելով այդ միջոց, թէ Հայք ապաւինել են Լատինացոց, եւ թէ Լատինացիք կամք չունեն ամենեւին նոցա նպաստամատոյց լինել, միտք արեց գնալ, բնաջինջ անել Հայոց եւ այդ նպատակին հեշտութեամբ հասանելու համար միաբանեցրեց իւր հետ Թուրքմէնների մեծ իշխանին Ամիր Օմարին. բայց երկնչելով Թաթարներից, որ այն ժամանակ բարեկամութեամբ էին քրիստոնէից հետ Պույասիտ խանի տէրութեան մէջ, կարողացաւ իւր կոմը որսալ կաշառքով նոցա մեծ զօրավարին Թեմուրտաշին, որ իբրեւ կուսակալ բնակւումէր Լիկայոնիայի մօտ: Սոքա երեքը՝ մինը միւսից յետ, յարձակուեցան Կիլիկիա, եւ թէ ինչ աղէտալի հարուածներ, ինչ կոտորած եւ քանդութիւն գործեցին մեր աշխարհումը, անպատմելի բան է. սպանեցին, գերեցին բնակիչներին, աւերեցին, այրեցին քաղաքները, մանաւանդ Ադանա: Յովհաննէս պապը շատ տխրեցաւ այդ Հայաստանի չարաբաղդ արկածով, եւ գրեց մեծ յորդորական կոնդակ բոլոր քրիստոնէից, աղաչելով նոցա ամենեցուն հասանել Հայոց օգնութիւն. թէպէտ եւ իրապէս չեղաւ ոչինչ թեթեւութիւն, եւ միայն նոյն պապի գրութեամբ Պույասիտ խանին եւ Կոստանդին կաթուղիկոսի տեսութեամբ Եգիպտոսի Նասըր Սուլթանի հետ հաստատուեցաւ հաշտութիւն տասնեւհինգ տարով:

Նոյն ժամանակ, երբ նոր կրօնական աղմուկներ 1330.
վրդովում էին Հայաստանը ունիթօրների կողմից [1] ծագուեցաւ թշնամութիւն Լեւոն հինգերորդի եւ նորա աներոջ Օշին պայլի մէջ, որ Կորիկոսի [2] տէրն էր եւ թագաւորութեան խնամակալը: Խռովութիւնը

---

(1) Պատմել աշակերտներին ունիթօրների կամ միաբանողների յարուցած շփոթութիւնը Հայաստանում. նորա սկիզբը, շարունակութիւնը եւ վերջանալը:

(2) Կորիկոս Կիլիկիայի դղեակն էր ծովեզրի մօտ՝ Սելեւկիայի արեւելեան կողմից:

այնչափ մեծացաւ, մինչեւ Լեւոն թագաւորը բռնեց
Օշինին եւ նորա եղբօրը Կոստանդինին, երկուսի եւս
գլուխը հրամայեց կտրել եւ տանել ընծայ, մինը՝
Եգիպտոսի ամիրային, միւսը՝ Թաթարի խանին. Կո-
րիկոսումը կարգեց իշխան Պեւամոնդ Լուսինեանին,
որ իւր լատին ազգականներից մինն էր. իսկ Յովհան-
նէսին՝ իւր հօրաքեռ որդուն (Կիպրոսի թագաւորի
եղբօրորդուն), նշանակեց պայլ, այսինքն՝ իշխաննե-
րի իշխան (1): Լեւոն Ե սպանեց եւ իւր կնոջը, որ
Օշին պայլի դուստրն էր, պատճառելով նորա վերայ
զանազան զրպարտութիւն, եւ առեց իւրեան կին լա-
տինացի՝ Սիկիլիայի թագաւորի Կոստանդիա դստե-
րը: Այդպիսի չարագործութիւնների պատիժը շու-
տով ստացաւ Լեւոն, որպէս կտեսանենք այժմ: Բե-
րիայի Հալէպի ամիրան խնդրեց Լեւոնից վաճառել
իւրեան երկու ծովեզերեայ բերդ, որ Լատինացիք
կոչումէին Անտիոքեդա եւ Ծիկուին. Լեւոն չհամա-
ձայնեց. ընդ հակառակն ընծայեց այն բերդերը Լա-
տինացոց, եւ գրեց այդ մասին պապին՝ խնդրելով
օգնութիւն դորա փոխանակ: Պապը՝ ցանկալով նպա-
տամատոյց լինել Հայոց թագաւորին, գրեց այդ մա-
սին Գաղղիացւոց թագաւորին Փիլիպպոսին (2),
եւ նա թէպէտ յօժար էր գնալ Լեւոնին օգնու-
1335. թիւն, սակայն դանդաղեցաւ եւ չգնաց. իսկ Բերիա-
յի ամիրան, զանազան ազգերից զօրք հաւաքած,
դիմեց Կիլիկիա, սրով եւ հրով կոտորեց եւ այրեց
ինչ որ գտաւ, վեր առեց բազմաթիւ գերի եւ դար-
ձաւ իւր աշխարհը: Հայք, որ մեծ յոյս ունէին դե-
ռեւս Լատինացոց նպաստաւորութեան վերայ եւ հաշտ
էին Եգիպտացոց հետ, մնացին, այդ հարուածից
յետ, ամենեւին անհօգ: Կիլիկիայի ձախորդութեան

---

(1) Սա այն Յովհաննէսն է, որ Հայոց գրքերում կոչուումէ ձիւան, եւ որ թագաւորեց Լեւոն հինգերորդից յետ:

(2) Փիլիպպոս վեցերորդ, Վալուա, չորրորդ Կարոլոսի յաջորդը, որ թագաւորեց 1328—1350.

Համբաւը երբ որ տարածուեցաւ արեւմտեան կողմերումը, Լատինացիք միւսանգամ յայտնեցին իւրեանց յօժարութիւնը գնալ արեւելք եւ զօրեղ նպաստ մատուցանել Հայոց, բայց կամելով միանգամայն առնուլ եւ Պաղեստինի երկիրը, սփռեցին քարոզիչներ այլ եւ այլ քաղաք, որ յորդորեն քրիստոնէից յանձն առնուլ հոգեւորական զինուորութիւն. այնուհետեւ ամենայն տեղ սկսան պատրաստել զէնք, զրահ եւ այլ հասարակ պատերազմական հարկաւոր միջոցներ, եւ Գաղղիացոց Թագաւորը Փիլիպպոս վեցերորդ ամենայն ջանացողութեամբ յուսադրումէր եւ յորդորումէր ամենեցուն յառաջ տանել այն աստուածահաճոյ գործը։ Բայց որովհետեւ Լատինացիք միայն հռչակումէին բերանով իւրեանց խաչակիր զինուորութիւնը, իսկ գործով ոչինչ չէին յառաջացնում, վասնորոյ անհաւատները, լսելով նոցա յոխորտանքը, վճռեցին թափել իւրեանց ոյժը Հայոց վերայ, որ տոկալով ամենայն թշուառութեան, պահպանում էին Կիլիկիան իբրեւ քրիստոնեայ երկիր եւ դորանով տամէին իւրեանց այլազգի քրիստոնեայ եղբարցը պատերազմների առիթ։ Ինքը՝ Եգիպտացոց ամիրան Մելիք Նասըր, որ թէպէտ եւ հաստատել էր Հայոց հետ խաղաղութեան դաշինք տասնեւհինգ տարով, լսելով արեւմտեան քրիստոնէից պատրաստութիւնը, ժողովեց անհամար զօրք եւ յանձնեց նոցա Բերիայի ամիրային։ Եկան սոքա՝ Եգիպտոսի եւ Բերիայի զօրքը, ուղղեցին բոլոր իւրեանց զօրութիւնը Կիլիկիայի վերայ, երբ որ Թագաւորը եւ ազգը, յոյսը դըրած Եւրոպայի Թագաւորների վերայ, անպատրաստ եւ անհոգ նստած էին. եկան եւ անխնայ կոտորեցին բնակիչներին, այրեցին տուները, ապարանները, եկեղեցիները, գերի վարեցին այր եւ կին, հայր եւ որդի, եւ վերադարձան իւրեանց աշխարհը։ Լեւոն, որ հեռացել էր այդ ժամանակ իւր աշխարհից եւ ամրացել էր անծանօթ եւ անառիկ տեղումը, յայտնեց Թղթով Հռոմի քահանայապետին Բենեդիկտոսին

Կիլիկիայի անցքը. պապը նոյն սրտացաւութեամբ գրեց Գաղղիացոց թագաւորին, եւ նա նոյն յօժարութեամբ ցանկացաւ գնալ արեւելք, բայց նորա օգնութիւնը եղաւ միայն խօսքով եւ գրչով, իսկ իրապէս ոչինչ շահ չբերեցին Հայոց, մանաւանդ թէ պատճառ եղան նորա թշուառութեանը: Եգիպտացիք կրկին անգամ յարձակուեցան Կիլիկիա, եւ Լեւոն, որ թագնուած էր մին բերդի մէջ, տեսանելով, թէ իւր աշխարհը նուազումէ սրով եւ գերութեամբ, ուղարկեց դեսպան Սուլթան Նասրի մօտ եւ խնդրեց հաշտութիւն: Ամիրան պատասխանեց, թէ նա այն ժամանակ միայն յանձն կառնէ խաղաղութիւն հաստատել, երբ Լեւոն երդմամբ կխոստանայ չունենալ Հռոմի պապի հետ ոչինչ յարակցութիւն եւ ոչ թըղթակցութիւն իսկ: Լեւոն թէպէտ եւ մեծ դժուարութեամբ, բայց ստիպողական հարկից բռնադատուած, խոստացաւ կատարել երդմամբ բռնակալի պահանջմունքը եւ հաստատեց հաշտութիւն, որով թէպէտ եւ թեթեւացաւ Կիլիկիան թշնամիների արշաւանքից փոքր ինչ միջոց ժամանակի, սակայն կրկին ենթարկուեցաւ շուտով նոյն նեղութեանը. որովհետեւ Եգիպտացոց ամիրան իմանալով, թէ Հայք միւսանգամ սկսել են թղթակցութիւն ունենալ Լատինացոց հետ, (պապը գրել էր Լեւոնին, թէ որովհետեւ նորա երդումը կամաւոր չէ եղած, այլ բռնադատ, վասնորոյ արձակումէ նորան այն երդումից), շատ բարկացաւ եւ ուղարկեց մեծ զօրք Կիլիկիա, որ քանդեց, կործանեց տասնվեց գղեակ, աւերեց քաղաքները եւ մեծ աւարով դարձաւ յետ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈՍՏԱՆԴԻՆ, 1342—1343.

ԳՈԻԻԴՈՆ ԿԱՄ ԿԻՏ, 1343 - 1345.

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ, 1345—1362.

(պարապ միջոց 1362—1365).

Լեւոն հինգերորդի մահից յետ, որովհետեւ Հայոց թագաւորների ազգականներից ոչ ոք չէր մնա-

ցել, Հայոց իշխանները միաբան հաւանութեամբ
ընտրեցին իւրեանց թագաւոր Կիպրոսի թագաւորի
երէց որդուն Յովհաննէսին, հօրով լատին, մօրով
հայ (1), որ կարգուած էր Կիլիկիայում Պայլ, այսին-
քըն՝ իշխանների իշխան, եւ կոչեցին նորան Կոս-
տանդին։ Այդ Յովհաննէս Կոստանդին թագաւորը
շատ խռովարար, անպիտան եւ ազգին անարգող
մարդ երեւեցաւ, ցած գործերով պարապած եւ շատ
ընդդիմութիւն արեց իշխաններին եւ զօրքին։ Ամե-
նայն չարագործութիւնից գերազանց այն էր, որ
ազգի խնամատարութիւնը ամենեւին մոռացած,
սաստիկ հրաման հանեց, որ ամենայն իւր հպատակ-
ները թողնեն իւրեանց հայութիւնը եւ վարուեն
միշտ լատինական կանոններով եւ ծէսերով. իսկ ե-
կեղեցականները լինեն ունիթօրների հետ միատե-
սակ։ Այդ հրամանին Հայոց զօրքը չկարողացաւ համ-
բերել, վեր կեցաւ եւ սպանեց նորան։ Իշխանները
հրաւիրեցին նորա եղբօրը Գուիդոնին եւ ընտրե-
ցին նորան իւրեանց թագաւոր։ Սորա օրերում Ե- 1348.
գիպտացիք, իմանալով Հայոց զօրութեան նուազելը,
կրկին արշաւեցին Կիլիկիա անհամար բազմութեամբ։
Գուիդոն անպատրաստ գոլով, ամրացաւ մին բերդի
մէջ եւ դեսպանի միջնորդութեամբ խնդրեց Կղեմէս
Զ պապին նպաստաւոր լինել իւրեան, խոստանալով
միաբան պահել Հայոց հռովմէական եկեղեցու հետ։
Պապը գրեց այդ մասին Գաղղիացոց եւ Անգղիացոց
թագաւորներին (Փիլիպպոսին եւ Եդուարդոսին), եւ
նոքա թէպէտ խօսքով խոստացան, բայց գործով ո-
չինչ չկատարեցին։ Իսկ Գուիդոն իւր խոստմանը
համաձայն՝ անդադար յորդորումէր Հայոց միաբան
լինել լատինական եկեղեցու հետ, եւ Կիլիկիա բնա-
կուած հայերից ոմանք սկսան յիրաւի լատինական
ծէսերով վարուել եւ այլոց նոյն գործը առիպել։ Այն
ժամանակ Հայոց մին քանի իշխանները սկսան յոր-

---

(1) Նորա մայրն էր Զաբլուն՝ Լեւոն երրորդի դուստրը։

գործել Գուիդոնին պահպանել իւր ազգը նորա սեփա-
կան վիճակումը եւ չօտարացուցանել նորան ազգա-
յին աւանդութիւններից. յիշեցին եւ նորա եղբօր
մահը, ասելով, թէ այդպիսի գործերի համար հա-
սաւ նորան այն անակնկալ վախճանը. եւ երբ Գուի-
դոն արհամարհելով նոցա օրինաւոր պահանջմունքը,
շարունակումէր իւր գործը եւ վարքը, նորան՝ իւր
եղբօր նման՝ սպանեցին, եւ ընտրեցին թագաւոր
1345. Կոստանդին չորրորդին, Ե Լեւոնի ազգականին,
հօրով լատին, որ խոհական մարդ գոլով՝ խաղաղու-
թեամբ կառավարեց տէրութիւնը: Սա առանց կող-
մնակի օգնութեան հալածական արեց իւր աշխար-
հից Եգիպտոսի ամիրայի զօրքը, որ իմանալով, թէ
Հայք դարձեալ իւրեանց յոյսը դրել են Լատինացոց
վերայ եւ ունեն նոցա հետ անդադար թղթակցու-
թիւն, յարձակուել էր Կիլիկիա այն դիտաւորու-
թեամբ, որ ամենեւին ջնջէ այդ տէրութիւնը, յու-
սալով, թէ այդ թագաւորութիւնը բարձուելուց յետ,
արեւմտեան քրիստոնեայ ազգերը չեն մտածիր ե-
բէք գալ արեւելեան կողմեր:

Երբ որ Կոստանդին թագաւորը մեռաւ, թագաւո-
1362—1365. րական աթոռը մնաց պարապ երեք տարի, որովհե-
տեւ Հայոց իշխանները չէին կամենում նախընթաց
թագաւորների ցեղից այնպիսի թագաւոր, որպիսի
եղան մին քանիսը. վասնորոյ երկիրը մնացել էր
անտէր եւ թշնամիները աներկիւղ սփռումէին իւ-
րեանց ասպատակութիւնը:

ԼԵՒՈՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ, 1365—1376.

Կիլիկիայումկային Լատինացոց ազգից իշխաններ, որ ունենալով ազգականութիւն Հայոց թագաւորների հետ, Կոստանդին թագաւորի մահից յետ պընդումէին իւրեանց իրաւունքը թագաւորելու Հայոց վերայ. բայց Հայոց իշխաններն հաւան չէին նոցանից ոչ մինին: Այդ պատճառով կռիւը շարունակուումէր միշտ նոցա մէջ եւ մեր աշխարհը մնումէր թշուառութեան տեսարան:

Ուրբանոս Ե պապը, լսելով Հայոց երկրի անցքը,
շատ ցաւումէր սրտով՝ ոչ միայն Հայոց վերայ յատ-
կապէս, այլ եւ նոցա տարաբաղդութեան պատճառով
եւ Երուսաղէմի համար, որի ազատութիւնը պահան-
ջումէր, որ քրիստոնեայ թագաւորը չբարձուէր Կի-
լիկիայից, որովհետեւ այն ժամանակ դժուարին էր
անցք գտանել Պաղեստին: Այդպիսի մտատանջու-
թեան մէջ, խորհրդակցելով արեւմտեան թագաւոր-
ների հետ, պապը գրեց Հայոց ազգի առաջնորդնե-
րին, որ ջանք դնեն վերականգնել իւրեանց ազգի
տէրութիւնը. եւ որովհետեւ ոչ ոք չկար Հայոց թա-
գաւորութեան ժառանգ, խորհուրդ տուեց նոցա
ընտրել թագաւոր Լեւոն Լուսինեանին, որ Հայ էր
մօր կողմից, միանգամայն եւ Կիպրոսի Պետրոս թա-
գաւորի ազգականը: Հայք, հետեւելով պապի խոր-
հուրդին եւ խրատին, հրաւիրեցին Լեւոնին եւ
հանդէսով օծեցին նորան թագաւոր Սիս քաղաքումը: 1365.

Լեւոն Զ շատ բարեպաշտ, իմաստուն եւ բարե-
բարոյ անձն էր. բայց նորա թագաւորութեան ժա-
մանակը դառը եւ վրդովական: Հայոց իշխանները,
որ խպառ տկարացած էին, անմիաբանութիւնը չի-
նել էին իւրեանց համար զէն՝ հայկազեան արութիւ-
նը ամենեւին մոռացած. նոցա կէսը Հայ էին, կէսը
լատինացի, միմեանց անհաւան եւ հակառակ. այդ-
պիսի հանգամանքներով Կիլիկիա աշխարհը հասել
էր իւր վերջին շնչառութեանը:

Կիպրոսի թագաւորը Պետրոս սաստիկ պատերազմ
ունէր այդ ժամանակ Եգիպտոսի եւ Բաղդատի Այ- 1366.
շեխուր անունով ամիրայի հետ, որ կրկին յետ ա-
ռեց Պետրոսի յափշտակած Աղեքսանդրիա քաղա-
քը, վանեց Կիպրացոց եւ իմանալով, թէ Հայոց
Լեւոն թագաւորը դաշնակից է Կիպրոսի թագաւորի
հետ, ուղարկեց Կիլիկիա մեծ զօրք: Լեւոն, թէպէտ
եւ սկիզբը դուրս եկաւ թշնամիների առաջը իւր
Լիպարիտ սպարապետով եւ մեծ քաջութիւն ցոյց
տուեց պատերազմումը, բայց երբ Լիպարիտը սպա-

նուեցաւ, Լեւոն փախաւ եւ յետոյ հաշտութիւն խընդրեց ամիրայից: Հաշտութիւնը երկար չտեւեց. մին քանի տարուց յետ՝ Լեւոնի եւ Եգիպտացոց մէջ ընկաւ կրկին թշնամութիւն, Եգիպտոսի ամիրան միանգամ ուղարկեց բազմաթիւ զօրք Կիլիկիա. եւ Լեւոն թագաւորը նոյնպէս դուրս եկաւ նոցա առաջը, սաստիկ կռուեց, բայց չկարողացաւ երկար ընդդիմանալ, վէրք ստացաւ, ապաստան եղաւ անմատոյց լերանց եւ չերեւեցաւ երկար ժամանակ, այնպէս, որ ոչ ոք չգիտէր, թէ ինչ եղաւ նա, կամ ուր գնաց. եւ միայն հաւանական կարծիք կար, թէ նա սպանուել է պատերազմումը: Մարիամ թագուհին (1) նստած էր Տարսոնումը անմխիթար. Մեսրոպ կաթուղիկոսի խորհրդով, որ եկել էր նորան մխիթարելու, ուղարկեցին դեսպան Գրիգոր մետասաներորդ պապի մօտ եւ խնդրեցին նորանից օգնութիւն Հայաստանին: Պապը խորհուրդ տուեց ամուսնացնել Մարիամ թագուհուն Բրաունշվեգի Օթոն դուքսի հետ (2), որ տէրութիւնը ունենայ մին զօրեղ կառավարիչ եւ խնամատար: Պապի խորհուրդը հաւանեցին եւ երբ մտածում էին Մարիամ թագուհուն Օթոնի հետ պսակել, յանկարծ ստացան լուր, թէ Լեւոն թագաւորը կենդանի է. եւ յիրաւի ինքը Լեւոն եկաւ յետոյ Տարսոն եւ ողջին ուրախացրեց.

1374. Բաղդատ նստաւ նոր սուլթան Հիւսէյին խան՝ Այշեխուրի որդին, քրիստոնէից մեծ թշնամի: Սա իմանալով, թէ Հայոց թագաւորութիւնը շատ տկարացել է եւ Լեւոն ապաստան է եղել արեւմտեան քրիստոնեայ թագաւորներին, ժողովեց Եգիպտացոց եւ Բաբելացոց ազգերից անհամար զօրք եւ իւր Ահ-

(1) Լեւոնի կինը Մարիամ, կամ Մարուն դշխոյ, որպէս նորան կոչումէին ժամանակակից Հայերը, Հունգարիայի Լուդովիկոս թագաւորի ազգականն էր:

(2) Օթոն դուքսը Սաքսոնիայի թագաւորների զարմիցն էր եւ Կիպրոսի թագաւորի ազգականը:

մէտ եղբօր առաջնորդութեամբ (¹) ուղարկեց Կիլիկիա: Եկան թշնամիները, հեղեղի նման թափուեցան Կիլիկիա աշխարհ, ողողեցին նորա սարերը եւ դաշտերը. նորա բնակիչները սարսափմամբ փախան բոլորը. ոմանք ամուր քաղաքների կամ բերդերի եւ կամ սարերի մէջ, այլք՝ օտար երկիրներ, մեծ եւ փոքր Հայաստանի կողմերը, Վրաց եւ Աղուանից երկիրները, Յունաց եւ Պարսից սահմանները. մնացողները՝ սուրի կերակուր եղան բոլորը: Լեւոն թագաւորը յուսահատուած եւ անճարացած, չունենալով ոչինչ հնարք օգնել իւր ժողովրդին, հետեւեց գոնէ իւր անձը եւ իւր տունը միայն ազատել այդ առաջիկայ վտանգից. վասնորոյ վեր առեց իւր կնոջը՝ Մարիամ թագուհուն, Փիննա դստերը, եւ Շահան (ըստ ոմանց՝ Սոփեր) փեսային, հանդերձ մին քանի իշխաններով, գնաց, ամրացաւ Կապան (²) դղեակումը: Թշնամիները ինչպէս իմացան Լեւոնի այն տեղումը ամրանալը, պաշարեցին բերդը, բայց չկարողանալով առնել ոչինչ, թողեցին պաշարման համար մեծ գունդ եւ ինքեանք սփռուեցան բոլոր Կիլիկիա. քանդեցին, կործանեցին պարսպաւոր եւ անպարիսպ քաղաքներ, Ատանա, Մամեստիա, Անարզաբա եւ այլըն. այրեցին վանքերը եկեղեցիները, հոյակապ ապարանները, կողոպտեցին տուների զարդը եւ գոյքը. կոտորեցին՝ ում եւ կամեցան, գերի վարեցին՝ ով հաճոյ եղաւ իւրեանց. մինչ զի թագաւորների եւ իշխանների գերեզմանները բացեցին, կրակ տուեցին եւ մոխիր դարձրեցին բոլորը. երկար ժամանակ շրջեցին աշխարհի բնակութիւնների մէջ, աւերեցին, կողոպտեցին ինչ որ գտան, մերկացրեցին բոլոր աշխարհը եւ անապատ շինեցին Կիլիկիան, որ

(¹) Անմէտ կոչուեցաւ եւս Արուկանէք հաճի Դերիֆէ. ոմանց աւելով նշանակուած էր Եգիպտոսի ամիրայ:

(²) Կապան՝ պարսպափակ ամուր քաղաք էր Կիլիկիայումը:

միւսանգամ չկարողանայ կանգնել եւ զօրանալ: Այդչափ չարագործութիւնից յետ, սկսան գերիներին՝ թէ տղամարդ եւ թէ կին, թէ մեծ եւ թէ փոքր, թէ հոգեւորական եւ թէ աշխարհական, տանջել եւ չարչարել զանազան կերպով, որ ուրանան իւրեանց քրիստոնէութիւնը, եւ երբ տեսան, թէ նոքա հաստատ են իւրեանց հաւատումը, ոմանց սրով կէս արեցին, այլոց մանր մանր կտորեցին. ոմանց մորթազերծ արեցին, այլոց նետահետ սպանեցին. քահանաների լեզուները կտրեցին եւ աչքերը հրացած երկաթով կուրացրեցին, որ չկարողանան Աստուծոյ բանը քարոզել կամ քահանայագործութիւն առնել:

Իսկ Լեւոն թագաւորը, որ իւր ընտանիքով պաշա-
րուած էր ինն ամիս Կապանի բերդումը, տեսանելով
թէ ուտեստի պաշարը սպառուեցաւ, իւրայնոց խոր-
հրդով դեսպան ուղարկեց Ահմէտ Աբուլահեթի մօտ,
որ այլազգիների գլխաւոր առաջնորդն էր, երդմամբ
խոստումն առեց նորանից խնայել իւր եւ իւրայնոց
կեանքը, դուրս եկաւ բերդից եւ անձնանուէր եղաւ
1375. թշնամիներին, որ տարեցին նորան, իւր կնոջ, դըս-
տեր եւ իշխանների հետ Եգիպտոս [1], ուր սուլթա-
նը դրեց նոցա բանտ:

Լեւոնի գերութիւնը եւ բանտարկութիւնը եղաւ Հայոց ՊԻԴ թուականին, եւ այդ նորա գերութեամբ վերացաւ Հայոց թագաւորութիւնը. այնուհետեւ Կիլիկիան, սրով, հրով եւ գերութեամբ քանդուած, աւերուած, ընկաւ Եգիպտացոց իշխանութեան ներքոյ:

Լեւոն թագաւորը, որ իւր գերդաստանի հետ բանտումն էր Եգիպտոս, մտածումէր միշտ իւր ազատութեան հնարը գտանել. վերջապէս գրեց աղաչանաց գիր Հռոմի պապին, նոյնպէս Գաղղիացոց եւ Սպանիացոց թագաւորներին: Գրած աղերսագիրերը չգիտէր ինչպէս ուղարկել, երբ նորա փեսան Շահան՝ Կո-

---

[1] Ոմանք ասումեն՝ Բաղդատ:

բիկոսի տէրը կարողացաւ այլազգի իշխանների միջնորդութեամբ ազատուել բանտից եւ յետոյ դիմեց Լեւոնի նամակներով յառաջագոյն Գաղղիա եւ այն տեղից կամենում էր գնալ Հռովմ, բայց քրիստոնէից մէջ եղած մեծ երկպառակութեան պատճառով երկու հակառակաթոռ պապերի ընտրութեան մասին (¹), չկարողացաւ գնալ այն տեղ եւ ներկայացաւ Գաղղիայումը Կղեմէս Է պապին, որ տեղեկացաւ նորա ցանկութեանը եւ գրեց յորդորական թուղթ իւր իշխանութեան ներքոյ եղած քրիստոնէից: Բայց որովհետեւ Գաղղիացիք՝ իւրեանց աղմուկով պարապած, ոչինչ փոյթ չունեցան օգնական լինելու Լեւոնին, վասնորոյ Շահան գնաց Սպանիա՝ Կաստիլիայի Ա. Յովհաննէս թագաւորի մօտ, տուեց նորան Լեւոնի աղերսագիրը եւ պատմեց բերանով բոլոր հանգամանքները: Կաստիլիայի թագաւորը ցաւակից եղաւ Լեւոնի տարաբաղդ վիճակին, գրեց թուղթ եւ ուղարկեց մեծամեծ ընծաներով հանդերձ Հիւսէյին սուլթանի յաջորդին Ահմէտին (որ Լեւոնի բռնողն էր), եւ խնդրեց շնորհել իւրեան Հայոց Լեւոն թագաւորին. սուլթանը կատարեց նորա խնդիրը եւ արձակեց Լեւոնին, նորա կնոջը Մարիամ թագուհուն եւ Փիննա դստերը: Գերութիւնից ազատուած՝ Լեւոն գնաց նախ եւ առաջ Երուսաղէմ եւ այն տեղ գոհութիւն բերեց Աստուծոյ ողորմութեանը իւր ազատութեան համար. յետոյ թագուհուն թողեց Երուսաղէմումը նորա սեփական ցանկութեամբ, ինքը գնաց Հռովմ եւ այն տե-

---

(¹) Փիլիպպոս Դ Գեղեցիկ մականուանած Գաղղիացոց թագաւորի ժամանակ, Կղեմէս Ե պապը փոխադրել էր 1303 թ. իւր հայրապետական աթոռը Գաղղիայի Աւինեօն քաղաքը, եւ յետոյ, 1376 թ. երբ Գրիգոր ԺԱ պապը կրկին հաստատեց իւր բնակութիւնը Հռովմ, Գաղղիացիք, եւ նոցա հետ Սպանիացիք ընտրեցին իւրեանց համար առանձին պապ Կղեմէս Է, եւ այդ պատճառով անդադար վրդովմունք էին լինում Եւրոպա, մինչեւ որ հայրապետական գահը ամենեւին բարձուեցաւ Գաղղիայից քառասուն տարուց յետ:

գից Սպանիա, ուր մեծապէս շնորհակալ եղաւ Յովհաննէս թագաւորից՝ իւր ազատութեան պատճառ եւ միջնորդ լինելու համար, ստացաւ նորանից բնակութեան տեղի Մադրիտումը եւ տարեկան ռոճիկ 6000 ֆրանք. եւ շատ սիրելի եղաւ Սպանիացոց իւր խոհեմ վեհանձնութեամբ: Այդ ժամանակ որովհետեւ անդադար կռիւներ էին լինում Անգղիացոց եւ Գաղղիացոց մէջ, վասնորոյ Հռոմի պապը (Ուրբանոս վեցերորդ) տեսանելով Լեւոնի հեզահամբոյր բարքը, յանձնեց նորան գնալ եւ խաղաղութեան միջնորդ լինել այն ազգերի մէջ: Լեւոն շատ աշխատեցաւ այդ մասին. 1383 եւ 1386 թուականներում շրջեց Գաղղիա եւ Անգղիա, հետեւեց մին հնարք գտանել նոցա խաղաղացնելու, որ յետոյ եւ ինքը ստանայ նոցանից օգնութիւն Հայոց տէրութիւնը վերականգնելու; բայց գործը չյաջողեց, որովհետեւ Անգղիացոց եւ Գաղղիացոց թագաւորները երբեմն յանձն էին առնում հաշտուել եւ յետոյ դարձեալ կռւում էին: Վերջապէս, երբ Լեւոն այդ գործի մասին կրկին անգամ գնաց Գաղղիական մայրաքաղա-
1393. քը Փարիզ, այն տեղ հիւանդացաւ եւ մեռաւ ութսուն տարեկան հասակումը, եւ թաղուեցաւ Կելեստինեանց վանքի եկեղեցումը. նորա շիրմի վերայ փորագրած կայ նորա անունը մինչեւ այսօր: Իսկ նորա կինը՝ Մարիամ թագուհին, որ մնաց Երուսաղէմումը մինչեւ իւր կեանքի վերջը, մեռաւ այն տեղ 1405 թ. եւ թաղուեցաւ սուրբ Յակոբի տաճարի մօտ, որպէս եւ նորա դուստրը Փինիա:

ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

ՈՐ ՍԿՍԱՆՈՒՄԷ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄՆ ԲԱՐՁՈՒԵԼԻՑ, ԿԱՄ ԼԵՒՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ, ՈՐ ԵՂԱՒ 1375 ԹՈՒԱԿԱՆՈՒՄՆ, ԵՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄԷ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ.

Գ Լ Ո Ւ Խ Ա.

Երբոր Լեւոն Զ գերի վարուեցաւ Եգիպտացոց մայրաքաղաքը Գայիրօ, Կիլիկիան մնաց առ ժամանակ Եգիպտացոց իշխանութեան ներքոյ, իսկ յետոյ մասամբ ինչ ընկաւ Օսմանեան տէրութեան ներքոյ, առաջին Մահմէտ սուլթանի ժամանակը, վերջապէս բոլորովին եղաւ նոյն տէրութեան իշխանութեան հըպատակ Սուլթան Սելիմի ժամանակը:

Մեծ Հայաստանը վաղուց արդէն այլազգիների իշխանութեան ներքոյ էր՝ մասամբ ինչ Պարսից եւ մասամբ ինչ Յունաց: Ուրեմն Հայոց սեփական թագաւորութիւնը բարձուաւ ամենեւին Հայաստանից. մեր ազգը եւ երկիրը եղան այլ ազգերի ստրուկ. Հայերից շատը տարածուեցան աշխարհիս զանազան կողմերը, Պարսկաստան, Լեհաստան, Տաճկաստան եւ յետ ժամանակաց Ռուսաստան, որ կան եւ մնան, ցրուած եւ բաժանուած միմեանցից մինչեւ այսօր: Այսուհետեւ ինչ որ պատմութիւնը կարող է խօսել, վերաբերումէ Հայերին եւ ոչ թէ Հայաստանին, որովհետեւ Հայաստանը Հայերի երկիրը չէ արդէն:

Այս ժամանակներումը երկու նշանաւոր անցք անցան Հայաստանի երկրներումը, որոց մինն էր Լանկթամուրի գալը Հայաստան, եւ միւսը՝ այն հաւատական վրդովմունքը, որը որ կրկին յարուցին ունիթորները: Լանկթամուր կամ Թէմիւր լենկ աշխարհաւէր բռնաւորը Ջօղբէկ թաթարների խանն էր Սմրղանդ

(Самарканда) *քաղաքումը, որ գոլով աննշան մարդ, իւր արիութեամբ եւ քաջութեամբ եղաւ սիրելի է-օզբէկ թաթարների խանին եւ նորա մահից յետ առեց նորա կինը, թագաւորեց նորա տեղ եւ եղաւ շատ զօրաւոր մարդ:*

Սա առեց Խորասանը, Պարսից աշխարհը, Բաղ-
1397. *դատը եւ համարեա բոլոր Ասիան. յետոյ եկաւ Հայաստան, սփռեց իւր զօրքը Սիւնիկ, Արարատ, Արցախ, Տարօն եւ այլն, երեք ամիս մնաց այդ երկրներումը, քանդեց, աւերեց բոլորովին. գերիներին հրամայեց տանել Սմրղանդ, որպէս եւ ամենայն մատեան եւ գիրք, որը որ գտան Հայաստանումը: Յետոյ գնաց Օսմանցոց տէրութեան վերայ եւ առեց զանազան քաղաքներ, մտաւ Անատոլիա եւ ձերբակալ արեց Պայազիտ սուլթանին:*

Ունիթոռները կամ միաբանողները, (որոց սկիզբը եղաւ Լեւոն Ե եւ Յովհան Բոնեցիի ժամանակը) կրկին անգամ սկսան քարոզել Հայոց՝ Հռոմայ իբր ուղղափառագոյն կարծեցեալ դաւանութիւնը եւ պահանջել նոցանից, որ կրկին մկրտուին. իսկ քահանաները կրկին ձեռնադրուին լատինական ծէսերով: Այդ միաբանողների ջանացողութիւնը այնքան եղաւ, մինչեւ շատ Հայ ընդունեց միւսանգամ մկրտութիւն եւ ձեռնադրութիւն, այնպէս որ ինքեանք միաբանեցան ունիթոռների հետ, սկսան ամենայն տեղ քարոզել իւրեանց կարծեցեալ ուղղափառութիւնը, Հայերին մոլորեալ կոչել, եւ փոխել նոցա իբր անհաւատութիւնից ճշմարիտ հաւատ: Շատ Հայի յանկուցանելով իւրեանց կողմը՝ կրկին անգամ մկրտումէին եւ ձեռնադրումէին. նոցանից մինն էր Մխիթար Ապարանցի, որ եւ գրումէ այդ առարկայի վերայ: Հայոց վարդապետները, իշխանները եւ ռամիկները բորբոքուան ատելութեամբ ունիթոռներին եւ նոցա համախոհներին ընդդէմ եւ այսպէս եղաւ մեծ խռովութիւն ազգի մէջ՝ նոյն ժամանակումը, երբ որ այլազգինները, մանաւանդ Լանկթամուրը, աւերում-

էին եւ Հարուածումէին Հայաստան աշխարհը։ Կար այն ժամանակ մին վարդապետ Մաղաքիա անունով, որ տեսանելով ունիթոռների գործը, վառուեցաւ վրէժխնդրութեամբ, ժողովեց շատ վարդապետներ եւ իշխաններ, որոց հետ ունէր բարեկամութիւն՝ Սոաթեւի վանքը։ Այդ տեղ խորհուրդ արեցին նոքա եւ արձակեցին զօրեղ մարդիկ ամենայն կողմեր եւ այդպիսի աշխատութեամբ կարողացան հալիւ թէ բռնել շատ ունիթոռներ, բերեցին նոցա առեան, դատեցին հրապարակի մէջ, ոմանց ծեծեցին իբրեւ կրկնակնունք եւ եկեղեցուց ապստամբուած մարդկանց, ոմանց մաղերը եւ մօրուքը փետեցին, ոմանց բանտ քցեցին։ Նոցանից ոմանք փախան բանտից եւ գնացին արեւմտեան կողմերը լատինացոց մօտ, ծանր ծանր ամբաստանութիւններ արեցին նոցա առաջումը Հայոց վերայ։ Այդ բանը ինչպէս տեղեկացան Հայոց վարդապետները, բռնեցին նոցանից շատին եւ մատնեցին իշխանների ձեռքը, որ քցեցին եռացեալ ջրի մէջ, իսկ ոմանց տապակեցին։

Երբոր եղաւ Փլորենտիայի ժողովը հռոմէական եւ յունական եկեղեցիների միաւորութեան նպատակով, Հայոց կաթուղիկոսը Կոստանդին Ջահկեցի, Եւգինէոս չորրորդ պապի գրութեամբ, ուղարկեց այն տեղ չորս վարդապետ, որ թէպէտ հասան Փլորենտիա ժողովից յետ, բայց ընդունեցին նորա սահմանադրութիւնը. սակայն երբ որ յետ դարձան այն վարդապետները, ընդունեց արդեօք բոլոր մեր ազգը Փլորենտիայի ժողովը՝ յայտնի չէ. առաւել երեւումէ, թէ չընդունեց. որովհետեւ Թովմա վարդապետ Մեծոբեցին, որ ականատես վկայ էր, ասումէ միայն, թէ բոլոր ազգը այդ ժամանակ Կոստանդին կաթուղիկոսի մահից յետ շփոթուած էր Սիս քաղաքի կաթուղիկոսական աթոռի մասին, որ օրէ օր նուազումէր բարեկարգութիւնից եւ գոլով ծանր հարկատուութեան ներքոյ՝ ամենեւին անշքացել էր. կաթուղիկոսները օտար ազգերի բռնութիւնից շրջումէին 1439.

թափառական այս կամ այն տեղ, եւ եթէ մեռանու-
մէր մին կաթուղիկոս, Կիլիկիայի եպիսկոպոսներից
ոմանք առանց հաճութեան կամ գիտութեան մեծ
Հայաստանի առաջնորդների ընտրումէին կաթուղի-
կոս ում եւ կամենում էին: Հայոց առաջնորդները
տեսանելով վերջապէս Սիս քաղաքի աթոռի վիճա-
կը, հաւաքուեցան (Վաղարշապատի տեղումը Արա-
րատեան աշխարհի) Էջմիածնի եկեղեցին, թուով մին-
չեւ եօթն հարիւր անձինք բաց ի իշխանաւորներից
եւ երեւելի աշխարհական մարդկանցից եւ ամենե-
քեան միաբան հաւանութեամբ եւ բոլոր ազգի հա-
ճութեամբ հաստատեցին Հայոց Հայրապետութեան
1441. աթոռը Էջմիածին, ուր առաջին կաթուղիկոսը եղաւ
Կիրակոս: Երկու տարուց յետ խռովայոյզ մարդիկ,
որոց առաջինն էր Մարկոս եպիսկոպոս (Կալատին կո-
չեցեալ՝ Յովհաննէս վարժապետի աշակերտը) սկսան
զանազան չարութիւն խորհել Կիրակոս կաթուղիկոսի
վերայ, ասելով թէ նա եպիսկոպոս չէ եղած յառա-
ջագոյն, թէ մկրտեալ եւս չէ եւ ոչ իսկ քրիստո-
նեայ, մինչեւ այնքան որ կարողացան հրաժարել նո-
րան աթոռից եւ ընտրեցին կաթուղիկոս Գրիգոր ե-
1443. պիսկոպոսին: Այդ Գրիգոր կաթուղիկոսի ժամանակը
Օսմանցոց տէրութիւնը շատ զօրացել էր սուլթան
Մուրատ երկրորդի քաջագործութիւններով, որի որ-
դին սուլթան Մէհէմմէտ երկրորդ առեց Կոստանդ-
նուպօլիս Յունաց մայրաքաղաքը եւ կոչեց նորան
1453. Իսլամպօլ. Յունաց վերջին կայսրը Կոստանդին Թ Պա-
լէոլոգ քաջութեամբ կռուելով մինչեւ վերջին շուն-
չը՝ ընկաւ այդ պատերազմումը:

Վերեւումը յիշած խռովութեան պատճառներով
Աղթամարի միաբանները, որ յառաջագոյն հպատակ
եղան Էջմիածնի իշխանութեանը, սկսան անկախ լի-
նել Էջմիածնի աթոռից, պատճառելով այն թէ Կի-
րակոս կաթուղիկոսին մերժեցին Հայրապետական ա-
թոռից, որի ընտրութեանը համաձայն էին եւ նոքա.
վասնորոյ մնացին այնուհետեւ անմիաբան մինչեւ մեր

ժամանակը։ Նոյն երկպառակութիւնը եղաւ պատճառ, որ Սիս քաղաքի աթոռը եւս մնաց էջմիածնին անհպատակ։ Այն տեղ Գրիգոր Մուսաբեկեանց կաթուղիկոսի մահից յետ՝ Կարապետ անունով վարդապետը դիմեց Կիլիկիայի ամիրային, որ Եգիպտոսի սուլթանի իշխանութեան ներքոյ էր, խոստացաւ նորան հատուցանել իւրաքանչիւր տարի երեք հարիւր դահեկան եւ ստացաւ նորանից Սսոյ կաթուղիկոսութեան իշխանութիւնը. եւ այդ հարկը յետոյ առնում էին Օսմանցիք, երբոր տիրապետեցին Սիս քաղաքը. (այդ տուրքը կոչւում էր քէշիշ ահճէսի)։ Կարապետ կաթուղիկոսին յաջորդեցին միւսները մինչեւ մեր ժամանակը. բայց եւ այնպէս էջմիածինը պահեց միշտ իւր նախապատւութիւնը։

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԴՈՎՄՈՒՆՔԸ՝ ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ։

Հայաստանը, որ արդէն կորուսել էր իւր թագաւորութիւնը, եղաւ այլազգիների պատերազմների տեսարան, որ անդադար կռւում էին նորա բաժանման վերայ։ Այլազգիները պատերազմում էին իւրեանց մէջ, Հայաստանի երկիրների համար, որ չէին պատշաճում Հայերին, եւ Հայերը նոցա շահասիրութեան համար ենթարկւում էին պատերազմի ամենայն տեսակ դառնութեանը՝ սուրի, կրակի, գերութեան, աղքատութեան եւ մահուան։

Լանկթամուրի մահից յետ Եգիպտոսի ամիրան Ահմէտ խան եւ Սասնոյ ([1] այսինքն Մարաց կամ Քուրտերի) ամիրան Յուսուփ, որ փախել էր Լանկ-

(1) Սասունն՝ Աղձնեաց աշխարհի գաւառներից մինն էր։

թամուրի ահից, կրկին վերադարձան իւրեանց աէ-րութիւնը, առաջինը Բաղդատ, երկրորդը՝ Սասուն: Յուսուփ առեց պատերազմով Դավրէժը եւ յետոյ տիրապետեց այլ եւս զանազան տեղեր Հայաստանումը. եւ երբոր նա գնաց Միջագետք, Բաղդատի ամիրան Ահմէտ խան եկաւ Դավրէժու վերայ եւ առեց այդ քաղաքը, որը որ յետոյ Յուսուփ յետ առեց, գնաց Տայոց աշխարհը, առեց Ախալցխան եւ նորա բնակիչներին ոմանց կոտորեց, ոմանց գերի վարեց. յետոյ գնաց Ասորոց կողմերը Դամասկոսի վերայ եւ այդ միջոց եկաւ Հայաստան Շահռուհ՝ Լանկթամուրի որդին: Յուսուփ ինչպէս լսաւ այդ համբաւը: վերադարձաւ Հայաստան եւ սկսաւ նոր պատերազմ, որ աւարտուեցաւ Յուսուփի մահով եւ կրկին նորոգուեցաւ նորա որդու Սքանդարի քաջութեամբ. սակայն Շահռուհ յաղթեց Սքանտարին եւ մեծ աւարով դուրս եկաւ Հայաստանից եւ դարձաւ իւր երկիրը Խորասան: Այն ժամանակ Սքանտար կրկին զօրացաւ եւ սկսաւ տիրապետել զանազան երկիրները՝ Որմի, եւ Վան քաղաքները, Սիւնեաց եւ Արարատ աշխարհները, եւ այլն: Այդ զանազան այլազգիների արշաւանքների եւ պատերազմների միջոցումը Հայերը կրումէին անտանելի տառապանք. այլասեռ թշնամիները ամենայն կողմից ոտնակոխ էին անում Հայաստանը, բոլոր Հայերին կամ սպանում էին կամ կողոպտումէին, կամ գերի էին վարում, եւ ոմանք թաղնուելով երկիւղից լերանց կամ ձորերի մէջ սովամահ էին լինում կերակրի պակասութեան պատճառով: Բաց յայսմանէ այդպիսի զանազան հարուածների ժամանակը որովհետեւ չէր լինում հունձ, վերայ հասաւ այնքան սաստիկ սով, որ շատ տեղ մարդիկ սկսան ուտել իւրեանց որդոց եւ դստերաց եւ այլոց: Անդադար պատերազմների, ապստամբութիւնների, սովի եւ սաստիկ հարկապահանջութեան օրերումը շատ Հայ հեռացաւ իւր աշխարհից եւ գնաց այլ տէրութիւն. վասնորոյ շատ տեղ քաղաք-

ներումը եւ գիւղերումը պակասան քաղաքներ եւ
Հայոց ժողովուրդը հասել էր վերջին տառապանքի:
Այդ ժամանակներումը զօրացաւ Շահ Իսմայէլ՝
Արտաւիլ (1) քաղաքի Շէխ Հայտար իշխանի որդին
եւ Շէխ Սեֆիի թոռնը, որ տիրապետեց Դաւրէժը
եւ Ատրպատական աշխարհը, հնազանդեցրեց Մարաց
եւ Խորասանու երկիրները, եղաւ Պարսից թագա-
ւոր, նորոգեց Սպահան քաղաքը, հաստատեց այն
տեղ թագաւորութեան աթոռը եւ մականունով կո-
չուեցաւ Սեֆի, իւր մեծ հօր անունով, որպէս եւ
բոլոր նորա տէրութիւնը այդ պատճառով կոչուե-
ցաւ Սէֆեանց եւ Ղզլպաշից իշխանութիւն: Այդ Իս-
մայէլի վերայ գնաց պատերազմով Օսմանցոց թա-
գաւորը Սուլթան Սելիմ առաջին, որ յաղթեց եւ
փախստական արեց Իսմայէլի, առեց Դաւրէժը եւ
տիրապետեց Հայաստանի մեծ մասն եւ ապա դար-
ձաւ յետ: Յետոյ սուլթան Սելիմը տիրապետեց բո-
լոր Եգիպտոսը, Երուսաղէմը եւ Հռոմկլայ: Սոցա եր- 1517.
կոցունց մահից յետ, երբոր թագաւորեցին սոցա
որդիքը սուլթան Սուլէյման երկրորդ եւ Շահթահ-
մազ, Հայաստանը միւսանգամ եղաւ պատերազմի եւ
բաժանման առարկայ. որովհետեւ յառաջագոյն սուլ-
թան Սուլէյմանը եւ յետոյ Շահթահմազ մինը միւ-
սից յետ եկան Հայաստան եւ առեցին նորա զանազան
քաղաքները: Աւելի սրածութիւն եւ քանդմունք ա-
րեց Շահթահմազ Պարսից թագաւորը, որովհետեւ
շրջեց մեր աշխարհումը մին բոլոր տարի, 1551 տա-
րին, որ Հայոց թուականի հազարերորդ տարին էր: 1551.
Այդ արշաւանքների ժամանակը սոքա մեծ արշաւանք
պատճառեցին Հայերին, ոմանց գերի վարեցին, ո-
մանց կողոպտեցին, ոմանց սպանեցին, մանաւանդ
Շահթահմազ, եւ այդ աղէտալի հարուածը Օսման-

---

(1) Արտաւիլը՝ մեծ Հայաստանի Ատրպատական գաւառումն էր, Թավրէզ քաղաքի հիւսիսային արեւելեան կողմումը:

ցոց եւ Պարսից զօրքից նկարագրումէ Թադէոս վար-
դապետ Սեբաստացի՝ իբրեւ ականատես։

Սուլթան Սուլէյմանը ինչպէս իմացաւ, թէ Շահ-
թահմազը առել է շատ տեղեր Հայաստանումը իւր
տէրութեան մասնից, կրկին անգամ գնաց Մեծ Հայ-
աստան, դուրս քշեց Պարսից, վեր առեց շատ գերի
Երեւանի ու Նախիջեւանի բնակիչներից եւ տարաւ
նոցա Կոստանդնուպօլիս։ Նորա նման եւ Պարսիկք շատ
շատ յարձակւում էին Հայաստան, շատ մարդու
գերի էին տանում Օսմանցոց իշխանութիւնից. եւ
այդ արշաւանքը եւ պատերազմները տեւեցին շատ
տարի։ Յետոյ սուլթան Մուրատը ուղարկեց մինչեւ
600 հազար զօրք Հայաստան, որ աւերեցին նորա շատ
քաղաքները եւ Խուդաբանդա Պարսից թագաւորը՝
Շահթահմազի որդին, չկարողացաւ ընդդիմանալ նո-
ցա. նոյնպէս Խուդաբանդի որդին Շահաբաս երկնչե-
լով Օսմանցոց զօրութիւնից, հաստատեց սուլթան Մու-
1586. րատի հետ հաշտութիւն այն պայմանով, որ Պարսից
պաշտպանեալ Հայաստանի քաղաքները լինեն Օսմանցոց
իշխանութեան ներքոյ։ Թէպէտ այդ հաշտութիւնը
հիմնեց Շահաբաս Օսմանցոց հետ, բայց սրտով միշտ
ցաւումէր եւ շատ խնայումէր Հայաստանի կորուստը.
վասնորոյ մի քանի տարից յետ վճռեց գնալ զօր-
քով եւ առեց Հայաստանի քաղաքները մինը միւսից
յետ, Դավրէժ, Նախիջեւան, Երեւան, Կարին, Բասէն,
եւ Շիրակ, Վաղարշակերտ, Ապահունեաց գաւառնե-
րը։ Բոլոր այդ տեղերը քանդեց, աւերեց, վեր առեց
շատ աւար եւ գերի, որոց մէջ շատը Հայեր էին եւ
ոմանք՝ Օսմանցիք։ Շահաբասի գլխաւոր յաջողու-
թեան պատճառն այն էր, որ այդ ժամանակ նոր
մեռել էր սուլթան Մէհէմմէտ երրորդ եւ թագաւո-
րումէր նորա մանկահասակ 16 տարեկան որդին Չէլէ-
պի սուլթան Ահմէտ եւ նորա իշխանները խռովու-
թիւն եւ ատելութիւն ունէին միմեանց հետ։ Բայց
յետոյ, երբ Չէլէպի սուլթան Ահմէտ չափահաս եղաւ
եւ կարողացաւ միաբանեցնել իշխաններին, զօրք ժո-

ղովեց եւ ուղարկեց Հայաստան՝ Պարսից ընդդէմ։ Շահաբաս, որ գիտէր, թէ չէ կարող կռուել Օսմանցոց զօրութեան հետ, վճռեց կատարել այն խորհուրդը, որ վաղուց դրել էր մտքումը, այսինքն՝ բոլոր Հայաստանի բնակիչներին, թէ քրիստոնեայ եւ թէ այլազգի, վարել, տանել Պարսկաստան, այն նպատակով, որ երբ Օսմանցիք գան, ոչինչ բան չգտանուի այդ աշխարհումը, ոչ մարդ եւ ոչ կերակուր, եւ այդպէս գրաւէ իւրեան ոչ թէ Հայոց երկիրը, այլ ժողովուրդը, որ կլինի նորան հարկատու, ծառայ եւ համանգամայն հողագործ։ Շահաբաս կատարեց իւր խորհուրդը. սաստիկ հրամայեց իւր նախարարներին դուրս հանել բոլոր Հայաստանումը եղած բնակիչներին, նոյնպէս նոցա գոյքը հաւաքել, տանել բոլորը Արարատի դաշտը. եւ եթէ ոմանք ընդդիմանան այդ հրամանին, վեր առնեն նոցա գոյքը, իսկ իւրեանց վարեն գերի կամ սպանանեն։ Նախարարները դուրս հանեցին ամենայն մարդու իւր տանից, տները այրեցին, ողջ բնակիչներին զօրով եւ ծեծելով հաւաքեցին, քշեցին Արարատի դաշտը՝ Էջմիածնի մօտ։ Երբ որ Շահաբաս լսաւ, թէ Օսմանցիք հասել են Կարս, իսկոյն հրամայեց Հայոց բոլոր ազգին, որ ժողովուած էին Էջմիածնի մօտ, վանել Գողթան գաւառի սահմանները։ Օսմանցիք այդ իմացան եւ սկսան գնալ նոցա քամակից, այնպէս, որ բոլոր անցքը բաժանուումէր երեք բանակ. առաջինը բաղկացնումէր վանեալ ժողովուրդը. երկրորդը՝ Շահաբաս իւր զօրքով. երրորդը՝ Օսմանցիք, մին քանի աւուր ճանապարհով Շահաբասից հեռի, մինչեւ որ այդ ձեւով ժողովուրդը եւ Շահաբաս հասան Ջուղայի սահմանը Երասխ գետի եզերը եւ Օսմանցիք Նախջեւան։ Շահաբաս ինչպէս լսաւ Օսմանցոց զօրքի Նախջեւան հասանելը, շտապեցրեց իւր նախարարներին, որ վանեն, քշեն ժողովուրդին գետի միւս կողմը. Նախարարները սուրը ձեռներումը հարկադրում էին, ստիպում էին ժողովուրդին անց կենալ գետից եւ նորա

սիրտը ահ քցելու համար, կտրում էին ոմանց ունչը
ոմանց ականջները եւ այլոց գլուխը ։ Ժողովուրդը ահի
եւ դողի մէջ սկսաւ թափուել նաւակների մէջ, եւ
Պարսիկք տեսանելով, թէ այն նաւակները փոքր էին
բոլորեցունց անցուցանելու համար, թէպէտ եւ շատ
անգամ գնում էին եւ գամէին այն նաւակները, եւ
թէ երկարանումէ անցքը, սկսան գաւազաններով եւ
սուսերներով հարկադրել բոլորեցունց անց կենալ գե-
տը՝ ով ինչպէս կարող էր ։ Այն ժամանակ ողորմելի
ժողովուրդը աղաղակ եւ ճիչ բարձրացրեց. Նորա
առաջումը որընթաց գետն էր, որ պէտք էր կլանէր
նորան, քամակումը կանգնած էին անողորմ Պարսից
վարիչները, որ սուսերով եւ մահակով մղում էին
նորան գետի մէջ. չկար ոչ փախչելու եւ ոչ ազա-
տուելու հնար. իսկ գաղանաբարոյ Շահաբասը գե-
տափնի վերայ նստած, աղաղակումէր վարիչների
վերայ որ չյամենան իւրեանց գործումը ։ Այդ հրա-
մանով կատաղած՝ վարիչ զօրքը սկսան սաստիկ մղել
եւ թօթափել բոլորեցունց գետի մէջ, այն մաքով,
որ ով կարող էր լողալ՝ անց կենայ, եւ ով չէր կա-
րող՝ խեղդուի գետումը, միայն թէ ոչ ով չմնայ
գետի այս եզրումը ։ Եւ որովհետեւ նոցանից շատը
չգիտէին ամենեւին լողալ, զորօրինակ երեխաներ,
աղջիկներ, կանայք, երկչոտ կամ հիւանդ մարդիկ,
վասնորոյ սոքա եւ սոցա նմանները բոլորը խեղդուան.
միւսները, որ գիտէին լողալ, ամենայն զօրութեամբ
հետեւում էին ազատել իւրեանց անձը եւ անցանել
գետի միւս եզրը ։ Այդ կերպիւ հրամայեց Շահաբաս
անցուցանել գետից եւ տանել Պարսկաստան Ջու-
ղայեցոց եւս ։ Յետոյ տարան Հայերին, որոց թիւն էր
1605. տասներկու հազար տուն Պարսկաստան եւ տուեցին
նոցա բնակութեան տեղի զանազան գաւառներում ։

Այդ տառապանքից յետ Հայաստանը կրեց միւս
տառապանք. յայտնուեցան մեր աշխարհումը ելու-
զակներ Օսմանցոց աշխարհից եւ սկսան շատանալ,
զօրանալ եւ տարածուել զանազան գաւառներում ։

Սոքա կողոպտեցին, յափշտակեցին, ճռաքաղ արեցին Հայաստանի վերջին զօրութիւնը եւ գոյքը, հաւաքեցին նորա վերջին փշրանքը, որ մնացել էին այլ եւ այլ թշնամիների ասպատակութիւնից: Սոցանից յետ՝ եկաւ սովը, որ առաւել սաստիկ էր եւ երկարատեւ, քան թէ առաջ եղածները. մարդիկ հարկադրեալ ուտում էին ձի, ջորի, էշ, ուղտ, նաեւս շուն եւ կատու. իսկ յետոյ մեռեալ մարդկանց դիակունքը, որը որ այդ պատճառով չէին թողում ամենեւին. վերջապէս դաւելով բռնում էին կենդանի մարդիկ, սպանում էին եւ ուտում էին նոցա ծածուկ, ոչ միայն օտարներից, այլ եւ իւրեանց ընտանիքից: Այսչափ եւ այդպիսի մեր աշխարհի հարուածները եւ աւերմունքը տեսանելով, Առաքել ականատես պատմագիրը, ողբալով ու աշխարհելով ասում է. «Հարեալ «յարատուս ողբամք եւ աշխարհիմք, զի անապատ «եղեւ վայելուչ եւ քաղցր աշխարհս մեր. ազգ եւ «ժողովուրդ խլեալք ի տեղեաց եւ անջատեալք ի «հայրենի եւ ի բնիկ ժառանգութեանց . . . եղեն «վտարանդեալք եւ տարամերժեալք յերկիր օտար «եւ յազգ այլասեռ . . . եւ անդէն օր աւուր առ սա«կաւ սակաւ նուազին մահուամբ եւ կորստեամբ»: Այդ սովը դեռ եւս չեղած, շատ Հայեր, որ փորձատես էին, ժողովեցին իւրեանց գոյքը եւ գնացին ցրուեցան այլ եւ այլ աշխարհ. իսկ այլք սովի ժամանակին բոլոր գերդաստանով գնացին ով Լեհաստան, ով Իտալիա եւ այլ երկիրներ: Առաքել պատմագիրը թէպէտ գրում է (Գլ. Է), թէ որչափ պանդուխտ Հայեր կան այժմ աշխարհի զանազան կողմերումը, նոքա իբր թէ այդ սովի ժամանակին են գնացել այն երկիրները. բայց յայտնի է թէ Հայերից շատը սփռուեցան այս կամ այն օտար աշխարհ դեռ եւս Բագրատունեաց թագաւորութեան բարձման ժամանակը. շատը Թաթարների գալու եւ շատը Կիլիկիայի իշխանութեան բարձուելու ժամանակը. այլք Լանկթամուրի եւ Շահաբասի Հայաստանը աւե-

րելու օրերումը. շատը նոյնպէս յիրաւի այս ելու-
ղակների եւ սովի պատճառով:

Այդպիսի տարաբաղդ, ցրուած եւ միմեանցից բա-
ժանուած վիճակումը, Հայերը սկսան տպագրել գը-
րեանք: Առաջին անգամ պայծառացաւ տպագրու-
1657. թիւնը Յակոբ կաթուղիկոսի ժամանակումը, որ գը-
րասէր անձն գոլով՝ ցանկացաւ տպագրութեան հա-
մար տառեր ունենալ եւ այդ նպատակով ուղարկեց
Եւրոպա Մատթէոս Ծարեցի սարկաւագին: Մատթէ-
ոս գնաց Վենետիկ ու Հռոմ, բայց ոչինչ չկարողա-
ցաւ առնել այն տեղ, վասնորոյ գնաց Հոլլանդիա՝
Ամստերդամ քաղաքը եւ այն տեղ փորագրել տուեց
Հայոց տառերի գաղափարը եւ այդպէս սկսաւ տպա-
գրել Հայոց գրեանքը, ողջից առաջ Յիսուս որդի:
Ծախուց մասին նորան օգնումէր Ոսկան երեւանցի
վարդապետի Աւետիս եղբայրը, որ վաճառականու-
թեան գործով եկել էր Ամստերդամ, ուր եկաւ յե-
տոյ եւ ինքը Ոսկան վարդապետ երեւանցի, առաւել
պայծառացրեց այն տպարանը եւ տպագրեց Աստուա-
1666. ծաշունչ գիրքը: Բայց շատ մեղադրելի է այդ Ոսկան
վարդապետը, որ չիմանալով մեր Աստուածաշնչի
թարգմանութեան արժանաւորութիւնը, ձեռնամուխ
եղաւ ուղղագրել լատինացոց Աստուածաշնչով, մեր
սուրբ Գրքերը անահատեց լատինական Աստուածաշնչի
գլուխներով եւ համարներով. Նոյն իսկ սուրբ Գրքերի
ասացուածները փոփոխեց, բաղդատելով լատինականի
հետ, մինչեւ փոփոխեց եւս այն գրքերի շարադրու-
թիւնը եւ ոճը եւ այդպէս խանգարեց նոցա քաղցրու-
թիւնը: Յետոյ տպագրեց Այբբենարան եւ Քրիստոնէ-
ական վարդապետութիւն, Աղօթամատոյց գիրք, Խո-
րենացու աշխարհագրութիւնը: Ոսկանի մահից յետ
Ամստերդամի տպարանը կառավարում էին Մատթէոս
Վանանդեցի եւ նորա եղբօրորդին Ղուկաս Վանանդե-
ցի, եւ տպագրում էին զանազան գրեանք, Շարակա-
նը, Պատարագամատոյցը, Խորենացու պատմութիւնը
եւ այլն: Այդ ժամանակ էր եւս Ըքրոդեր Մարբուր-

գեցի գերմանական ազգից, որ լաւ սովորել էր Հայոց լեզուն Ղուկաս Վանանդեցիի եւ Թովմա եպիսկոպոսի մօտ։ Սա շարադրեց մին գիրք եւ կոչեց՝ «Արամեան լեզուի գանձ», ուր խօսումէ Հայոց լեզուի հնութեան եւ ճոխութեան վերայ։

Բայց առաւել նշանաւոր մարդ էր մեր ազգի լուսաւորութիւնը յառաջ տանելու մասին Մխիթար վարդապետ Սեբաստացի, որ ծնաւ Սեբաստիա քաղաքումը (1676 թ.)։ Սա առանց վարժապետի պարապեց ուսմանց եւ որովհետեւ ունէր բնատուր ձիրք, եղաւ երեւելի քարոզիչ։ Միշտ մտածումէր այնպիսի մին ընկերութիւն կամ միաբանութիւն հաստատել, ուր կարողանային կրթել իւրեանց միանձունք ուսմամբ եւ դաստիարակութեամբ, եւ հաստատուն պահել ապագայ ժամանակումը այն ընկերութիւնը։ Այս փափագը կատարելու համար, գնաց Կոստանդնուպօլիս, ուր բնակւումէր այն ժամանակ Խաչատուր վարդապետ Կարնեցի, փրօփագանտու աշակերտը, յայտնեց նորան (եւ յետոյ Մարգար վարդապետին արեւելեան կողմումը) իւր խորհուրդը, խնդրելով նորան, որ լինի յառաջադրեալ միաբանութեան գլուխը։ Բայց երբ Խաչատուր վարդապետը՝ յառաջ բերելով այդ գործի դժուարութիւնները՝ հրաժարուեցաւ, յանձնեց Մխիթար այդ բանը Աստուծոյ օգնականութեան եւ գնաց Կոստանդնուպօլիս, ուր բոլոր Հայոց ժողովուրդը գամէր լսել նորա քարոզութիւնները եւ մեծ յարգանք էր ցոյց տամ նորան։ Այդ տեղ աշակերտեցան նորան ինն մարդ, որոց յայտնեց նա իւր խորհուրդը, եւ նոցա սրտումը Աստուծոյ սէրը եւ աշխարհի արհամարհանքը առաւել վառելու համար՝ տպագրեց Թովմա Գեմբացու գիրքը, Յովհաննու յայտնութեան եւ երգոց երգոյն մեկնութիւնները։ Այդ ժամանակ անյաջողութիւն պատահեց Մխիթարին եւ մեծ տառապանք, որ խափանեցին իւր նպատակին հասանելը։ Աւետիք վարդապետը, չարաբարոյ եւ փառասէր մարդ, որ խորամանկութիւնով հա-

սաւ Պատրիարքութեան աստիճանի Կոստանդնուպօլ-
սումը եւ իմանալով մին քանի քահանաների բարե-
կամութիւնը Մխիթարի հետ, որոց նա պատժել էր,
ուղարկեց խնդրակներ Մխիթարի վերայ, որ բռնեն
նորան-եւս եւ բերեն իւր մօտ: Մխիթար վարդա-
պետը իւր ապահովութեան համար յառաջագոյն դի-
մեց Յիսուսեան կրօնաւորների եւ յետոյ Քափուչին
լատին կրօնաւորների վանքը. եւ երբ սաստկացաւ
նորա վերայ հալածանքը Աւետիք վարդապետի կողմից,
հեռացաւ գնաց Պեղոպոնիդա, որ այն ժամանակ Վե-
նետիկի իշխանութեան ներքոյ էր եւ այն տեղ հիմ-
նեց վանք եւ կրօնաւորական կարգ Բենեդեկտոսի կա-
1712. նոնադրութիւնով, Հռոմի Պապի հաւանութիւնով եւ
հաստատութիւնով եւ ինքը կոչուեցաւ աբբայ. Յե-
տոյ փոխադրեց իւր վանքը եւ իւր աշակերտներին
1717. Վենետիկի մին կղզին, որ կոչուում է սուրբ Ղազար,
ուր եւ սկսաւ տպագրել զանազան գրքեր, Աստուածա-
շունչ, Աւետարան, Սաղմոս, առաքինութեանց եւ մո-
լութեանց գիրք. շարադրեց Քրիստոնէական վար-
դապետութիւն, Մատթէոսի աւետարանի մեկնու-
թիւնը, կրթութիւն աղօթից, մեկնութիւն ժողովողի,
քերականութիւն եւ այլն. յետոյ իւր ընկերների եւ
աշակերտների օգնութիւնով յօրինեց Հայոց լեզուի
բառգիրք. վախճանեցաւ 1779 թուականին: Մխիթա-
րի Վենետիկեան վանքը եւ Ակադեմիան մեծ նշանա-
ւոր բան է մեր ազգային լուսաւորութեան համար:
Այդ ընկերութիւնը մեր հին մատենագիրների տպա-
գրութիւնով, զանազան Եւրոպէական լեզուներից
թարգմանութիւններով, վերջապէս մեր գրաբառ լե-
զուի հիմնաւոր գիտութիւնով, տարածեց եւ մինչեւ
այժմ տարածում է լուսաւորութիւնը մեր ազգի մէջ
եւ համարուում է առաջին Հայկաբան ընկերութիւն:

ՎԵՐՋ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4772
0000851